


ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ՝ ԹԵՎԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԵՒ ԿԱՆԱՏԱՅԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՋՈՒԹԵԱՆ

ՊԵՏՐՈՍ ՏԵՓՈՅԵԱՆ

ԱՏՈՄ ԱՍԼԱՆԵԱՆ

ՊԵՏՐՈՒԹ

1988



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ՝ ԹԻՒԷԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԵՒ ԳԱՆԱՏԱՅԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ՊԵՏՐՈՍ ՏԵՓՈՅԵԱՆ

ԱՏՈՄ ԱՍԼԱՆԵԱՆ

Խմբագրեց և ծանոթագրեց
ԴՈԿՏ. ՎԱԶԷՂԱՋԱՐԵԱՆ

ՊԵՏՐՈՒԹ

1988

Հանձնարար ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԵՐԻ ՄԱՍԻՆ
Հանձնարար ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅՏԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅՏԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅՏԵՐԻ ՄԱՍԻՆ
ՀԱՅՏԵՐԻ ՄԱՍԻՆ



Ատոմ Ասլանեան



Ա Յ Ս Ե Ր Կ Ը

Մեր ժողովուրդի երախտաւորներէն Պետրոս Տեփոյեանին «Ատոմ Ասլանեան» ներկայ աշխատութիւնը, որ կարեւոր աղբիւր մըն է մամուլումը Հնչակեան Կուսակցութեան պատմութեան համար, եւ որ կը կազմէ հեղինակին կողմէ ծրագրուած «Ուխտումներ» շարքին երկրորդ հատորը, — առաջինն ըլլալով «Միերան Տամատեան» աշխատութիւնը, առանձին հատորով լոյս տեսած 1964-ին, Պէյրութ, — հիմնականին մէջ յուշագրութիւնն է ցարդ միայն պատահական յիշատակութիւններու արժանացած յեղափոխական գործիչի մը, որ նախապէս կոչուած է Մարգար Վոսմեան :

Ասլանեանին մասին մեր մամուլին մէջ հանդիպած ենք համեմատաբար ծաւալուն միայն մէկ գրութեան, — Սուրէն Սուրենեանին «Հին դէմքեր, հին յուշեր»ը, «Պայքար» օրաթերթ, 1958 Մարտ 1 եւ 4, — ուր տեղ գտած են կարգ մը այնպիսի տեղեկութիւններ, որոնք կը հակասեն տուեալ աշխատութեան ինչ-ինչ կէտերուն :

Այս հատորով տրուած տեղեկութիւններուն առ ի յաւելում, կրնանք ըսել թէ Ասլանեանը անգամ եղած է Գահիրէի Ա. Երեսփոխանական Ժողովին. Զէյթունի հերոսներէն Ապահ Պետրոսեանին հետ կարեւոր դեր կատարած է Նեղիպոսի մէջ հայ լեզեռնականներու շարժման կազմակերպման գծով, Ա. ընդհանուր պատերազմի օրերուն եւ 1913-ին, Միերան Տամատեանին ու Ապահին հետ, *Արսլանեան* ստորագրութեամբ խմբագրած է «Ազգային ինքնապաշտպանութեան Դռնիք»-ին կազմութիւնը նշող փաստաթուղթը, գոր Ռ.Ա.Վ.ի կեդրոնական Արխիւէն առնելով կը հրատարակենք սոյն հատորով :

Նոյն Արխիւին մէջ Պետրոս Տեփոյեանին ձեռագրով պահպանուող «Ատոմ Ասլանեան» գրութիւնը հրատարակութեան պատրաստած էինք արդէն, երբ պատահական զրոյցի մը իբրեւ հետեւանք՝ «Արեւ» օրաթերթի պատասխանատու խմբագիր Դոկտ. Աւետիս Եսփանեանը մեզի տրամադրեց «Յուշեր Ատոմ Ասլանեանի» տետրը, այս անգամ նոյնիման Ասլանեանին ձեռագրով :

Երկու գրութիւններուն բաղդատութիւնն ի յայտ բերաւ թէ Տեփոյեանը բնագրին վրայ կատարած է յաւելադրումներ եւ յապաւումներ: Յապաւելալ հատուածներէն մեր կողմէ կարեւոր նկատուած կարգ մը տեղեկութիւններ կու տանք իբրեւ էջատակի ծանօթութիւններ՝ առանց անուանական սկզբնատառերու նշումին: Մեր անուանական սկզբնատառերը կրող ծանօթութիւնները կը մնան մեր կողմէ կատարուած խմբագրական նշումներ:

Մենք եւս, մեր հերթին, Տեփոյեանին գրութիւնը ենթարկած ենք առանկաքար լեզուական խմբագրումի, չնչին յապաւումներով մէկտեղ :

Դոկտ. ՎԱՋԷ ԶԱՋԱՐԵԱՆ

ՅԵՏԱԴԱՐՁ ԱԿՆԱՐԿ ՄԸ ՄԵՐ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԺՄԱՆ ՎՐԱՅ

Ազատութիւն սիրողին
Այս աշխարհը խիստ նեղ է:
<Մի քայլ էլ նախանդեան>

Դաժան բռնակալութիւնն է որ սաղմնաւորած, ծնած եւ դիեցուցած է բոլոր ազատագրական շարժումները: Մեր հին ու նոր ազատագրական շարժումներն ալ ենթակայ նոյն պատմա-նական տուեալներու՝ չէին կարող զարտուղութիւն կազմել: Մեր ժամանակակից փորձը անխուսափելի հետեւանքն էր թրք-ֆական անտանելի բռնակալութեան, որուն ծրագրուած հեռա-կէտն էր ժողովուրդի մը բնաջնջումը իր իսկ պատմական հայ-րենիքին մէջ: Այդ հրէշային մտադրութիւնը նոր չէր, բայց մեր օրերուն ան կիրարկուեցաւ հետեւողական ծրագրով մը եւ աւելի շեշտուած համեմատութեամբ, ու փութացուց վախճանը: Նոյնը եղած էր ժամանակագրական կարգով մեզմէ առաջ պալ-ֆանեան ժողովուրդներու պարագային ալ եւ պատմաւ դարձած անոնց ազատագրութեան՝ բազմաթիւ նպաստաւոր գործօննե-րու միջամտութեամբ:

Բոլոր ժամանակներու եւ վայրերու մէջ բռնակալութեան կիրքը մարդկային եՍԻ իրաւական սահմանազանցումն է, որ ուժեղին կողմէ պարտադրուած է տկարին: Ուրիշներ անիրա-ւելու մարդկային անյազ կիրքը կը բուռն քէ կենսաբանական պահանջ մը կը դառնայ ուժեղներու բով, ճգտում մը՝ որուն սպառող ներկայութեան մէջ՝ փրանսական մտքի առողջ ար-տայայտութեամբ՝ «ազատութեան, հաւասարութեան եւ եղ-բայրութեան» սկզբունքները կը դադրին իրենց քաղաքակրթա-կան եւ կառուցողական արժէքէն, որով անհատներու եւ ժողո-վուրդներու ընդունակութիւնները միջոց չեն ունենար ուղեւա-լու եւ արգասաբերելու: Տկարը սահմանուած է սպառելու՝ ե-թէ ինքզինք պաշտպանելով չհակադրօժէ:

Բռնակալները ոչ միայն իրենց կենսաբանական պահանջի մղումով շարժած են, այլեւ խառնուածով, առհաւական ժա-ռանգութեամբ, բարոյական ըմբռնումներով, անաշխատ կամ ուրիշներու հաշուոյն ապրելու պահանջներով, նախնական մար-դուն՝ ուժեղը իրաւունք ունի հաւատամքով ու տիրապետելու դիւային հրմուսնով թէ այլ բացասական յարաբերութիւններով գինուած կը մտածեն ու կը գործեն ժողովուրդներու յարանուն

քշուստութիւնը յաւերժացնելու համար: Այս եղած է պատմական փորձաստութիւնը ազգերու եւ անհատներու յարաբերութեան մէջ:

Բռնակալութեան կրունկներուն տակ ճգնուած անհատներն ու ժողովուրդները իրենց կարգին ազատ սուրբելու նոյն կենսաբանական պահանջներու մղումով, երբ անյուսօրէն չեն տուրած եւ կազմալուծուած, իրենց գերագոյն նիգերով եւ յանախ համակարգուած շարժումներով կը հակազդօթեն՝ վերստանալու իրենցմէ խլուած *մարդու իրաւունքը*: Ճնշողի եւ ճնշուողի այս յարաբերութեամբն է որ արխունտած է ժողովուրդներու պատմութիւնը:

Հակադիր կողմերու այս իրեքաբախ ձգտումներով կառուցուած է մարդկային պատմութեան այս տռամային հիւսւածքը: Այսպէս՝ դարերու պատմութեան բովանդակութիւնը մեծագոյն համեմատութեամբ աւերքի ու արիւնի այդ բախումներուն յիշատակութիւնն է, որ կը սկսի նախնական մարդու շարժումներէն ու կը շարունակուի մինչեւ ներկայ փաղափարք որակուած ժամանակներու շրջանը: Այսպէս՝ ազատագրական բոլոր շարժումներուն ծնունդն ու զարգացումը տեղի կ'ունենան միայն բռնակալութեան հեղձուցիչ մթնոլորտին մէջ:

Անշուշտ բոլոր ազատագրական շարժումներուն վիճակւած չէ յաղթական վերջաւորութիւն: Շատ յաճախ այդ անխուսափելի շարժումները վերջացած են ողբերգական երբափակումով՝ իբր հետեւեալ բռնակալ ուժին ու միջոցներուն գերազանցութեան: Եւ սակայն անհանդուրժելի բռնակալութեան դէմ միշտ ալ պայքարած են ազատատենչ ժողովուրդներ եւ միշտ ալ արհամարհած՝ ծախորդ օրերու զգեստնիչ հարուածները: Սակայն առանց մոռնալու անցեալին դասերը, ազատութեան ձգտող ժողովուրդները իրենց անցեալ պարտութիւններէն կը սորվին յաղթելու կերպը: Ահա՝ ազատագրուած ազգերու թէ ժողովուրդներու ըմբռնելու եւ գործելու նամբան: Այս մասին պատմութեան ուսանողը բազմաթիւ փաստական օրինակներ կարող է յիշել թէ՛ մեր եւ թէ՛ միջազգային պատմութեան մէջ:

Կենսունակ ազգերն են միայն որ մշտանորոգ ու ժախանութեամբ կը պատրաստուին օգտուելու ներկայացած նորագոյն պատեհութիւններէն եւ կամ իրենք կը ստեղծեն նպաստաւոր միջոցները: Եւ առանց ժամանակի անցքը նկատի ունենալու՝ անոնք կը պահեն ռզեկան վերանորոգ ու ժախանութեամբ իրենց յաջողութեան յոյսը եւ կը կազմակերպուին՝ օգտագործելու միջոցներ ու գործօններ իրենց փաղափակաւ երազներու իրաւործման համար:

Յանալս ժողովուրդներու ազատագրական իտեալները իրագործուած են դարերու հետեւողական հիգերով: Մինչեւ իսկ իրենց հայրենիքէն վտարուած ժողովուրդներ. քաղաքական անցներու նպաստաւոր դասաւորումով, յաջողած են իրագործել իրենց քաղաքական անկախութեան մեծ երազը:

Հայ ազատագրական շարժումը դարերու անցեալ ունի եւ այս՝ հայ ժողովուրդի կենսունակութեան անժխտելի ապացոյցներէն մէկն է: Ան չէ՞ ձուլուած մեծ ազգերու մէջ եւ ոչ ալ ստրկացած ու վերածուած անկերպարան մնացորդացի: Գերագոյն ուժերու լարումով ան պայքարած է արիւնոտ դիւցազնամարտերով եւ պահած՝ իր ազգային իտեալներն ու օրկանական միաւորութիւնը: Շատ յանալս աւերուած ու տրորուած վայրաց արշաւողներու կրօնկներուն տակ՝ եւ սակայն ազատ ապրելու ներքինութիւնը սուսնորդած է զինք քաղաքական կեանքի նոր տիրացումներու աշխատանքին: Մեր պատմութեան քաղաքական վերականգնումի հինգ շրջաններուն հաւատաւոր հայ ազգի կենսունակութեան փաստական ապացոյցն է:

Հպարտութեամբ պէտք է նշել քէ հայ ժողովուրդի ազատասեւնչ ոգին օժտուած է իր լեռնաշխարհի երկրագրական կազմախօսութեան տոկունութեամբ եւ անոր հոգին՝ քէ եւ յանալս ննշուած՝ միշտ ալ մնացած է անպարտելի: Յանալս դէպօրէն հզօր ազգերու դէմ մաքառած եւ ամենի ուժերու հետ ունեցած բախումին ընթացքին փիզիքապէս ընկնուած՝ բայց միշտ եւ բացառիկ ուժականութեամբ իր ոգեկան անպարտելիութիւնը փոխանցած է իրերայաջորդ սերունդներու: Հայ ժողովուրդի պատմասնահատականութեան յստիքական նկարագրին մէկ անժխտելի գիծն է այս փաստական երեւոյթը, իր կենսաբանական մէկ պահանջը, զոր ժամանակի անցքը կարող չէ եղած մաշեցնել կամ սպառել իր պատմական հայրենիքին մէջ: Բայց դժուարը...

Մեր վերջին ազատագրական շարժումը, քէ եւ քելադրուած բուրք բռնակալութեան վայրագութենէն, ցեղային առհաւորութեամբ հայ ժողովուրդին մէջ անքեղուած անպարտելի ոգիին մէկ նոր բոցավառումը եղաւ, ազատասեւնչ խոյանքներէն մին՝ ընդդէմ ցեղասպան բարբարոսութեան, այս անգամ՝ ընդդէմ քրքական արհաւիրքին, որ աւելի շեշտուածօրէն կուտակուեցաւ մեր օրերուն արեւմտահայութեան գլխին:

Ազատագրական այս էնդագոյն շարժումը ամբողջական ըմբռնումով աւելի քան մէկ դարու հիգ է, որ նախ մեր ներքին կեանքին մէջ արտայայտուեցաւ անցեալ դարու երկրորդ քառորդի վերջերէն սկսած եւ վերջացաւ վարսունական քուականներուն՝ Ազգային Սահմանադրութիւն տարագին տակ՝ ժողովրդավար սկզբունքներու յաղթանակով: Մեր ներքին գործե-

րու յատուկ այս ազատագրական նիգին առընթեր, հայ *դեմոսը* (ժողովուրդը) իր հոգիին մէջ սաղմնաւորեց նաեւ քաղաքացիական մարզին համար ազատատենչ խմորումներ, որոնք պատմական անցքերու զարգացումով եւ ժամանակագրական ներշնչումներու քելադրութեամբ պիտի վերածուէին ազատագրական պահանջի:

Նրկու պարագաներուն մէջ ալ պոռթկումը բացայայտօրէն քելադրուած էր բռնակալութեան անհանդուրժելիութենէն: Նքէ առաջինին մէջ ներքին ամարին պայքար ուղղուած էր ամիրաներու կամ պատրիարքական կամայականութիւններուն դէմ. երկրորդը եղաւ արիւնոտ պայքար մը, որ նախ սկսաւ ցեղային խորքով քաղաքացիական իրաւունքները ապահովելու ձգտումով ու յետոյ վերածուեցաւ կազմակերպուած բմբոստական շարժումներու եւ մինչեւ իսկ պատերազմի: Այդ եղաւ մեր ազատագրական շարժումին ժամանակագրական նկարագիրը:

Ազատագրական ընդհանուր շարժումներու ինչպէս նաեւ հայկական նիգի մասին այս խորհրդածական անդրադարձումէն յետոյ, երբ յետահայեաց կարն ակնարկ մը նետենք Հայկական 'Դատի ողբերգութեան վրայ, կը տեսնենք թէ 1878-ի Յունիս 13-էն մինչեւ Յուլիս 13 Պերլինի մէջ գումարուած վեհաժողովին 61-րդ յօդուածը աղիտաւոր բովանդակութիւն մը ծրարած էր մեր յաջորդական շրջաններու պատմութեան համար: Միջազգային քաղաքական շրջանակներուն համար ալ Հայկական Հարցին վերաբարձումը Արեւելեան հնդրոյն մէջ կ'աւելցնէր նոր քննուկ մը. որ պատմական դէպքերու հետեւողական զարգացումով առանձին բարդութիւններ կը ստեղծէր եւ նոր յուժում մը կ'առաջադէր:

Այդ վերաբարձումը միջազգային սեփականութիւն դարձրնելով ո՛չ միայն ողբերգական բովանդակութիւն պիտի տրուէր հայոց պատմութեան, այլեւ մեծ պետութիւններու շահադիտական խաղարկութեան նոր նիւթեր պիտի հայքայթէր: Այսպէս միջազգային քաղաքական սակարանին մէջ պայքարի նոր կուռախնձոր մըն ալ պիտի աւելնար ի վնաս Թուրքիոյ, ինչպէս նաեւ հայ ժողովուրդի գերագոյն շահերուն, եւ թուրքեր այս է որ չկրցան բմբոնել:

Հայկական Հարցին առաջին օգտագործողը եղաւ Անգլիան՝ Յունիս 4-ի անգլերէութիւն Կիպրոսի դաշնագրով: Իսկ անմիջապէս անոր պիտի հետեւէր Աւստրիան իր կարգին՝ Պերլինի մէջ Աւստրիոյ եւ Թուրքիոյ միջեւ Յուլիս 13-ին կնքուած մասնաւոր դաշնագրով: Ժամանակի ընթացքին ուրիշներ ալ հայկական տառապանքին ստեղծած պատեհութենէն օգտուեցան այլապէս:

Եւ Հայկական միջազգայնացած Դատը յոյսի ու յուսախաբութեան կէս դարու փոփոխակի դիմաշեղումներով կամ դիմափոխութիւններով ստեղծեց նգնաժամային անցքեր հայ ժողովուրդին համար, մինչեւ որ իր եզրափակումը ստացաւ միջազգային դիւանագիտական դատարաններու արդարամտութեան անփառունակ սնանկացումով:

Այս ճանապարհներով շարունակուեցան մեր Դատին առընչութեամբ մեծ պետութիւններու մրցութիւնները, մինչեւ որ 1915-ի օրերուն քուրճերը օգտուեցան ոտրպախեան աշխարհագրական ընկերութեան քեյադրած՝ հայ ժողովուրդին Ռուսիոյ սահմանամերձ շրջաններէն դէպի սուրիական հողամասէն անցնող երկաթուղիի երկայնքը գաղթեցման ցուցումներէն եւ գործադրեցին քրքական վայրագ մեկնաբանութեամբ հայերու ջարդարարութեամբ տարագրութիւնը: Եւ ամէնէն վերջն ալ, 1923-ին, Լոզանի հորիդաժողովին մէջ, զենքով պարտուածը իր արիամարիանքի ձեռնոցը նետեց իրարու դաւադրող մեծ յաղթականներու երեսներուն: Ահա քէ ի՛նչպէս մղձաւանջային տարիներու ընթացքին անվերջանալի հարստահարութիւններէն եւ մասնակի ջարդերէն ետք, Առաջին Աշխարհամարտին ժողովուրդը մը բնաջնջուեցաւ իր հայրենի հողամասերուն եւ Թուրքիոյ մնացած երկրամասերուն վրայէն: Եղածը ժողովուրդներու մակընթացութեան եւ տեղատուութեան բնական օրէնքներու մէկ շարժումն էր: Ո՛չ. պատահականութեան ձախորդ մէկ դասաւորումը:

Ահա քէ ի՛նչպէս արդարութեան խոսամբազանցները ուրացան իրենց արժանապատուութեան հետ նաեւ իրենց յաղթութեան սատարող պատմութեան մեծագոյն գոհը՝ հայ ժողովուրդը, եւ իր բնաջնջումէն վերապրած մնացորդացը լիեցին կորուստի նամբաներուն վրայ: Մենք կատարումին մէջ չենք տեսներ քշմամութիւն մեզի դէմ, այլ՝ միայն ու միայն իւրաքանչիւր կողմի համար սեփական շահու հետապնդում:

Տեսնեմք քէ առաջին առիթով Անգլիան էր որ կ'ապահովէր կիպրոս կղզիին գրաւումը. իսկ Աւստրիան ալ կը ստանար «Հիւանդ մարդ»ու ժառանգութենէն Պոսնիա-Հերսէֆը՝ բուն իսկ Պերլինի հորիդաժողովի դաւադրող լուրքեան վստեքացումով:

Անգլիոյ դիւանագիտական յաղթանակը յայտարարուեցաւ հորիդաժողովի իսկ ընթացքին՝ ապշուքիւն պատնառելով միւս մեծ պետութեանց լիագօրներուն: Աւստրո-քրքական դաշնագիրն ալ կը ստորագրուէր հորիդաժողովի վերջին օրը:

Բժուրքիա այս դաշնագրին մէջ Պոսնիա-Հերսէֆի գրաւումին ժամանակաւոր հանգամանք տալը կը պարտի Պերլինի

քրքական դեպքնաճանախան խորհրդական Օհան Էփ. Պաղտատլեանի դիւանագիտական նարպիկութեան:]

Անգլիան օգտուեցաւ ռուսական գէնֆի յաջողութենէն եւ հետեւաբար Թուրքիոյ յուսահատական կացութենէն, ու վերջինին հետ կնքած գաղտնի դաշնադրութեամբ ապահովեց Կիպրոս կղզիին անարիւն գրաւումը՝ իբր երաշխաւորութիւն Հայկական Նահանգներուն մէջ կատարուելիք ընդհանուր բարեկարգութեան:

Քաղաքական այս անցքերու առեւն երկու մրցողք պետութիւնները, Ռուսիա եւ Անգլիա, իւրաքանչիւրը իր իւրաքանչիւր ըմբռնումով եւ շահերու քելադրութեամբ, հայ ժողովուրդին կու տային պաշտպանութեան յեմաքաններ: Առաջինը Թուրքիոյ կը պարտադրէր Ադրիանապոլսոյ մէջ Իգնատէվի խմբագրածէն շատ աւելի անգոյ Սան-Սքեֆանոյի դաշնագրին 16-րդ յօդւածը եւ նովին քաքնուած իրաւասութեամբ պահելու խոստացուած բարեկարգութիւնը ապահովող զինուորական ուժ մը գրաւուած նահանգներուն մէջ: Իսկ Անգլիան Պերլինի դաշնագրին 61-րդ յօդուածով այդ երաշխաւորութիւնն ալ կը սրբէր՝ քողով միայն հայ ժողովուրդին համար ադիտաւոր անորոշութիւն մը:

Ճիշդ ատոր փոխարէն Անգլիան կ'ապահովէր Կիպրոսի տիրապետութիւնը՝ երաշխաւորելով Թուրքիոյ հողային ամբողջութիւնը ընդդէմ ռուսական վտանգին: Թէեւ անգլեւքրքական դաշնագրին իրաւական քովանդակութիւնը պայմանաւորուած էր կղզիին ժամանակաւոր փոխանցումով միայն, առանց վեհապետական իրաւունքի, եւ սակայն Թուրքիոյ ներքին աշխարհավարութեան յամաւ անընդունակութեամբ խոստացուած բարեկարգութիւնը տեղի չէր ունեցած. որով ժամանակաւոր գրաւումը կը դառնար իրաւականօրէն տեւական: Նքէ Թուրքիան կը խոստանար կատարել Հայկական Նահանգներու բարեկարգութիւնը. Անգլիան ալ, իր կարգին, կը խոստանար վեց միլիոն ոսկիի փոխատուութեամբ գիւրացնել Թուրքիոյ յանձնառութեան իրագործումը: Կողմերու չիրագործուած խոստումներով հայ ժողովուրդին կենսական շահերը նետուեցան գահավիժումի գաղիքաքիներուն վրայ:

Այսպէս՝ ժամանակի ընթացքին, հայ ժողովուրդին համար պատմական դէպքերու դժբախտ դասաւորումով, իբր երաշխաւորութիւն գրաւուած կղզին կը դադրէր աւանդի հանգամանքէն ու կը վերածուէր անգլիական հողամասի, որուն իրաւական փրկագիրը միւսեայ արեւմտահայութիւնը իր ահաւոր ընդհանրութեամբ: Ահա ա'յսպէս Ռուսիան հետո պահուեցաւ անգլիական կայսրութեան ջրային նամբաներէն, Հայաստանը ա-

մայացաւ իր պատմական տէրերէն եւ կիպրոս կղզին ալ խզուեցաւ Թուրքիայէն:

Պերլինի մէջ եթէ Ռուսիոյ լիազօրենքիւ իրենց կառավարութենէն արտօնուած ըլլային ամէն գնով պաշտպանել Սան-Սթեֆանոյի 16-րդ յօդուածին ոգին, պիտի պահանջէին գրաւած հայկական հողամասին վրայ խոստացուած բարեկարգութեան գործադրութիւնը երաշխաւորող գինուորական ուժին պահուիլը: Անգլիոյ պիտի մնար կա՛մ պատերազմ յայտարարել Ռուսիոյ դէմ եւ կա՛մ ստեղծել Թուրքիոյ վեհապետական իրաւասութեան տակ հայկական արգելակ պետութիւն մը, ինչպէս բրաւ Պուլկարիոյ պարագային՝ Ռուսիան դուրս պահելու համար Նգէական ջուրերէն:

Անշուշտ 61-րդ յօդուածին սնամէջ եւ հայկական շահերու դէմ դաւադրող բովանդակութիւնը մինչեւ իսկ առանց երաշխաւորութեան խոր հիասքալութիւն պատմառեց հայ ժողովուրդին: Այս հիասքալութիւնը աւելի շեշտուեցաւ՝ երբ համիտեան բռնակալութեան օրերուն ան ենթարկուեցաւ ծրագրուած աստիճանական բնաջնջումի թշնամութեան, մշտական հարստահարութիւններով եւ պարբերական ընդհանուր կամ մասնակի ջարդերով: Այսպէս՝ խորքի ըմբռնումով հայ եւ թուրք քաղաքական յարաբերութիւնները դարձած էին թշնամական, թէեւ երեւոյթները փրկելու համար շարունակուեցան երկուստեք կեղծիքի շուղամարտութիւնները: Եւ ժամանակը գործեց կողմերէն ի նպաստ զօրանքին՝ թուրքերուն:

Այս հիասքալութիւնը Պերլինի դաշնագրին յաջորդող առաջին տասնամեակին շշմեցուցիչ ազդեցութիւն գործեց հայ ժողովուրդին քաղաքական դեկավարութեան վրայ եւ անոր զանգուածներն ալ ենթարկուեցան շարունակական սպառումի: Համիտեան երեսունեքու տարիներու իշխանութեան առաջին շրջանին իսկ տառապամբի ու հատումի նգլածամային անցքերուն թելադրած ողոճումի քաղաքականութեան (*) եւ մեծ պետութիւններու քաղաքական սակարկութեան ունգորութեամբ պատահեցաւ անխոստովելին:

Առանց անմիջապէս տարածուելու հայկական հողամասին վրայ ապրող ժողովուրդներու ազգագրական եւ տնտեսական բարբերու, կրօնական եւ զարգացական մակարդակի, իտէալներու եւ վերջապէս այն բոլոր գործօններուն վրայ, որոնց ամբողջական գումարին իբրեւ հետեւանմ ստեղծուած էր խորք

(*) Տեսնէ՛ք Աղգային Երեւոյթանական Ժողովի 1872 և 77-ի աղբարկու տեղեկագիրը և պատրիարքարանի յաջորդական տարիներու դիմումները:

կենակցութիւն մը հայերու եւ մնացած իսլամ տարբերու համար, ու եթէ աւելցնենք ատոր վրայ քուրք կառավարութեան եւ իր պաշտօնէութեան հակահայ շարժումներու մասնակցութեան ու ղեկավարութեան փաստը՝ ի նպաստ այս մարզին մէջ միացած ֆիւրտին, չերֆէզին, քուրֆին եւ նման տարբերու, այլեւս կը լուսաբանուի թէ արեւմտահայ ազատագրական շարժումը ոչ միայն անխուսափելի էր, այլեւ ուշացած էր բուն իսկ Օսմանեան հռիւրդարանի 14 Յունիս 1877-ի նիստին հաւաստումով, որուն համար Բարձրագոյն Դրան ուշադրութիւնը կը հրաւիրուէր՝ պատժելու մեղապարտ տարբերը:

Ստեղծուած հայեւքուրք յարաբերութեան փաղափական մթնոլորտին մէջ նոր տարր մը եկած էր փոխարինելու հինը, որ միայն պարտուածի ու յաղթականի խորք համակեցութիւնն էր: Նորը փաղափական ըմբռնումով կողմերու անտեղիտալի բախումն էր, որ ժամանակի ընթացքին մէկ կամ միւս կողմին ամբողջական պարտութեամբ պիտի վերջանար. աւելի արմատական թնորոշումով՝ հայկական հողամասը պիտի մաքրուէր մէկ կամ միւս կողմին անհետացումովը: Կէս դար տեւող այդ բախումներուն եզրակացութիւնը եղաւ պայքարող կողմերէն տկարին արմատական աննիւտումը:

Մասնաւորաբար 1878-էն յետոյ Թուրքիոյ հողամասերուն վրայ հարցը դրուած էր շեշտակի. կա՛մ քուրքը պիտի ապրէր եւ կա՛մ հայը, յոյնը, արաբը, ֆիւրտը, ալպանացին եւ միւս հպատակ ցեղերը: Այդ էր որ տեղի ունեցաւ Առաջին Աշխարհամարտի օրերուն՝ այնքան երկար խուլ կամ բացայայտ պայքարներէ ետք: Թուրքիէն տիրապետուած երկրամասերուն վրայ բազմացեղ ժողովուրդներու համակեցութիւնը հնարաւոր չէր շարունակել ներդաշնակ գոյավիճակով մը, որ բոլորին ալ շահերուն բաւարարութիւն տար, երբ բոլորն ալ տարամէտ մտածողութեամբ կեդրոնախոյս հակումներ ունէին՝ իւրաքանչիւրը իր սեփական շահերու նեղ սահմաններուն մէջ: Պատմութիւնը պիտի ըլլար այն, թէ երբ տիրապետող տարրը չունէր թուական գերակշռող առաւելութիւն՝ տիրապետուած ժողովուրդներու յարաբերութեամբ, եւ ոչ ալ փաղափակրթական գերակայութիւն զանոնք համաձուլելու գոնէ օսմանցիութեան շահերու ըմբռնումով, պիտի դիմէր ոչ-յանձնարարելի արտակարգ միջոցներու:

Թուրք միտքը իր կարիւնային կենսաբանական պահանջով կա՛մ պէտք էր որ կուլ տար իրմէ տկար ժողովուրդները՝ համաթրքութեան հալոցին մէջ ձուլելով զանոնք, որուն համար չունէր պահանջուած ուժականութիւնը, եւ կա՛մ անոնք իրենց կեդրոնախոյս շարժումներով պէտք էր որ ձերբազատուէին

բռնակալութեան բզփոռոց նիրաններէն: Երբ մեծ պետութիւններու քաղաքական եւ տնտեսական շահերուն թելադրութեամբ սպանացիին, արաբին եւ ուրիշներու վիճակունցաւ ազատագրուելով ունենալ քաղաքական անկախութիւն, հայուն եւ քիւրտին ալ բաժին ինկաւ ամենագարեօրէին՝ վայրագ միջոցներով գրեթէ ամբողջական աննիտում:

Պերլինի դաշնադրութեան հետեւող հայկական մտաշուարումի շրջանը, սակայն, երկար չտեւեց: Գրեթէ միաժամանակ ինքնապաշտպանութեան կողիացած ինքնաբուխ խմորումներ տեղի ունեցան Պոլսէն սկսած մինչեւ գաւառական շրջանները: Ինքնապաշտպանութեան համար հայրենասիրական խմբակներ կազմուեցան Կարինի, Քաղէշի եւ Վանի կուսակալութիւններուն մէջ, ինչպէս նաեւ Տաւրոսեան հիւսիս-արեւելեան եւ հարաւային-արեւմտեան լեռնապարերու՝ Սասունի եւ Զէյթունի առաւել կամ պակաս կիսանկախ ամրոցներուն մէջ: Առանց պատճառական տուեալներու վրայ յաւելալու եւ առանց այդ ինքնագիտակցութեան ազդակները բնութեան ենթարկելու, պէտք է ընդունիլ թէ պատմական շրջանի մը յստակ արտայայտութիւնը իր անխուսափելի դրոշմը դրած էր այդ շարժումներուն վրայ: Մէկ խօսքով՝ ժամանակի ոգին, ժողովուրդներու քաճկումը խորհուրդը կ'առաջնորդէին շարժումներն ու ինքնամուղ շարժողները: Յեղին ուժականութեան արտայայտիչ երիտասարդութիւնը սրբազան հրայրքէ մը բռնուած՝ նետուեցաւ մօտ ուժերով բոցավտելու ժողովրդային զանգուածները եւ գործելու ազատագրական անկախելի թուած հրաշքը: Ժ. դարու ընթացքին այս երկրորդ արեւմտահայ ուժահաւաքն էր որ տեղի կ'ունենար: Առաջինը մեր մտաւոր զարթոնքի սերունդն էր, որ անցեալ դարու կէսին շարժման ազդանշանը կու տար, իսկ ութսունական թուականներու վերջերուն ալ մեր քաղաքական ազատագրութեան յառաջապահները հրապարակ կու գային՝ գործելու Թուրքիոյ տարածքին վրայ: Այդ շարժումը հաղորդական դարձաւ նաեւ մեր արեւելահայ հաստածին համար: Եւ սրբազան խեղդութենէն բռնուեցան անոնք, որ իրենց մէջ կը զգային մահուան դիմելու ուժականութիւնը: Յեղափոխութեան առաջին խանդավառ դրօշակիրները՝ սկսած Փոքր Հայքէն մինչեւ Կիլիկիա, Բարձր Հայք եւ Վասպուրական, շարժեցան անտեղիտալի վնասկալութեամբ:

Մենք «Ուխտումներ»-ու այս շարքին(*) մէջ վերապրեցնել փորձած ենք յառաջապահ ազատատենչ դէմքերէն ո-

(*) «Ուխտումներ» շարքէն լոյս տեսած է Տէփոյեանին «Միհրան Տամատեան» աշխատասիրութիւնը, Պէյրութի մէջ, 1964-ին, նախ «Արեւ» օրաթերթին մէջ իբրեւ թերթօն տպուելէ ետք — Վ.Գ.:

մանք, գնահատելով զանոնք իբր անեղծանելի արտայայտութիւնը տրուած ֆաղափական մթնոլորտին, ժամանակագրական ոգիին եւ այն ճգնաժամային անձկութեան, որուն ենթարկուած էին հայ զանգուածները մասնաւորապէս հայկական հողամասերուն վրայ: Պատմութեան գնացքը չըմբռնել պիտի նշանակէր՝ եթէ մեր այժմեան դատողութիւններով մետասաներորդ ժամաւ իմաստութեամբ ուզէինք գնահատել այն օրերուն ապրող ու գործող անհատները կամ կազմակերպութիւնները:

Բացի վասպուրականէն, ուր արդէն կազմակերպուած էր առաջին ազատագրական կուսակցութիւնը *Սրբենական* անունով, որ առաւելաբար մնաց ու գործեց տեղական նկարագրով, առաջին համահայկական չափանիշով կազմակերպուած կուսակցութիւնը հրապարակ իջաւ *Հնչակեան* անունով եւ շուտով իր կազմակերպական ցանցը տարածեց Երկրին բոլոր կողմերը:

Երկրին մէջ այս կուսակցութեան շարժումին անմիջական ղեկավարութիւնը վիճակուեցաւ Պոլսոյ շրջանակին: Շարժումին կեդրոնը դարձան առաւելաբար Փոքր Հայքը, Կիլիկիան եւ մասամբ Կարինն ու Սասունը: Փոքր Հայքի ղեկավարութիւնն ստանձնեց Մարգարանը: Ուրիշ կորիզային կեդրոն մըն էր Աւրաքիլը: Ներքին կազմակերպութեան ղեկավարները Մարգարանէն կը վարէին Փոքր Հայքի ֆաղափներուն ու գիւղերուն յեղափոխական աշխատանքները:

Այս շրջանակին ու Կիլիկիոյ մէջ ցրուած էին բազմաթիւ գինուած յեղափոխականներ, որոնցմէ մէկ ֆանի խմբուած տասնեակներ մշտապէս զենքի տակ կը գործէին լեռներու վրայ: Անոնք կը գործադրէին աշխատավայրի կեդրոնին պատժողական հրահանգները քուրք բռնակալներու դէմ, կամ տագնապներու ենթարկուած շրջանակներու օգնութեան կը հասնէին եւ, վերջապէս, ծրագրուած ու հրահանգուած գործերը կը կատարէին: Երբեմն ալ ծանր բախումներ կ'ունենային ոստիկանական խումբերու հետ՝ գրեթէ միշտ ալ պարտութեան մատնելով զանոնք: Այս լեռ ֆաշուած յեղափոխականները կը ղեկավարուէին խմբապետական դրութեամբ եւ միշտ ալ խումբերու միջեւ կապ պահելով ու իրարու օգնութեան հասնելով: Անոնք յաճախ կը գործակցէին կիլիկեան շրջանին հետ ալ: Այդ խմբապետներէն հանրածանօթ դէմքեր դարձան Ժիրայրներ, Զելլօներ, Մինաս Օզլի եղբայրներ եւ մի ֆանի ուրիշներ:

Գործունէութեան ուրիշ մէկ շրջանն էր Կիլիկիան, որուն ռազմական ամրոցը միշտ ալ կը մնար Կիսանկալս Զէյթունը. իսկ Այնթապը կը ներկայացնէր կիլիկեան շրջանի յեղափոխութեան մտաւորական կեդրոնը:

Մուշ-Սասուն, մասամբ նաեւ Կարին, ուրիշ շրջանակ մըն էին՝ ուրիշ ղեկավարներու հոգածութեան յանձնուած: Այս բո-

յոր շրջանակները միշտ ալ կապուած էին Պոլսոյ եւ մասնաւորաբար Կուսակցութեան արտասահմանի Կեդրոնին հետ:

Հնչակեան Կուսակցութեան շարժումը շատ կարճ ժամանակի մը ընթացքին ուժեղ արմատներ նետեց արդէն իսկ յեղափոխական տրամադրութիւններով հասունցած Պոլսոյ եւ Թուրքիոյ ներքնամասի հայկական շրջանակներուն մէջ, մասամբ ալ տարածուեցաւ դէպի Կովկաս, եւ իր մասին ստեղծեց արտակարգ հմայք՝ իբր գինական ուժ եւ ժողովուրդի պաշտպանութեան նուիրում կազմակերպութիւն:

Պէտք է հաստատել քէ ռազմիկներու յանդուգն եւ յաջող շարժումները, մաքուր կենցաղն ու նուիրումութիւնը, ապա նաեւ Թուրքիոյ մէջ գործող ղեկավարներու ընդհանրապէս նարպիկ, շրջահայեաց եւ ուղղամիտ գործավարութիւնը Կուսակցութեան հանդէպ ստեղծուած այդ հմայքին մէջ մեծ քանակութիւններ:

Եթէ սլաւներ գործուեցան, անոնք ալ ընդհանրապէս Կեդրոնի անշրջահայեաց, անփոյթ, Թուրքիոյ ժողովուրդներուն եւ աշխարհագրութեան մասին անգէտ եւ անպատասխանատու շարժումներուն ու հրահանգներուն, հրապարակային պոռոտ եւ անժամանակ յայտարարութիւններուն հետեւանքները միայն եղան: Ահաւոր հետեւանքներով այդ սլաւներէն յիշենք միայն երեքը:

Ա.) Թրքերէն գրուած *Լաֆթաներուն*՝ մզկիթներու եւ հասարակաց վայրերու պատերուն վրայ փակցնել տալու ձեռնարկը, որուն անմիջապէս հետեւեցան բազմահարիւր հայերու ձեռքակալութիւններն ու խոշտանգումները, ինչպէս նաեւ խուզարկութիւններն ու հարստահարութիւնները:

Բ.) Արաբկիրի Պոլսէն ղրկուած *փուխ-քումխէրին*՝ եռսուփի սպանութիւնը իբր Կուսակցութեան կողմէ գործուած պատժական արարք մը ներկայացնելը մամուլով, որուն ալ հետեւեցան դարձեալ ծանր անդրադարձումներ Արաբկիրի շրջանակին մէջ եւ ուրիշ քաղաքներու յեղափոխական գործին վրայ:

Գ.) Սասունի ապստամբութիւնը (1894) նախորդող լրատուական յայտարարութիւնը, որ քուրք կառավարութեան աչքերը բացաւ եւ Սասնոյ աղէտը փութացուց(*):

Այս եւ նման արարքներ երկրին մէջ գործող ղեկավարներու շինած գործը քանդելու միայն ծառայեցին եւ քուրքերու հակահայ կիրքը գրգռեցին:

(*) Նոյն սխալը գործեց ղաշնակցական մամուլին մէկ մասը նաեւ Սասնոյ 1904-ի աղէտէն առաջ — «Դարձեալ փայլեց Սասնայ գլխին ազատութեան դրօշակ...», «Անդրանիկը քաջ իւր ընկերներով... Գարնան կը սպասէ, կ'ուզէ պատերազմ»:

1895-96-ի ջարդերէն առաջ Հնչակեան Կուսակցութիւնը արդէն ծանրօրէն տուժած էր նման արարքներու հետեւան՝ Բալ Եւ գրեթէ գլխատուած էր Ներքին մէջ գործող տարրը՝ կոռուզի Եւ ղեկավարող ուժերու տեսակէտով։ Այդ սրածուրբիւնը կատարուեցաւ ահաբողով, բերդարգելութեամբ, բանտարկութեամբ, կախաղանով, զինական բախումներու ատեն հերոսական մահերով Եւ արտասահման փախուստով։ Այսպէս՝ Ներքին մէջ Կուսակցութեան կենսունակութիւնը մեծապէս գեղջուած էր։ Երբ մանաւանդ վրայ հասան 1895 Եւ 96-ի ընդհանուր Եւ մասնակի ջարդերը, այլեւս Հնչակեան Կուսակցութեան համահայկական չափանիշով հմայքը արմատապէս տուժած էր Եւ պայքարի ճակատն ալ չափազանց թուլցած։

Հնչակեան Կուսակցութեան ծնունդէն քիչ յետոյ, 1890-ին, ազատագրական պայքարին պիտի լծուէր նաեւ Հ.Յ. Դաշնակցութիւնը՝ նոյնպէս իբր արեւելահայ յեղափոխական մտքի ծնունդ։ Հ.Յ. Դաշնակցութիւնը ոչ միայն իր ծնունդով արեւելահայ էր, այլեւ իր ղեկավարութեամբ մնաց մշտապէս արեւելահայ։ Այս Կուսակցութիւնն ալ առաջնորդուեցաւ ցուցական նոյն առաջադրութիւններով, գործելու նոյնանման մտածողութեամբ, Եւ այս՝ քէ՛ մամուլի Եւ քէ՛ բեմի օգտագործումով ու դիւանագիտական շրջանակներէ համակրանք մուրաւու նոյն անսրբագրելի միամտութեամբ. Եւ այս նոյն գիծը դեռ կը շարունակուի ներկայ Հայաստանը ազատագրելու (sic!) առընչութեամբ։ Անշուշտ այժմ բուն Հայկական Դատին վերաբերմամբ ոչ միայն անօգտագործելի դարձած է շահագրգռւողներու կողմէ, այլեւ քրէական յանցապարտութիւն պիտի նկատուի անոնց համար, որոնք յանդգնութիւնը պիտի ունենան յիշեցնելու, քէ՛ քաղաքականութեամբ մարդկութիւնը լքած պարտականութիւն մը ունի կատարելիք՝ հանդէպ արեւմտահայութեան։ Վերջին մտավիճակը, մեր քաղաքական դատի սկզբնական շրջաններուն, պէտք է վերագրել մեր գործիչներու քաղաքական միամտութեան։ Իսկ հիմա...։

Ներկու Կուսակցութիւններուն ղեկավար շրջանակներուն գաղափարաբանական հիմնական սկզբունքները որդեգրուած էին ռուս յեղափոխական դպրոցներէն։ Ինչպէս ակնարկուեցաւ, երկուքին ալ ծնունդի ու զարգացման ընթացքը կրթեալ արեւելահայ յեղափոխական մտքի դրոշմը, Եւ անոնց շարժումները ընթացան նոյն սայթափումներով։ Այս էր իայ ազատագրական շարժումին խոցելի կողմերէն մէկը։

Յէ՛ք արեւմտահայ յեղափոխական միտքը տոկաց Հնչակեան Կուսակցութեան մէջ արեւելահայ ղեկավարութեան մինչեւ 1895-96-ի հայկական ջարդերը Եւ այդ շրջանին միայն զանգուածօրէն ձերբազատուեցաւ անոր խնամակալութենէն,

դաշնակցական արեւմտահայ շրջանակները, սակայն, ընդհանրապէս պահեցին իրենց կամակատար հետեւորդի ստորակայութեան կեցումովը մինչեւ ներկայ օրերը: Թէեւ ըմբռնատացման մէկ փանի ուժեղ ցնցումներ կատարուեցան, բայց անոնք արմատական յեղաշրջումներ կարող չէին արդիւնաւորել եւ Կոստակցութիւնն ընթացաւ իր աւանդական գծով, մինչեւ իսկ ներկայ ակնբախ սայլափումներու օրերուն ալ:

Երբ արեւմտահայ առաջնորդող յեղափոխական դէմքերը (հնչակեան) համիտական դաժան հալածանքներէն դուրս եկան թրքական գեհեներէն, միացան արտասահմանի մէջ գործող իրենց ղեկավար ընկերներուն եւ պահանջեցին Նազարբէկեան Կեդրոնէն գլխաւորաբար՝ ա.) նիւթական ու բարոյական համարատուութիւն, բ.) գաղափարաբանական գծով հրաժարում ընկերվարական վարդապետութիւններէ եւ ֆարգութիւններէ՝ Կոստակցութեան տալով իր բուն, ազգային-ազատագրական դիմագիծը միայն, ինչ որ անոր առաքելութեան հիմնական էութիւնը կը կազմէր, գ.) ծանր փորձառութեան դասերէն օգտուելով՝ հրաժարիլ ցուցական գործունէութենէ, որդեգրելով անաղմուկ լուրջ պատրաստութեան ուղեգիծը:

Նազարբէկեան Կեդրոնին կողմէ այս բոլոր պահանջներուն մերժումով պատահեցաւ անխուսափելի — ժխտում արեւելահայ յեղափոխական մտքի ղեկավարութեան, հրաժարում ընկերվարական վարդապետութեան ուղեգծէն եւ դատապարտութիւն ցուցական շարժումներու: Փոքր հատում մը միայն ենթարկուեցաւ Նազարբէկեան ամուլի Կեդրոնին եւ անոր շուրջ հաւաքուած արեւելահայ ընկերներու տեսակէտներուն: Այդ անջատումին արդիւնքը եղաւ ազգայնական ծրագրով վերակազմեալ Հնչակեան Կոստակցութեան կազմութիւնը 1897-ի սկիզբները(*):

Ինչպէս ակնարկուեցաւ, դաշնակցական արեւելահայ յեղափոխական ղեկավարութիւնը 1890-ին հրապարակ իջաւ եւ գործեց մակատագրական մոյն սխալները կրկնումով մը, որ տեղի ունեցաւ աւելի ընդարձակ սահմաններու վրայ, աւելի երկար ժամանակաշրջանի մը ընթացքին եւ աւելի ահաւոր հետեւանքներով: Մենք պատմական իրողութիւնները կ'արձանագրենք առանց պատմաբանական տուեալներուն անդրադառնալու:

Պէտք է ընդունիլ թէ մեր ազատագրական շարժումներու ժափոխումով մէջ իր քաժիւնը ունի նաեւ այդ ղեկավարու-

(*) Վերակազմեալ Հնչակեան Կոստակցութիւնը կազմուեցաւ 1896-ի աւարտին եւ մինչեւ 1898-ի ընդհանուր ժողովը ինքզինք կոչեց Հնչակեան Յեղափոխական Կոստակցութիւն — Վ.Գ.:

թեան վերագրուած գերակայութիւնը եւ արեւմտահայ մտքի հանդէպ եթէ ոչ արհամարհանքը՝ գոնէ հաւասարագոր մասնակցութեան չգոյութիւնը ճակատագրական որոշումներու ատեն:

Եւ սակայն պատմական ներքին թէ արտաքին բոլոր գործօնները եւ ժամանակագրական ոգին նկատի ունենալով կը հասնինք այն եզրակացութեան՝ թէ հայ ժամանակակից ազատագրական շարժումը, որ շուրջ կէս դար տեւեց, հայոց պատմութեան ամենադժնդակ շրջանը եղաւ:

Հայ ազատագրական ճիգը տրուած փաղափական մթնոլորտին եւ պատմաշրջանի ոգիին անխուսափելի պահանջն էր. թէ՛ աւելի իմաստութեամբ պէտք էր դեկլարել այդ անխուսափելի շարժումը, այդ մասին կարելի է խօսիլ ընդարձակօրէն:

Պէտք է, սակայն, յստակօրէն ըմբռնել թէ ազատագրական շարժման ենթահողը, ոգին համահայկական էին՝ սկսած հայ փաղափական մտքի ծանրախոհ նկատուած շրջանակներէն, ըլլա՛ն անոնք եկեղեցական կամ աշխարհական, Պոլսոյ ազգային պատրիարքարանէն մինչեւ Մեծն Նուպար, մինչեւ արեւելահայ ու արեւմտահայ մամուլը, մինչեւ նորահաս մտաւորականութիւնը՝ ռուս-թրքական սահմանի երկու կողմերուն վրայ: Փաղափական ուղիով հետապնդում եւ ինքնապաշտպանութեան համար զինական միջոցառում՝ էութեան մէջ նոյն ազատագրական մտքի արտայայտութիւններն էին: Շարժումի ներդաշնակութեան պակասը առաւելապէս պէտք է վերագրել գործելակերպի ըմբռնումին անջատականութեան:

Ոչ միայն Հայկական Հարցի լուծման համար զինական միջամտութիւնը, յեղափոխական միջոցառումները հայ փաղափական մտքի մէջ շփոթ եւ ուստի աններդաշնակութիւն ստեղծած էին, այլեւ բուն իսկ Հայկական Դատի խաղաղ հետապնդումը մտածման շերտաւորում յառաջ բերած էր մինչեւ իսկ սկզբնական օրերուն: Ասոր բացայայտ ապացոյցներէն մէկն էին Պոլսոյ պատրիարքարանին ռուսակա՛ն թէ անգլիական կողմնորոշման դեղեւումները, դիմաշրջումները. պատրիարքարանի՞ թէ նուպարեան ծրագրով Հայկական Դատը հետապնդելու որդեգրումը: Ա՛լ չենք խօսիլ ռուսահայ մամուլի նոյն օրերու շերտաւորումներուն մասին: Փաղափական հետապնդումի հեռանկարը, սակայն, բոլորին համար ալ մէկ էր՝ հայ ժողովուրդի փաղափացիական իրաւունքներու պաշտպանութիւնը եւ պատմական սահմաններու մէջ փաղափական կեանքի սպասումը:

Հարցն այսպէս բազմակողմանի ուսումնասիրութեան ենթարկելէ յետոյ, կը հասնինք այն եզրակացութեան՝ թէ էութեան մէջ մտածման ներդաշնակութիւնը անվիճելի էր բոլոր

շերտաւորումներուն համար, բայց գործելակերպի զարտուղութիւնները կային եւ Վը մնային տեւական: Հայկական Հարցի մեր ներքին խոցելի կողմերէն մէկն ալ այս էր եւ դեռ կը մնայ բիրեղացումի կարօտ:

Նախապէս ակնարկուեցաւ թէ հայ ժողովուրդի արեւմտահայ հատուածը ժԹ. դարու ընթացքին ազգային երկու բախտորոշ շարժումներու ծնունդ տուաւ: Առաջինը իր մէջ կը բովանդակէր մեր մտաւոր զարթօնքը եւ անոր անխոստափելի հետեւանքով մեր ազգային կեանքին մէջ ժողովրդավար սկըզբունքներու կիրարկումին պայքարն ու յաղթանակը: Իսկ երկրորդը՝ Թուրքիոյ մէջ մեր քաղաքացիական իրաւունքներուն տիրացման նիգը եւ անոր ձախողուածքէն նարահատ՝ քաղաքական գծով ազատագրական խմբումներն ու կազմակերպուած գոյամարտը:

Եթէ առաջին շարժումին յառաջապահները ընդհանրապէս ներշնչուած էին փրանսական յեղափոխութեան ժողովրդավար նշանաբաններէն եւ բացայայտօրէն ազդուած 1848-ի փրանսական նոր ցնցումներէն, երկրորդին առաքեալները քաղաքական եւ ընկերային բարդ գործօններու միացեալ մթնոլորտին մէջ կառուցուած էին ինքնաբերաբար: Եթէ երկրորդին մէջ կային ազատագրուած ազգերու քեյտրական օրինակները, բայց նախ քան այդ կար հիմնական փաստը, որ կը կայանար բուրք կառավարութեան կողմէ անուայ տարրերու գործակցութեամբ հայ ժողովուրդին վրայ կատարուող ազգասպան լսծոժութիւններուն մէջ, որոնց կարելի չէր տոկալ մարդկօրէն: Ճիշդ այս պատճառով ինքնաբերաբար, քիչ մը ամէն տեղ, կը կազմուէին ինքնապաշտպանութեան խումբերը: Այդ պայքարող խումբերը մին միւսէն անկախ եւ սակայն նոյն հասարակաց պատկանով կը գործէին Հայկական Նահանգներու, Կիլիկիոյ, Փոքր Հայքի մէջ, եւ մինչեւ իսկ մեր արեւելահայ եղբայրներուն կողմէ դա՛րձեալ ինքնաբերաբար կը կազմուէին միութիւններ եւ խումբեր, օգնութեան հասնելու թրքական գեհեհէին մէջ մշտական հալածանքներու ենթարկուած իրենց եղբայրներուն:

Ազատագրական առաջին սերունդի առաքեալները գերագոյն վճռակամութեամբ ամենադաժան մահերու տեսակներն իսկ արհամարհելով նետուեցան ահաւոր պայքարներու մէջ ընդդէմ թուրք, քիւրտ եւ այլ բռնակալներու: Անոնք գիտէին թէ 1872 եւ 77-ի Պոլսոյ Ազգային Երեսփոխանական ժողովին պատրաստած եւ կառավարութեան մատուցած աղերսական տեղեկագիր-յուշագրերը ոչ միայն անտեսուած էին, այլեւ՝ այդ օրերէն յետոյ աւելի շեշտուած համեմատութեամբ եւ քաղաքական նախատեսութեամբ պաղարիւն կերպով ծրագրուած

հայաջինջ դաժան ֆաղափականութիւն մը կը հետապնդուէր թուրք կառավարութեան կողմէ, օգտագործելով ֆիւրտ, չեր-
ֆէզ, թուրք եւ ուրիշ վայրենի ժողովուրդներու կրօնական, ա-
ւարատենչ, բարբարոսական հակումները: Դարձեալ անոնք
գիտէին թէ կառավարական պաշտօնատարներ, պաշտօնեաներ
եւ երկրի ապահովութեան հսկող ուստիկանութիւնը վերել յիշ-
ւած տարրերու պակաս թողած հայահալած գործը կը լրացը-
նէին՝ վերջ տալու հայ ժողովուրդի գոյութեան: Մասնաւորա-
բար Հայկական Նահանգներու մէջ հայ ժողովուրդը իրողապէս
շատ մը տեսակէտներով գրկուած էր օրէնքի պաշտպանութե-
նէն: Անշուշտ թուրք կառավարութեան կողմէ մեծ ճիգ կը
թափուէր ծածկելու հակահայ գործերը մասնաւոր օտար աչ-
քերէ: Այդ հակահայ ֆաղափականութեան հետեւանով երկ-
րին բնիկ հայ տարրը առանց աղմուկի կը սպառէր թուապէս եւ
տնտեսապէս: Եթէ ան կը պահէր իր ընդհանուր գերակշռու-
թիւնը ցեղագրական համեմատութեան մէջ, այդ պէտք է վե-
րագրել մի միայն հայ ժողովուրդի ուժականութեան ներքին
օժտումին: Բայց այդ օժտումովն իսկ ան ներքնապէս անխու-
սափելի նահանջի մէջ դրուած էր իր հին ու նոր ժամանակներու
բաղդատական յարաբերականութեամբ:

Մինչեւ Ազգային Սահմանադրութեան խանդավառութեան
շրջանը, աւելի նիշդ՝ մինչեւ հրիմեանին պատրիարքութեան
օրերը, Հայաստանը. — հայկական գաւառը մասնաւորաբար. —
գրեթէ անծանօթ աշխարհի մը մնացած էր մայրաքաղաքի հա-
յութեան համար: Այդ մասին մասնաւոր հետաքրքրութիւն ալ
չկար: Պոլսահայը Հայաստանի հայութիւնը կ'ըմբռնէր մշեցի
կամ վանեցի պանդուխտներու մասին կազմած գաղափարով
միայն:

Ծանօթացման առաջին ձեռներէցութիւնը կը վերաբերի
հրիմեան Հայրիկին: Ան էր որ Հայկական Նահանգներու մէջ
բնակող հայերու հարստահարութիւններուն հարցը կը բարձ-
րացնէր Ազգային երեսփոխանական ժողովին մէջ, առանձին
գիբերով ու գրեթէ կնքուած էր եկեղեցւոյ բեմերէն ֆարգու-
թիւններով: Իր աշակերտները եւ ուրիշներ ընդարձակ տարո-
ղութեամբ կ'ուժեղացնէին սկսուած շարժումը եւ ութսունական
բուսականներուն արդէն իսկ ստեղծուած շարժումը միտլոյ ազ-
գային ղեկավարութեան եւ մասնաւորաբար երիտասարդու-
թեան կարեւոր մասին մտածման ամենակարեւոր հարցերէն
մէկը կը դառնար: Խանդավառ շարժումներով կը կազմուէին
կրթական ընկերութիւններ եւ ալ մարմիններ՝ հայկական գա-
ւառի եւ մասնաւորաբար Հայկական Նահանգներու կրթական
գործին համար: Վերջապէս, հայկական գաւառը իր լիութեան-
թեանէն դուրս կու գար մասնակի չափով: Պերիինի 61-րդ յօդ-

ւածը գործ մը կատարած էր ազգային ինֆնագիտակցութեան առընչութեամբ:

Ոչ միայն կրթական հաղորդակցութիւն կը հաստատուէր Պոլսոյ եւ գաւառներու միջեւ, այլեւ ազգասէր երիտասարդութեան մասնաւոր ուշադրութեան առարկան կը դառնային Պատմական Հայաստանի եւ Կիլիկիոյ հողամասերուն վրայ ապրող հայերու կրթական եւ տնտեսական վիճակն ու անոնց քաղաքական ապագան:

Այսպէս՝ քաղաքական զարթօնքի պատմաշրջան մը կազմեցին Պերլինի 61-րդ յօդուածին յաջորդող ութսունական թուականներու տարիները: Այդ շրջանին էր որ արեւմտահայ քաղաքական մտածողութիւնը ակաւ կազմակերպուիլ եւ ազատագրական շարժումը ինֆնապաշտպանութեան սաղմնային վիճակէն դուրս եկաւ եւ կազմակերպական բովանդակութիւն ստացաւ: Այդ օրերուն էր որ ազատագրական մտքի յառաջապահներ իրենց մտածումներուն կազմակերպութեան ձեւ տուին եւ սկսան ազատագրական ծրագրուած աշխատանքին: Մինչեւ իսկ Պոլսոյ մէջ կազմուած էին իրարմէ անջատ հայրենասիրական խումբեր: Անոնցմէ ամենալաւ կազմակերպուածը գէյթունցի Յարութիւն Չաֆըրեանի խումբն է եղեր: Չենֆ խօսիր ստոնցմէ առաջ կատարուած պարբերական շարժումներու մասին: Յիշենֆ անոնցմէ միայն մէկը, որ Միքայէլ Նալբանդեանին Պոլիս այցելութեան շրջանին (1860 եւ 61) արդէն իսկ գոյութիւն ունէր: Ատիկա մտաւորականներու կոորդ մըն էր, որուն յառաջապահներն էին Յ. Սվանեանը, Յ. Նորսունկեանը, Ա. Թագուրեանը, Մ. Մումեանը, Մ. Տիգրանեանը եւ ուրիշներ, ինչպէս նաեւ հեռուէն Ստ. Ոսկանեանը, Մ. Մամուրեանը եւ այլք: Այս վերջիններու տնտեսական եւ քաղաքական յառումները, սակայն, առաւելաբար նկատի ունէին Կիլիկեան հողամասը: Կիլիկիան իր ծովամերձ դիրքով, տնտեսական մեծ կարելիութիւններով, ամրոցային լեռնապարերու հայաեռօքան գանգուածներով եւ հայերու բնական գերակշռութիւնով մեծապէս կը յուսադրէր անցեալ դարու երկրորդ կէսի զարթօնքի սերունդը:

Ութսունական թուականներու շրջանին էր որ պոլսահայ մտաւորական երիտասարդութեան մէկ մասը գործնականապէս մօտեցաւ Մեծ Հայաստանի եւ Կիլիկիոյ հայութեան: Անոնք ուսուցչական եւ մշակութային աշխատանքի յանձնառութիւններով կ'երթային ծանօթանալու հայ ժողովուրդի կեանքին, անոր ցաւերուն, պահանջներուն եւ միջ-ցեղային յարաբերութիւններուն: Առանց բացառութեան, անոնք բոլորն ալ իրենց ուսումնասիրական եզրակացութեամբ կը դառնային յեղափոխականներ: Անոնք ազգասէր պոլսահայերու դիտող աչքերը

դարձան՝ իրենց հայաստանցի եւ կիլիկեցի եղբայրներու տա-
ռապանքներուն: Անոնք յայտնապէս տեսան թէ հայկական
տարրը երկրին մէջ ենթարկուած է անաղմուկ սպառումի: Ա-
նոնցմէ յիշենք Ծերենցը (Տֆթ. Յ. Շիշմանեան), Մ. Փոքրբու-
զալեանը, Մ. Տաւատեանը, Լ. Մկրտիչեանը: Կային նաեւ շատ
ուրիշներ:

Խրիմեանի պատրիարքութեան բացած ակօսին սերմնա-
ցանները եղան նորահաս հայրենասէր երիտասարդութեան
ներկայացուցիչները, որոնք տառապող ժողովուրդին հետ նոյ-
նացած՝ վնասկամօրէն նետուեցան յեղափոխութեան ամենա-
կուլ մողոքին բերանը: Այդ էր իրենց հայրենանուէր զոհաբե-
րութեան անխուսափելի հեռակէտը: Եւ այդ էր ռումանթիկ հայ-
րենասիրութեան պահանջը: Զո՛հուիլ ժողովուրդին համար եւ
նո՛ւիրուիլ մեծ երազի իրագործման, մինչեւ իսկ հաշտուելով
մահուան հետ: Ահա՛ այդ օրերու հայ երիտասարդութեան ծա-
ղիկին հոգեկան պահանջը:

ԱՏՈՄ ԱՍԼԱՆԵԱՆ

Յեղափոխական տրամադրութեամբ կառուցուած առաջին սերունդի կրտսերներէն էր Ատոմ Ասլանեանը, ծնած Սեբաստիա, 1865 Հոկտ. 9-ին, մեռած Սղեքսանդրիա 1955-ին(*) :

Համաձայն իր յուշագրութեան, մենք պիտի տանք ստորեւ իր յեղափոխական շարժումներուն ընդհանուր դնացքը: Իբր երկրին մէջ դործող կոռուակցական ամենապատասխանատու զէմքերէն մէկը, անշուշտ իր յուշերը մեծ արժէք ունին մեր ազատագրական պատմութեան համար: Իր վկայութիւնները՝ իբր յեղափոխական շարժումը ղեկավարողներէն մէկը, որ բուն խիղճ դործի դաշտին մէջ իր ճիշդ խառնած է կատարուած աշխատութեան մէջ, այլապէս ալ կ'արժէքաւորուին՝ երբ անոնք կը ներդաշնակին անցքերու եւ անձերու առընչութեամբ ուրիշ յուշագրողներու գրածներուն հետ: Միհրան Տամասեանը, Սուրէն Սուրէնեանը եւ ուրիշներ ալ երբ իրենց կատարած միասնական շարժումներուն մասին կը գրեն անջատօրէն, մին միւսին գրածին անժամօթ, դէպքերու, շարժումներու եւ մտածումներու լուսանկարային ներդաշնակութեամբ կը համաձայնին Ատոմին հետ:

Այս միւսնոյն ժամանակաշրջանի յուշագրութիւնները րաբերախտաբար կ'անցնին յուշագրական սահմանները եւ կը դառնան վաւերական պատմութիւն: Ապագայ պատմագիրը շատ մեծ դիւրութեամբ այդ յուշագրութիւններու վստահելի տտաղծներով կարող պիտի ըլլայ կառուցանել կարելի ճշգրտութեամբ արժէքաւոր պատմութիւնը համապատասխան ժամանակաշրջանին:

Եթէ մեր օրերու յուշագրական գրականութիւնը փաստօրէն ըլլար արժանահաւատ ու պատասխանատուութեան խղճմտութեամբ առաջնորդուած՝ մեծապէս դիւրացուցած պիտի ըլլար ապագայ պատմագիրին դործը: Դժբախտաբար այդ վկայութիւնը չենք կարող տալ ներկայ յուշագրութիւններու մեծագոյն մասին համար: Ներկայ ժամանակներու մեր յուշագրութիւնները ընդհանրապէս կը տառապին ուղղամտութեան պակասէն եւ գրականութեան այս սեռին անըմբռնողութենէն:

(*) Ատոմը մահացած է 26 Նոյ. 1954-ին, Գաիիբէ, եւ յաջորդ օրմ իսկ քաղուած է Ս. Միմասի գերեզմանատունը — Վ.Ղ.:

Կիրքի, կողմնակալութեան, անիրազեկութեան, անձնական փառասիրութեան, ազխութեան եւ այլ մեղքերով բեռնաւոր՝ անոնք զարձած են զիրար հակասող անճշդութիւններու կատարեալ լարելութիւն մը պատմապէս համար: Եթէ պատմապիւր մտադրած է լուրջ եւ խնամուած դորձ մը պատրաստել՝ պէտք է ըլլայ արտակարգօրէն զգուշատը իր գործին իբր ազդիւր ծառայող յուշադրական տուեալներու նկատմամբ:

Այս փոքր շեղումէն յետոյ, հետեւինք Ատոմին յեղափոխական շարժումներուն՝ իբր գործող եւ ղեկավար: Եւ որպէսզի իրերը յստակ տեսնենք, պէտք է հետեւիլ Ատոմին գործած միջաւայրերու եւ ժամանակներու քաղաքական մթնոլորտին, մեր արտաքին ու ներքին դրական եւ բացասական գործօններուն, սնցքերուն, որոնց հաւաքական ամբողջութեամբ կառուցուած է մեր այդ ժամանակաշրջանի պատմութիւնը: Այս մերձեցումները, անշուշտ, նախընտրելի է կատարել առաւելարար առաջնորդուելով ժամանակագրական տուեալներով:



Ատոմը մէկն էր այն զաղափարական երիտասարդներէն, որոնք զխտակցարար նուիրուեցան իրենց ժողովուրդի ազատագրական գործընթացին: Անցեալ դարու ութնական թուականներուն միայն, Պուլսոյ մէջ անոնցմէ կը համրուէին բազմաառանակ առաջաւոր գէմքեր:

Գիտակցարար նուիրուելու համար այդ սրբադան առաքելութեան, նախ պէտք էր ճանչնալ հայ ժողովուրդը բուն իսկ իր պատմական հայրենիքին մէջ, ուսումնասիրել քաղաքական, տնտեսական ու քաղաքակրթական առարկայական կացութիւնը եւ խորթ դրացնութեան մէջ ապրող ցեղերու փոխադարձ յարաբերութիւնները, բնորոշել անոնց տեսակարար արժէքը ամբողջական կողմերով ու ճշդել ճշմարտամային տառապանքներու մէջ հասնող հայերու դորութեանական կարելիութիւններու ամբողջութիւնը:

Ատոմը երբ վերջնականապէս կը համոզուի թէ իր մէջ ուռճացած հայրենանուէր ոգին այլեւս անհակադէմ ղարձած էր, — ինչպէս նոյն հոգեկան տալանալին ինթարկուած էին իրմէ առաջ ուրիշ հայ երիտասարդներ, — եւ թէ անխուսափելիօրէն իրեն վիճակուած էր յեղափոխական աշխատանք ստանձնել հայ ժողովուրդի ազատագրական շարժումին մէջ, կը դիմէ նախադարձապատեան աշխատանքի: Այդ աշխատանքը, ինչպէս ականարկեցինք, սխտի ըլլար հայ ժողովուրդին եւ անոր շրջապատին հետ ծանօթանալու գործը՝ բուն իսկ հայրենի հոգին վրայ:

Ուստի այս նպատակով 1889 Մայիս 15-ին Արտաշէս Մկրտ-
եանին, Անտոն Թիւրքինսկանին և Տիրան Տէօփլէթեանին հետ
կառավարական անցագրով կը մեկնի ղէպի Տրապիզոն: Եւ որ-
պէսզի ճամբորդութեան ընթացքին կառավարական շրջանակ-
ներու և ոստիկանութեան կողմէ որևէ զգուարութեան չեն-
թարկուին, անոնք մինչ այդ կ'ապահովեն օրինական անցագ-
րեր ու մինչև իսկ զէնք կրելու արտօնութիւն, քանի որ անա-
պահովութիւն կը տիրէր իրենց այցելելիք շրջաններուն մէջ: Այս
չորս երիտասարդներուն ճամբորդութեան պատրուակն էր Մշոյ
Ս. Կարապետ կառարելիք ուխտագնացութիւնը. բան մը՝ որ
այդ օրերուն մասնաւոր անցագրով զեռ թոյլատրելի էր կառա-
վարութեան կողմէ:

Տրապիզոն ցամաք ելլելէ յետոյ, անոնք առանց արգելքի
կ'անցնին Կարին: Եւ քանի որ ճամբաները դեռ ձիւնով ծած-
կուած էին ու քաքաւան չկար, — իսկ առանց կարաւանի ալ
ճամբորդել կարելի չէր՝ քանի որ ճամբաները ենթարկուած էին
քիւրտ աւաղակախումբերու դարանակալ հսկողութեան, —
հարկադրուած կը սպասեն երկու շաբաթ: Այդ օրերուն կը ծա-
նոթանան կարդ մը կարնեցի հայերու, որոնք իրենց պէս հայ-
րենասիրական հրայրքէ բռնուած էին(*): Երբ կը լսեն որ կա-
րաւանը ճամբայ պիտի ելլէ, շուտով իրենց անցագրերը կը
զրկեն կառավարչատուն՝ Մուշ մեկնելու վիզայի համար: Յա-
ջորդ օրը քաղաքին շուրջը կատարած պտոյաի մը միջոցին, ու-
տիկաններ կը շրջապատեն զիրենք ու կ'առաջնորդեն ոստիկա-
նատուն, ուր կը խուսարկեն և առանձին խուցերու մէջ կը բան-
տարկեն՝ առանց որևէ հակակառավարական յանցապարտու-
թեան: Այս ձերբակալութեամբ թուրք կառավարութիւնը այս
չորս երիտասարդներուն մտադրած ուսումնասիրական դասըն-
թացին առաջին դասն էր որ կու տար, սեռակ մը նախըզանք՝
Ատոմին Լնթարկուելիք յաջորդական տարիներու յեղափոխա-
կան տառապալից արկածախնդրութեան:

Յաջորդ օր խիստ հարցաքննութեան կ'ենթարկուին մեր
չորս երիտասարդները, որոնք կը բողոքեն իրենց ձերբակալ-
ման համար: Մինչ այդ խուսարկուած էին Կողմոս խանի իրենց
սենեակները, ուր բացի Ազգային Հիւանդանոցի տարեցոյցէն՝
ո՛չ մէկ գրութիւն գտած էր ոստիկանութիւնը, բայց այդ տա-
րեցոյցն ալ իրր արդիւրած գրականութիւն գրաւած էր:

(*) Անոնք էին՝ Խաչատուր Կերեկցեանը, Կէօլպաշիի հիւրանոցը
բանցնող Յովհաննէս Աստուրեանը եւ Իշգալեցեանը: Ատոնք եւ իր ընկե-
րը յսնախ կ'երթային Աստուրեանին հիւրանոցին վրայի յարկի գարն-
ջրատունը. ուր սուրբաք եւ կիբակի օրերը երաժշտութիւն կ'ըլլար եւ շա-
բունակ խայթէմ երգեր կ'երգուէին:

Թուրք կառավարութեան բանտային հիւրասիրութիւնը երբ կը շարունակուի, մեր չորս երիտասարդները կը ստիպուին մէկ ու կէս ամիս սպասել զիրենք ազատ արձակելու կարգադրութեան:

Այդ ժամանակ բողոք-խնդրագրով մը կը դիմեն ուղղակի կուսակալին, որ բողոքողները կը կանչէ իր մօտ եւ ուղղակի ինք հարցաքննութեան կ'ենթարկէ զանոնք: Երբ ոչ մէկ փաստական ապացոյց կարող կ'ըլլայ գտնել բանտարկեալներու յանցապարտութեան շուրջ, կը հրամայէ ազատ արձակել զանոնք: Այս ազատ արձակման հրամանը կը թուի թէ մեծապէս ազդուած էր «Տէյլի նիւզ» անգլիական թերթին համառուոր թղթակից Ֆիցճերալտին ներկայութենէն, որուն իբր թարգման ընկերացած էր Միկրոիչ անուն հայ երիտասարդ մը:

Այդ ազատ արձակումը պայմանաւոր էր սակայն: Պէտք էր որ երաշխաւորութեան տակ ազատ արձակուէին՝ քաղաքէն դուրս չելլելու պայմանաւ, մինչեւ իրենց մասին Պոլսէն անհրաժեշտ տեղեկութիւններու հասնիլը: Եւ որովհետեւ բանտարկեալները կ'առարկէին թէ իրենք կարնեցին երուն համար անծանօթ մարդիկ են եւ չեն կարող երաշխաւոր մը ճարել, ոստիկանապետը կանչել կու տայ Կողմոս խանի յոյն սեփականատէրը եւ անոր բռնի ստորագրել կու տայ երաշխաւորագիրը:

Այսանդ պէտք է արձանագրել թէ երաշխաւորութիւն չտալու իրենց ճիշդին մէջ մեր երիտասարդները նկատի ունէին երաշխաւորող անձին ապահովութիւնը չլիարժեքութեամբ պահելու: Ատոմին մէջ ուրիշները իր պատճառով չվնասելու այս խղճահարութիւնը իր ամբողջ շարժումներու ընթացքին զինք ղեկավարող ըմբռնումը եղած է: Այսպէս՝ թէեւ բանտի խուցերէն ազատած՝ եւ սակայն մինչեւ Պոլսէն գալիք ապահովեցուցիչ տեղեկութիւնները, անոնք ենթարկուած էին քաղաքաբեկութեան:

Իրենց պարտադրուած այս վիճակին մէջ անոնք պատահութիւն մը գտան շարունակելու իրենց ուսումնասիրական աշխատանքը: Ապահովութեան համար որդեցին իրենցմէ մէկ երկուքը մշտապէս մնալ քաղաքին մէջ՝ փնտռուելու պարագային լուր տալու համար գիւղերն ու վանքերը մեկնող իրենց ընկերներուն: Անոնք գտած էին ժողովուրդին հետ ուղղակի շփում պահելու կերպը:

Նկատելով որ ժողովուրդի մը ներքին կեանքն ու մտածման իսկութիւնը առաւելաբար գիւղացին է որ կարող է արտայայտել, անոնք այցելեցին վանքերը մանաւանդ տօնական օրերու առթիւ, զիւղերը մտնելով խառնուեցան զիւղացիներու մտերմական հաւաքոյթներուն, զանոնք խօսեցուցին զիրենք հետաքրքրող բազմաթիւ հարցերու մասին, զանոնք ղիտեցին ի-

րենց ամբողջական կայուն թիւններուն մէջ: Տեսան թէ ժողովուրդը իրենց սպասածէն շատ աւելի արթուն էր եւ շատ աւելի մտահոգուած ու շրջահայեաց, եւ միեւնոյն ատեն՝ վճռական շարժումներու ընդունակ:

Ատոմը իր շրջապատյաներու ընթացքին ո՛չ միայն պատեհ-հուծիւն ունեցաւ թափանցելու գիւղացիներու մտածման, այլեւ մի քանի անդամներ ուղղակի իր ներկայութեամբ կատարուեցան դէպքեր, որոնք զործնապէս ապացուցին թէ հայ ժողովուրդին մէջ որոշ չափով ինքնապաշտպանութեան դադարը վերացական բան մը չէր, այլ՝ իրողական փաստ:

Խաչափայտի տօնին առիթով օր մը անոնք կ'ընկերանան Խաչկափանքի գիւղապետ Ռաֆայէլ աղային տղուն՝ հետը [գիւղէն երկու ժամ հեռու] Խաչափայտի լեռնադաշտը բարձրանալու համար(*): Հոն բարձրացած էր նաեւ շրջակայ գիւղերու գիւղացիութիւնը: Օրուան տօնախմբութենէն վերադարձին՝ թուրք եւ քիւրտ աւաղակախումբ մը կը յարձակի ուխտաւոր հայերու վրայ՝ կողոպտելու համար: Ուխտաւորներէն մաս մը ինքնապաշտպանութեան կը դիմէ: Զինական բախումին մէջ ինքնապաշտպանութեան գլխող գիւղացիները կը յաղթեն ստուար թիւով աւաղակներուն եւ կը հալածեն զանոնք: Ատոմը եւ իր ընկերները իրենց ընկերացող գիւղապետի տղուն՝ Մովսէսին կը հարցնեն այս անակնկալ եւ անսպասելի դիմադրութեան մասին: Մովսէսը կը պատասխանէ թէ անոնք «հայրենասէրներ»ու խումբերէն մէկն են: Ատոմ եւ իր ընկերները կ'անդրադառնան թէ արդէն ժողովուրդը ազգային շարժումի սկսած է՝ երբ ունի կազմակերպուած ազդասէրներու խումբեր, թէն մին միւսէն անջատ գործող:

Ուրիշ օր մը Ատոմը Արտաշէս Մկրտանին հետ կ'այցելէ Հառան-Քալէի վանքը (**), կառուցուած Միրանեանց բարձրա-

(*) Գիւղն ունէր 140 տուն քուրք եւ 48 տուն հայ: Խաչափայտի յեռնադաշտին մէջ կար Եփրատի ակունքներէմ մին, որուն մասին աւանդութիւնը կ'ըսէր թէ Խաչափայտը պարսկներէն խլուելէ ետք, կրկին անոնց ձեռքը չիցնալու համար քաղուեր է հոն եւ ակը դարձնելու փորձեր արեւելի: Գէորգ Զիլինկիբեանն ու Յակոբ Գանթարեմեանը՝ իմանալով Ատոմին եւ ընկերներուն Խաչկափանք գտնուիլը՝ կ'այցելեն անոնց եւ իրասին կ'երթան Սրտածոր՝ թէ՛ գուարանալու եւ թէ՛ իրենց ընկիւիքին մասին խորհրդակցելու:

(**) Մինչ այդ անոնք այցելած էին Կարնոյ դաշտին հայաբնակ գիւղերը, Կարմիր վանքը (ըստ աւանդութեան կառուցուած Լուսաւորիչիմ կողմէ), Հռիփսիմեանց ձորը՝ բնաւթեան հրաշալիք մը, ուր Բարայրի մը մէջ իբրեւ թէ ապաստանած է Հռիփսիմէ կոյսն իր ընկերուհիներով: Քա-

գիրքերան կատարէն քիչ վար, որուն վտանհայրը՝ Պոլսէն խառ-
գելաղցի Տիմէթէոս վրդ. Արամեան, շրջանի գիւղացիութեան
վրայ՝ իրը տէր եւ տնօրէն մինչեւ դատական գործերու՝ մեծ
հեղինակութիւն մը ապահոված է եղեր: Վանահայրը մեծ
հիւրընկալութիւն ցոյց կու տայ իրենց, քանի որ գիրենք յանձ-
նարարող Կերեկցեանին համընթաց անհրաժեշտ չափով որպէս
վստահելի անձնաւորութիւններ կը ներկայացնէր գիրենք:

Գիրենք մը Վարդապետը, առանց լուր տալու իրենց, պա-
հապանին հետ գաղանի կը բացակայի վանքէն: Յաջորդ օր ի-
րենց կը պատմէ թէ իր ձիաւոր զինուած խումբով բախումներ
ունեցած էր թուրք սապակախումբի մը հետ եւ անոր լաւ դաս
մը տուած: Ան կը պատմէ նաեւ թէ նման արշաւանքներու ըն-
թացքին ձեռք բերուած աւարէն բաժին կը հանէր Հասան-Քա-
լէի քայմաքամին ալ: Եւ քանի որ Կերեկցեանին համընթաց
շնորհիւ իր հիւրերը իր բացարձակ վստահութիւնը կը վայե-
լէին՝ անոնց ցոյց կու տայ իր զինամթերքի դաղանի պահեստ-
ներէն մին, ուր կը գտնուէին յիսուն հրացաններ եւ մեծ քանա-
կութեամբ փամփուռներ:

Այս ալ տրիշ փաստ մը՝ որ Երկրին մէջ կային «հայրենա-
սէրներ»ու խումբեր, թէեւ կազմակերպական ընդհանուր դե-
կավարութեան մը հրահանգներով չէին գործեր, այլ՝ իւրա-
քանչիւր խումբ իր յարմար պատած եղանակովը:

Ուրիշ օր մըն ալ Լուսաւորիչի վանքի աօնին ներկայ կ'ըլ-
լան իրենք եւս: Տօնախմբութեան աօրթով հոն ղեմած էին նա-
եւ հազարաւոր ուխտաւորներ: Վանքին հողաբարձութիւնը ա-
կանաւոր հիւրերուն համար կը կազմակերպէ ընդունելութիւն
մը, որուն կը հրաւիրուին Ատոմն ու իր ընկերները: Ճաշէն յե-
տոյ Ժողովարդին առաջնորդող զէմքերը կ'անդրադառնան օր-
ւան անցուղարձերուն: Խօսակցութեան նիւթը կը դառնայ գի-
րենք անմիջականօրէն հետաքրքրող մարդերու շուրջ: Թուրք եւ
քիւրտ հարստահարութիւնները եւ մասնաւորապէս Մուսա պէ-

րայիին ստորոտը կար աւերակ վաճճ մը՝ Լուսաւորիչին կողմէ կառուցուած
իբրեւ թէ:

Իսկ Հասան-Քալէի վանքը, ուր կը գտնուի Գրիգոր Մագիստրոսին
գերեզմանը, կ'ըստի թէ կառուցուած է Գր. Մագիստրոսին կողմէ: Ատոմը
կը գրէ. «վանքը իր երեք կողմերէն պաշտպանուած էր բալարովիմ, իսկ
առջեւը ունէր գեղեցիկ պարտէզ մը, ամբողջ վարդատունկերով լեցում:
Պարտէզէն վաւ անընդհատ վայրէջք մը կը սկսէր, գրեթէ քառորդ ժամ
տեւող: Վանքը իր այս գիրքով կ'իշխէր ամբողջ Բաւեմի դաշտին հիւսիսա-
յին մասին եւ կարելի է ըսել թէ անառիկ գիրք մը ունէր: Վանքի դահլիճի
պատուհաններէն կարելի էր տեսնել ամբողջ վերին Բաւեմի դաշտին մէջ
փռուած գիւղերը եւ Մուրց գետի օձապտոյտ ընթացքը մինչեւ Արաքս»:

կին կողմէ Կիւլիզարին առեւանդումը տաք վիճաբանութեան նիւթ կը հայթայթեն ներկաներուն, որոնք կը կաղմեն երկու ձախառ: Մէկ կողմը կը պաշտպանէ համբերատարութիւնը. իսկ միւս կողմը ստրկութեան հանդուրժողութիւնը կը գտնէ անբժարենլի: Ատոմը եւ իր ընկերները բնականաբար կը պաշտպանեն ժողովուրդին շնորհուած օրէնքի քաղաքական աղատութիւնը: Վիճաբանութիւնը կը ստանայ սուր բնոյթ: Երիտասարդները եւ երէցներուն մէկ մասը կը բախին իրարու: Ատոմին եւ Արտաշէսին զգուշաւորութիւնը զիրենք կը ստիպէ լռել:

Բայց այդ վիճաբանութեան ընթացքին կը հաստատուի թէ Մուսա պէկին հետապնդումը կառավարական ձիաւոր ոստիկաններու ստուար խումրի մը կողմէ միշտ ձախողութեան կը մատնուի: Այս սպիկարութիւնը կամ չկամութիւնը նկատելով, կը կազմուի հայ կարիճներու խումբ մը՝ Մարտիրոս անունով խմբապետի մը ղլխավորութեամբ՝ որ կը սկսի քերտ բռնապետներու լուրջ հետապնդումին: Երբ կառավարութիւնը կը տեսնէ թէ Մուսա պէկը նեղ կացութեան կը մատնուի, երկու հարիւր ոստիկաններու ջոկատ մը անմիջապէս կը զրկուի հայ խումբին դէմ: Կառավարական այս շարժումով կը շեղօքացուին հայ խումբին ձիւները եւ երիտասարդները կը ցրուին:

Գիւղերու մէջ զիւղապետներու մօտ գիշերային սովորական հաւաքոյթներու եւս կը մասնակցի Ատոմն ու կը խառնուի անոնց խօսակցութիւններուն, եւ սակայն թելադրական զգուշաւոր ներարկումներ կատարելով կը ջանայ ժողովուրդին ինքնեկ արթնութիւնը աւելի արծարծել՝ քարոզելով օրէնքի սահմաններուն մէջ ինքնապաշտպանութիւն: Մասնաւոր զգուշաւորութիւն կը զնէ իր արտայայտութիւններուն մէջ, որովհետեւ կը դիտէ թէ ժողովուրդին մէջ կան տարրեր, թէեւ քիչ, որոնց ստրուկի հօգիւրանութիւնը կորսնցուցած է մարդկային տարրական արժանապատուութիւնն իսկ եւ այդ հոգեբանութեան թելադրութեամբ՝ անոնք կարող են դիմել ուղղակի մատնութեան, մինչեւ իսկ օրէնքի սահմաններուն մէջ իր ըսելիքներուն համար:

Նման հաւաքոյթներէն մէկուն մէջ Կարնոյ առաջնորդական տեղապահ Գէորգ քահանային եղբօր վերաբերումը իրենց հանդէպ («Պարոններ, դուք հոս եկած էք խոտլութիւն ստեղծելու: Ձեր այդ գաղափարները զաղէք ձեր Մթամպուլի մէջ քարոզեցէք»), արդէն զիրենք զգուշաւորութեան հրաւիրող հարուած մըն էր:

Ատոմին եւ իր ընկերներուն այս քարոզութիւնները յառաջ բերին ինքնապաշտպանութեան նոր խումբերու կազմութեան նոր շարժումները, որոնք հիններու հետ միացած՝ նկատելի չա-

վող կ'առաջնորդէին հայ ժողովուրդը դէպի քաղաքացիական իրաւունքի զիսակցութիւնը:

Բայց հայ գիւղական շրջաններու ուսումնասիրական աշխատանքէն առաջ, Ատոմին եւ իր ընկերներուն համար անհրաժեշտ էր գտնել անոնց մօտենալու բանալին՝ առանց որուն անհաղորդ պիտի մնային գիւղացիներու եւ վանական շրջանակներու մտածութեան: Վստահելիութեան յանձնարարութիւնը պէտք էր ստանալ նախ հայրենասէր ճանչցուած Կարնոյ քաղաքացի յայտնի անձերէ:

Ծիշդ այդ նկատումով եւ այլապէս ամբողջ դաւառի հայտնութիւնը իր պայմաններով ուսումնասիրելու համար, Կարին հասնելէ յետոյ, Ատոմը լծուեցաւ աշխատանքի: Իր վնասած վստահելի տարրերը գտաւ առաջին երկու շարաթներու ընթացքին: Անոնց մէջ աղօղեցիկ դէմքեր էին Կարնոյ աղօղային վարժարաններու ընդհանուր տնօրէն Գէորդ Չիլինկիրեանը, յայտնի վաճառական Յակոբ Գանթարճեանը, Յովհաննէս Աստուրեանը, Խաչատուր Կերեկցեանը, Իշդալեցեանը(*): Վերջին երեք անձնաւորութիւնները իբր յեղափոխականներ նախապէս մահուան դատապարտուած էին եւ Յարութիւն պատրիարք Վհապետեանին միջամատութեամբ միայն ներում ստացած՝ պայմանաւ որ քաղաքէն դուրս չելլէին: Երեքն ալ մշտական հսկողութեան տակ կը գտնուէին: Եւ ճիշդ այդ պատճառով այս երեք վտանգուածները իրենց շարժումներուն եւ խօսակցութիւններուն մէջ արտակարգ զգուշաւորութիւն կը դնէին: Եւ սակայն անոնք էին Կարնոյ նահանգի աղօղային շարժումներու թաքնուած ղեկավարութիւնը ստանձնողները: Այդ ճանդամանքով ալ անոնց յանձնարարածները կը դառնային վստահելի՝ հայ շրջանակներու համար: Գիւղական շրջաններու առաջնորդող դէմքերուն անվերապահ վերարերումը Ատոմին եւ իր ընկերներուն հանդէպ՝ կ'առաջնորդուէր այս խումբի յանձնարարութիւններէն:



ԴԵՊՈՒ Ս. ԿԱՐԱՊԵՏ

Կարնոյ գիւղերուն եւ վանքերու ուսումնասիրական շրջագայութենէ ետք, Ատոմը իր ընկերներուն հետ կը վերադառնայ քաղաք: Օրին մէկը աւելի քան 300 զինեալ ձիաւոր կողկա-

(*) Խորքին մէջ Յովհաննէս Աստուրեանը, խաչատուր Կերեկցեանն ու Յակոբ Իշդալացեանը եիմնադիրներն էին 1881-ի Մայիսին Կարնոյ մէջ կեանքի կոչուած «Պաշտպան Հայրենեաց» կազմակերպութեան — Վ.Ղ.:

սահայեր կը հասնին Կարին, Մշոյ Ս. Կարապետ ուխտագնացութեան երթալու համար: Ատոմը եւ իր ընկերները, պատահութենէն օգտուելով, ուխտաւորներուն հետ կը մեկնին դէպի Ս. Կարապետ:

Մուրաւաւորը Ս. Կարապետի ուխտի օրերն էին: Հոն հաւաքուած րազմահազար հայ, քիւրտ ու թուրք ուխտաւորներու ներկայութիւնը լայն պատահութիւն կու տար Ատոմին եւ իր ընկերներուն՝ ծանօթանալու եւ մտերմական կապեր հաստատելու շարք մը շրջակայ վայրերէ հաւաքուած յայտնի հայերու հետ եւ լսելու այն բոլոր ազգային հարցերու մասին, որոնցմով կը հետաքրքրուէին իրենք: Այդ ծանօթ անձնաւորութիւններուն մէջ էին վանաքին վանահայրը [Ներսէս վրդ. Պարախանեան], Մշոյ առաջնորդարանի քարտուղար-գիւանապետ Մշեցի Գեղամը(*) եւ ուրիշներ: Այս հայրենասէր հայերու շրջանակը Ատոմին եւ իր ընկերներուն բաւարար միջոց կու տար իրենց մտադրած ուսումնասիրութիւնը կատարելու:

Մէկ շաբաթ Ս. Կարապետ մնալէ ետք, մեր երիտասարդները կ'անցնին Առաքելոց վանքը եւ Արիստակէս վարդապետին հիւրընկալութիւնը կը վայելին: Այս ուսուսհայ քաջ Վարդապետը, որ Կովկասէն խոյս տուած եւ Ս. Կարապետի մէջ վարդապետ ձեռնադրուած էր, իր գինուած վանական ընկերներու խումբին հետ շրջակայ աւաղակարարոյ քիւրտ աւատապետներուն պատուհասը պարծած էր: Ան էր որ վերադարձած էր վանքապատկան կալուածները այդ աւատապետներէն: Արիստակէս վանահայրը թէեւ յառաջացած տարիքի մէջ՝ կորովի եկեղեցական մըն էր եղած եւ քարոզած յեղափոխական միտքեր ընդդէմ բռնակալներու: Հայ ժողովուրդի շահերուն յաջողութեան միակ միջոցը գինական ինքնապաշտպանութեան մէջ գտած էր եւ Կործնականուպէս ալ ապացուցած այդ տեսակէտը:

Ատոմը իր ծանօթացած հայրենասէր անձերուն կողմէ վրատահելութեան յանձնարարութիւններով ու ժեղացած՝ կը շարունակէ իր ուսումնասիրական շրջագայութիւնը շարք մը շրջաններու մէջ եւ կ'այցելէ Բաղէշ: Բաւականաչափ առաջնորդող ծանօթութիւններ հաւաքելէ յետոյ կը վերադառնայ Կարին:

(*) Մշեցի Գեղամը (Տէր Կարապետեան) արդէն հիմնադիր դեկավարներէն էր զադոնի կազմակերպութեան մը, որուն միւս հիմնադիրներէն էին Միքիան Տամատեանն ու վանեցի արմենակեան Հայրապետ Ճանիկեանը — Վ.Ղ.: Ատոմը կը պատմէ թէ Գեղամը ամուսնացած է համբաւաւոր կիւլիգարին հետ:

ԿԱՐՆՈՅ ՄԷՋ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՄՈՒՍԱ ՊԵԿԻ ՀԵՏ

Կարին վերադառնալէ մէկ քանի օր յետոյ համբաւաւոր աւատապետ Մուսա պէկը ձերբակալուած կը բերուի Կարին։ Յովհաննէս Աստուրեանին միջոցով Ատոմը տեսակցութիւն մը կ'ունենայ այդ հայահալած հռչակաւոր աւաղակապետին հետ, որ առեսանդած էր Կիւլիպարը եւ պատրիարքարանի խիստ հետապնդումներուն շնորհիւ կը տարուէր Պոլիս՝ պատմական-կատակերգական դատաւարութեան ենթարկուելու։ Տեսակցութիւնը տեղի կ'ունենայ Կէօլպաշի խանին մէջ։

Մուսա պէկը չափազանց մտահոգուած՝ կ'ուզէ դիտնալ թէ Պոլսոյ մէջ ի՛նչ դատաւճիւռ կը սպասէ իրեն. թէ թերթերը ի՛նչ կը գրեն իր մասին։ Այդ տեսակցութեան ընթացքին կը հարցնէ թէ ինչո՞ւ կառավարութիւնը զինք կը տանի Պոլիս, երբ ինք հայերու վրայ խժգժութիւնները դործած է անսասող իրեն եղած դրաւոր հրահանգներուն։ Եւ որպէս փաստ, իրենց ընկերացող եօթ անձերէն մէկուն — հայ մը — կը հրամայէ բերել իր անձնական փողք սլոյոլուսակը։ Հոնկէ կը հանէ Վանի, Բաղէշի եւ Կարնոյ կուսակալներուն նամակներն ու կարդալ կուտայ։ Երեք յիշեալ կուսակալները այդ նամակներով իրեն կը հրահանգէին հարստահարել հայերը։ «Իրաւունք չունին, — կ'ըսէ Մուսա պէկը, — զիս պատժելու. ես կառավարական հրահանգներ միայն դործադրած եմ», եւ կ'աւելցնէ թէ ինք յանցաւոր է որ հետեւանք տուած է իրեն տրուած հրահանգներուն եւ գործիք դարձած թուրքերու ձեռքին՝ նեղելու իր «կթան կովերը»։

Ատոմը եւ իր ընկերները նախ կողմնակի միջոցով կը փորձեն Մուսա պէկին ընկերացող հայը կաշառելով ձեռք բերել այդ փաստաթուղթերը։ Հայը բացարձակապէս կը մերժէ ընթացք տալ նման առաջարկի մը։ Ապա կ'որոշեն խումբ մը դիւղացի կտրիճ հայերով ճամբան դարանակալ սպասել եւ յարձակիլ Մուսա պէկին ընկերացող ոստիկաններուն վրայ՝ յափշտակելու այդ նամակները։

Այդ մտադրութիւնն ալ անկարելի կը դառնայ, որովհետեւ կառավարութիւնը ձիաւոր ոստիկաններու զօրաւոր ջոկատ մը կ'ընկերացնէ Մուսա պէկին եւ իր հետեւորդներուն։ Ատոմը դժբախտաբար չէ մտածած այդ նամակներուն գոնէ լուսանկարները առնել։ Բան մը՝ որ թերեւս հայը կաշառելով կարելի ըլլար։ Ոչ իսկ մտածած է օգտագործել նամակներու ընթերցման ներկայ գտնուածներուն վկայութիւնը։ Այդ կարելի էր, քանի որ Մուսա պէկին դատաւարութեան ընթացքին, վկայե-

լու համար աւելի քան քառասուն հայ եւ քիւրտ վիճակներ բեր-
ւեցան Մուշէն:



ՎՏԱՆԳԱԽՈՐ ՀԱՆՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԸ ՓՈՐՁԸ

Երբ Հայաստանի հայերը հարստահարութիւններու մղձա-
ւանջային ժամանակներու մէջ կը տառապէին ծանրօրէն, Ս. Կա-
րապետի ուխտի օրերուն դադտնօրէն հանրադրութիւն հաւա-
քելու գործով կը զբաղէին երկու ռուսահայեր, որոնք բացար-
ձակ պաշտպանութիւնը կը վայելէին Կարնոյ ռուս հիւսպատո-
սին: Այդ հանրադրութեան բովանդակութիւնն էր զիմում Ռու-
սիոյ ամենազօր կայսեր՝ զրաւելու Հայաստանը եւ ազատելու
հայերը թրքական մահացնող լուծէն: Մենք այլապէս դիտէինք
թէ նման փորձ մը կատարուեցաւ ռուսադաւանութեան յարե-
լու շարժումով ալ եւ ներքին աշխատանքով հաղիւ կարելի եղաւ
վերականգնել այդ փորձը:

Երկու համայնքներու առաջնորդներն ու հայ ժողովուրդի
աշխատուոր ղեմքերը, ինչպէս նաեւ Ատոմը իր ընկերներով,
տենդապին աշխատանքի կը լծուին արդիւլելու որ ժողովուրդը
այդ վտանգաւոր խաղին զոհ դառնայ: Այս հակադդդ շարժու-
մին շնորհիւ, այդ երկու հայերուն հաղիւ կարելի կը դառնայ
հաւաքել մէկ քանի հազար ստորադրութիւններ Կարնոյ եւ Բա-
ղէշի նահանգներուն մէջ: Հակաշարժումը ստեղծողներուն միակ
մտահոգութիւնն եղած է այն, որ թէեւ Ռուսիոյ տիրապետու-
թեան տակ կարելի կ'ըլլայ ապահովել հայերու քաղաքացիա-
կան իրաւունքներու պաշտպանութիւնը, սակայն պէտք է հրա-
ժեշտ տալ ազգային քաղաքական բաղձանքներու եւ հայ ազա-
տագրութեան ամէն յոյսի: Այս մտավախութեան մեկնակէտէն
յառաջանալով՝ հայեր պատմական յարմարագոյն վայրկեան-
ներուն յաճախ խոյս տուած են ռուսական օժանդակութիւննե-
րէն: 1876-78-ի ռուս-թրքական պատերազմի տաղնապի շըր-
ջաններուն նոյն մտավախութիւնն էր որ Պոյսոյ պատրիար-
քարաններու եւ աւետարանական ազգապետարաններու շըջա-
նակները պարբերաբար կը մղէր հակառուսական ելոյթներ ար-
ձանադրելու (տեսնել՝ «Պլու Պուք, Թըրքի», 1877, թիւ 15, էջ
67 եւ «Պլու Պուք», թիւ 1, էջ 375):



ՎԵՐԱԴԱՐՁ ԴԵՊԻ ՊՈԼԻՍ

Մայիսէն Նոյեմբեր, վեց ամիսներու ռուսամասիրական
շըջան մը բաւական եղաւ որ Ատոմը եւ իր ընկերները որոշ չա-

վով հասկնան հայկական Նահանգներու քաղաքական ներքին կացութիւնը, միջ-ցեղային յարաբերութիւնները, թուրք կառավարական ջրջանակներու հակահայ արամադրութիւնները, տառապող հայ ժողովուրդի ծայրայեղ շարժումներու յուսահատական արամադրութիւնները: Նոյն եղբակացութեան հասած էին իրենցմէ առաջ եւ վերջ Ծերենցներ, Մ. Փորթուղալեաններ, Մ. Տամատեաններ, Լ. Մկրտիչեաններ՝ առանց յիշելու տեղական դործիչները, ինչպէս՝ Խրիմեաններ, Մ. Աւետիսեաններ, Մ. Շահէններ, Հրայրներ եւ ուրիշներ: Մտաւորականներ եւ ժողովուրդի պարզ զաւակներ, որոնց միակ բաղձանքը եղած է աշխարհի մարդերու յատուկ խաղաղ աշխատանքի պատեհութիւն ստեղծել շինարար հայ ժողովուրդի համար՝ ապահովելով օրէնքի սահմաններուն մէջ անոր քաղաքական ազատութիւնը:

Սօս երեք ամիսներ եւս Կարին մնալով կարող էլ ըլլան Պոլիս վերադառնալու արտօնութիւն ստանալ եւ ոստիկանական հսկողութեամբ հասնիլ Պոլիս, ուր երաշխաւորութեան տակ ազատ կ'արձակուին:



ԱՏՈՄԸ ԿԸ ՄԻԱՆԱՅ ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

Պոլիս վերադարձէն յետոյ, Ատոմը կը ծանօթանայ Համարարձում Պոյաճեանին եւ Գրիգոր Աչքալաչեանին հետ, որոնց հետապնդումով 1890-ին կը միանայ Պոլսոյ մէջ նորակազմ Հնչակեան Կուսակցութեան: Յեղափոխական արամադրութիւնով լեցուած քաղաքական միջոյցորար նոր կուսակցութեան զարգացման համար նպաստող առաջնակարգ պատեհութիւն կու տար՝ հայկական ջրջանակներու երիտասարդութիւնը միացնելու նոր շարժումին: Արդէն դէյթունցի Յարութիւն Չաքրբեանին զօրաւոր խումբը(*) եւ ուրիշներ նոր կուսակցութեան միացան շարժումի առաջին օրերուն: Չաքրբեան եւ Պոյաճեան խումբերուն կեդրոնական գէմքերը արդէն մեկնած էին արտա-սահման: Ինչպէս ստորեւ պիտի տեսնենք, դիտելի է թէ նորակազմ կուսակցութեան Վարիչ Մարմինին(**) կազմը, բացի Տամատեանէն, ընտրուած էր պաւսապիներէ:

(*) Ըստ Ատոմին՝ Չաքրբեանին խումբին անդամ եղած են նախ Համբարձում Պոյաճեանն ու Գրիգոր Աչքալաչեանը — Վ.Ղ.:

(**) Հեղինակը յաճախ Պոլսոյ գերագոյն մարմինը կոչած է Ծրջա-նային Վարչութիւն. մենք ամէնուր զայն կը կոչենք Վարիչ Մարմին — Վ.Ղ.:

Օրոշան երկխոսարդութեան հրայրքոտ տրամադրութիւնը անշուշտ կ'առաջնորդուէր մտածականէն աւելի զգացական խանդավառութենէ եւ այդ ռոմանթիքմը որոշ ժամանակի մը տեւողութեամբ դեկավարող ուղղութիւնը պիտի դառնար յեղափոխական առաջին սերունդի ներկայացուցիչներուն համար: Անոնք տարամեթօրէն կ'առչած էին մոլեռանդ նուիրումով ազատագրական հանդանակին: «Կա'մ մահ, կա'մ ազատութիւն»ը, «Այժմ կամ երբեք»ը իրենց համար դարձան անվերածելի հաւատամք: Այսպէս էին մեր ազատագրական շարժումներն ու նուիրումը: Ինքնամոռացումի սրբազան խենդեր էին անոնք, որ կը դիմէին դէպի կրակի մկրտութիւն, դէպի ուժասպառում, եւ տանեակ մը տարիներու անմարդկային զոհողութիւններու գինով միայն տնոնք հասան այդ յատակ զորակացութեան եւ, հետեւաբար, նոր գործելակերպի իմաստութիւնը աւելի լրջախոհ հասունութեան առաջնորդեց զանոնք, ինչպէս պիտի տեսնենք յետոյ:

Այդ ցուցական գործելակերպին յառաջացուցած ներքին ուժերու սպարդիւն սպառումը առաքելական եռանդով նուիրակները պարտադրեց որ վերատեսութեան ենթարկեն կտրուած ճամբան եւ հակակշռող մասժումներ խառնեն իրենց նախնական մըրմնումներուն մէջ ու աւելի հասուն զեկավարութեամբ վարեն յեղափոխական աշխատանքը: Բայց այս մասին՝ յետոյ:

Այսպէս, Ատոմը 1890-ին կը միանայ Հնչակեան Կուսակցութեան: Առաջին աշխատանքը կը տարուի երկու զօով: Կադմակերպչական ու քարոզչական շարժումներ բովանդակութիւն կու տային նորահաղմ կուսակցութեան գործունէութեան: Կուսակցութեան ներքին կառուցուածքը տասնապետական դրութեան վրայ հիմնուած էր Պոլսոյ մէջ: Հինգ տասնեակները կը կազմէին յիսնապետութիւն մը: Տասնապետները միայն կը ճանչնային զիրար: Պոլսոյ թաղերն ու արուարձանները ունէին մէկ կամ մէկէ աւելի տասնեակներ: Կային նաեւ ահաբեկչական խումբեր, որոնց ղոյութիւնը գիտէին միայն չըջուն գործիչները: Ահարեկիչները կը գործէին մի միայն այս չըջուն գործիչներուն հրահանգով: Այդ գործիչներու թիւը երկուքէ աւելի չէր: Անոնք ընտրուած էին Պոլսոյ գերագոյն մարմինին՝ Վարիչ Մարմնին կազմէն:

Ժրնեւի Կեդրոնէն իրր գործիչ [1890-ին] Պոլիս կու գան Ռուբէն Խանադատր, Շմաւոնը (Գարրիէլ Կաֆեան), Յակոբ Մեղաւորեանը եւ Սիմոն Յովհանեանը՝ կազմակերպական աշխատանք կատարելու համար:

Պոլսոյ գերագոյն մարմնոյ առաջին կազմը կը բաղկանար հետեւեալ զեկավարներէն՝ րժշկական ուսանող հաճընցի Համ-

բարձուժ Պօյաճևան (Մուրաա), իրաւադիտութեան ուսանող տիւրիկցի Գրիգոր Գլըճեան, սերտաւորացի Հաշուակալ Մարդար Մոմճեան, ուսուցիչ Միհրան Տամատեան, սեքստացի Մարգար Վռամեան (Ատոմ Ասլանեան), փաստաբան Գրիգոր Ալըճուլաչեան, ուսասհայ դեղագործ Յակոբ Գալանճեան, վանեցի խանութպան Յարութիւն Ճանկիւլեան(*) : Դիտելի է որ Մարմնին անդամները, բացի Միհրան Տամատեանէն, բոլորն ալ դաւաճացիներ եղած են եւ բոլորն ալ 25-32 տարեկան երիտասարդներ : Այս երիտասարդներն էին որ պիտի ստանձնէին Կուսակցութեան ղեկավարութիւնը օսմանեան պետութեան մայրաքաղաքին մէջ եւ յետոյ ալ անոնցմէ ոմանք պիտի ստանձնէին դաւաճական շրջանակներու ղեկավարութիւնը — Տամատեանը եւ Մուրաաը՝ Սասուն-Տարօնի մէջ, Ատոմը՝ Փոքր Հայքի :



ԿԱՐՆՈՅ ԲԱԽՈՒՄԸ ԵՒ ԳՈՒՄ-ԳԱՓՈՒՒ ՅՈՅՑԸ

Կարնոյ մէջ 1890 Յունիս 8-ին(**) տեղի ունեցած էր ուստիկանական ուժերու եւ Հայերու միջեւ ծանր բախում մը : Սպաննուած ու ձերբակալուած էին բաւական թուով Հայեր : Առաջին բացառաւոր պինական բախումին էր որ տեղի կ'ունենար Հայերու եւ թուրքերու միջեւ : Այս հաւաքական բախումին արձագանգը ստեղծած էր քաղաքական ծանր մթնոլորտ : Պոլսոյ Վարիչ Մարմինը որոշեց բոլորի խաղաղ ցոյց մը կատարել : Բայց ցոյցէն առաջ որոշուեցաւ Պոլսէն հեռացնել դործիչներ—

(*) «Պատմութիւն Ս.Գ. Հնչակեան Կուսակցութեան» գիրքին Ա. հատորին (Պէյրուք, 1962) 50-րդ էջով իբրեւ վարիչ Մարմնի անդամներ կը նշուին անուանները Հ. Պոյաճեանին, Յ. Ճանկիւլեանին, Մ. Տամատեանին, Մարգար Հացագործեանին, Գ. Գլըճեանին, Յ. Գալանճեանին, Ա. Ասլանեանին, Անտոն Ռշտունիին : Կ'ըսուի նաեւ քէ կային ուրիշներ ալ—վ.Ղ. :

(**) Վերը ակնարկուած գիրքին մէջ Կարնոյ ցոյցին իբրեւ քուակաւ կը նշուի Յունիս 18-ը : Հրանդ Գանգրունիին «Հայ յեղափոխութիւնը օսմանեան բռնատիրութեան դէմ (1890-1910)» աշխատութեան մէջ (Պէյրուք, 1973) տրուած է՝ Յունիս 20-ը : Մեմֆ կանգ կ'առնենք Յունիս 18-ին վրայ, որ նշուած է նաեւ Օրմանեանին «Ազգապատումն Եւ Մատուր Ազայեանին «Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմութիւնից» (Երեւան, 1976) գիրքին մէջ — վ.Ղ. :

բը(*): Շմաւանը զրկուեցաւ Արարիկի, տեղույն վարժարանի տնօրէնութիւնն ստանձնելու, Մեղաւորեանը՝ Տրապիզոն, Խաչատուրը՝ Պաթում: Սիւնն Յովհաննէանը արգէն Պոլսոյ մերձակայ գետաւանները մեկնած էր քարոզչական գործով:

Թէեւ ցոյցը մտադրուած էր կատարել խաղաղ բողոքի նպատակով, բայց նախատեսելով անխնկալները՝ ցուցարարներէն ոմանք զինուած էին. սակայն խստիւ արգելուած էր զինական որեւէ բախում՝ եթէ անխուսափելին չպատահէր: Յոյսը պիտի զեկաւարէր Յարութիւն Ճանկիւլեանը, որուն յանձնուած էր կառավարութեան ուղղուած բողոքագիրը, որ պէտք է ներկայացնէր օրուան պատրիարքը՝ Խորէն արքեպիսկոպոս Աշըղեան:

Պատարագի տաեն ճանկիւլեանը կը կարդայ այդ բողոքագիրը: Պատրիարքը արգէն հեռացած էր պատարագէն եւ բարձրացած պատրիարքարանի դահլիճը: Պոլսոյ թաղերէն հասած ժողովրդեան զանգուածները ճանկիւլեանին առաջարկութեամբ կը խուժեն պատրիարքարան: Պատրիարքը բռնութեամբ կ'առաջնորդեն կառք մը: ճանկիւլեանը իր գերագըրդուածի պահուն դահլիճի պատէն վար կ'առնէ պետական զինանշանը եւ կ'անպատուէ զայն: Այդ արարքը արգէն սահմանադրանքով մըն էր իրեն տրուած իրաւասութեան: Զանգուածային թափօրը կը յատանայ: Ոստիկանութիւն եւ մինչեւ իսկ զինուորական ջոկատներ կ'ընկերանան թափօրին՝ առանց արգելք յարուցանելու: Երբ թափօրը բաւական կը յառաջանայ, ոստիկանութիւնը կ'ուղէ ցրուել ցուցարարները: Առանց նախապէս տրուած սպառնալիքին՝ զանգուածները կը շարժին: Եւ կը պատահի անխուսափելի բախումը, որ կը տեւէ մէկ-երկու ժամ: Բախումին մէջ հայերէն կը սպաննուին Մանուկ Նալպանտեան ալճեմագիրն եւ Սերաստիոյ Սարր-Հասան զիւղէն Յովհաննէս Ղումբուեանը: Կը վիրաւորուի չորսը տասն հոգի: Թուրքերէն կը սպաննուին ու կը վիրաւորուին մի քանի ոստիկաններ: Պատրիարքը կը վերադարձուի պատրիարքարան: Կը կատարուին բազմաթիւ ձերբակալութիւններ եւ խուզարկութիւններ:

Մայր եկեղեցիի Տէր Սուքիաս առաջ քահանան եւ Կեօրիկ Փաշայի քարոզիչ Տաճատ վարդապետը իրենց կատարած մատնութիւններուն համար ահարեկչութեան կ'ենթարկուին: Առաջինին ահարեկիչը՝ Յակոբ անունով երիտասարդը, կը ձերբակալուի եւ բանտի տանջանքներուն ենթարկուելով կը մեռնի:

(*) Գործիչները դուրս դրկելու համար անխառն զումարը կը տրամադրուի Միքայել ազա անուն մէկու մը կողմէ, որ քանապահն էր Արմտայի Ռսուլմասիրաց Ընկերութեան, որուն նպատակն էր Արմտայի մէջ դպրոց բանալ: Ատումը ատենադպիրն էր այդ Ռսուլմասիրացին:

Իսկ Տաճառին ահարեկիչը կտրելի կ'ըլլայ Պուլկարիս փախ-
ցնել:

Շարժումին ղեկավար ղեմքերէն ձերբակալուածները դա-
տապարտուեցան աքսորի եւ բերդարդելութեան — Ճանկիւ-
լանը(*), Գր. Գլըճեանը, Յ. Պալլարեանը՝ Աքիւս, Մարգար
Մոմճեանը, Սարգիս Տոքթորեանը՝ Ալեքսանդրիւս, [Ալարիկ]
Գոլոյեանը՝ ավերիկեան Տրիպոլիս, Թորոս վարժապետը, ակնցի
Ալեքսանը եւ [բինկեանցի] Սարգիս Հոգեանը՝ Գոնիւս:

Այս անիմատտ ցոյցին հետեանքով Պուլսոյ մէջ Կուսակ-
ցութիւնը ենթարկուեցաւ խոշոր ցնցումներու: Եւ սակայն հա-
կառակ ալդ ցնցումներուն՝ յեղափոխական գործը ղեկավար-
ւեցաւ աւելի պրկուած ուժերով: Մատնութիւններու վտառա-
կան մեղաւորիցները Կուսակցութեան կողմէ դատապարտուե-
ցան ահարեկչութեան: Յուլիս 15-էն սկսեալ, երեք ամիսներու
ընթացքին նամակառան ցրուիչ Արմենակը, սլալատական լըբ-
տես վաստարան Խաչիկ էֆէնտին, դատական սրտառնեայ Ապ-
տիւլ Քերիմ Սատըքը եւ ուրիշ հայ ու թուրք լրտեսներ եւ մատ-
նիչներ իրենց մահը դառն կուսակցութիւններու պնդակով կամ
դաշոյնով:

Աչըբեան Խորէն պատրիարքը այս ղեպքերուն վրայ հրա-
ժարեցաւ եւ անդրդուելիօրէն կը պնդէր իր հրաժարականին
վրայ: Կուսակցութեան նպատակն էր անիշխանութիւն ստեղ-
ծել, եւ՝ յաջողեցաւ: Ազգային իշխանութիւնը անգործութեան
դատապարտուեցաւ: Լուծուած էին ժողովները եւ պատասխա-
նատու մարմին չկար պատրիարքարանին մէջ: Այս վիճակը
սուեկց մի քանի ամիսներ:

Պուլսը յեղափոխական խառնաբաշի մը վերածուած էր եւ
օրտան Վարիչ Մարմինը լծուած տենդալին աշխատանքի՝
շարժումներ ստեղծելու եւ վարելու բարդացած յեղափոխու-
թեան մը գործը:

Այրերու կողքին կաղմուած էին իզական սեռէ անձնուէր
խումբեր: Կանայք յեղափոխական շրջանակներու առաջնորդող
ղեմքերէն էին օրիւրոյներ էլիզ Կոկանեանը, Մարի Պէյլէրեա-
նը, Իսկուհի Պալճեանը, Աննիկ Սրմաքեչեանը, Քրիստինէ Դա-
ղաղեանը եւ մէկ քանի ուրիշներ: Այս իզական խումբերուն
գլխաւոր յանձնառութիւններն էին ղէնքի, նամակի, գիրքի եւ

(*) Հնչակեան պատմագիրքին յիշեալ Ա. հատորին մէջ (էջ 60-61)
ձանկիւլեանին փոխարէն տրուած է ամուռը Պետրոս Մարիմեանին: Նշուած
է նաեւ քէ Մոմճեանը եւ Տոքթորեանը աքսորուած են ավերիկեան Թրիփոլի:
Կը քուի քէ միշդը Ատոմիս արձանագրութիւնն է, սրովիտեւ ձանկիւլեան
իւ «Յիշատակներ հայկական ճգնաժամէն» գործին մէջ կը հաղորդէ իր Ա-
քիւս աքսորուիլը — Վ.Ղ.:

թերթերու, փոխադրութիւնը, ինչպէս նաեւ թաղերու խումբերուն միջեւ լրատուութիւնը:

Կուսակցութեան ներքին կենսունակութիւնը ստեղծած էր համակերնէրու ընդարձակ շրջանակներ մասնաւորաբար մասաւորականներու մէջ, ինչպէս՝ «Արեւելք»ի անձնակազմն ու գործակիցները(*):

Վերջիններուն միջոցով յաճախ նիւթական օժանդակութիւն կը հասնէր զօտեմարտի բռնուած յեղափոխականներու, թէեւ անոնք վերջին ծայր վերապահութիւն ցոյց կու տային բոլորին հանդէպ: Մինչեւ իսկ հայ հարուստներէն ոմանք Խրիմեան Հայրիկին միջոցով կարեւոր գումարներ կը յատկացնէին «Սուրբ գործին»: Պոլսոյ մէջ յեղափոխութեան թափը իր արձրակէտին հասած էր:

Օրուան Վարիչ Մարմինը հմայք եւ վստահութիւն ստեղծած էր իր գործին եւ շարժումներուն հանդէպ: Իմաստուն նախատեսութեամբ Վարիչ Մարմնի երկրորդ կազմ մը եւս ընտրուած էր՝ օրուան վարչական կազմի ձերբակալութեան պարագային գործի զուխ անցնելու համար: Այս պահեստի կազմն էր որ հետագային վարեց յեղափոխութեան գործը, երբ բուն Մարմնի անդամները կա՛մ ձերբակալուած էին եւ կա՛մ պարտադրաբար երկրէն խոյս տուած:

Բայց թուրք ոստիկանութիւնն ալ չէր քնանար: Իր ոստիկանական դադանի սպասարկութիւնը հետադատական պրկուած աշխատանքի լծուած էր: Անոր աշաւուրջ հետապնդումով լըր-ջօրէն վտանգուած էր կուսակցական յայտնի դէմքերու եւ ահարեկիչներու սպառնութիւնը: Իսկ հաւաքաւայրերը ենթակայ դարձած էին յաճախող խուզարկութեանց: Վտանգուածները պէտք էր հեռացնել թուրքիայէն: Այս մասնաշրջութիւնն ալ ուրիշ մղձաւանջ մըն էր աւելցուցած Վարիչ Մարմնին արդէն իսկ ծանրաբեռնուած ուսերուն վրայ:

Այդ օրերուն Բերայի եւ անոր յարակից թաղերուն մէջ թուրք ոստիկանութեան սպառնալից դարձած էր իտալացիներէ կազմուած աւաղակախումբ մը, որ իր կազմակերպական մեքենային շնորհիւ անհպելի դարձած կը գործէր զրեթէ անկաշկանդ:

Կուսակցութեան կարեւոր ընկերներէն Անդրէաս Մկրեանին (բարեպաշտ) միջոցով (**) Վարիչ Մարմնին յարարերու—

(*) Անոնք կը կոչուէին՝ Արփիար Արփիարեան, Լեւոն Բաշալեան, Տիրան Քելեկեան, Բիւզանդ Քեչեան, Տիգրան Արփիարեան, Տիգրան Կամսարպեան, Հրանդ Ասատուր եւլն. — Վ.Ղ.:

(**) Ներկարարութեամբ գրադող Մկրեանն իր անոճին տակ ունէր իտալացի գործաւորներ:

թեան կը մտնէ այդ աւազակախումբի վարիչներուն հետ: Վտանգուած ընկերներուն փախուստի պործին հողը կը յանձնուի՝ որոշ վրամական սակով մը՝ այդ աւազակախումբին, որ ամենամեծ զգուշաւորութեամբ կը կատարէ իր յանձնառութիւնը: Նախ զանոնք կը սլահէ իրենց ընտանեկան շրջանակներուն յատուկ թաղստոյներու մէջ եւ յետոյ յարմարագոյն պատահութիւններով նաւերով կը դրիէ Պալքանեան երկիրներ, մասնաւորաբար Պուլկարիա: Մէկ քանի տասնեակ զեհնախոյս վտանգուածներ իրենց ազատութիւնը դառն այդ աւազակախումբին շնորհիւ:

Յեղափոխական աշխատանքը կը կատարուէր որոշ զառաւորամով: Վարիչ Մարմինն կարգադրութեամբ՝ պատասխանատու յանձնախումբեր ստեղծուած էին բարդ մեքենան շարժման մէջ դնելու համար: Գործի բաժանումով՝ ամբողջ շարժումը կը ղեկավարուէր բացարձակ խորհրդապատահութեան մէջ: Հակառակ թուրք ոստիկանութեան յարած թակարդներուն, յեղափոխական պործը կարեւոր յաջողութիւններ կ'արձանագրէր միշտ ալ: Այս արդիւնաւոր աշխատանքը դրիւ է աւնարդել շարունակուեցաւ մինչեւ 1895-ի ջարդերը: Այդ 1895-96-ի ջարդերը, թուրք կոռավարութեան այլապէս հակայեղափոխական հետապնդումները եւ, իր կարգին, հայ ժողովուրդին սպառումները պարտադրեցին զեկավար պործիչներուն որ վերատեսութեան ենթարկեն ամբողջ կատարուածը եւ նոր գործելակերպ որդեգրեն, իրենց նպատակը իրադրեցնելու ուղիներ որոնեն: Այդ շարժումը դարձաւ զլիստոր պատճառներէն մէկը, որ Կոստակցութենէն ներս գոյանան գործելակերպի մասին ըմբռնումի անհաշտելի շերտաւորումներ, ուստի միասնականութեան քայքայում եւ բաժանում, որուն մասին արդէն իսկ ակնարկուած է որոշապէս:

Այսչկերտի Իւշ-Բիլիսէ վանքի վարդապետներէն իւսկիւտարցի Մամբրէն, որ տեղւոյն կառավարական շրջանակներէն անվստահելի նկատուած ըլլալով վերադարձուած էր Պուլիս, ճամբորդութեան ընթացքին Տրապիզոնի մէջ յարաբերութիւն կը հաստատէ տեղւոյն հնչակեան վարչութեան անդամներէն աւստրիական հիւպատոսարանի թարգման Պետրոս Մարիմեանին եւ ազգային վարժարանի տնօրէն Հմայակի Խուշալուբեանին հետ: Պուլիս հասնելէն ետք ապա կը թողուի եւ կը ծանօթանայ վարչութեան անդամներէն Համբարձում Պոյաճեանին: Այս ծանօթութիւններուն շնորհիւ կը տեղեկանայ կուսակցական կարգ մը գաղտնիքներու եւ կը ճանչնայ վարչութեան անդամները: Այս անբաղձալի ծանօթութեան պատճառաւ ստիպւած կ'ըլլան փոխիլ իրենց հաւաքատեղին ու բնակարանն-

բը(*) : Անշուշտ Մամբրէ վարդապետը իր ծանր պատիժը կրեց վերջապէս :

Շարաթ մը յետոյ յայտնի կ'ըլլայ թէ ոստիկանութիւնը կը հետապնդէ Երկու ընկերներ՝ Տամատեանն ու Պոյաճեանը : Առաջինին փոխաբէն անոնք թիւրիմացութեամբ կը ձերբակալեն «Արեւելք» ի արտօնատէր Ստեփան Տամատեանը : Միւսին Տամատեանը եւ Մուրատը թաղնուած էին : Մէկ քանի օր յետոյ ոստիկանական հետապնդումի կ'ենթարկուին նաեւ Մարմին մնացեալ ընկերները : Անոնց վիճակուած էր թաղաքացային կեանք մը՝ մինչեւ իրենց հեռացումը Պոլսէն : Տամատեանին փախուստը յաջողած է Պուլկարիոյ ու Ռումանիոյ մէջ ան սկսած էր Զէյթունի կոտորածներուն համար հանդանակութեան : Վտանգուած ընկերներուն զօրծը կը փոխանցուի պահեստի Մարմին : Ասիկա իր զօրծը կը շարունակէր մեծ եռանդով, յաճախ խորհրդակցարար թաղնուած ընկերներու հետ, որոնց վիճակուած էր ենթարկուիլ վիպական ծանր տաղանակներու : Յաջորդարար անոնք պէտք էր որ հեռանային քաղաքականապէս իրենց համար սակեղծուած զարհուրելի պայմաններէն եւ շարունակէին իրենց յեղափոխական զօրծը այլուր : Կրակը բռնկած էր եւ հրդեհը կը ճարակէր բոլոր տեղերու վրայ : Ազատատենչ ուխտաւորներ առանց ընկրկումի պիտի չարունակէին իրենց սրբապան սուրբերութիւնը հոն, ուր բռնակալութեան զիջատիչ ճիրանները կը բղկաւէին հայ ժողովուրդին կենսունակութիւնը եւ կը ջլտաւէին անոր շարժումները :

Աստուծո՛ր մէկը անոնցմէ, որ Պոլսոյ յեղափոխական շարժումները ղեկավարած էին, ենթարկուած էր անմիջական հետապնդումի : Հոս յիշենք վիպական անցքերէն մէկը :

Օր մը, երբ ան պահուած էր իր նշանածին [Էլմոնիա Կուկանեանին] տունը, ոստիկանները կը պաշարեն տունն ու խուզարկութեան կ'ենթարկեն զայն : Այդ պահուն, արդէն Հոկտեմբերի ցուրտերուն, Աստուծո՛ր կ'իջնէ տան ջրամբարին մէջ : Իր մօտ ունեցած մօրֆինը ջուրը թափուելով՝ կարող չ'ըլլար զայն զործածել ինքզինք անպայտութեան ենթարկելու համար : Ջրամբարի խի խուզարկութեան կ'ենթարկուի, բայց նշանածին՝ օր. Էլմոնիային մաքի ճարպիկութեամբ կ'ազատի ձերբակալուիչէ : Արդարեւ, օր. Էլմոնիան կը միջամտէ խուզարկու ոստիկանին փնտռութիւն, գգուչացնելով զինք յայտնի վտան-

(*) Մարմնին ժողովները տեղի կ'ունենային Գուլէ-Գափու, ռուսահայ գործիչ վարդ Պատրիկովին համար վարձուած սեփական մէջ : Մամբրէ վարդապետին կասկածելի բնօրինակին հետեւանալով, Պատրիարքին կը յատկացուի նոր սեփական մը. գերմանուհիի մը քնակարանին մէջ, Բերա, Տօթթեով - Ազգը :

գէն, ըսելով. «Էֆէնտի, ջրամբարը ջուրով լեցուն է, հոն մարդ կը գտնուի», վար իյնալով փորձանք պիտի բերէք մեր գլխուն»։ Խուզարկութենէն ետք ոստիկանները կը մեկնին յուսահատած։

Քառորդ ժամ յետոյ պարան իջեցնելով վեր կը քաշեն Ատոմը։ Երբ Ատոմը հագուստները քամելու վրայ էր, դուռը նորէն կը դարնեն։ Ասոր վրայ Ատոմը նորէն ջրամբար կ'իջնէ, թէեւ ջրամբարին քովի ջուրերուն ներկայութիւնը որոշ ազապոյց մըն էր թէ անոր մէջ պահուած մէկը պէտք է ըլլար։ Փոխանակ ոստիկաններու, Ա. Մկրտչանը 6-7 զինուած խալապիններու եւ նոյնքան ալ ընկերներու հետ եկած էր զինք փոխադրելու աւազակախումբի պէտ Տոմինիքոյին Քասեմ-Փաշայի ստանը։ Փոխադրութեան համար ամէն նախատեսութիւն կատարուած էր։ Երկու շարաթ Տոմինիքոյին տան մէջ հերթասիրուելէ յետոյ, զինք կը փոխադրեն Ղալաթիա՝ զինուած խումբի մը ընկերակցութեամբ։ Երեք օր յետոյ իբր խալապի զինք երեք խալապիներու ընկերակցութեամբ կ'առաջնորդեն Սեւ ծով գացող յունական նաւ մը։ Յոյն նաւապետը մինչեւ Սեւ ծով իր խուցին մէջ կը պահէ զինք։ Սեւ ծով մտնելէ յետոյ դուրս կ'ելլէ խուցէն, իրեն կը մօտենայ ֆէնսաւոր մէկը եւ բարի աղաւթում կ'ըսէ։ Նաւապետը, վրդովուած, կ'ուզէ պատժել այդ յանդգնութիւնը. բայց Ատոմը կ'արգիլէ։

Պուրկապի մօտերը երբ ակնցի երիտասարդը մնաք բարով ըսելու համար խօսքի կը բռնուի Ատոմին հետ, կը հասկնայ թէ ան զրկուած է օրինական անցադէք եւ մտահոգուած թէ ինչպէս դուրս պիտի գայ Վստնա։ Կը խոստանայ իր կաշիի վաճառական եղբոր միջոցով զիւրացնել անոր Պուլիարիա մուտքը։ Իրապէս, յաջորդ առաւօտ [1890 Նոյ. 21-ին], նաւ կ'այցելեն ակնցի երիտասարդը, իր եղբայրը եւ Ունճեան ու [Արիս] Կիւլպինեկան վաճառականները։ Զինք կ'առաջնորդեն Ունճեանին վաճառատունը։ Նաւամատոյցը հսկող չորս ոստիկաններ յարգանքով ազատ անցք կու տան Ատոմին։

Պուրկապի հայ վաճառականները իրեն ի պատիւ կու տան ճաշկերոյթ մը, ուր ներկայ կ'ըլլայ նաեւ քաղաքին ոստիկանապետը, որուն մասնաւոր հրահանգովը ազատ մուտք թոյլատրուած էր Ատոմին։ Պահեստի սպայ վաճառական Ունճեանին զիմուքին վրայ ոստիկանապետը տուած էր արտօնութիւնը։ Ոստիկանապետն ալ միւսներուն հետ հետաքրքրուած էր ըսել Պուլսոյ անցուդարձերու մասին։ Երբ Ատոմը բարարութիւն կու տայ բոլոր հետաքրքիրներուն, ոստիկանապետը կ'ըսէ. «Բարի եկար, մի՛ վախճար, հոս ազատ երկիր է»։

Եւ որովհետեւ Մարգար Վստմեանը իր հոգին միայն ապատած էր թուրք բռնակալութենէն, Պուրկապի վաճառական-

ները կը ստանձնեն անոր ծախսերը եւ վաճառական Ռաիւիկ Գա-
րազաշեանին տան մէջ կը դառաւորեն անոր կեցութիւնը:

Պուրկազ ելած օրէն իսկ Ատոմը նամակով մը լուր կու տայ
Կեդրոն: Մէկ շաբաթ ետք Կեդրոնէն կը ստանայ հեռագիր մը,
որով կը շնորհաւորեն իր ազատուիլը եւ կը թելադրեն սպասել
նամակի: Այդ հեռագիրը կ'ըլլայ իր ինքնութիւնը ապացուցանող
վաւերացութիւնը, որուն անհրաժեշտ պէտքը ունէր անձանօթ
չըջանակներու մէջ իր ազատ շարժումները կատարելու իբր Ա-
տոմ Առլանեան կամ Մարգար Վառամեան:

Ժիշդ այդ օրերուն Պուրկազ հասնող Պոլսոյ «Սապահ»-ին մէջ
կը կարդացուի թէ շնորհիւ վեհափառ սուլթանին Մարգար Վը-
ռամեանը ձերբակալուած է...: Ահա թէ ինչպէս ծիծաղելին կը
շփոթուի լուրջին հետ:

Ատոմին շարժումներուն հետ կապուած են բազմաթիւ հե-
տաքերական անցքեր, զորս զանց կ'ընենք, աւելու համար մի-
տայն անոնցմէ գլխաւորները, որոնք այդ օրերու յեղափոխական
շարժումներուն եւ պատմական անցքերուն յատուկ անձանօթ
մնացած կամ մոուցուած կէտեր լոյս աշխարհ կը հանեն: Մեր
ազատագրական պատմութիւնը գրելու համար անհրաժեշտ
պէտք ունինք նման պատմական աստղաներու: Պատմաբանին
պէտք է տալ հարուստ եւ վաւերական աղբիւրներ, որոցմէ տն
գտնումով օգտագործել անոնցմէ պէտք եղածը, կառուցանելու
համար հայոց պատմութեան գլխաւոր անկիւնաքարձներէն մէկը
կազմող ներկայ դարաշրջանի պատմութեան հենքը:

Ատոմը կը զգար թէ յեղափոխական աշխատանք կատարե-
լը իրեն համար ո՛չ միայն նուիրական բմբուռած մը դարձած էր,
այլեւ՝ ներքին հրայրք մը, երբ մասնաւորապէս իր ընկերները
եւ ամբողջ հայ ազգը թուրքիոյ գեհեհական սահմաններուն մէջ
մեծ ու փոքր բռնակալներու վայրագ հալածանքներուն ենթա-
կուած են:

Ունճեանին մեծ եղբայրն ու հայրը բնատնիքով կ'ապրէին
մօտակայ Իսլեմիայի մէջ, ուր եւ կային բաւական մեծ թիւով
հայեր: Երկու պատգամաւորներ կը զրկեն որ Ատոմը այցելէ
հոն: Ատոմը կը մեկնի Իսլեմիա: Հոն կը հաւաքուին տեղւոյն
գրեթէ բոլոր հայերը՝ լսելու զինք: Թուրքիոյ կացութեան ծա-
նօթանալէ յետոյ, անմիջապէս կը կազմուի կուսակցական մաս-
նաճիւղ մը եւ կը կատարուի հանգանակութիւն: Ատոմը կը մեր-
ժէ դրամ ստանալ ու կը թելադրէ Կեդրոնին զրկել զուժարը:

Պուրկազէն Ունճեանը կը գրէ թէ ոստիկանութիւնը զինք
կը փնտռէ: Կեդրոնէն ստացուած նամակն ալ կը զրկէ Ատոմին:
Կեդրոնը հինգ հարիւր ֆրանք զրկած էր այդ նամակին հետ եւ
կը թելադրէր որ անցնի Վասնա, տեսնուելու համար չուտայ հոն

Ժամանելիք կարեւոր մէկու մը հետ: Ատոմը Պուրկազ կը վերա-
դառնայ եւ հոն մասնաճիւղ կը հիմնէ: Հոն ալ Հանդանակու-
թիւն կը կառարուի եւ Հասոյթը Կեդրոն կը զրկուի: Ատոմը
Պուրկարիոյ եւ յետոյ Ռուսմանիոյ մէջ իսկ Հարկադրաբար զա-
նազան անուններու տակ Թափնուած կը գործէ: Պուրկազէն կը
մեկնի Թրքերէն խօսող պուրկարի մը հետ իրր Գարադաշեանին
գործակատարը, որ զիւղերու մէջ իր հետ տարած ապրանքները
պիտի վաճառէ: Հետը ունէր յանձնարարական մը Շամստանճ-
եանին եւ տնօրէն Յովսէփեանին:

Երբ Վառնա կը հասնի, Յովսէփեանէն կ'իմանայ թէ հոն
ալ զինք եւ իր ընկերները կը փնտռեն: Արդէն հոն ապաստանած
ընկերներէն մեծ մասը մեկնած էր Ռուսնոք, որուն կառավա-
րիչը պուրկար յեղափոխական գործիչ մը եղած էր անցեալին
մէջ եւ շատ ալ հայասէր էր: Յեղափոխութեան շրջանին ձերբա-
կալուած ու Տիարպեքի զրկուած է եղեր: Հոն Պետրոս անու-
նով առեւտրական մը Թուրք կառավարութեան մօտ երաշխաւոր
եղած ու զայն իր քով առած է իւրեւ որդեգիր: Պուրկարիոյ ա-
զատագրութենէն յետոյ, երիտասարդին հայրենարազմութեան
վրայ, Պետրոսը կ'ընկերանայ անոր մինչեւ Պուրկարիա: Կառա-
վարիչը բոլոր հայերուն հետ հայերէնով կը տեսակցէր:

Ոստիկանական փնտռողներէն առաջ այս կառավարի-
չը լուր կու տայ վտանգուած հայերուն որ զգուշանան:

Ռուսնոքի մէջ Մարգար Վառմանը կը բնակի «Վառ-
նա» պանդոկը, ինչպէս Յովսէփեանը գրած էր ռուսնոքցի բա-
րեկամներուն: Ֆրանկիւլ Ոսկերիչեանը զինք կը դնէ հոն: Վը-
ռամեանը անմիջապէս նամակ կը գրէ Կեդրոն՝ իր Ռուսնոքի
հասցէն տալով:

Վառմեանը կը ծանօթանայ հոն Հանրածանօթ մատնիչ
Մկրտիչ Թիւթիւնճիշֆին հետ, որ կատաղի յօգուածներ կը
գրէր «Արմէնիա»ին մէջ ընդդէմ Թուրքերուն եւ կը հրատարա-
կէր նոյն ուղղութեամբ զրքոյկներ: Թիւթիւնճիշֆին ինքն ալ
փախստական մը՝ կը հետապնդուի Թուրք կառավարութեան
կողմէ, որ զինք կը պահանջէ պուրկար կառավարութենէն: Պուր-
կար կառավարութիւնը կը մերժէ յանձնել զայն:

Այդ օրերուն հոն հաւաքուած էին չարք մը վտանգուած փա-
խստականներ՝ Սարգիս եւ Գրիգոր Գույումճեաններ, Խաչում-
եան եղբայրներ, Յովհաննէս Պզտիկեան, սիւտնի Կարապետ
Քիւրքճեան, չմշկածապցի փաստարան Խաչիկին ահաբեկիչը՝
բարերոյցի Մուքոն, Տաճատ վարդապետին ահաբեկիչը՝ Սահակ,
և ուրիշ ընկերներ: Հոն կը գտնուէր նաեւ Քրիս Փափախեանը,
որ Եգիպտոս հաստատուելէ յետոյ դարձաւ Հրանդ Ալատեան:
Վառմեանը ահաբեկիչներուն համար տուն մը կը վարձէ եւ ա-

նոնց սպրեկու միջոց կու տայ. բայց անոնք քիչ տոնէն կը փոխադրուին տեղւոյն մասնաճիւղի ատենապետ Ֆ. Ոսկերիչեանին բնակարանը եւ հոն կը բնակին, մինչեւ որ կարող կ'ըլլան աշխատանք գտնել:



ՆԱԶԱՐԲԷԿԵԱՆԸ ՌՈՒՍՃՈՒՔ Կ'ԱՅՅԵԼԷ

Նազարբէկեանը Ռուսճուք կու գայ Պոլիս կարող դործիչ մը զրկելու հարցին մասին խորհրդակցելու Վռամեանին հետ: Վռամեանած մարմնին յաջորդած կազմը չունէր կորովի շարժումներ ստեղծելու ձեռնհասութիւնն ու փորձառութիւնը: Գործիչով մը պէտք էր ուժեղացնել զայն: Կատարուած խորհրդակցութիւնը կարող չ'ըլլար պահանջուած յատկութիւններով օժտուած մէկը գտնել: Նազարբէկեանին թելադրութեամբ Վռամեանը միջոցը կը գտնէ պոպանի յարարելիւ Օտեսայի մասնաճիւղի վարչութեան անդամներէն Արաւստղը Օհանջանեանին հետ եւ յոյնի մը միջոցով «Հնչակ» զրկել հոն(*): Ռուսճուքի հայեր Նազարբէկեանին ի պատիւ ընդունելութիւն մը կը կազմակերպեն: Կը ստեղծուի աւելի ուժեղ աշխատանքի խանդավառութիւն մը եւ Վռամեանը այդ թուականէն սկսեալ աւելի տենդազին աշխատանքի կը լծուի՝ կազմակերպական զօրաւոր ցանցով մը իրարու կապելու պուլկարաճայութիւնն ու ռումանահայութիւնը: Ստեղծուած ոգևորութիւնը կը շարունակուի Վռամեանին մեկնումէն ետք ալ:

Վռամեանը կը յաջողի լաւ յարաբերութիւն մշակել ռուսճուքի առաջնակարգ հայերուն հետ եւ իր շարժումները կը դառնան աւելի համարձակ ու աւելի արդիւնատուր: Բայց միեւնոյն օրերուն Պոլսոյ մէջ Մարդար Վռամեանը ի բացակայութեան մահուան դատապարտուած էր, որով անհրաժեշտ կը դառնար նոր անունով իր աշխատանքը շարունակել: Կ'ապահովէ պարսկական անցագիր մը Ռաֆայէլ Բազարաւ անունով:

Կարճ ատենուան համար Ռաֆայէլ Բազարաւոր [1891-ին] կ'այցելէ Շումլա եւ Վառնա: Երկու քաղաքներուն մէջ ալ յայտնի անձնաւորութիւններէ բաղկացած ուժեղ մասնաճիւղեր կը կազմէ: Վառնայի մասնաճիւղին կը մասնակցին պարսկական հիւպատոս Յ. Մովսէսը, եւ տեղւոյն ազգային վարժարանի անօրէն, համալսարանական Յակոբ Պոնճուքեանը:

(*) Ռուսնուք բնակող ռուսահպատակ ազգեցիկ վաճառական Արթիմ Նրամոֆիմ (որ Ռուսնուքի պուլկար բանակին հայթայթէն էր) շնորհիւ ռուսական նաւի մը մէջ աշխատող սրճեփ յոյնը կը գտնուի:



ՄԻՈՒԹԵԱՆ ՓՈՐՁԵՐ. ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎՐ

Հայ աղատադրական անջատ շարժումները 1891-ի օրերերուն ընդհանուր տաղանապի մը մէջ մտած էին եւ այդ կացութիւնը թելադրած էր անջատ ուժերու միացումը: Այդ նպատակին համար Թիֆլիսի մէջ տեղի ունեցաւ յեղափոխական զանազան խմբակցութիւններու միջեւ. գոյացուելիք միութեան ներկայացուցիչներու ժողովը: Միացեալ կուսակցութիւնը պիտի կոչուէր «Հայ յեղափոխականներու զաշնակցութիւն»:

Այս բանակցութիւնները եղբակացութեան մը հասած էին եւ համաձայնազիր մը ստորագրուած բանակցող կողմերու միջեւ: Ըստ այդ համաձայնագրին, նորակազմ կուսակցութիւնը պիտի ունենար իր պաշտօնական օրկանը, իսկ «Հնչակ»ը պիտի զբաղէր միայն զաղափարարանական եւ տեսական հարցերով: Այս յաջողութեան մակընթացութիւնը արտակարգ խանդավառութիւն յառաջացուցած էր բոլոր շրջանակներուն մէջ եւ առաջնորդող տարրերը արդէն մեկնած էին զանազան շրջաններ, միացեալ կուսակցութեան համար համահայկական շարժում ստեղծելու(*):

Հնչակեան կուսակցութեան կողմէ իւր գլխաւոր բանադնաց յիշեալ խորհրդաժողովին կը մասնակցէր Ռ. Խանաղատը, իրենց հետ ունենալով մի քանի ուրիշ ընկերներ: Ստորագրուած նախագիծը կը զրկուի «Հնչակ»ին՝ հրապարակելու եւ միութիւնը պաշտօնապէս յայտարարելու բոլոր յեղափոխական կազմակերպութիւններուն: Նաղարրէկեանը, սակայն, ստորագրուած այդ նախագիծը ստանալէն յետոյ, յարձակողական ուժեղ յօդուածով կ'արտայայտուի եղածին դէմ(**): Երբ «Հնչակ»ը Թիֆլիս կը հասնի, Ռ. Խանաղատը եւ Խուշպուլեանը Օտեսայի վերադառնալով կը մեկնին Ժընեւ, լուսարանութիւն ուղկելու եւ համոզելու Նաղարրէկեանին: Օտեսայի մէջ Ա. Օհանջանեանէն իմանալով Ռաֆայէլ Բազարաւրին հասցէն, Ռուսձուք կու դան խորհրդակցելու եւ իր ալ կարծիքը առնելու: Բազարաւրը համաձայն կը գտնուի եւ անմիջապէս կը գրէ Միհրան Տամատեանին ու

(*) Հնչակեան Գեորգ Զիլինկիրեանը եւ Յակոբ Մեղաւորեանը ուրիշ կովկասախայերու հետ կը մեկնին Խրիմ, Պեսարապիա եւ այլուր՝ հանգանակութիւն ընելու:

(**) Նաղարրէկեան Ռուսնու գտնուած միջոցին շատ ոգեւորուած էր եւ փշուէր. «Եթէ այդ միութիւնը իրականանայ, իայ յեղափոխական կազմակերպութիւնը թի՛ բարոյապէս եւ քի՛ միւսապէս շատ պիտի զորանայ»:

Համբարձում Պօյաճեանին, որ իրենք ալ միւս գործիչներուն հետ ճնշում բանեցնեն Նաղարբէկեանին վրայ՝ ընդունելու կատարուած միութիւնը:

Խանաղատը եւ Խուչպուլեանը կը խոստանան տեղեկագրել Նաղարբէկեանին հետ ունենալիք տեսակցութեան արդիւնքը եւ սակայն կը լռեն: Այսուհանգերձ միութեան լուրը բոլոր կողմերուն համար խանդավառիչ էր եւ գործիչները շարժման մէջ էին միութեան ի նպաստ իրենց յանձնառութիւնները կատարելու:

Այդ օրերուն Կովկասէն դէպի Արեւմուտք եւ Արեւմուտքէն դէպի Կովկաս յեղափոխական գործիչներուն ճամբան էին Ռուսմանիան եւ Պուլկարիան: Պալքանները յեղափոխական շարժումներու վարարաններ էին: Անոնք հոն կը գործէին նորագոյտ պետութիւններու բարեացակամ անտարբերութեան թոյլատու պայմաններուն մէջ: Այդ օրերուն էր որ, ի միջի այլոց, Կովկասէն Պուլկարիա կու գայ հմուտ քիմիագործ Կարեպին Խարազեան անունով երիտասարդ մը եւ նորակազմ միութեան յանձնարարականով կը ներկայանայ Բաղարատին:



ՌՈՒՄԲԵՐՈՒ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Խարազեանը Պուլկարիա եկած էր յեղափոխական գործին մէջ գործածելի սումերը պատրաստելու համար: Ատոնք մասնաւորաբար պիտի գործածուէին Պոլսոյ մէջ սուլթան Համիտին եւ իր կառավարութեան պէմ: Բաղարատը կը կանչէ իր փախստական ընկերներէն երկաթագործ Կարապետ Քիւրքճեանը, որուն աշխատանք գտած էր Մանուսնոյ աղա ազգասէր հայուն քով: Խարազեանը Քիւրքճեանին կը պատուիրէ պատրաստել ռումբերու երկաթները՝ իր սուտած խաւաքարաէ օրինակին համաձայն: Ռումբերու երկաթները պատրաստելէ յետոյ, Խարազեանը դանոնք կը լեցնէ պայթուցիկ նիւթերով: Բաղարատը պուլկար լաւնակի հայթաթիւն Երամօֆին միջոցով բանակային մթերանոցի տնօրէն պուլկար սպայէն կը ստանայ լմուռնութի քալիսիլներ: Ատաջին երկու սումերը Կիւրակի օր մը, քաղաքէն մէկ ժամ հեռու լեռներու մէջ կը փորձուին՝ դէպի խորունկ ձոր մը նետուելով: Այդ փորձը կը կատարուի Բաղարատին, Խարազեանին, մթերանոցի տնօրէնին եւ Թիւթիւնճիէֆին ներկայութեամբ:

Բաղարատը Խարազեանը ծանոթացուցած էր վերջինիս, որովհետեւ Թիւթիւնճիէֆը քաղաքապետական րժիշկ ըլլալով, իրենց կը հայթաթէր սումերը լեցնելու համար անհրաժեշտ նիւթերը:

Զեռք բերուած յաջողութեան վրայ, առաջին առթիւ կը պատրաստուին եօթ ուրիշ ռումբեր եւս: Այդ օրերուն Կովկասէն դարձեալ յանձնարարականով Ռուսոճուք կը հասնի եւ Բաղարատին կը ներկայանայ Կոստան Խատիսեանը: Ան երեք շաբաթ կը մնայ հոն ու կը հետեւի ռումբերու պատրաստութեան: Խատիսեանը իր հետ բերած կարեւոր դումարը կը յանձնէ Բաղարատին՝ ռումբերու պատրաստութեան համար: Ասիկա եղբայրն էր հանրածանօթ Ալեքսանդր Խադիսեանին, որ ինք ալ կարկառուն մտաւորական մըն էր: Նոյն կազմակերպութեան կարեւոր անդամներէն բժիշկ Լորիս Մելիքովը նաեւ կը հասնի Ռուսոճուք: Խատիսեանը եւ վերջինը խանդավառութեամբ կը պատմեն միութեան շուրջ ստեղծուած համազգային ոգեւորութիւնը: Բժիշկ Մելիքովը մէկ շաբաթ յետոյ կը մեկնի: Հնչակեան դործիչներէն կու գան նաեւ բժիշկ Յակոբ Մեղաւորեանը եւ Գէորգ Զիլինկիրեանը, որոնք նմանապէս կը վկայեն ստեղծուած խանդավառութեան մասին: Բաղարատը իր չորս ղեկավար ընկերներուն նպաստաւոր տեսակէտը դիտէր, բայց դեռ Տամատեանէն եւ Հ. Պոյաճեանէն նամակ չէր ստացած: Այս մասին Բաղարատը Կեդրոն դրած իր նամակներուն պատասխանը չէր ստացած, բայց արդէն Կեդրոնի տեսակէտը հասկցուած էր «Հնչակ»ի Ապրիլ կամ Մայիսի թիւերէն մէկուն մէջ (*) Երեւոյ՝ հակամիութենական յօդուածներէն: Առումը յետոյ կ'իմանայ թէ ինչո՞ւ Խանադատը եւ Խուշպուլեանը միացած են Նաղարբէկեանին, թէ եւ նախապէս խանդավառուած ըլլալով միութեան զաղափարով:

Խուշպուլեանը Կեդրոնին որոշումով կը մեկնի Պոլիս՝ միանալու Վարիչ Մարմնին աշխատանքներուն. իսկ Խանադատը Լեւոնցի Երուսաղէմ՝ փախցնելու հոն աքսորուած Խրիմեան Հայրիկը:



ՄԱՀԱՓՈՐԶ ՊՈՒԼԿԱՐ ՆԱԽԱՐԱՐԱՊԵՏԻՆ ՎՐԱՅ

Իր աղատագրութենէն յետոյ Պուլկարիան մտած էր ռուսասէր եւ հակառուս խուլ պայքարի մը մէջ: Վերջինները կ'առաջնորդէր երկրին նախարարապետը՝ Սթամպուլով: 1891-ի այդ օրերուն Ռուսիա Պուլկարիայէն քաշած էր իր զենսական ու հիւպատոսները:

(*) — Խօսքը կը վերաբերի «Հնչակ»ի 1891 թուականի Ապրիլ ամսու չորրորդ թիւին — Վ. Ղ.:

Երբ Սթամպուլովը նախարարի մը հետ [Սոֆիայի մէջ] կառքով փողոցէ մը կ'անցնէր, կատարուեցաւ մահափորձը: Նախարարը վիրատուութեամբ, իսկ Սթամպուլովը փրկուեցաւ: Հակառակ ոստիկանութեան ճիղերուն՝ կարելի չեղաւ գտնել ահաբեկիչը:

Այդ դէպքը պատճառ դարձաւ որ Պալքաններու մէջ կուսակցական աշխատանքը տարուի թաղնուած շրջահայեցութեամբ: Արդէն թուրք կառավարութիւնը իր գաղտնի սպասարկութեան միջոցով կարելի եղածին չափ մօտէն կը հետեւէր Պալքաններու մէջ կատարուած հայ յեղափոխական գործերուն, թէեւ ուղղակի կարող չէր վնասել այդ շարժումին: Այս դէպքը պատահութիւն ստեղծեց որ Պուլկարիոյ եւ յետոյ ալ Ռումանիոյ մէջ թուրքերու կողմէ վարձուած ճարպիկ միջնորդներ հակահայ աշխատանք կատարեն՝ կառավարական շրջանակները թունաւորելով հայ յեղափոխականներու դէմ: Իսկապէս ալ, կառավարութիւններու ուշադրութիւնը մոլորեցնող ցուցումներով, հետապնդման ենթարկուեցան հայ յեղափոխական գործիչներ, մինչեւ իսկ տասնեակներով ձերբակալուեցան թէ՛ Պուլկարիոյ եւ թէ՛ Ռումանիոյ մէջ՝ որպէս ահաբեկչական կազմակերպութեանց վարիչներ կամ անդամներ: Զոյգ երկիրներու դադութներուն համար ստեղծուած էր փափուկ կացութիւն եւ պէտք էր պայքարիլ թուրքերու ստեղծած այդ վտանգին դէմ:

Սթամպուլովին մահափորձէն մէկ ամիս յետոյ Բագարատը նամակներ կը ստանայ Պոլսէն եւ Օտեսայէն՝ առաջինը անստորագիր եւ երկրորդը խնայողաւոր ստորագրուած: Այդ երկու նամակներն ալ կը շնորհաւորեն Բագարատը կատարուած մահափորձին համար եւ կը թելադրեն որ յաջորդ փորձը աւելի լաւ կազմակերպուած ըլլայ: Բագարատը երեք շաբաթէն կը ստանայ նոյն բովանդակութեամբ նամակ մըն ալ Թիֆլիսէն, խուչապուեան ստորագրութեամբ, ուր նաեւ կ'ըսուէր թէ շուտով պիտի ստանայ վեց հազար ռուպլի՝ կատարուելիք նոր մահափորձին ծախսերուն համար:

Բագարատին համար այլեւս բացայայտ կը դառնար թէ իր եւ գործին շուրջ գաւադբական ցանց մը կը պատրաստուի անձանօթներու կողմէ: Բագարատը պիտէր թէ խուչապուեանը կը գտնուէր Պոլիս, իսկ խանաղատն ալ՝ Երուսաղէմ, ու անոցմէ արդէն ստացած էր նամակներ: Գիտէր նաեւ թէ այդ նամակները գրուած էին Պուլկարիոյ ոստիկանութեան գաղտնի սպասարկութեան ուշադրութիւնը հայ յեղափոխականներու վրայ լարելու համար:

ԲԱԳԱՐԱՏՐ ԵՒ ԸՆԿԵՐՆԵՐԸ ԴԱԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՅԱՆՑԻՆ ՄԵԶ

Շուճալայի մէջ այդ օրերուն կը կատարուէր տարեկան տօնավաճառ մը: Ուսումնօրէի հայ վաճառականներէն Ունձեանը(*), տօնավաճառին մասնակցելու համար, ապրանքի հակեր ճամբայ կը հանէ եւ ինք ալ կայարան կը դիմէ տոմսակ առնելու: Կայարանին մէջ ոստիկան մը կը ներկայանայ իրեն եւ կ'ըսէ թէ անմիջապէս ոստիկանապետին պէտք է երթայ: Ոսկերիչեանին ձերբակալութիւնը կ'իմացնեն Բազարատին ու կը թելադրեն թաղստոցի մը մէջ պաշուրտիլ: Բազարատը կը մերժէ եւ հանդարտեցնելով զանոնք, կ'ըսէ թէ ինք ո'չ մէկէն կը վախնայ՝ քանի որ երկրին չահերուն կամ օրէնքին դէմ ո'չ մէկ շարժում կատարած է:

Յաջորդ օր կէսօրէ առաջ, երբ տուն կը վերադառնայ ճաշելու համար, կը նշմարէ թէ ոստիկան մը կը հետեւի իրեն: Քիչ ետք ոստիկանը կ'այցելէ Բազարատին եւ կը հաղորդէ թէ զինք պէտք է առաջնորդէ կառավարիչին: Ճաշէն յետոյ, իստադատէն եւ իր չափուկանէն ստացած իսկական նամակներն ու կեղծերը հետք առնելով, Բազարատը կ'ընկերանայ ոստիկանին, որ, սակայն, իրեն կը հետեւի քսան քայլ հեռուէն: Կառավարիչին քարտուղարն ալ լաւ հայերէն գիտէր եւ ծանօթ էր Բազարատին: Բազարատը պարտաւորուած կը սպասէ քարտուղարին մօտ, մինչեւ կառավարիչին հիւրերուն մեկնիլը:

Կառավարիչը սիրով կ'ընդունի Բազարատը: Քաղաքավարական կարճ խօսակցութենէ մը յետոյ ան կ'անցնի Սթամպուլի մահափորձին խնդրին եւ Բազարատին կը հարցնէ թէ այդ մասին ինչ տեղեկութիւն ունի: Բազարատը կը պատասխանէ թէ թերթերու տուած ծանօթութիւններէն զատ տեղեկութիւն չունի:

Կառավարիչը կը հարցնէ թէ Բազարատը այս հարցին մասին որեւէ նամակ ստացա՞ծ է:

Բազարատին պատասխանը դրական կ'ըլլայ եւ ցոյց կու տայ իր ստացած կեղծ նամակները եւ իր ընկերներուն իսկական ստորագրութեամբ զրածները: Կառավարիչին ու չադրութիւնը կը հրաւիրէ յոյր նամակներուն նոյն օրերու թուականներուն եւ իր ընկերներուն ընտանեկաններուն վրայ: Երկար բացատրու-

(*) — Պէտք է կարդալ Ոսկերիչեան, որովհետեւ ինչպէս ինքնագալ շարադրամէքն կը տեսնուի՝ խօսքը կը վերաբերի Ոսկերիչեանին ձերբակալութեան — Վ. Ղ.:

թիւններէ յետոյ կը խնդրէ կառավարիչէն որ զանոնք ենթարկէ քարտուղարին եւ այլ հայերէնագէտներու քննութեան: Ապա կ'աւելցնէ թէ Ոսկերիչեանն ալ ստացած է կեղծ նամակ մը:

Կառավարիչը կը հարցնէ Բաղարատին թէ որմէ՞ կը կասկած ի այդ կեղծ նամակներուն կապակցութեամբ:

Բաղարատը կը պատասխանէ թէ իրեն անծանօթ կը մնայ այդ պարտզան միտայն կ'ենթադրէ թէ այդ կեղծ նամակները գրողը պէտք է ըլլայ կառավարութեան լուր տուողը, քանի որ այդ թուականէն ետք է որ իր նամակները կը բացուէին կառավարութեան կողմէ:

Ինչէ՞ն գիտէք որ ձեր նամակները կը բացուին հարցու-մին՝ Բաղարատը կը պատասխանէ թէ պահարաններէն յայտնի կ'ըլլար:

Կառավարիչը շնորհակալութիւն կը յայտնէ տրուած լուսաբանութիւններուն համար եւ կը խնդրէ որ յաջորդ օր նոյն ժամուն նորէն ներկայանայ իրեն: Առաջին օրուան մեկնումէն յետոյ, կառավարիչին տրամադրուած նամակները մասնաւոր քնն-նութեան կ'ենթարկուին եւ բացայայտ կը դառնայ դաւադիր կեղծիքը: Կառավարիչը շնորհակալութիւն կը յայտնէ Բաղարատին եւ կ'ըսէ թէ ազատ է մեկնելու: Բաղարատը կը հաստատէ Ոսկերիչեանին անմեղութիւնը այս հարցի մասին եւ կը խնդրէ որ զայն ալ ազատ արձակեն: Այսպէս՝ երկու ձերբակալ-ածներն ալ ազատ կ'արձակուին:



ԲԱԳԱՐԱՏԸ ՊՈՒԼԿԱՐԻԱՅԷՆ ՌՈՒՄԱՆԻԱ Կ'ԱՆՅՆԻ

Ժամանակի ընթացքին Պուլկարիա ապաստանած յեղա-փոխականներուն մեծ մասը Ռումանիա կ'անցնի ու հոն գործ կը ճարէ: Այդ օրերուն Յակոբ Մեղաւորեանը Կալացէն Բաղարա-տին կը գրէ որ Կալաց մեկնի եւ հոն Գրիգոր Զիլինկիրեանին հետ ջործ մը սկսի:

Բաղարատը կ'որոշէ ընթացք տալ Մեղաւորեանին թելադ-րութեան, բայց մեկնելէ առաջ պէտք էր շինուած վեց ռումբե-րու պահպանութիւնը յանձնել վստահելի ձեռքերու: Ռուսճու-րի մասնաճիւղին կարեւոր ընկերներէն Արմենակ Թորոսեանին քաղաքէն մէկ ժամ հեռաւորութեան վրայ ունեցած Զրաղացը յարմարագոյն վայրը կը նկատէ զանոնք ապահով պահելու հա-մար: Զրաղացին աղօրեսպանն էր իլիմիրցի Պոտուր Կարապետը, որ նշանաւոր հրոսակապետ մը եղած էր Թուրքիոյ մէջ: Թորոս-եանին հաւանութեամբ Բաղարատը կը փոխադրէ ռումբերը եւ

Պոտուր Կարապետին պատրաստած դադանի պահարանին մէջ
կը պահէ ու կը պատուիրէ որ բացարձակապէս դադանիք մնայ
սումբերու խնդիրը եւ միայն իր ներկայութեամբ լացուի դադա-
նի պահարանը: Կարապետին կարելի էր վստահիլ ամէն դադա-
նիք: Բաղարատը 1891-ի աշնան վերջերը կը մեկնի Ռումանիա:

Բաղարատը կը հասնի Կալաց եւ կ'երթայ այն պանդուր,
ուր կը բնակէին Մեղասուրեանը եւ Ջիլինկիրեանը: Մեղասուր-
եանը կը մեկնի Ռուսիա: Բաղարատը եւ Ջիլինկիրեանը կ'որո-
շեն Եաշ հաստատուիլ եւ իրր միացեալ կուսակցութեան պաշ-
տօնաթերթ հրատարակել «Դրօշակ» անունով թերթ մը: Տառե-
րը կ'ապսպրեն Վիլէննայէն ու կը սպասեն անոնց գալուն: Քիչ
ետք հոն կը հասնի Քրիստափոր Միքայէլեանը՝ խորհրդակցե-
լու թերթի հրատարակութեան հարցին շուրջ: Իրեն կը յայտնեն
թէ թերթին անունը պիտի ըլլայ «Դրօշակ» եւ տառերը արդէն
ապսպրած են Վիլէննայէն: Միքայէլեան համամիտ կը դառնուի
ձեռնարկին: Բայց հակառակ Բաղարատին ու Գրիգորին պըն-
դումներուն, որ մնայ Եաշ իրենց հետ դործելու, ան կը վերա-
դառնայ Ռուսիա, ուրկէ իր աքսորավայր Քիշնէվէն խոյս տուած
էր կեղծ անցադրով: Սահմանազլխուն վրայ կը ձերբակալուի եւ
կ'աքսորուի ուրիշ վայր մը:

Մէկ ամիս ապասեւէ կտք, առաւերուն մէկ մասը կը հաս-
նի: Տեղացի հայ բարեկամներու միջոցով տառերը կը փոխադ-
րեն ռումանական տպարան մը եւ անմիջապէս կը պատրաստուին
թերթին յօդուածները շարելու:

Ջիլինկիրեանը եւ Բաղարատը՝ առանց գրաշարութեան
արհեստը զիտնելու՝ կը սկսին շարել: Բայց մի քանի օրուան մէջ
հազիւ կարող կ'ըլլան շարել կէս էջ: Բաղարատը յուսահատած
կ'որոշէ մեկնիլ Կալաց՝ կուսակցական ալլ աշխատանքներ կա-
տարելու, եւ կը մեկնի ալ՝ հակառակ Ջիլինկիրեանին պնդումնե-
րուն:

1892-ի ձմեռը կը հաստատուի ռումանահայ կօշկակարի
մը տան մէջ վարձած սենեակը, բայց քանի որ իր դրամը հա-
տած էր եւ հապիւ մէկ շարթուան բաւելիք գումար մը մնացած,
կը ստիպուի գործ փնտռել: Իր տանտիրոջ առաջնորդութեամբ
կարող կ'ըլլայ վերջապէս ռումանացի իր մը գերձակատուն մէջ
գործ գտնել օրական 10 ֆրանք աշխատավարձով:



ՌՈՒՄԲԵՐՈՒ ԳՐԱԽՄԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՈՎ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ

Մինչ Բաղարատը կը շարունակէր իր աշխատանքը, Թո-
րոսեանէն նամակ կը ստանայ թէ Պոտուր Կարապետը պիտի

մեկնի չուտով եւ ինք ջրաղացը ուրիշի վարձու պիտի տայ, հետեւաբար պէտք է որ Բագարատը Ռուսնուք երթայ՝ ուսմբերը ուրիշ տեղ փոխադրելու:

Զատիկի առաւօտը Բագարատը երկաթուղի կ'առնէ եւ կը հասնի գետեղբքին վրայ դանուող ճուրճուլա, որու հանդիպակաց կողմը կը գտնուէր Ռուսնուքը: Երկաթուղիէն անմիջապէս նաւ կ'երթայ եւ իր ունեցած պարսկական սնցապիւրը ցոյց կուտայ: Նաւամատոյցի պուլիար ոստիկանը, որ զինք մօտէն կը ճանչնար, իրեն կ'ըսէ թէ իր սնցապիւրը վիզէ չէ եղած, որով պէտք է ետ դառնայ եւ վիզէ ընել տայ: Բագարատը կը պնդէ որ զինք առաջնորդէ ոստիկանապետ Խարադովին մօտ, բայց բացարձակ մերժում կը ստանայ: Նաւուն մեքենադորձ պուլիարատիպ յոյն կը հետաքրքրուի եւ կը թելադրէ ծանօթ մը կանչել ու երաշխաւորութեամբ դուրս գալ նաւէն:

Բագարատը կը յիշէ վանեցի սրճարանապետ Գրիգոր տղան: Յոյնը կ'երթայ եւ կը կանչէ յիշեալ անձը: Երբ Գրիգոր աղան կը տեսնէ Բագարատը, անմիջապէս կը պոռայ. «Այ մարդ, դուն ինչո՞ւ եկար: Ձե՞ս գիտեր որ ամբողջ ուսմբերը գրաւեցին եւ ամբողջ տնեցիներդ ու ծանօթներդ ձերբակալեցին: Ոստիկանը բարիք մը բրած է քեզի՝ թոյլ չտալով որ պուլիարական հող մտնես: Ետոտ կ'աւարձիր, եթէ ոչ կը ձերբակալուիս»:

Բագարատը կը վերադառնայ Ռուսանիա: Ռուսանացի ոստիկանը իրեն կը թելադրէ թրքական հիւպատոսարանէն ստանալ վիզէն, քանի որ պարսկական դորձերը անոր յանձնուած էին: Բագարատը Պրայիլայի ճամբով Կալաց կը հասնի եւ իր բնակարանը կ'երթայ: Տանտիրուհին իրեն կը հաղորդէ թէ ոստիկանութիւնը զինք կը փնտռէ եւ արգէն իսկ ձերբակալած են իր ամուսինը՝ շատ մը ուրիշ հոյերու հետ:



ՓԱՆՈՒՍՏ ԴԵՊՈ ՖՈՔՇԱՆ

Տանտիրուհին թելադրութեամբ Բագարատը կ'երթայ մօտակայ գիւղ մը եւ անկէ ալ շոգեկառքով կը հասնի Ֆոքշան, ուր կար կուսակցական մասնաճիւղ մը եւ կային ազդեցիկ հայեր, որոնք կարող էին զինք պաշտպանել: Եոգեկառքին մէջ լուսնալուծեան կը բռնուի յոյնի մը հետ, որ զինք նմանցուցած էր կալացի մեծ նպարավաճառներէն մէկուն փոքր եղբորը: Այդ ընթացքով իրենք պատճառ կը դառնայ որ զինք հետապնդող դադարների ոստիկաններուն հարցումներուն յոյնը պատասխանէ թէ ինք կը ճանչնայ Բագարատը եւ թէ ան կալացի մեծ նպարավաճառ յոյնի մը եղբայրն է: Գիւղի մը կայարանին մէջ տեղի ունեցած

այս խօսակցութենէն թելադրուած՝ մինչև Թոքան հասնող զընացքին հասնիր, կայարանի դարեջրատան մէջ Բաղարատը զուարթ տրամադրութեամբ կ'անցընէ ժամանակը։ Մինչև իսկ կատակարանութիւն կ'ընէ սպասարկու աղջիկներուն հետ։

Շողեկաւքին մէջ կը հանդիպի Հրանդ Աղատեանին։ Ան ալ ստիկանութենէն հետապնդուած՝ կը փախչէր Թոքան, հոն բնկերնելու շրջանակին մէջ թաղստոց մը դանկու։ Բաղարատը անծանօթ ըլլալով Թոքանի, Հրանդը կը խոստանայ առաջնորդել զինք։ Մէկ վայրկեանի խօսակցութենէ յետոյ, շողեկաւքին մէջ կը բաժնուին իրարմէ իբր անծանօթներ։ Կայարան հասնելէ ետք, Բաղարատը հեռուէն կը հետեւի Հրանդին, որ երգնկացի Պաղտասար անունով ծաղարարի մը խանութը կը մտնէ։ Պաղտասարը Հրանդը կ'առաջնորդէ ծանօթի մը տունը հոն պաշտօնակու համար. իսկ Բաղարատը ծաղարարին քով սպասուորութեան կը մտնէ, քանի որ Թոքանի մէջ անծանօթ մըն էր։

Ռումէն խորհրդարանի երկու հայ երեսփոխաններ՝ Յակոբ Մաքըլեան եւ Պարհատ Պարհատեան, կ'ուզեն ծանօթանալ իրեն եւ կը թելադրեն որ պաշտօնակ, ինչպէս որ նախապէս իր բնկերները թելադրած էին։ Հակառակ այդ թելադրութիւններուն, Բաղարատը կը շարունակէ իր դործը։ Օրին մէկը, սակայն, դիպուածով մը իր ինքնութիւնը երեսն կ'ելլէ։ Թոքանի հայ վարժարանի աշակերտներէն մէկը, որ սուսմաքի ծանօթ հայու մը զաւակն է եղեր, իր բնկերներուն հետ խանութը գիտած պաշտն կը տեսնէ Բաղարատն ու մօտը կը վազէ։ Ասիկա պատճառ կ'ըլլայ որ հրաժարի իր դործէն եւ ապաստանի թաղստոց մը։ Երկու երեսփոխաններուն կարգադրութեամբ կ'առաջնորդուի աւսարիսպատակ մեծ վաճառականի մը տունը։ Հոն կային միայն ռումանահայ սպասուհի մը եւ տանտէրը, որուն կրնր ճշտած էր։ Այլեւս Բաղարատը ձերբակալուելու ո՛չ մէկ երկիւղ ունէր։

Երեսփոխանները իր բնակած տանաւորով մօտիկ բարեկամներն ըլլալով, յաճախ իրիկունները կ'այցելէին հոն։ Բաղարատը կ'օգտուի առիթէն եւ կը խնդրէ որ հասկնան թէ թրքահայատակ քաղաքական փախստական մը եթէ յանձնուի կառավարութեան՝ ռումանական օրէնքը կը թոյլատրէ՞ որ զայն յանձնեն թուրք կառավարութեան։ Երեսփոխանները կը խոստանան հեղինակաւոր անձնակերպութիւններու դիմել եւ հասկնալ, բայց միեւնոյն ատեն կը թելադրեն որ ինք միշտ թաղնուած մնայ մինչև փնտրուի մեղմացումը։

Երկու օր ետք կը յայտնեն թէ ռումէն սահմանադրական օրէնքին համաձայն՝ կառավարութիւնը չէր կրնար զինք թուր-

քիոյ յանձնել: Հակառակ այս հաստատ պատասխանին, դարձ-
եալ կը թեւադրեն չյանձնուիլ կառավարութեան: Իր պնդումնե-
րուն վրայ, սակայն, կ'որոշուի որ ինք ինքնաբերաբար երթայ
եւ ներկայանայ զատախաղութեան:

Այստեղ պէտք է նշել թէ ռումբերու հարցին տուրնու-
թեամբ ձերբակալուածներուն թիւը կը հասնէր շուրջ հարիւրի:

**

ԴԱՏԱԽԱՂԻՆ ԱՌՋԻՆ

Բազարատին հիւրընկալ աւատիահայտակ տանտէրը
չդիմեց պիտի առաջնորդէր զատախաղութեան պաշտօնատունը՝
իրը թէ փողոցը հանդիպած բլլար իրեն եւ իր խնդրանքին վրայ
յանձն առած թարգմանի ղերբ տանձնել:

Դատախաղին պաշտօնատան մէջ երբ քարտուղարին կը
յայտարարեն Բազարատին ինքնութիւնը, պաշտօնատան աշխա-
տակիցները կ'ահարեկին, եւ երբ կը լսեն թէ Բազարատը կ'ուզէ
զատախաղին հետ տեսնուիլ, կը հանդարտին ու աթոռներ կը
հրամցնեն անոր եւ ծանօթ վաճառականին: Քարտուղարը անմի-
ջապէս յոր կ'ու տայ ընդհանուր զատախաղին:

Քիչ ետք ընդհանուր զատախաղը քաղաքի կառավարիչին
հետ կը հասնի պաշտօնատուն: Յարգալից ծանօթացումէ յետոյ,
կ'առաջնորդուին զատախաղութեան առանձնատեղեակը: Դա-
տախաղը ուսմբերու մասին տեղեկութիւն կ'ուզէ Բազարատէն
եւ կը հարցնէ թէ ո՞վ շինած է դանոնք, որո՞ւ դէմ գործածելու
համար:

Բազարատը կը պատասխանէ արուպժ հարցումներուն:
Կ'ըսէ թէ ուսմբերը պիտի գործածուէին հայերու արխնարբու
թշնամիին՝ թուրք կառավարութեան դէմ:

Հայ յեղափոխականները ուրիշ ո՞չ մէկ կառավարութեան
դէմ թշնամութիւն կը սնուցանեն: Անոնց միակ թշնամին է
թուրք կառավարութիւնը, որ իրենց երկրին տիրանալէ ետք,
հայ ժողովուրդին արիւնը կը ծծէ եւ զանոնք բնաջնջել մտադ-
րած է: Ժամանակին ան տիրած է ձեր երկրին եւ հազար ու մէկ
չարչարանքներով տառապեցուցած է ուսմէն ազգին զաւակնե-
րը: Ձեր անձնուէր հերոսները, անրնկճելի վսյվոտաները զէնքով
տարին եւ շարունակ մաքառեցան եւ ձեր հայրենիքին միութիւնն
ու անկախութիւնը կերակրին: Թուրք կառավարութիւնը նոյն
բարբարոսական արարքները գործադրած է պուլկարներու, սեր-
պերու, յոյներու դէմ: Այս բոլոր ազգերն ալ զէնքով պայքարե-
ցան եւ իրենց ազատութիւնը ձեռք բերին: Հայ յեղափոխականե-
րն ալ ազատագրուած ազգերու օրինակին կը հետեւին:

Հայ յեղափոխականները երբեք չեն կարող մոռնալ այս աղաատադրուած ազգերու ցոյց տուած տաղնջականութիւնը եւ միշտ ալ երախտագիտութեամբ պիտի յիշեն այդ ազնուական վերաբերումը իրենց հանդէպ :

Ընդհանուր դատախազը մեծ դոհունակութիւն յայտնելէ յետոյ, Բաղարատին կը յայտնէ թէ զինք պիտի փոխադրեն Կալաց : Իրեն հետեւող ոստիկանները քաղաքացիի հաղուածներով պիտի ընկերանան իրեն եւ ամենաուշագիր յարգանքներով պիտի վերաբերուին իրեն հետ : Նոյնը կ'աղաքարէ ոստիկաններուն : Իրեն կը յիշեցուի թէ այդ օրէն սկսած , մինչեւ հարցին հաշուեյարդարը , իր բոլոր ծախքերը կ'առաւարտութեան հաշուն պիտի արձանագրուին : Նոյնպէս կը յայտնուի թէ ինք իր քաղաքացիի ազատութեամբ կ'արող է տարիլ եւ Կալացի շողեկառքով պէտք է մեկնի հոն :

Դեռ դատախազին զրտեհեակէն չմեկնած՝ երկու հայ երեսփոխաններ կու գան դատախազին թերթերու տուած տեղեկութենէն առաջնորդուած : Խօսակցութեան ընթացքին իրեն կու տան 1000 Քրանք : Բաղարատը նախ կը մերժէ , բայց յետոյ ընդհանուր դատախազին պնդումով կ'ընդունի արուած նուէրը : Հոն կը լսէ թէ Ազատեանն ալ ձերբակալուած ու Կալաց փոխադրուած է : Զերբակալող ոստիկանը իր կոշտ վերաբերումին համար պաշտօնադրկուած է եղեր :

Շնորհակալութիւն կը յայտնէ ընդհանուր դատախազին եւ իր հիւրընկալին ու ոստիկաններուն հետ կը մեկնի պաշտօնատունէն : Ապա հայ երեսփոխաններուն համակրութեան համար ալ իր շնորհակալութիւնը յայտնելէ ետք կը մեկնի Կալաց :

Հանգստաւէտ ճամբորդութենէ մը յետոյ կը հասնի Կալաց ու անմիջապէս կը ներկայանայ դատախազութեան : Պաշտօնատան մէջ տմէն յարմարութիւններով օժտուած սենեակ մը կը յատկացուի իրեն : Կ'ենթարկուի շատ փափկանկատ հարցաքննութեան մը եւ դատախազէն կը խնդրէ որ ազատ արձակուին այն բոլոր հայերը , որոնք ումբերուն խնդրով ձերբակալուած են , քանի որ բոլորն ալ անմեղ են եւ ինք է միակ պատախանատուն : Դատախազը փափկութեամբ զիտել կու տայ թէ անոնց ազատ արձակման հարցը իր իրաւասութենէն վեր է , քանի որ տնոնք ձերբակալուած են արդարութեան նախարարին մասնաւոր հրահանգով , ուստի այդ խնդրանքը պէտք է ընել ուղղակի նախարարին :

ՊՈՒԽԱՐԵՍՏԻ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԻՒՆԸ

Կալայէն Պուխարեստ Բազարատին կ'ընկերակցէին ձերբակալուածներէն Հրանդ Աղասեանը և երկաթագործ Կարապետ Բիւրքճեանը: Վերջինը Կոստաները պատահաբար: Պուխարեստի կայարանէն երկու չքեղ կառքերով կ'առաջնորդուին կառավարական շէնքը: Հոն երկու կահաւորուած սենեակներ կը յատկացուին իրենց: Երեքին ալ ծախսերը (կերակուր, ծխախոտ ևւն) կը հոգացուին կառավարութեան կողմէ: Իրենց կերակուրները, համաձայն իրենց ընտրութեան, կը բերուին մօտակայ «Օթէլ ալ Պրանս»էն:

Յաջորդ օրը մասնաւոր սենեակի մը մէջ, արդարադատութեան նախարարին, ընդհանուր դատախազին և կառավարիչին ներկայութեան, կը սկսի հարցաքննութիւնը: Թարգմանի պատուակալ պաշտօնը մեծ հաճոյքով կը ստանձնէ տելուոյն հայ վաճառականներէն մէկը: Այստեղ պէտք է յիշել թէ ռումբերու հարցը այդ օրերու մամուլին մէջ կը զրուէր իբր քաղաքական մեծ դէպքի պայայցուից յայանութիւն և դարձած էր Ժողովուրդի խօսակցութեան կարեւոր նիւթը: Թարգմանի վաճառականը աղգային ազատագրութեան ծառայութիւն մը նկատած էր իր ստանձնած պաշտօնը: Բազարատը դարձած էր մեծ անուն մը իբր ռումբերու գործին առաջնորդող դէմքը, և թերթերը բաւական երկար տան պրազէցան ռումբերու հարցով:

Եթէ Կալայի հարցաքննութիւնը կատարուած էր առանց արձանագրութեան, արդարութեան նախարարին, սակայն, ո՛չ միայն արձանագրուած էր, այլև անոր արտօնուած մասերը մամուլի մէջ հրատարակուած և հրապարակագրութեան նիւթ դարձած էին:

Արդարադատութեան նախարարին վարած հարցաքննութիւնն այստեղ կու տանք ամբողջովին:

— Դ՞ուք էք Ռուսճուքի մէջ ռումբեր պատրաստողը: Ի՞նչ նպատակով պատրաստած էիք զանոնք:

— Այո, այդ ռումբերը պատրաստած էինք մեր թշնամիին դէմ գործածելու համար: Մենք ո՛չ Պուլիսիոյ և ո՛չ ալ Ռումանիոյ դէմ որեւէ խնդիր ունինք: Ընդհակառակը, միշտ ալ երախտապարտ ենք մեզի արուած ասպինջականութեան համար:

— Ի՞նչ է հայ յեղափոխական կուսակցութիւններու նպատակը:

— (Մանրամասնօրէն լալատելէ ետք թէ ինչո՞ւ կազմուած են անոնք և ի՞նչ բանի կը ծառայեն, Բազարատը կ'սուր-

յրնէ) Թուրքերը մեզ կը ներկայացնեն իրբեւ ռուսասէրներ եւ աշխարհապաշտ իշուղեն Սթամպուլովին զէմ կատարուած մահա-
փորձը մեզի վերադրել: Մենք ո՛չ մէկ ատեն ռուսասէր եղած ենք
եւ ո՛չ ալ ի նպաստ Ռուսիոյ կ'աշխատէնք: Ասոր վտանն ալ չէ,
որ Ռուսիոյ մէջ մեր ընկերներէն շատեր ձերբակալուած են եւ
աքսորուած: Մեզմէ զատ ուրիշ հայ յեղափոխական խումբեր
ձարրակալուած եւ Սիսերիա աքսորուած են:

Նախարարը տեղեկութիւն կ'ուղէ Խաթիսեանին, Խարազ-
եանին եւ ուրիշներու մասին: Բազարատը կու տայ անհրաժեշտ
տեղեկութիւնները:

– Ռումբերու պատրաստութեան համար դուք որեւէ քի-
միական նիւթ ձեռք բերա՞ծ էք պուլկար կամ ռումէն մթերա-
նոցներէ:

– Ո՛չ մէկ նիւթ ստացած ենք յիշեալ մթերանոցներէն,
այլ՝ մեր սեփական միջոցներով հայթայթած:

Երեք ժամ հարցաքննութենէ յետոյ, դադար կը տրուի՝
հարցաքննութիւնը յաջորդ օրը շարունակելու:

– Կը ճանչնա՞ս Հրանդ Ազատեանն ու Կարապետ Քիւրքճ-
եանը:

– Այո՛, թէեւ մեր ընկերներն են, բայց ռումբերու հար-
ցին հետ ո՛չ մէկ կապ ունին. անոնք բաժարցակապէս անմեղ են:

Արդէն նախորդ օր Ազատեանն ալ հարցաքննութեան են-
թարկուած էր: Այս առիթէն օգտուելով, Բազարատը նախարար-
էն կը խնդրէ որ Ազատեանը, Քիւրքճեանը ու Կալաքի եւ ու-
րիշ տեղերու մէջ այս հարցին համար ձերբակալուած բոլոր հա-
յերը ազատ արձակուին, քանի որ անոնք ո՛չ մէկ կապ ունին
ռումբերու պատրաստութեան հետ:

Նախարարը կը պատասխանէ թէ առ այժմ ո՛չ մէկ կտր-
պադրութիւն կրնայ ընել:

Երրորդ հարցաքննութեան մը ընթացքին կը տրուին նոյն
հարցումները. առաւելապէս կը շեշտուի թէ ռումբերը չինոդ
հայ յեղափոխականները ռուսասէ՞ր են թէ ոչ. ռումբերու մէջ
զորձածուած նախանիւթերը յիշեալ երկիրներու մթերանոցնե-
րէ՞ն հայթայթուած են թէ ոչ: Միշտ ալ տրուած պատասխան-
ները կ'ըլլային ժխտական: Երբ Բազարատը սենեակ կը վերա-
դառնայ, ռումէն թերթերու թղթակիցները թարգմաններու մի-
ջոցաւ հարցին առընչութեամբ կու տան հարցումներ, որոնց
Բազարատը կը պատասխանէ անհրաժեշտը:

Նախարարին հարցապնդումները կը շարունակուին:

Յաջորդ օր նախարարը կը յայտնէ թէ ինք անձամբ դա-
յած ու տեսած է Ռուսճուքի մէջ գտնուած ռումբերը, զորս

քաղաքէն հեռու տեղ մը տարած փորձած են, բայց անոնցմէ ո՛չ մէկը պայթած է :

– Դուք ի՞նչպէս պիտի կռուէիք այդ ուսմբերով :

– Սխալ է ձեր կարծիքը, Պր. նախարար: Չանոնք պայթեցրնելու համար գլխուն կողմը դանուած ծակին մէջ բան մը պէտք է լեցնել եւ այնպէս նետել: Մենք այդ նախազգուշութիւնը ձեռք առած էինք, որպէսզի կեցած տեղը կամ փոխադրութեան միջոցին չպայթի: Չուր սեղը մարդոց վնաս չհասցնելու մտահոգութեամբ զանոնք թողած էինք այդ վիճակին մէջ:

– Ի՞նչ պիտի լեցնէիք այդ ծակին մէջ:

– Ներողութիւն, Պր. նախարար, որ չեմ կրնար գոհացում առն ձեր հարցումին, որովհետեւ այդ մեր դադարներն է: Կը խնդրեմ որ չպիղծէք այդ մասին, քանի որ այս գիտական հարցը քաղաքական ձեր փնտռումներն հետ ո՛չ մէկ յարակցութիւն ունի:

Հարցաքննութեան ծանրութեան կեդրոնը միշտ կը մնային հայերու ուսասիրութեան ու նիւթերու պետական մթերանոցներէ ստացուելու հարցերը: Անհրաժեշտ հաւաստումներ կը տրուին Բաղարատին կողմէ՝ թէ հայերը յիշեալ երկու պարագաներէն ո՛չ մէկուն մէջ դանուած են:

Հինգերորդ օրը բազմաթիւ հարցումներու պատասխաններն ստանալէ յետոյ, նախարարը կը հարցնէ թէ Ռուսոնքի մէջ Թիւթիւնճիֆի անունով մէկը կը ճանչնա՞ր Բաղարատը, եւ թէ ան ընկե՞ր է իրենց:

– Այո՛, կը ճանչնամ: Ան Պոլսէն զինուորական փախստական մըն էր եւ Ռուսոնքի մէջ թաղապետական րժիշկ: Անոր միջոցով մենք մէկ քանի նիւթեր պնած էինք ուսմբերու շինութեան համար: Մեզի ընկեր չէ եղած, որովհետեւ վստահելի մէկը կը նկատուէր չէինք զինք:

– Քանի որ վստահելի մէկը չէիք նկատեր, հապա ի՞նչպէս անոր ձեռքով նիւթեր դնեցիք:

– Մենք նախապէս վստահելի մէկը կը կարծէինք զինք, քանի որ ան մեզի պէս փախստական մըն էր եւ թուրք կառավարութեան դէմ ալ սոսկալի յօդուածներ կը հրատարակէր Մարսիլիա լոյս տեսնող «Արմէնիա» անունով հայ թերթին մէջ: Բայց քիչ ետք գիտեցինք թէ կը ջանար իր քիթը ամէն բանի մէջ կոխել: Իր այս արատասովոր հետաքրքրութիւնը մեր մէջ իր մասին կասկած յարուց: Մեր յարաբերութիւնները աստիճանաբար թուլցուցինք: Իսկ ինչ կը վերաբերի անոր միջոցով գնուած նիւթերուն, ընդամենը երկու քիլո քլորաք տը փոքաս եւ նոյնքան ալ ծծմբափոշի էին: Անոնցմէ չեմ կարծեր թէ որոշ բան մը հասկըցած ըլլայ:

– Պր. Բաղարատ, այդ Թիւթիւնճիէֆն է որ ձեր դէմ
դաւած է՝ նաեւ խարդախ նամակներ զրկելով ձեր հասցէին,
Սթամպուլովին վրայ կատարուած եղեռնափորձը ձեզի վերադ-
րել տալու համար: Բարերախտարար դուք կրցած էք ապացու-
յանել անոնց կեղծ ըլլալը: Ասկէ ետք Ռուսճուքի Թաղապետու-
թիւնը զինք ճամբու դրած է: Անգործ ու վարկարկուած ըլլա-
լով՝ նամակով մը գիմած է Պոլսոյ ոստիկանական նախարար
Նազըմ փաշային որ թոյլ տայ իրեն Պոլիս վերադառնալ՝ կարգ
մը կարեւոր գաղտնիքներ հաղորդելու:

Ռումանական «Ատվերուլ» թերթին թղթակիցը Բաղա-
րատին հետ մասնաւոր տեսակցութեան տունն ցոյց կու տայ իր
թերթը, որուն մէջ կար Բաղարատին նկարն ու հարցաքննու-
թեանէն մաս մը: Թղթակիցը կը հաւաստէ թէ ռումանական թեր-
թերը երկար ժամանակէ ի վեր այդ հարցով եւ հայկական կեան-
քով կը զբաղին:

Նախարարը օր մը կը յայտնէ թէ Թրքական դեսպանը
կ'ուզէ Բաղարատը տեսնել: Նախ փոքր վարանում մը կ'ունե-
նայ, բայց նախարարը զինք կը վստահեցնէ թէ վախճալիք բան
չկայ, բնելիքը պարզ քաղաքավարական այցելութիւն մ'ընէ:
Դեսպանը, որ խլամպացած հունդար մ'ընէր, կու գայ եւ քանի
մի խօսքերէ յետոյ սպառնալիքներ ընելով կը մեկնի:

Քառասունչինգ օրեր յետոյ նախարարը կը յայտնէ թէ
թուրք կառավարութիւնն իրենցմէ պահանջած է Բաղարատին
յանձնումը, բայց ըստէն կառավարութիւնը բացարձակապէս
մերժած է քաղաքական ապաստաննալ մը վերադարձնել իր պե-
տութեան:

Այդ տեսակցութեան ատեն է որ նախարարը կը յայտնէ
թէ Բաղարատը ազատ է մեկնելու: Բայց առ ի զգուշութիւն կը
թելադրէ որ հետանայ Ռումանիայէն՝ զոչ հզառնալու Թրքական
ոհարեկումի: Ան կ'ըսէ. «Ձեր կեանքը թանկալին է ձեր հայրե-
նիքին համար. դացէք եւ եթէ յաջողիք ազատել ձեր հայրենի-
քը, եկէք նորէն հոս եւ մենք սիրով ամէն օժանդակութիւն կը
հասցեննք ձեր ազատագրուած հայրենիքին: Այն հարցումին թէ
ո՞ր կ'ուզէ երթալ, Բաղարատը կը պատասխանէ Աթէ՛նք, ուր
կը գտնուի իր կուսակցութեան կեդրոնը: Նախքան մեկնումը՝
կը յայտարարուի թէ ռումբերու հարցով միւս ձերբակալուած-
ներն ալ ազատ արձակուած են:



ԴԻՊԻ ԱՓԷՆՔ

Բաղարատին, Ալատեանին եւ Քիւրքճեանին կու տան մէյ

մէկ ռումանական անցադիր եւ 500—ական Փրանք ալ ճամբու ծախս, որպէսզի Վիէննայի ճամբով երթան Աթէնք: Երեք գաղտնի ոստիկաններու հետ, — մին՝ կին եւ միւսները՝ այր, — առաջին կարգի վեց տոմսակով կը հասնին Սուչովա, հունգարական հող: Սուչովայի կայարանէն գաղտնի ոստիկաններէն մին մինչեւ Վիէննա առաջին կարգի տոմսակ կ'առնէ եւ կը յանձնէ Բագարատին: Բաժանումէն առաջ, կայարանին դարեջրատան մէջ կը սլարպեն ողջերթի բաժակներ:

Լեմպերկի կայարանին մէջ իրենց կ'ընկերանայ Վիէննա դպրոց հայ ուսանողուհի մը: Կայարանին մէջ շոգեկառք առնելէ յետոյ, Կարապետը, որ ջղային ցնցումներ ունեցած էր, հակառակ Բագարատին եւ Աղատեանին հոգատար ուշադրութեան՝ կ'անյայտանայ: Վիէննայի մէջ ուսանողուհին իրենց շատ օգտակար կ'ըլլայ, քանի որ իրենք չէին գիտեր երկրին լեզուն:

Բագարատը եւ Աղատեանը Վիէննայի ու Թրիէսթի մէջ կը վայելեն հայ վաճառականներու համակրանքը եւ 1892 Յուլիսի սկիզբը կը հասնին Փաթրաս ու Աթէնք:

Աղատեանը կ'երթայ ուղղակի Կեդրոն, իսկ Բագարատը՝ հիւրանոց: Տէր եւ տիկին Նազարրէկեանները կու գան ու զինք կը տանին Կեդրոն: Այդ տանն հոն կը գտնուէին իբրեւ Կեդրոնի անդամներ՝ Նազարրէկեան տոնլը, Սադօ Միլլոզյանցը, Ռուբէն Պանոպատը եւ Թուրքիայէն փախստական փաստաբան Պաշիկին ահաբեկիչը՝ բարերպցի Մեւքոնը, Անտոն Ռչտունին, Աղասին (Կարապետ Թուրսարգիսեան) եւ ուրիշներ: Քիչ յետոյ Մեւքոնն իբր գործիչ զրկուեցաւ Բաբերդ. իսկ Շմաւոնը թէեւ Աթէնք կը մնար, բայց զժողոված ըլլալուն համար չէր տեսնուեր Նազարրէկեանին հետ: Միհրան Տամատեանը եւ քիչ յետոյ նաեւ Համբարձում Պօյաճեանը ամիսներ առաջ արդէն անջատարար մշեցիներու հետ մեկնած էին իրենց Սասունի առաքելութեան:

Աղատեանը եւ Մարտիկայէն ուրիշ գեղադործ ընկեր մը գրամական ընչաքաղցութեան յանցանքով կը վտարուին Կուսակցութենէն ու կը զրկուին Եզիպոսոս:

Աթէնքի ոստիկանութիւնը Բագարատին ժամանումը լրտած ըլլալով, ոստիկանապետը քաղաքավարական այցելութիւն մը կու տայ Հնչակեան Կեդրոնին:

Կեդրոնի անգամներուն հետ առանձին տեսնուելէ յետոյ, կը փափաքի ծանօթանալ Բագարատին հետ ալ: Ոստիկանապետը, որ սլայ Բագարատ յորջորջումով կը ճանչնայ զինք, վիթխարի մէկն էր: Բագարատին ծանօթանալէ յետոյ կ'ըսէ. «է՛հ, Պր. Բագարատ, չելլես հոս ալ սուփրեր շինես»: Ոստիկանապետը

տը եկած էր զգուշացնելու Բաղարատն ու Կեդրոնը, որ ռումբեր չլինելու աշխատանք չկատարուի յունական հողին վրայ:

Այդ օրերուն Կեդրոնը սերտ յարաբերութեան մէջ էր զօրավար Տիմիթրի Ն. Բոցարիսին գլխաւորած Անաթոլիքի Օմոսփոնտիա (Արեւելեան Դաշնակցութիւն) (*) մեծ կուսակցութեան հետ: Անաթոլիքի Օմոսփոնտիայի մէջ կը միանային ալ-պանացի, կրեոտացի եւ մակեդոնացի յեղափոխական կազմակերպութիւնները:

Հնչակեան Կեդրոնի ընկերները բացարձակ հաւաստումնէրով ոստիկանապետին կը խոստանան թէ ո՛չ մէկ պարադայի տակ իրենց կողմէ նման փորձեր պիտի կատարուին յունական հողին վրայ: Ոստիկանապետը կը մեկնի բացարձակ վստահութեամբ:



ՅՈՅՆ ՆԱԽԱՐԱՐԱՊԵՏԸ ՀՆՁԱԿԵԱՆ ԿԵԴՐՈՆԻՆ ՄԷՋ

Համբաւաւոր նախարարապետ Թրիքուպիսը իր քրոջ հետ կ'այցելէ Կուսակցութեան Կեդրոն եւ կենցաղագլխաւոր խոսակցութենէ յետոյ կը հեաքքըքուի հայ յեղափոխութեան գործերով ու Կեդրոնի ներկայ եղող անդամները կը զգուշացնէ որ Յունաստանի մէջ չըզրադին ռումբերու շինութեամբ եւ նըման գործերով, որպէսզի յոյն բնակչութիւնը չըզրուի իրենց դէմ: Կեդրոնի կողմէ ամէն հաւաստիք կը տրուի նախարարապետին ալ, որ զո՛հ մնացած կը մեկնի:



ՄԻՋԱԴԷՊ ՄԸ

Շքեղ տօնական տարութիւն մը կատարուած պահուն, կարգ մը քարամանցի յոյներու եւ Թուրքիայէն փախստական հայերու միջեւ բախում մը տեղի կ'ունենայ Օմոնիա հրապարակին մէջ: Ոստիկանութիւնը անմիջապէս պաշարման տակ կ'առնէ կռուող կողմերը եւ կ'առաջնորդէ ոստիկանատուն: Հարցաքննութեան ատեն հայերը կ'ամբաստանեն մասնաւորաբար երեք յոյնի որպէս խրճական լրտեսներ, որոնք զիրենք կը հետապնդեն ամէն ատեն: Ուղարկութիւն կը կատարուի անոնց վրայ եւ որոշ ապացոյցները կը դանուին անոնց մօտ: Ոստիկանապետը, զայ-

(*) Ըստ «Հնչակ»ին, Հնչակեան Կուսակցութիւնը 23-12-1891-ին պաշտօնապէս միացած էր Անաթոլիքի Օմոսփոնտիային հետ - Վ. Ղ.:

րացած, բանտ նետել էրու տայ այդ թրքական լրտես քարամանցի յոյնները եւ մէկ քանի օր յետոյ նաւ դնելով Պոլիս կը զրկէ զանոնք: Բայց նաեւ կը զգուշացնէ հայերը նման միջադէպերէ ու կը պատուիրէ որ այս կարգի հետապնդումներու ատեն իրեն զիմէն՝ առանց կռուի բռնուելու:



ԶՈՐԱՎԱՐ ԲՈՅԱՐԻՍԻՆ ՄԱՀԸ

Այս նշանաւոր յեղափոխականին մահը յոյն կառավարութեան եւ ժողովուրդին համար տուաւ ազդային սուգի ազդանշանը եւ որոշուեցաւ կառավարութեան գլխաւորութեամբ պաշտօնակա՛ն հանդիսութեամբ կատարել յուղարկաւորութիւնը՝ մասնակցութեամբ քաղաքական եւ այլապէս ազդային միութիւններու, ինչպէս նաեւ օտար ղեւանդիտական մարմիններու:

Հնչակեան Կեդրոնին ալ հրաւէր տրուած էր ու կը թևադրուէր անջատ խումբով մասնակցել յուղարկաւորութեան թափօրին: Կեդրոնին որոշումով Բաղարատը կը մեկնի Կորնթոս՝ ջրանցքի բացման աշխատանքին մասնակցող մշեցիներէն՝ կարեւոր խումբ մը բերելու: Կը զատէ 300 մշեցիներէն՝ 80-ը՝ իրենց տարազներով մասնակցելու թափօրին: Այս 80 հայերուն հետ կը մասնակցէին նաեւ Թուրքիայէն փախստական յեղափոխականներն ու Հնչակեան Կեդրոնին անդամները:

Թաղման օրը զազաղին առջեւէն կը քալէ հայկական խումբը: Հայ երիտասարդ մը թափօրին առջեւ բարձրացուցած էր հայկական կարմիր, ճերմակ, կանանչ եռագոյն դրօշակը, որուն մէջտեղը նկարուած էր հայկական զինանշանը: Հայկական թափօրը մեծ ապաւորութիւն կը զործէ յոյններն միայն եւ մամուլը օրեր շարունակ զրուատիքով կը խօսի անոր մասին: Հըռչակաւոր յեղափոխական ղօր՝ Բոցարիսին թաղման հանդէսին մասնակցած էին նաեւ բաղմոթիւ ուրիշ ազգերու դաղութներ:



ԹՐԿԱԿԱՆ ԼՐՏԵՍՆԵՐ ԵՒ «ՀՆՁԱԿ» ԹԵՐԹԸ

«Հնչակ» պաշտօնաթերթը կը տպուէր յոյն տպարանի մը մէջ: Օրին մէկը շարուած եւ կապուած «Հնչակ»ին տառերը կը պրտեն կրետացի թուրք մը եւ քարամանցի յոյն մը: Լրտեսները տպարան մտած ու այդ վնասարարական զործը կատարած էին

օգտուելով կէսօրուան ճաշի ժամանակէն, երբ գրաշարները մեկնած էին ու պահապանն զրադած էր ճաշով: Պահապանը նըշմարելով կատարուածը, կը վաղէ փախչողներուն ետեւէն եւ զանոնք լռենէ կու տայ ռատիկաններու: Կը ստուգուի որ անոնք թրքական լրատներն են: Երկու օր ծեծի տակ կը բանտարկուին եւ յետոյ շտգենաւով կը զրկուին Պոլիս:



ՏԱՄԱՏԵԱՆԻՆ «ՏԱԼԻՈՐԻԿ»Ը

Այդ օրերուն Կեդրոնը ծանրապէս մտահոգուած էր Տամատեանին եւ Պօյաճեանին համար: Երկուքէն ալ տեղեկութիւն կը սպասուէր Սասնոյ մէջ կատարուելիք շարժումներու մասին:

Բազարատը տպարանէն վերադարձին արտակարգ ուղեւորութիւն մը կը տեսնէ իր ընկերներուն մօտ: Իր հարցումներուն վրայ, իրենց ցոյց կը արուի Տամատեանին ծածկագիր նամակը, որուն մէջ ան կը գրէր թէ արդէն ինքնապաշտպանութեան համար ծանր կռիւններ սկսած ու հայերը յաջողութիւններ արձանագրած էին: Այդ յաջողութիւններէն ողբերգութեամբ Տամատեանը գրած էր իր «Տալորիկ»ը եւ ծածկագիր զրկած Կեդրոն: «Տալորիկ»ին մէջ երկու տուններ աւրուած ըլլալով եւ դժուար ընթերցանելի գործած, Նաղարէկեանը կը վերակազմէ ու կը հրատարակէ «Հնչակ»ին մէջ(*):

Հաւար ինկնի՝ երբամ ւտաջ,
Սասնոյ լեռնիմ հանն հառաչ,
Հառաչ հանն եւ ներկուին
Իր կըտրնի արիւնով քաշ:

Այծեամի պէս կը ցատկոտես,
Առիւծի պէս կը մըռնչես,
Ծովու մը պէս կը փրփրոտես,
Կայծակի պէս կը հարուածես:

Կըտրնի՛ս սիրա, կըտրնի՛ս ձեռք,
Ի՛նչ փոյթ քաջիդ հազար-մէկ վերք –
Մէկ հարուածին կու տաս հարկը, –
Ակռաւին լէշ կ'անես հազիր:

Կըտրի դաշտը բաղդն է կեանքիդ,
Հոն ախտ կարմիր արշալոյսը
Կամ աւետիս տայ դրօշակիդ,
Կամ պաղ տեսնի քո երեսը:

«Տալորիկ»ի բովանդակութիւնը շատ դնահատուած ըլլալով, Կեդրոնին կողմէ կը յանձնուի Անտոն Ռշտունիին, որ եղանակ մը յօրինէ: Ռշտունիին եղանակն ալ դուրս կու գայ յա-

(*) – Տամատեանին սեփականութիւնն եղած «Հնչակ»ի հաւաքածոնքերէն ի յայտ կու գայ թէ Նաղարէկեանին գրչին կը պատկանին «Հնչակ»ի 1892-ի 6-րդ քիւին 54-րդ էջով հրատարակուած «Տալորիկ»ի նախավերջին 4 տունները: Ահա՛ ստորեւ անոնք: – վ. Ղ.:

ջող եւ կը սիրուի բոլորէն: Հայ-ժողովուրդը խանդավառող այս երգը շուտով կը տարածուի հայ ժողովուրդին մէջ եւ կը դառնայ մեր ապրող երգերէն մէկը: Ժամանակի ընթացքին այս երգին եղանակը ուրիշներ ալ առին, ինչպէս՝ յոյներն ու պուլկարները:

Այստեղ պէտք է յիշել թէ Սասնոյ հետ նամակներու հաղորդակցութիւնը կը կատարուէր Կովկասի մասնաճիւղերուն միջոցով:

Այդ օրերուն Աթէնքի Կեդրոնը որոշ կարեւորութիւն ստացած էր ո՛չ միայն հայերուն համար: Հոն կ'այցելէին օտարներ ալ եւ թուրքիոյ առնչութեամբ զանազան քաղաքական հարցերու մասին տեղի կ'ունենային տեսակցութիւններ: «Տէյլէ Նիւզ»ին հռչակ հանած թղթակիցը՝ Ֆիցճերալտ, որ Կարնոյ մէջ Բազարատին ազատ արձակման անուղղակի պատճառ դարձած էր, կ'այցելէ Կեդրոն: Բայց այդ մասին կ'անդրադառնանք յետոյ:

Հայերէն յիշենք Չուրիցերիոյ մէջ ուսանող Աթարեկեանը(*), իր քոյրը եւ Բարսեղ Չաքարեանցը: Աթարեկեանը, որ ծանօթ էր իբր թարգմանիչը ռուս յայտնի անիշխանական Կրասնոպոլսկին ղործերուն, եկած էր իր ուսանողական արձակուրդն անցընելու Կեդրոնի իր ընկերներուն հետ: Իսկ Չաքարեանը լրբացուցած իր համալսարանական ուսումը՝ Երկիր կ'երթար՝ ստանձնելու իրեն փոխադրուած յեղափոխական պարտականութիւնները:



ԴԷՊԻ ԵԳԻՊՏՈՍ ԵՒ ԵՐԿԻՐ

1892-ի Սեպտեմբերի սկիզբը կ'որոշուի որ Բազարատը մեկնի Փոքր Հայք, հոն ղեկավարելու յեղափոխութեան գործը: Անցադիր մը ճարելու համար կը գրուի Եգիպտոս, Գրիգոր Աւրբաչեանին, որուն թելադրութեամբ Բազարատը կը մեկնի Եգիպտոս: Կ'ապահովէ հոն հաստատուած սերաստացի Վարդան Ալթունեանին անցադիրն ու կը վերադառնայ Աթէնք, մեկնելու համար Սամսոն:

Աթէնքի մէջ մէկ քանի օրուան պատրաստութենէ յետոյ, Անաթոլիքի Օմոսփոնախայի Կեդրոնին յանձնարարութեամբ Բազարատը կ'առնէ յունական շողենաւ մը: Նաւապետը՝ նոյն

(*) – Աքաբեկեանը եւ իր բոլոր ժընեի մէջ կատարած են «Հնչակ»ի գրաշարութիւնը՝ Հնչակեան Կեդրոնը ժընեի գտնուած շրջանին:

յևդափոխական կաղմակերպութեան անդամ՝ յանձն կ'առնէ ամէն զիւրութիւն տալ Բազարատին, որ ապաճով ճամբորդութեամբ հասնի Սամսոն եւ զուրա ելլէ Վարդան Ալթունեան անունով, իսկ իր գոյքերն ալ՝ ղէնքեր, թերթեր եւ այլն, իբր նաւային ընկերութեան իրերը Սամսոնի գրասենակին մէջ յանձնէ իրեն։ Սամսոնի գործակալութեան վարիչներն ալ (Արզօղլի եղբայրներ) նոյն կաղմակերպութեան անդամներէն էին։

Փոքր Հայքի մէջ Բազարատը թէեւ պաշտօնական բոլոր շրջանակներուն առջեւ պիտի ներկայանար համաձայն իր անցադրին, սակայն նորէն պիտի գործէր Ատոմ Ասլանեան յեղափոխական անունով։ Ատոմը իր հետ ունէր նաեւ փոքր քանակութեամբ սթրիսինն եւ մորֆին՝ տալնապի պահերուն զանոնք գործածելու համար։

Առ ի զգուշութիւն, Պոլսոյ առջեւ Ատոմը երկու օր փակած կը մնայ նաւապետին սենեակին մէջ։ Սամսոնի նաւահանղիստին մէջ ոստիկանական քննութիւնէ յետոյ կ'երթայ Կիւսիւղեան խանը։ Երկու օր ետք միայն Մարզումնի մասնաճիւղէն երկու ընկերներ կու գան զինք առաջնորդելու։ Կեդրոնէն նախապէս դրուած էր Ատոմին մասին եւ ինք ալ, իր հերթին, զրած էր Սամսոնէն։ Իր ինքնու թիւնը ծանօթացնող նշանը պիտի ըլլար իբր փողկապ գործածուած կանաչ թաշկինակը։

Ատոմը զինք դիմաւորող երկու ընկերներուն հետ նաւի գործակալութենէն կը ստանայ իր իրերն ու կը մեկնի Մարզումն։ Նախքան մեկնիլը, Արզօղլիներուն կը ներկայացնէ իր ընկերներէն մէկը, որուն պիտի յանձնուէին Խաֆայէլ Բազարաւ հասցէագրուած իրերն ու նամակները։ Արդէն Աթէնքէն Ատոմին մասին գրուած էր Արզօղլիներուն։

Սամսոնէն մինչեւ Մարզումն բոլոր ոստիկանատուններուն եւ պահականոցներուն մէջ կը կատարուին անցադրային քննութիւններ եւ առանց դժուարութեան անոնք կը շարունակեն իրենց ճամբան։

Մարզումնի մէջ Ատոմին մուտքն ու շարժումները այլեւս պիտի կատարուէին գաղտնի, խորհրդապահական միջոցներով։ Մէկ քանի օրեր յետոյ կը գումարեն տեղական վարչութեան առաջին ժողովը, ուր Ատոմը կը ներկայացնէ Կեդրոնէն տրուած իր յանձնարարական վկայագիրը եւ իր հանգամանքը։

Մարզումնի վարչութեան անդամներն էին այդ ատեն Անգրանիկ եւ Արզար Պարսամեան եղբայրները (Նաթթուիա քուէճէն ընթացաւարտ ու անդւոյն ուղղային վարժարանին տընորէն եւ ուսուցիչ), Յակոբ Էլպէկեանը (առեւտրական), Յակոբ Արապաճեանը, Յարութիւն Էօքիւղեանը, Յարութիւն Թումայեանը (այդ ատեն փախստական եւ Մօրալ անունով ծա-

նօթ) եւ չորս այլ ընկերներ: Ընկեր Գարակէօղեանը, որ Սամսոն եկած էր զինք առաջնորդելու եւ որուն տան մէջ կը մնար Ատոմը, զինք ծանօթացուցած էր ընկերներուն: Այս առաջին ժողովին Ատոմը ծանօթացած էր Երկրի դործերուն, իսկ վարչութիւնն ալ՝ արտասահմանի ու մասնաւորաբար Կեդրոնի մասին անհրաժեշտ տեղեկութիւններուն: Այդ ատեն էր որ Ատոմը տեսաւ թէ նոյն իրարմէ անկախ հայրենասէրներու խումբերը կազմուած էին Կիլիկիայէն մինչեւ Փոքր Հայք, ինչպէս նախօրօք տեսած էր Կարնոյ շրջանակին մէջ, 1889-ի օրերուն: Հնչակեան Կուսակցութիւնը եկած էր միացնելու այդ բոլոր խումբերը մէկ դրօշակի տակ՝ անոնց շարժումներուն տալով համակարգ բռնոյթ:

Նոյն շրջանակին մէջ Ատոմէն առաջ իբրեւ ղեկավար ուժեր դործած էին՝ Սուրէն Սուրբէնեանը (Ղաղարոս Կոբըղեան), Շմաւոնը (Գարրիէլ Կաֆեան) եւ ուրիշներ: Երբ Սուրբէնեանին շարժումները բացարձակապէս կաշկանդուեցան եւ այլուր իր ներկայութիւնը հրամայական դարձաւ՝ մեկնեցաւ Մարզոսեանի շրջանէն: Շմաւոնն ալ նոյն պայմաններուն տակ մեկնած էր այլուր գործելու, երբ Ատոմը կը ստանձնէր Փոքր Հայքի յեղափոխական դործին ղեկավարութիւնը:

Փոքր շեղումով տանք այստեղ Շմաւոնին շարժումներուն հակիրճ անցքերը:

Շմաւոնը արտակարգ անհատականութիւն մը եղած է, խառնածքով յանդուգն եւ ինքզինք պարտադրող զարգացած սուսահայ երիտասարդ մը, որ Դում — Դալուի ցոյցէն առաջ զրկուած էր տեղւոյն գլխաւոր վարժարանին անօրինութեան պաշտօնէն: Կազմակերպական բացառիկ ընդունակութեամբ օժտուած ըլլալով, շուտով Արարիկիւրի եւ իր շրջանակին մէջ կը ստեղծէ կուսակցական մասնաճիւղերու ցանց մը: Ստեղծուած շարժումը կը ծառալի քաղաքին Կեդրոնի մէջ, մինչեւ որ Կեդրոնի մէկ անճիւղ ու անխոհեմ լրատուութեամբ կը քանդուի կազմակերպական մեքենան եւ հայերու մեծ թիւ մը կը բանտարկուի տեղւոյն մէջ կամ կ'աքսորուի ուրիշ քաղաքներ:

Պսէն Արարիկիւր կը զրկուի ոստիկանապետ Ետսուֆը, որուն մասնաւոր պաշտօն յանձնուած էր յեղափոխականները հետապնդելու: Ոստիկանապետը անհաղորդ կը պահէ իր օգնականներն ու քայմաքամը իր կատարած աշխատանքին: Միեւնոյն ատեն՝ իւր կնամով՝ յարարերութիւն կը ստեղծէ հայ վատահամբաւ կնոջ մը հետ, որուն սիրահարած է եղբոր ուրիշ թուրք մը, որ Ետսուֆին գիշերային այցելութիւններուն կը հսկէ եղբոր եւ օր մըն ալ վատահամբաւ կնոջ դրան առջեւ կը սպաննէ ոստիկանապետը: Բնականաբար կը սկսի դատաւարութիւն մը ա-

հարեկիչ թուրքին դէմ: Այս դէպքը անձանօթ մէկէն կը տեղեկագործուի «Հնչալ»ին, որ անխոհմարար կատարուածը առանց արժանահաւատ աղբիւրներէ ստուգելու՝ կը վերադրէ Կոստալցութեան: Այս լրատուութեան հետեւանքով թուրք կառավարութիւնը շարժման կը դնէ իր ոստիկանական գաղտնի սպասարկութիւնը եւ հարիւրաւորներ կը ձերբակալէ ու կը բանտարկէ: Ոստիկանութիւնը իր հետապնդումներու աշխատանքին մէջ մեծապէս կ'օգտուի Շմաւոնին տնօրինութեան տակ գործող աւագ ուսուցիչ Խերպէկեանին ցուցումներէն: Խերպէկեանը այդ օրերէն յետոյ ինքզինք կը դնէ ուղղակի թուրք ոստիկանութեան գաղտնի սպասարկութեան ծառայութեան մէջ: Ան ո՛չ միայն կը քանդէ Արարիկի իւր շրջակայքի յեղափոխական գործը, այլեւ իր գործունէութիւնը կ'ընդարձակէ մինչեւ Փոքր Հայքի շրջանակները, մինչեւ որ Մարդուանի մէջ Սուրէնեանին նախագահութեամբ կազմուած յեղափոխական դատարանին կողմէ կախաղանի մահով վերջ կու տայ իր մատնութեան ինկածութեան: Խերպէկեանին մատնչական գործունէութեան շարժառիթը անհատական շահէն ու փառասիրութենէն թելադրուած էր: Հակառակ իր յաւակնութեան, երբ անօրէնի պաշտօնը կը տրուի Շմաւոնին, այդ օրէն կը լծուի մատնութեան անարդ ծառայութեան:

Շմաւոնը Տերսիմի աւտոապեաններէն մէկուն այցելութեան ճամբուն վրայ 6-7 րնկերներով կը հրաւիրուի ուրիշ աւտոապետէ մը, որ առաջինին մահացու թնամին էր: Հակառակ ընկերներուն զգուշացնող պնդումին, Շմաւոնը տկարութիւնը կ'ունենայ երկրորդին ալ այցելելու: Այս աւտոապետը քառասուն գինեալ խոյամներու յարձակման կ'ենթարկուի՝ երբ ճաշի վրայ էին իր 6-7 հիւրերը: Բոլորը կը գինաթափուին եւ կապանքներու տակ թուրք կառավարութեան կը յանձնուին: Կառավարութիւնը կը բանտարկէ գանոնք: Ռուս ղեկավարին պահանջով՝ Շմաւոնը, իբրեւ ուսասնական, ոստիկանական ուժեղ հակողութեամբ ճամբայ կը հանուի դէպի Պոլիս:

Արարիկի մասնաճիւղը անմիջապէս լուր կու տայ Փոքր Հայքի մասնաճիւղերուն, որոնց գինուած խումբերը կը ժամագրուին Ամասիայէն մէկուկէս ժամ հեռու Զելթիկ Տերէսի կոչուած ձորը: Միացեալ գինախումբը Յարութիւն թումայեանին ղեկավարութեամբ դարանի կը մտնէ եւ կը սպասէ Շմաւոնի տանող խումբին անցնելուն: Կարասանի մը անցնիլը տեղնելով՝ կը յարձակին Շմաւոնի ազատելու: Թումայեանին խումբը կը յաջող գինականի բախումով կարասանին ընկերացող ոստիկանները պարտութեան մատնել ու գինաթափել: Բայց Շմաւոնը չգտնելով՝ խլուած երեք ասրճանակներն ու երկու հրացաններ

բը զբաւելլով թոյլ կու տայ որ կարաւանն իր ճամբան շարունակէ:

Շմաւոնը երբ ոստիկաններու ընկերակցութեամբ կը հասնի Սամսոն, ճարպիկ հնարքով խոյս կու տայ եւ կը պահուրախ կուտակցական բնկերոջ մը տան մէջ: Մարդուանի մասնաճիւղը այս լուրն իմանալով, խումբ մը բնկերներ կ'երթան եւ Սամսոնէն զինք կը փոխադրեն իրենց մօտ: Շմաւոնը մի քանի ամիսներ կը մնայ Մարդուան եւ յետոյ ծոյտուած, Սամսոնի ճամբով, կը մեկնի Աթէնք:

Արարկիրի յեղափոխական բոյնը կը քանդուի եւ բազմաթիւ հասեր կը բանտարկուին: Այս մասին պիտի խօսինք աւելի հանդամանօրէն Սուրէն Սուրէնեանին յատկացուած գլուխին մէջ(*):

Բայց այստեղ պէտք է ըսել թէ Ուրպէկեանին մաքրագործումով Փոքր Հայքի մասնաճիւղերը ազատեցան Արարկիրի դժբախտութենէն: Կախաղանի պատիժէն առաջ արդէն Փոքր Հայքի յեղափոխական կազմակերպութեան անդամ հարիւրաւոր անձերու անուանացանկը խուզարկութեամբ հանած էին Ուրպէկեանին զբոսաններէն ու գրաւած: Ան ժամանակ չէր ունեցած թուրք կառավարութեան յանձնելու այդ ցանկը:

ՄԻՆԱՍ ՕՂԼԻ ԵՂԲԱՅՐՆԵՐ

Գաղափար մը տուած ըլլալու համար Փոքր Հայքի զինեալ խումբերու գործունէութեան մասին, հոս կու տանք համառօտ տեղեկութիւն մը Մինաս Օղլի եղբայրներու հայդուկային սխրագործութիւններէն մասնաւոր գրուածներու մասին:

1891-ի Հոկտեմբերի վերջերի Մինաս Օղլիին հայդուկային խումբը հրահանգ ստացած էր Մարդուանէն Գափու – Գայա երթալու: Կառավարութեան կողմէ զինուած յիսնեակ մը չերթէգներ պաշտօն ունէին բնաջնջելու այս խումբը: Չեթիկ Տերէսի մէջ չերթէգները կ'ուրի կը բռնուին Մինաս Օղլիին խումբին հետ: Այս զինական բախումին մէջ չերթէգները մէկ քանի մեռեալներ եւ վիրաւորներ տալէ ետք, կը ձգեն ու կը փախչին: Մինաս Օղլիին խումբը կը շարունակէ իր ճամբան դէպի Փուրչունլիի գիւղախումբերը: Հոն լուր կը ստանան թէ կիւրճիները մատդիր են Գափու – Գայա հայ գիւղին վրայ յար–

(*) – Ընթերցողը պիտի նշմարէ թէ ներկայ հատորին մէջ Սուրէնեանին յատկացուած գլուխ չկայ – Վ. Ղ.:

ձակելու: Հայ յեղափոխականները դարանակալ կը սպասեն: Երբ կիւրճիկները իրենց զոհին վրայ կը յարձակին, ինքզինքնին չըջապատուած կը տեսնեն Մինաս Օղլիին հայդուկային խումբէն: Կոիւր կը տեսէ չորս ժամէն աւելի: Կիւրճիկները երկու մեքենալ եւ չորս վիրաւորներ տարով կը բռնեն վախտատի ճամբան եւ կ'ապրան ընաջնջուէ:

Զերքէզներու եւ կիւրճիկներու պարտութիւններէն ետք, կառավարութիւնը կը ստիպուի ոստիկանական ձեռնոր խումբեր հանել Մինաս Օղլիին խումբին դէմ: Ոստիկանական այդ ուժեղ ջոկատները փոխանակ իրենց նպատակին զիմելու, կը տարածուին չըջակայ գիւղերուն մէջ եւ ջրաղացներուն վրայ՝ պահանջելու յեղափոխականները: Բայց երբ կը ձախողին՝ կը հաւաքեն մաս մը գիւղացիներ ու կը տանին քաղաք՝ իրր Մինաս Օղլիին հրոսակները, անշուշտ չմոռնալով Պոլիս հեռադրել թէ հայդուկային խումբերէն որոշ թիւով յեղափոխականներ արգէն ձերբակալած են:

1892-ի փետրուարին Մինաս Օղլիին եղբայրը՝ Յովհաննէս, որ իր եղբորը մահէն ետք անոր խումբին հրոսակներէն էր եւ ահաբեկութիւններ կ'ապրեց, որոնց ու Սերաստիոյ նահանգները, Մարթէլ գիւղի քահանային մատնութեան զոհ կը դառնայ իր գիւղակիցներէն Պաղտատարին հետ: Յովհաննէսը երբ իր հրոսակներով Մարթէլ գիւղը կը գտնուէր, քահանային մատնութեան վրայ 80 հոգինոց ոստիկանական հեծեալ ուժ մը կը պաշարէ անոնց իջևանած տունը, մինչ անոնք՝ անտեղեակ իրենց չորջը կատարուածէն՝ կը քնանային բացարձակ սպառնով զգալով: Ոստիկանական հարիւրապետը կը հրամայէ անձնատուր ըլլալ: Հայդուկները արթնցած դուրս կը նետուին եւ կուտի կը բռնուին չըջապատող ուժին հետ: Մէկ քանի ոստիկաններ վիրաւորուած կ'ըլլան: Պաղտատարը եօթ գնդակ ստանալով կը սպաննուի, իսկ Յովհաննէսը աջ թեւէն վիրաւորուելով կը դադրին կուտիէ: Մնացածները զրոհով կը ճեղքեն ոստիկանական շղթան ու կը հեռանան:



ՄԱՏՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԲԱՏՏԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Մարդուանցի յայտնի յեղափոխական դործիչ Յարութիւն Թումաճեանը, երբ կը տեսնէ թէ քաղաքին մէջ վատնդուած է իր ներկայութիւնը, կը հեռանայ հոնկէ ու կը միանայ չըջակայ զինուած խումբերէն մէկուն: Քիչ ատենէն կը դառնայ հնչակեան հրոսակներին պետը եւ կը վարէ խումբին պարտադրուած կռիւները: Ան Փրոֆ. Թումաճեանին հօրեղբորդին էր:

Կառավարութիւնը, որպէսզի ընկճէ Յարութիւնը, կը ձերբակալէ անոր կիներն ու տաննիկեցամեայ գաւազը՝ Վահանը, որը կը փոխադրէ Ամատիոյ բանար: Տեղւոյն հնչական մասնաճիւղի ընկերները, սակայն, քիչ ատենէն կը փախցնեն Վահանը եւ ծաղած կը զրկեն Աթէնք, իսկ կիներ եւ միւս գաւազները վից տմիս յետոյ, տարուած աշխատանքին շնորհիւ, արդատ կ'արձակուին:

Սերատիան ալ կ'ունենայ իր մասնիչը՝ Կարապետ Հապէշեան: Այդ ցածոյի հայուն ցուցումներով կը բանտարկուին Սերատիոյ, Ամատիայի եւ Թողաթի մէջ բազմաթիւ հայեր: Զերբակալուածներուն մէջ կը գտնուէին նաեւ Գէորգ Պոյաճեանը եւ ուսուցիչ Կարապետ Գարիկեանը:

Կառավարական կարգադրութեամբ իրը յեղափոխական կը բանտարկուի Կարապետ Հապէշեանն ալ: Քաղաքական բանտարկեալները, սակայն, կը թափանցեն խաղին՝ առանց Հապէշեանին զոյգներու: Անոնք իրբեւ թէ Հապէշեանն իրենցմէ բլլար՝ կը համոզեն իրոյս տալու բանտին: Հապէշեանը կը համոզուի ու կ'ընկերանայ անոնց: Երբ բռնները կը բարձրանան՝ կը մաքրեն անոր հաշիւը:



ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՄԵՔԵՆԱՆ

Ատոմին ձեռներէցութեամբ կը հաստատուի տաննապետական զբոսթիւնը՝ փոխ-տաննապետներով, եւ վարչութիւնները, իրենց կարգին, կ'ունենան պահեստի փոխ-վարչութիւններ: Տաննապետներու ժողովին կ'ատենապետէ յիւնապետ կամ հարիւրապետը: Առաջինը՝ ընտրուած տաննապետներէ, եւ երկրորդը՝ ընտրուած յիւնապետներէ, միշտ Մարդուանի կեդրոնին հակադէպը կ'ունենան իրը իրենց ուղեցոյց:

Բոլոր մասնաճիւղերուն հետ իրենց հաղորդակցութիւնը ապահով միջոցով կատարելու համար, դարձեալ Ատոմին առաջարկով շինել կու տան չորս ձիաքարէ բռնակառքեր (Փորկոն) իրենց պաղտնի պահարաններով: Ատոնք կը պատրաստուին Անաթոլիա քովէն տառազագործարանին մէջ, վստահելի վարպետ Ղազարոսին ծրարելով: Այս կառքերէն երկուքը սահմանած էին Սերատիոյ - Սարրերդ գծին, երրորդը՝ Եոզկատ - Կեսարիա, չորրորդը՝ Մարդուան - Մամսոն:

Ատոմը, երբ վերջնական ձեւ կու տայ Փոքր Հայքի կազմակերպութեան, կը գրէ Աթէնք, որպէսզի Զաքարեանը զրկեն դարձեալ յունական նոյն ընկերութեան շտաբանով: Անոր Սամ-

սոն ելլելը պիտի ըլլար նաւաստիի տարադով: Նաւային ընկերութեան գրասենեակէն մարդուանցի ծանօթ ընկերներ զինք պիտի առաջնորդէին Մարդուան: Բարեւոյ Զաքարեանը, կանխաւ եղած կարգադրութեան համաձայն, Սամսոն կ'ելլէ եւ Մարդուանէն հայթայթուած անցադրով ու Կուսակցութեան կառքով, երկու ընկերներու ստաջնորդութեամբ, կը հասնի Մարդուան:

Զաքարեանին ժամանումով Աստմը տասնեակներու մօտ կատարուելիք աշխատանքը կը փոխանցէ անոր եւ ինք կը մեկնի Ամասիա, Եւդոկիա ու այլ քաղաքներ, կազմակերպական աշխատանք կատարելու եւ համակարգելու շարժումները:

**

Յ. ԳԱՅԱՅԵԱՆ ԵՒ Կ. ԹՈՒՄԱՅԵԱՆ

Թուրքիոյ հայաշատ քաղաքներէն ոմանց մէջ կրթական առաջնակարգ դեր կը կատարէին շարք մը ճիւղերը եւ սինիքը քոլէճներ: Հայ կրթական դործը առաջնորդող օժանդակութիւն ստացաւ այս բարձր հաստատութիւններէն՝ հայ ժողովուրդին իրենց տուած մէկ քանի տասնեակ հազար չըջանաւարտներով եւ թերաւարտներով: Անոնցմէ չորսը մեր կրթական կեանքին մէջ ճառագայթարձակ փայլուն փորձանքը դարձան մէկ քանի տասնեակ տարիներ, մինչեւ մեր Մեծագոյն Ազգային թուականը: Ռապրըթ եւ Անաթոլիա քոլէճները տուաւ կամ նուազ չափով միջ – ցեղային գրոշմ ունէին, իսկ Նփրասան ու Կեդրոնականը զուտ հայկական դիմագրծով զարգացած հայ սեբունդներ առւին:

Մարդուանի Անաթոլիա քոլէճին մէջ Փոքր Հայքի յեղափոխական շարժումներուն ատեն կային երկու հայ փրօքիստներ, որոնք առանց պաշտօնապէս միացած ըլլալու յեղափոխական շարժման՝ մեկտորի դեր ստանձնած էին շարժման վարչչներուն համար:

Երկուքն ալ կը փափաքին տեսնել յեղափոխական նոր դործիչը: Աստմը տեղի վարչական ընկերներուն թեյադրութեամբ կ'այցելէ քոլէճ եւ անջատարար խորհրդակցական տեսակցութիւններ կ'ունենայ անոնց հետ: Երկուքն ալ կը ներկայացնէ Կուսակցութեան նպատակը, ուժերը, դործելակերպը ու այլ անհրաժեշտ տեղեկութիւններ. իսկ անոնք իրեն կը ծանօթացնեն Փոքր Հայքի կարելիութիւններն ու իրական կացութիւնը փաստական տուեալներով, սրոնց իրազեկ դարձած էին իրենց արձակուրդի շրջապայտի թիւններով: Անշուշտ այդ թան-

կազմին օժանդակութիւնը՝ չըջապատին եւ ընդհանուր կացութեան ծանօթանալու՝ առաջնորդող դեր կը կատարէ Ատոմին համար։ Երկու փրոֆեսէօրներն ալ իրենց համամատութիւնը կը յայտնեն Կոստակեցութեան առաջադրութիւններուն մասին, երկուքին ալ թելադրութիւնը կ'ըլլայ՝ իմաստուն զգուշաւորութիւն, ծածկամտութիւն եւ խոհեմութիւն։ Փրոֆ. Գայայեանը կ'ըսէ. «Որեւէ ժամանակ երբ իմ օժանդակութեանս պէտք ունենաք, պատրաստ եմ ձեզի օգտակար ըլլալու»։

Ծանօթ է թէ երկու փրոֆեսէօրներն ալ վերջապէս ձերբակալուեցան իւր քաղաքական յանցաւորներ եւ միայն օտար միջամտութիւններու շնորհիւ երկրէն արտաքսուեցան։ Տասնեակ մը տարիներ յետոյ, երբ նոյն ամբաստանութեամբ Յիւրաս քոլէճի ուսուցչապետ Ն. Թենեքէճեանը չարք մը մտաւորականներու հետ ձերբակալուեցաւ, չունեցաւ այդ արտաքին բարերար միջամտութիւնը։



ԿԵՐՐՈՆԻՆ ՎՏԱՆԳԱԻՈՐ «ԵԱՖԹԱ»ՆԵՐԸ

Նազարրէկեան Կեդրոնը՝ մանկամտութեամբ առաջնորդուած՝ թրքերէն խմբադրուած յայտարարութիւններ կը զրկէ Փոքր Հայք եւ կը հրահանդէ որ անոնք միաժամանակ բազմադրուելով փակցուին զօրանոցներու, մզկիթներու եւ պետական շէնքերու վրայ։ Անոնց բովանդակութիւնը չափազանց անիմաստ եւ նոյնքան վտանգաւոր էր, ինչպէս պիտի տեսնենք ստորեւ տրուած պատճէններուն մէջ եւ այն հետեւանքներուն՝ որոնց ենթարկուեցան յեղափոխական գործն ու Փոքր Հայքի հալածութիւնը։

Աթէնքէն մեկնելէ առաջ, առանց անոնց բովանդակութեան մասին խօսելու, Ատոմին կը պատուիրեն որ Կեդրոնի հըրահանդր գործադրուի անպայմանօրէն։ Ատոմը կ'ուզէր ծանօթանալ անոնց բովանդակութեան, բայց իրեն կը պատասխանէի թէ տեղւոյն վրայ կարող է ծանօթանալ անոնց։ Երբ Ատոմը կը հասնի Մարզուան, իրեն կ'ըսուէի թէ հրահանդր արդէն զարծադրուած է իրենցմէ դադանի միջոցներով։ Եւ երբ կը ծանօթանայ անոնց, հետեւելիք անիուսափելի հակազդեցութիւններէն կ'ահաբեկի։ Իսկապէս ալ կառավարութիւնը կը դիմէ իրեն յատուկ զսպողական միջոցներու, ինչպէս՝ խուզարկութիւն, բանտարկութիւն եւ այլ հարստահարութիւններ։ Ատոմին հասնելէն առաջ, 1892 Դեկտ. 15-ին, մէկ զիչերուան ընթացքին կը կատարուի յայտարարութիւններուն ցրուումը

Մարզումանի, Հաճի զիւղի, Ձորումի, Սունքուրլուի, Եողկառի, Էնկիւրի, Սերաստիոյ, Ամասիայի, Եւզակիոյ եւ չըջակայի զիւղաքաղաքներուն ու զիւղերուն մէջ: Ամասիոյ եւ Մարզումանի մէջ մինչեւ իսկ զօրանոցներու եւ մզկիթներու ներքին զոներուն վրայ փակցուած էին այդ յայտարարութիւնները:

Ստորեւ կու տանք թարգմանութիւնը այդ յայտարարութիւններուն:

Առաջինը կ'ըսէր.

«Օսմանցիներ, հասած են Ապտիւլ Համիտ բռնակալի քաղաքութեան վերջին օրերը: Ան անպատուած է իսլամութեան անունը եւ կեղտոտած Օսմանի գահը: Այդ բռնակալը յափշտակած է կայսրութիւնը եւ աւերած մեր սիրելի հայրենիքը, ու ինքզինքն կառավարութեան գլուխ պահեալ համար՝ մեր ամենայաւ հայրենակիցներու աշխատանքները հոսեցուցեր է եւ կը հոսեցնէ: Այս գործերուն համար վրէժխնդրութեան ճայնը բարձրացեր է մինչեւ երկինք: Գործելու ժամը հասած է: Իսլամ միլիոնաւոր հաւատացեալները, որոնք ազատօրէն եւ յանաջդիմելով կ'ապրին զօրաւոր տէրութեան մը ձեռքին տակ, կը հասնին ձեզի օգնութեան:

Քաջ եղէք»:

Ահա եւ երկրորդ յայտարարութիւնը.

«Հնդկական մեծ դարմանը աշխարհիս ամենալաւ բժշկութիւնն է:

Այս դարմանը ամենալաւն աւ միակն է, որ կարող է բժշկել անաբիւնութիւնը, կաքուածահարութիւնը, շնչարգելութիւնը, անմարսողութիւնը եւ ուրիշ հիւանդութիւններ, որոնցմէ ամէն տարի այնքան մարդիկ կը մեռնին Թուրքիոյ մէջ: Հարիւր տարիէ ի վեր կը գործածուի ան Հնդկաստանի մէջ ժրհան կուսպանիի ձեռքով եւ կը շարունակեն գործածել 35 տարիէ ի վեր անգլիական մեծ քաղաքի վեֆքորիայի հրահանգով: Այս դարմանը մեծ ազդեցութիւն ունի ժողովուրդին վրայ, գայն դարձնելով ուժեղ եւ տոկուն՝ մեծ նիւթերու համար: Ան ժողովուրդը կը դարձնէ աչքաց եւ ընդունակ: Շատերը խորհուրդ տուած են գործածել գայն Թուրքիոյ մէջ, բայց տգէտներն ու չարակամները արգիլեցին անոր մուտքը այս երկրին մէջ:

Բայց ամէնքն ալ քող համբերութիւն ունենան եւ սպասեն: Քիչ ժամանակ վերջ, Հնդկաստանէն եկող մարդիկ, որ փորձառու եւ Խուս եւն այդ մեծ դարմանի գործածութեան մէջ, կու գան իսլամի երկիրը՝ առաջարկելու այդ դարմանը ժողովուրդին, եւ որ այդ ժամանակ կը հալածէ տգէտ եւ չարակամ

մարդերը եւ այսպէսով իսլամի երկրին ամէն կողմերը կը քաղաւորէ մեծ քախտաւորութիւն» (*):

Այս յայտարարութեան կանոնաւոր եւ ճշգրտահարկները ցրուումը ամէն կողմ մեծ իրարանցում յառաջացուց վերոյիշեալ դիւզերու եւ քաղաքներու կառավարական շրջանակներուն մէջ եւ առաջին տպաւորութիւնն եղաւ այն՝ որ անոնք թուրք յեղափոխականներու գործէին: Եւ առկայ իրողութիւնն այն էր, որ թուրքերոյ մէջ գործող թուրք յեղափոխական գոյութիւն չունէր: Ատոմին մտաւարտութիւնները վերջապէս իրականացան: Կառավարութիւնն սկսաւ ամէն կողմ խուզարկութիւններ կատարել. ձերբակալութիւն եւ խստութիւններ սովորական դարձան:

Այդ օրերուն կազմուեցաւ յեղափոխական դատարան մը, որուն կը ղեկէին մինչեւ իսկ թուրքեր: Դատարանին անդամները գլխակ անցուցած կը վարէին դատերը: Դատարանը կը գործէր արագ:

Նեղ դրամական կացութիւն ստեղծուած էր Կուսակցութեան համար: Պէտք էր հարուստներէ դրամ հանդանակել: Քիչ ատենէն հաւաքուեցաւ շուրջ 5000 ոսկի Մարգուանի շրջանակին մէջ: Վարչութիւնը հրահանգեց նոյնը ընել Ամասիոյ, Եւփրատի եւ ուրիշ վայրերու մէջ ալ: Անշուշտ ժառանգութիւններուն պէմ գործադրուեցան խիստ միջոցներ՝ առանց ահաբեկչութեան:

Հաւաքուած դրամին մեծագոյն մասը կը յատկացուէր զինամթերքի: Կը գնուէին հրացան, փամփուշտ, ատրճառակ: Զէնքերը ամենամեծ համեմատութեամբ կը հայթայթուէին թրքական րանակի մթերանոցներէն:

Ատոմին առաջարկով 200 ոսկի կը զրկուի Կեդրոն՝ «Հըն-

(*) — Յիշեալ գոյգ յայտարարութիւնները լոյս տեսած են մէկէ աւելի տարբերակներով (Տեսնել՝ «Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան» Ա. հատոր, Պէյրութ, 1962, էջ 117. Պետրոս Տեփալեան, «Միիքան Տամատեան», Պէյրութ, 1964, էջ 52-53: Ա. Ալպոյանեան, «Պատմութիւն Հայ Կեսարիոյ», Բ. հատոր, Գահիրէ, 1937, էջ 1356-1357: «Հնչակ», 25 Սեպտ. 1892):

Հոս տեղին է գիտել տալ թէ Ալպոյանեանն իր նշեալ աշխատութեան 1357-րդ էջին մէջ կը գրէ թէ ըստ Ատոմ Ասլանեանին եւ այլ հնչակեան գործիչներու հաւաստումին՝ «յայտարարութիւնները խմբագրուած եւ տպագրուած, Նազար — Բէկին յանձնուած են «Տէյլի Նիսուզ» անգլիական թերթից եւ միեւնոյն ատեն քաղաքական զգալունի ոստիկանութեան պատկանող ֆիցմէրալտ անուն անձի մը կողմանէ»: Ատոմին յուշագրութիւնը, սակայն, Տեփալեանին կողմէ մեզի ներկայացուած վիճակով, չի նշեր նշման փաստ — Վ. Գ.:

չակ»ին հրատարակութիւնը կանոնաւորապէս շարունակելու համար, 300 ռսկի ալ Աքիա՝ հոն աքսորուած ընկերներու փախուստը դիւրացնելու:

Մարզուանի շրջանակին մէջ հաւաքուած դրամէն 500 ռսկի կը յատկացուի կեդրոնին Աստորիոյ մէջ գնաւ 3000 մօսին հրացաններուն փոխադրութեան: Իսկ Տիարպեքիւրի վրայով Մուշի մասնաճիւղէն ստացուած նամակին, որով կը յայտարարուէր թէ դրամական տագնապի մէջ են, մինչ կոիւնները կը շարունակուին, — պատասխանելու համար՝ դարձեալ կեդրոն կը զրկուի 500 ռսկի, որպէսզի Պարսկաստանի գլխաւոր մասնաճիւղին միջոցով Մուշ փոխանցուի:

Սեբաստիոյ զինուորականներէն խուսրէվ փաշան՝ հայ յեղափոխութիւնը հիմնապէս քնաջնջելու համար՝ երկու հարիւր ձիաւոր զինուորներով կու գայ Մարզուան 1893-ի Յունւարին: Թուրք կառավարութիւնը գիտէր թէ Կափքանները կարող էին բազմազրուիլ միայն Անաթոլիա քոլէճին մեքենայով, քանի որ ուրիշ ոչ մէկը ունէր այդ մեքենայէն: Խուսրէվ փաշան Մարզուան հանդիպելէ առաջ ուսումնասիրական այցելութիւններ կը կատարէ Եւգոկիա եւ Ամասիա: Եւգոկիոյ մէջ քաղաքին թուրք երեսօլիները մեծ բնդունելութիւն մը կը պատրաստեն եւ հոն փաշան կ'ըսէ թէ այդ յայտարարութիւնները միայն Անաթոլիա քոլէճին մէջ կարելի է բազմազրել, հետեւաբար երբ Մարզուան հասնի՝ քարուքանդ պիտի ընէ այդ հաստատութիւնը: Նոյնանման ելոյթ կ'ունենայ Ամասիոյ մէջ ալ: Երկու տեղերու կուսակցական վարչութիւնները օրը օրին կը տեղեկագրեն Մարզուանի կեդրոնին: Անհրաժեշտ նախազգուշութիւնները ձեռք կ'առնուին եւ վարչութեան հրահանգները ստացապէս կը գործադրուին՝ բոլոր պատահականութիւնները դիմակալելու համար: Այստեղ պէտք է արձանագրել որ խուսրէվ փաշային արտայայտութիւնները Ամասիոյ միութնաբերֆը հեռագրով հաղորդած էր Բ. Դուռ՝ ազատ մնալու համար ապագայ պատասխանատուութենէ:



ՄԱՐԶՈՒԱՆԻ ՇԱՋԱՆԱԿԻ ՀՐՈՍԱԽՈՒՄԲԻՆ ՍՏՈՒԱՐԱՑՈՒՄԸ

Մարզուանի շրջանակին յատուկ հրոսախումբը կը բաղկանար նախապէս տասնեակ մը քաղաքական փախստականներէ: Հրոսախումբին գլխաւոր ասպետարան էր Թավշան Տաղլար լեռնային շրջանը, ուր փախստականներն իրենց հաշուկային մարդանքները կը կատարէին խմբապետին հսկողութեամբ:

Այդ օրերուն խմբապետն էր Փրոֆ. Թումայանին հօրեղ-
բօրորդին՝ Յարութիւն Թումայանը, որուն օգնականն էր
Մխիթար Տէր Նշանեանը: Մխիթարը բանտէն խոյս տուած էր
իր հետ տանելով ոստիկանապետին պաշտօնական մոխրագոյն
վերարկուն, սուրն ու հրացանը:

Երբ կառավարական հետապնդումները խստացան՝ հրո-
ռակախումբին թիւը բարձրացաւ մէկ քանի տասնեակներու,
բոլորն ալ լաւ զինուած ու զինավարժ: Փախստականները հը-
րոսակախումբին կարող էին միանալ մի միայն Մարզումնի
կեդրոնին յանձնարարականով: Հրոսակախումբը լաւ պարենա-
ւորուած էր եւ մինչեւ իսկ իւրաքանչիւրին տրուած էր տաս օս-
մանեան ոսկի՝ նեղի մատնուելու պարագային իւր կաշառք գոր-
ծածելու:



ԵՐԵՔ ՀԱԶԱՐ ՄՈՍԻՆՆԵՐՈՒ ԳՆՈՒՄԸ

Այս թուականներուն Արտաւազդ Օհանջանեանը, Օտե-
սայի մէջ ուսանող եղած ատեն, ստանձնած էր Սիրանոյշ անու-
նով հարուստ այրի կնոջ մը եւ անոր զաւակներուն հայերէնի
գասաւորութիւնը: Ան յաջողած էր համոզել զայն՝ կարեւոր
դումար մը յատկացնելու զէնքերու, որոնք պիտի գործածուէին
Թուրքիոյ մէջ թուրք բռնակալութեան դէմ: Արտաւազդը մեծ
դումարով մեկնած էր Աւստրիա եւ դնած ու կառավարութեան
միջոցով Թրիէսթ փոխադրած էր երեք հազար մոսին հրացան,
հոնկէ պահանջուած տեղը զրկելու համար:



ԽՈՒՍՐԷՎ, ՓԱՇԱՆ ԵՒ ԻՐ ԽՍՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Խուսրէվ փաշան Էրր Մարզումն հասաւ, իր հետ կը բե-
րէր՝ բացի իր երկու հարիւր ձիաւոր զինուորներէն՝ Զորումի,
Հաճի գիւղի եւ Քէօփրիւի քայմաքամներն իրենց հետեւորդնե-
րով: Անոր առաջին գործը եղաւ պաշարել հայկական թաղերն
ու խիստ խուզարկութեան ենթարկել հայերու տունները: Թէ՛ եւ
այդ խուզարկութիւններով ո՛չ մէկ փնտառակար բան գտած էին,
եւ սակայն եօթանասուն հոգի ձերբակալեցին:

Ասամը այդ ատեն կը բնակէր ասպատակ Միհրան Ձեն-
կիւճեանին տունը: Միհրանին հայրը գործով մեկնած էր Ամա-
սիա եւ տան մէջ կը մնային 90-ամեայ մեծ հայրը եւ 16-17-ամ-
եայ քոյրը: Ասոմին բնակած տունը կից էր Ամերիկեան քոյէ-

ճին: Միհրանին քրոջ արտակարգ քաջութեան եւ հնարամտութեան շնորհիւ Ատոմը կ'ազատի ձերբակալուելէ ու կ'ապաստանի զաղանօրէն քուէճը: Հոն ալ ուսանող ընկերներու ճարպիկութեամբ կը պահուի ստեն մը:

Ամասիոյ, Հաճի դիւղի, Զորումի մէջ եւս բազմահարիւր տուներ կը խուղարկուին 'եւ նոյնքան ալ անձեր կը ձերբակալուին՝ առանց որեւէ կասկածելի հետքի:

Խուսրէյ վաշան, հակառակ իր բոլոր խստութիւններուն, հակառակ թուրք պաշտօնական 'եւ անպաշտօն երեւելի դէմքերու խորհրդակցութիւններուն, չյաջողեցաւ ապացոյցներ դնել իր քաղաքներու բազմադրիչ մեքենաներու մասին:



Խուղարկութեան շրջանին ամէն տեղ ձերբակալուածները կ'ենթարկուէին ծեծի եւ վայրադ խոշտանդումներու, առանց սակայն հակաօրինական որեւէ յանցանքի: Զերբակալուածներու մայրերը, կիներն ու քոյրերը բողբոջի մեծ ցոյց մը կը կադմակերպէին:

Մարգուանցի Տիդրան Եազըճեանը, որ նկատուած էր լուրջ անձնաւորութիւն մը եւ հաւասարապէս յարգուած հայերու թէ թուրքերու կողմէ (ան լեզուապէտ, խոհեմ ու զարդացած մարդ՝ մօտիկ յարարներութիւն մշակած էր թուրք երեւելիներու եւ կառավարական պաշտօնատարներու հետ), հայերու տառապանքը տեսնելով՝ կը մտածէ թէ իր ժողովուրդը պէտք է պաշտպանել եւ բազմանք կը յայտնէ Ատոմին հէտ զաղանօրէն խորհրդակցելու եաֆքաներու բազմադրութեան հարցին շուրջ: Ան կը թելադրէ Ամերիկեան քուէճին վերադրել ծանօթ յայտարարութիւններու բազմադրութեան գործը, քանի որ այդ հաստատութիւնը միայն ունէր բազմադրող մեքենայ: Ան կ'աւելցնէ թէ ժողովուրդը արհաւիրքէն փրկելու միակ միջոցն այդ է, եւ իթէ իրեն թոյլ արուի՝ ինք կարող է կառավարութեան իւրացրնել տալ այդ տեսակէտը: Քուէճը՝ իրրեւ ամերիկեան հաւատարմութիւն՝ կարող է ինքզինք պաշտպանել թուրք կառավարութեան դէմ:

Ատոմը դործնական կը գտնէ եղած թելադրութիւնը, բայց մասհողութիւն կը յայտնէ երկու հայ ուսուցչապետներու վտանգութիւն մասին եւ կը խնդրէ ժամանակ տալ իրեն: Ատոմը անջատաբար զաղանի տեսակցութիւն կ'ունենայ յիշեալ անձերուն հետ, որոնք կը վստահեցնեն թէ իրենք կարող են ինքզինքնին պաշտպանել: Ատոմը անհրաժեշտ կը նկատէ նաեւ խորհրդակցիլ վարչութեան ազատ մնացած երկու անդամներուն եւ

փոխ — վարչութեան հետ: Եզրակացութիւնը կ'ըլլայ զրական: Ատոմը Եազըճեանին կը հաղորդէ թէ աղաւ է իր յարմար դատած կերպով ու միջոցներով դործելու:

Եազըճեանը անմիջապէս կ'այցելէ իր մեծահարուստ, ազատամիտ եւ ազդեցիկ թուրք բարեկամին՝ Հալիմ էֆենտիին, եւ խօսակցութեան ընթացքին եափքանկուր. բազմազրուութեան մասին կը յայտնէ իր մեղի ծանօթ տեսակէտը: Հալիմ էֆենտին կը շնորհաւորէ Եազըճեանը յայտնուած կասկածին համար եւ կը դիմէ կառավարութեան ու թելադրուածք իբր իր կարծիքը կը յայտնէ կառավարական շրջանակներուն: Խուսրէվ փաշան, որ Եւզդիկոյ եւ Ամասիոյ մէջ նոյնը յայտարարած էր, շատ դո՛ւ կը մնայ Հալիմ էֆենտիին թելադրութենէն եւ անմիջապէս կ'անցնի գործի: Ոստիկանական խումբ մը կը զրկէ քոլէճ՝ խուզարկութեան հրահանգով: Քոլէճի անօրէնին բացակայութեան՝ երկրորդ անօրէն Սմիթը կը մերժէ ոստիկանութիւնն ընդունիլ հաստատութենէն ներս: Ան ամերիկեան զրօշակը կը փռէ քոլէճի մուտքին վրայ եւ կը սպառնայ դիմել զէնքի՝ եթէ բռնի մտնել ուզեն: Այս վճռական պատասխանին վրայ՝ ոստիկանները կը հրաժարին բռնի ուժի դիմելէ եւ կը վերադառնան: Մէկ քանի օր յետոյ, այցելելու խնդրանքով կը դիմեն փոխ-անօրէնին եւ կ'արածնուին: Քոլէճի ներքնամասին մէջ կը տեսնեն բազմազրոյ մեքենան եւ հաստատ պապափար մը կը կադմեն թէ եափքաները իրապէս բազմազրուած են քոլէճին մէջ:

Յաջորդ օր կը ձերբակալուին քոլէճին երկու հայ ուսուցչապետները՝ Յ. Գալայեան եւ Կ. Թումայեան, հակառակ անոր որ ո՛չ մէկ հակապետական փաստաթուղթ պատած էին անոնց բնակարաններուն մէջ:

Կուսակցութեան վարչութեան սղատ մնացած անդամներն ու փոխ-անդամները ժողով կը դումարեն եւ ստեղծուած անկէն զուրս դալու համար կ'որոշեն կառավարութեան այս վայրագութիւններուն դէմ պայքարելու: Համար անուղիղ միջոցներով դործել: Հիմնուելով Խուսրէվ փաշային այն բացայայտ յայտարարութիւններուն վրայ՝ թէ ինք կրակի պիտի տայ Անաթոլիա քոլէճը եւ քարուքանդ պիտի ընէ զայն, կ'որոշեն անոր սպառնալիքը իրեն'ք զործադրել՝ յայտ ամերիկեան կառավարութեան զայն ենթարկելու ծանր պատասխանատուութեան: Հրդեհի կու տան սղջկանց բաժնի նորակառոյց չէնքը, որ դեռ գործածութեան չէր դրուած: Եւ որպէսզի՝ քննութեան պարագային՝ անժխտելի ապացոյցներ երեւան դային, պէտք էր թողուլ այնպիսի հետքեր, որ յայտնի ըլլար թէ Սերասիայէն բերուած Խուսրէվին զինուորները հրդեհած են չէնքը: Հրկի-

զողները զինուորական կօշիկներ հագած եւ Սեբաստիա շինուած զմեկները թողած էին չէնքին քանդուած պատին մօտերը:

Կառավարութեան քննիչները խուսրէյ վաշային հետ կը փութան հրդեհին վայրը, ուր կը մտնեն ո՛չ թէ սովորական ճամբէն, այլ՝ թրքական դերեզմանատունէն քանդած հողաշէն պատի անցքէն: Անոնք ո՛չ մէկ փորձ կ'ընեն հրդեհը մարելու եւ կը դիտեն անոր ճարակումը: Սմիթը եւ Տիկղը տեսնելով կառավարական մարդոց տնտարբեր վերաբերումը, անմիջապէս քըննութեան կը ձեռնարկեն եւ կը համոզուին թէ հրձիղները խուսրէյ վաշային զինուորներն են: Հետեւեալ առաւօտ միսիոնարները կը հեռագրեն Պոլսոյ ամերիկեան դեսպանին՝ ղողօքելով թուրք կառավարութեան դէմ: Բողոքի հեռագիր կու տան նաեւ Սեբաստիոյ անգլեամբերիկեան շահերը պաշտպանող հիւպատոսին, որ Սեբաստիոյ ընդհանուր դատախազին հետ երկու օր ետք կը հասնի Մարզուան եւ քննութեան արդիւնքը կ'ըլլայ միսիոնարներուն եղբակացութիւնը:

Քանտարիկեալներու ընտանիքները, օգտուելով այս վերջիններուն ներկայութենէն, տին. Մարի Գայայեանին զլրատութեամբ կը կազմակերպեն հսկայ ցոյց մը եւ կը պահանջեն իրենց սիրելիներուն ազատ արձակուիլը:

Կուսակցութեան վարչութիւնը միջոցը գտած էր թղթակցելու բանտարկեալներուն հետ:

Մարդուանն ալ պիտի տար լքանալութեան գարշիլի տականք մը: Սահակ Բաղրատունի կոչուած մէկն էր այդ սինըրը, որ թուրք կառավարութեան մասնաշաղկուկ որոշումով բանտարկուած էր՝ բանտին մէջ ալ իր մատնութեան դորձը շարունակելու համար: Բաղրատունին մէկ շարաթէն կ'արձակուի ինտէն՝ իր նոր ծառայութիւնները կատարելու թուրք ոստիկանութեան: Երբ կը հաստատուի թէ աչքի ինկոյ հայերու մատնութեան անուանացանկը տուողն ինք էր, կ'որոշուի՝ հակառակ թուրք ոստիկանութեան հսկողութեան՝ մաքրել այդ գարշիլին ալ: Այդ ճիւղը ատրճառակի երեք հարուածներով շան պէս կը փռուի կատաւարական չէնքին առջիւ: Այս ահարկչութիւնը կը կատարուի 1893 Ապրիլ 11-ին՝ տասներեք օր առաջ Սեբաստիոյ անգլեամբերիկեան դեսպանին եւ ընդհանուր դատախազին ժամանումէն:

Կառավարութիւնը եւ Մարդուանի կուսակցական կեղծոնը գօտեմարտի բռնուած էին՝ իւրաքանչիւրը պայքարի իր սանաշաղկուկ միջոցներով: Կառավարութիւնն իր ունեցած զինուորական ուժը անբաւարար նկատելով՝ 150 զինուորներ ալ բերել կու տայ Մարդուան:

Խուսրէյ վաշան Սեբաստիոյ կուսակալին ուղղուած

բռնի հանրագրութիւն մը ստորագրել կու տայ հայ եւ թուրք նրեւելիներուն, խնդրելով որ Մարգուտն մնայ՝ քաղաքին ապահովութեան համար: Հակառակ այս հանրագրութեան, փաշան ետ կը կանչուի:

Մարգուտնի Թաղալան խորհուրդը, որ պարտադրաբար ստորագրած էր հանրագրութեան տակ, Կուռուկցութեան որոշումով ստիպուած կը հրաժարի:

Մարտ 6-ին Երրորդ անգամ ըլլալով բանտարկուածներուն մայրերը, կիներն ու քոյրերը բողոքի կոբուլի ցոյց մը կը կազմակերպեն եւ ոստիկանական շղթան կտրելով՝ հակառակ ոստիկանապետին սայառնայիքին՝ իրենց բողոքագիրը կը յանձնեն քայմաքամին: Այս ցոյցէն երեք օր յետոյ բանտարկուածներէն 36 հոգի ցուրտին ու բուքին կը գրկուին Չորում, իսկ մընացածները ազատ կ'արձակուին:

Մարտ 17-ին Թաղալան խորհուրդին ատենապետը՝ հաճի Յակոբ խրիմլեան, կը սպաննուի ատրճանակի հարուածներով՝ իր փեսացուն, — Միսակ Քիրեմիաճեան, — մատնած ըլլալուն համար: Այս մարդուն ժառանգութիւնը յեղափոխական ատենին կողմէ անմիջապէս կը բաժնուի ժառանգորդներուն: Յեղափոխական ատենը մեծ հռչակի տիրացած՝ քաղաքին դատական դործը իր ձեռքը առած էր գրեթէ:



ԲՆՆԻԶ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ

1893 Մարտ 17-ին Պուլէն կը ժամանէ քննիչ յանձնախումբը: Պուլտյ անդլիսական, ամերիկեան եւ գերմանական դեսպանատուններուն կողմէ նիւպերին, իսկ թուրք կառավարութեան կողմէ արտաքին գործոց նախարարութեան առաջին քարտուղար Ճեմալ պէյը կը կազմէին զայն: Անոնց պաշտօնն էր քննել այն հարցերը, որոնք մեծ ցնցումներ յառաջացուցած էին Փոքր Հայքի մէջ, ինչպէս նաեւ զտնել հրդեհին հեղինակները:

Նախ կը հարցաքննեն բոլոր անոնք, որ յայտարարութիւնները ցրուողներու մասին վկայութիւններ տուած էին: Այս ուստ վկաները կը յայտարարեն թէ բռնութեան տակ առնուած էին իրենց վկայութիւնները: Հրդեհի մասին յանձնախումբին եզրակացութիւնը կ'ըլլայ այն՝ թէ հրձիգը խուրէվ փաշային հրահանգով կատարած է իր արարքը:

Այդ քննութիւններուն հետեւանքով ազատ կ'արձակուին Չորումի բանտարկեալները բացի ութ անձերէ՝ ուսուցչապետներ Գայայեանն ու Թումայեանը, Մկրտիչ Փափաղեանը, Ար-

թին Գարակէօզեանը, Միշրան Վարդանեանը, Յակոբ Տիւբրեհանը, Տէօփլէթեանը եւ Համի գիւղացի Ղազարոսը:

1893 Մարտ 24-ին Ամասիոյ բանաֆն կը փախչին Համարածու Տէլի Դաւթեանը, թողաթցի Արմենակ Չաքրճեանը եւ Նշան Քիրեմիտճեանը: Համոզելով իրենց հետ կը փախցնեն նաեւ սեբաստացի համբաւաւոր մատնիչ Կարապետ Հապէշեանը՝ ինչպէս նախապէս ակնարկուեցաւ: Հրէշը հետեւին առած՝ կը հասնին որոշեալ տեղը սպասող հրոսախումբին լեռը եւ հոն կը դորձագրեն յեղափոխական վճիռը, առնելով վրէժը հարիւրաւոր բանտարկեալներու տառապանքին:

Մարտի վերջերը, Մարգուանի հարաւակողմը, Քիրիլ-Խանէ կոչուած վայրին մէջ, հրոսախումբը ծանր բախում մը կ'առնենայ կառավարական շուրջկալ յիսնեակի մը հետ: Հրոսախումբը կ'ապաստանի մօտակայ աղօրիք մը: Երկար հրոցանութեանէ յետոյ, թուրքերը կը թողուն ու կը փախչին՝ երեք հրացան, հինգ Ֆէս եւ որոշ քանակութեամբ փամփուշտ իրենց խին ձգելով:

Երկար ատենէ ի վեր Արարկիրի մէջ իր ազգամիտս դործելով ու մատնութիւններով պատուհաս դարձած ուրիշ հրէշ մը՝ փաստաբան Մարտիրոս Եաղճեանը, Փոքր Հայքի փոթորկոտ օրերուն յեղափոխութեան Նեմեսիսէն կը գտնէ իր արժանաւոր հատուցումը: Այգալիսով նոր շուն մըն ալ կը պակսի:

Ապրիլ ամիսը կու գայ իր հետ բերելով կառավարական պաշտօնատարութեան մէջ փոփոխութիւններ: Բարեկարգութեան զուեշտախաղ մը՝ ամբողջ Փոքր Հայքի տարածքին վրայ կէտկիտուած քաղաքներուն մէջ: Օրինակ, Մարգուանի պաշտօնանկ քայմաքամին տեղ պաշտօնի կ'անցնի Խուսրէվ փաշային ընկերակից չերքէզ աւագակ մը՝ Պեքիր փաշա, որ Պաֆրուսի եւ Չարշամպայի քայմաքամ եղած եւ չարագործութիւններով հանրաժանօթ գարձած էր: Այս մարդուն փոխանորդ կը կարգուի Մարտիրոս Միրիճանեան անուն լրտես մը:

Միակ քիչ թէ շատ պատժոյ նմանող զորքը կ'ըլլայ Խուսրէվ փաշային Դամասկոս աքսորումը:

Մարգուանի նոր քայմաքամն ու իր փոխանորդը իրենց պաշտօնի առաջին իսկ օրերուն կը սկսին բռնակալութեան հին խաղը: Անոնք հանրազրութիւն մը կը պատրաստեն եւ Թաղական Խորհուրդին կը ստիպեն դաշն ստորագրել ու զրկել սուլթան Համիտ Բ-ին, բռնով թէ քաղաքին մէջ անդորր մը կը տիրէ եւ պահանջելով որ փախստական յեղափոխականները յանձնուին կառավարութեան: Թաղական Խորհուրդը կը բողոքէ ու կը հրաժարի: Քայմաքամ եւ փոխանորդ, այդ ձախճողութենէն ետք, կը փորձեն նոյն բաները պահանջել քաղաքի հայ երեւե-

լինեիքն ու առեւտրականներէն: Այս վերջինները կը պատաս-
խանէին թէ իրենք միայն իրենց անձնական զօրծերով կը զբա-
ղին, ո՛րչոք մէկ կապ ունին յեղափոխականներու հետ եւ կառավա-
րութեան իրաւասութեան տակ կ'իյնայ հետապնդել ու ձերբա-
կալել այդ կարգի փախստականները՝ եթէ կան:

Ապրիլ 19-ին անյաջող ահաբեկչութիւն կը կատարուի
Մկրտիչ Շահպենտէրեանին վրայ: Ահաբեկիչները կը յաջողին
փախչիլ. իսկ ինք կառավարութեան հսկողութեան տակ կը շա-
րունակէ իր զգուշիկ զօրծը: Ան զաղտնի սպասարկութեան գրա-
ւենակին մէջ կը յայտարարէ թէ յեղափոխականներուն պետե-
րը դուրսէն եկող մարդիկ են եւ կը պաշտպանուին հայ հա-
րուստներու տուններուն մէջ: Այս յայտարարութեան վրայ՝ հայ
հարուստները կը կանչուին կառավարչատուն:

Անոնք կը դիմաւորուին անարդանքներով եւ կ'ըսուի ի-
րենց. «Դուք տէօվլէք խայիմներ (պետութեան դաւաճաններ)
էք, ձեր առններուն մէջ աւաղակներ եւ յեղափոխականներ կը
պահէք. եթէ մեզի չյանձնէք զանոնք՝ բոլորդ ալ կը բանտար-
կուիք ու կ'աքսորուիք»: Այս սպառնալիքէն ետք տաս օր պայ-
մանաժամ կը տրուի որ փախստականները յանձնուին: Պայմա-
նաժամը լրանալէ ետք՝ նո՛րէն սպառնալիք եւ նո՛րէն տաս օր-
ուսն սպաժմանաժամ: Փողոցները ոստիկանական ուժեղ հսկո-
ղութեան կ'ենթարկուին:

Այս եւ ուրիշ խտրութիւններու հետեւանքով, հարուստ-
ները կը միանան եւ քայմաքամին ու փոխանորդին դէմ հաւա-
քական բողոքի հեռագրով մը կայսերական պալատ կը գիմեն:

Յիսնեակ մը ոստիկաններով Շահպենտէրեանը եւ իր ըն-
կերը Պոլիս կը զբկուին ահաբեկչութենէ ազատելու համար:
Ահաբեկիչները կը սպաննեն քայմաքամին լրտես եւ մատնիչ
փոխանորդը: Անոնցմէ ո՛չ ոք կարելի կ'ըլլայ ձերբակալել: Կա-
ռավարական շէնքը զինուորական պաշտպանութեան կ'ենթար-
կուի անմիջապէս: Ժամանակ մը ետք միայն զինուորները եւ կը
զբկուին իրենց զօրանոցը եւ Միւրիճանեանին զիակը կը վեր-
ցուի:



ՀՐՈՍԱԿՆԵՐՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ՀԵՏԱՊԵՒՈՒՄ ԵՒ ԲԱՆՈՒՄՆԵՐ

Ասպատակային հրոսախումբերէն մէկն էր մեծ – արմը-
տանցի հաճի Գալուստ Արիանեանինը: Ասպատակախումբին
անպարտելի շարժումները ջղայնացուցեր էին կառավարական

մասը կը զբիւնէ որոշ արշաւանքի եւ իր մօտ կը պահէ միայն
Լօթ հոգի: Առոնցմէ երկու քն ալ գործով մը ուրիշ կողմ կը զբիւն
եւ հինգ հոգիով կը զառնայ իր գիւղը:

Դաշտին մէջ կը նշմարուի թուրքէ մը, որ լուր կու տայ
Բուրու Չալի ստորկանական կեդրոնը: Մեծ թիւով ոստիկան-
ներ կը հետապնդեն Արխանեանը: Քարայրը կը պաշարուի եւ
բախումը կը դադարէ մահու: Ջինուոր, ոստիկան թէ թուրք
խուժան հաւաքարար կը սեղմեն պաշարման օղակը եւ կռիւր կը
շարունակուի ժամերով: Արխանեանին խումբէն կը սպաննուի
արտրկիրցի երիտասարդ մը, թուրքերէն կ'իշխան տասնեակ մը
ղինուորներ: Երբ պաշարողները կը տեսնեն թէ պաշարուողները
անհնկճէլի են եւ իրենց զոհերն ալ մեծ համեմատութիւններու
կը հասնին, Արխանեանին մայրն ու սպաւակները կը բերեն
գիւղին քահանային հետ եւ կը սկսին դաժան չարչարանքներու
ենթարկել: Արխանեանին մայրն ու քահանան կը մօտենան քա-
րայրին եւ լացով կը պապտանին Գալուստին որ անձնատուր ըլ-
լայ: Արխանեանը մօրը պապտանքին չկրնալով տուլ՝ կը զի-
ջի եւ անձնատուր կ'ըլլայ:

Յաֆթաներու հարցով Կեսարիոյ շրջանակին մէջ ալ կը
կատարուին բազմաթիւ ձերբակալութիւններ, որոնցմէ 187
հոգի՝ միայն քաղաքին մէջ: Բանտարկեալներէն Ռուբէն Ճեւա-
հիրճեան անուն մէկը վարհուրելի տանջանքներու չկրնալով տո-
կալ՝ կը սալպուի տալ կարգ մը կարեւոր յեղափոխականներու
անուններ, որոնց մէջ՝ Կեսարիոյ շրջանակի պատասխանատու
ղեկավար Անտոն Ռշտունիին: Թուրք կառավարութիւնը, սո-
ցիալականին պէս, թուրք խուժանը կը գրգէ ջարդարարութեան:
Հայերը կ'ապաստանին եկեղեցիները եւ կը կազմակերպեն դի-
մագրութիւն:

Այդ օրերուն է որ համբաւատու հրոսակապետ Չելլօն
(Թորոս Մառուկեան) ալ տարօրինակ պայմաններու տակ կը
ձերբակալուի: Այս մասին պիտի խօսուի Սուրէն Սուրէնեանին
գործունէութեան հատուածին մէջ: Չելլօյին հրոսակային դի-
ւազնութիւնները հայ յեղափոխականներու ասպատակային
շարժումներու շարքին մէջ պանծալի դրուալ մը կը կազմեն:
Հերոսի իր փայլուն դիմագիծը պիտի մնայ միշտ ալ յիշատա-
կելի: Անոր հերոսական կեանքը ներշնչումի աղբիւր մը դարձաւ
հեռավայրին բազմաթիւ մարտիկներու համար:

Ղոյն ժամանակաշրջանին կը ձերբակալուին նաեւ յայտ-
նի յեղափոխականներ Յովհաննէս Արցունմանեանը, Կիւլպենկ
Բարսեղեանը, Միրիճան Թորոսեանը, Եւաղուպեանը եւ ուրիշ-
ներ: Թուրք կառավարութիւնը դանդաղ կը փոխադրէ ինկիւրի
եւ թրքական դատավարութեամբ դանդաղ կ'ենթարկէ մահուան:

Անոնք կը կախուին իրենց և իրենց ժողովուրդին քաղաքացիա-
կան իրաւունքները գէնքով պաշտպանած ըլլալու յանդգնու-
թեամբ, թրքական զաւարանին մեկնարանութեամբ՝ պետու-
թեան գէժ բմբոստութեան յանցապարտութեամբ:

Յուլիս 27-ին Մարցուանի մէջ զինուորական ուժ մը կը
պաշարէ հայ տուն մը, ուր կը գտնուէին զինեալ հայուհիներէն
երեք անձեր: Կոուրի ընթացքին կը վերաւորուի թուրք յիսնա-
պետ մը: Զօրքին մէջ յատաժ եկած չիտթութենէն օգտուելով,
հայ մարտիկները կը ճեղքեն զինուորական շղթան և խոյս կու-
տան: Դժբախտաբար անոնցմէ երկուքը՝ Վարդերես Ֆերման-
եան և Գրիգոր Ղեշիշթոռեան, փախչած տանն կը ձերբակալ-
ուին: Միայն երրորդը կը յաջողի ազատիլ հետապնդումէն:

Օգոստոս 2-ին Կոչկակար Մկրտիչ տնուն մասնիւժ մը կը
պահնուի տարճանակի հարուածներով:

Եւաֆքաներու մտածումին գործադրութեան անդրադար-
ձումը չափազանց ծանր հարուած մը կ'ըլլայ հայ ժողովուրդին
համար: Մասնաւորաբար ծանր ցնցումներ կը կրէ կաղմակեր-
պական մեքենան, որուն վերանորոգումը բացառիկ ճիգի կը
կարօտէր: Կաղմակերպական շրջանակներու տաղնապը մեծ հա-
մեմատութիւններու կը հասնի:

Դուրսէն եկած երեք գործիչներու ներկայութիւնը Մար-
ցուանի մէջ չափազանց վատնդաւոր կացութիւն մը ստեղծած
էր յեղափոխութեան գործին համար: Այս նկատումով կ'որոշ-
ուի որ Բարսեղ Զաքարեանը մնայ Մարցուան, իսկ Շմաստը
մեկնի Ամասիա, իսկ Աստմն ալ զբաղի Մամսոնի մէջ առաջա-
սանաւով պայք մեծաքանակ մոսին գէնքերու, — Աստորիայէն
գնուած, — ցամաքահանումով և բաշխումով: Գահաձիթող յոր-
ձանուորին մէջ հրամայական զարձած էին անդոստ շարժում-
ները:

Կուսակցական մեքենայի վերակազմութիւն, կառավա-
րական յարուած ուժերու գէժ մահու և կենաց պայքար,
ստուարացած հայուկային խումբերու զինաւորում և պարե-
նաւորում, յրաւս մասնիչներու ահաբեկում, հայ ժողովուրդը
բռնակարութեան գէժ պաշտպանելու բնական յանձնառութիւն,
նիւթական միջոցներու հայթայթում, թուրք պետութեան գէժ
օտար շահերու բախում յառաջացնելու դաւադրութիւն և լազ-
մաթիւ ուրիշ գործեր յեղափոխական զեկաւարներէն կը սպա-
սէին իրենց լուծումը:

Աստմը մօրթ փոխադրող կառքով մը կը մեկնի գէղի
Մամսոն՝ մարցուանցի Յովհաննէս Յարութիւնեան անունով բն-
կերջ մը անձնագրով: Բնականաբար ուրիշ նախադրու-
թիւն-
ներ ալ նկատի առնուած էին տապալմ համբարդութեան համար:

Սամսոն երթալու համար պէտք էր անցնիլ Զելթիկ Տերե-
սիէն, ուր կար ոստիկանական պահականոց մը: Ոստիկաններու
պահանջին վրայ՝ կառապանը ցոյց կու տայ իր անցադիրը եւ
կառքը կը շարունակէ իր ճամբան. բայց մէկուկէս քիլոմէթր
անդին ան կը պաշարուի ոստիկաններէ: Ասամբ, որ մօրթերու
հակերուն մէջտեղ սուտ քուն ձեւացուցած էր, կ'արթննայ ու կը
յանդիմանէ կառապանը թէ ինչո՞ւ կ'անդ չէր առած պահականո-
ցը՝ սուրճ մը խմելու եւ հանգիստ մը առնելու: Ոստիկանները
կառքը կը վերադարձնեն պահականոց: Արտակարգ հնարա-
մտութիւններով եւ ծանօթի մը ազուն նմացնելով՝ առանց ան-
ցազրի քննութեան՝ յարգալի միջնորդարի մէջ կը բաժնուին
պահականոցէն, չմոռնալով սուրճին գինը առատօրէն վճարել
եւ սրճարանատիրոջ նուէրներ տալ: Յաջորդ օր Սամսոնի մօտա-
քի պահականոցը Ասամբին եւ կառապանին անցադիրերը քննե-
լէ յետոյ, անոնց վրայ կը դրեն կէօրիմիլիշ տըր (նայուած են)
եւ ստորագրելով կը վերադարձնեն իրենց տէրերուն:



ԵՈՋԿԱՏԻ ԴԵՊԻՅԵՐԸ

Այդ օրերուն Եոզկատի մէջ մատնիչի մը վրայ ահարկե-
շական զործողութիւն կը կատարուի: Ուրիշ մատնիչ մը կա-
ռավարութեան խօսք կու տայ ահարկիչը զոնել: Շրջակայ
գիւղի մը մէջ կը զանէ ահարկիչին տեղը, բայց իր մասնու-
թեան արարքը անմիջապէս կը ստուգուի եւ տեղւոյն վրայ իսկ
կը սպաննուի:

Կառավարութիւնը զինուորներ կը զրկէ եւ կարգ մը գիւ-
ղացիներ կը ձերբակալէ իրր ահարկիչներ ու կը բանտարկէ
գիւղին բանտը: Քանի մը օր ետք, սակայն, վեց զինուած հայեր
կը յարձակին բանտին վրայ եւ կը փախցնեն բանտարկեալները:
Այս գէպքին հետեւանքով Եոզկատի մէջ կը բանտարկուին շատ
մը յայտնի անձնաւորութիւններ: Հայերը կը հաւաքուին եկե-
ղեցի՝ սուեղծուած կացութեան ելք մը զանելու համար: Կառա-
վարութիւնը թապուր ազասին հրամանին տակ զործելու կը
տրամադրէ բաւական թիւով զինուորներ: Եկեղեցին կը պաշար-
ւի զինուորներով եւ կրակելու հրաման կը տրուի թապուր ա-
զասիէն: Պաշարուածները կը ստիպուին զիմացրել: Կռիւր կա-
ռապի բնոյթ կը ստանայ եւ կը շարունակուի մինչեւ երեկոյ:
Զինուորները կը քաշուին: Այս գինական բախումին մէջ եր-
կուսակէ կարեւոր թուով սպաննուածներ եւ վիրաւորներ կ'իյ-

նաեւ: Թաղուր աղասին կ'ըլլայ առաջին դնդակը ստացողն ու սպաննուողը: Դիմադրութիւնը կազմակերպող պարագլուխները կը ձերբակալուին յետոյ:

Մարդուանէն զուրս կատարուած բոլոր զէպքերուն եւ բախումներուն մասին օրը օրին կը տեղեկագրուի Մարդուանի կուսակցական կեդրոնին եւ անկէ, համաձայն ներկայացուած պահանջին, կը զբիւրին անհրաժեշտ հրահանգներ եւ օժանդակ ուժեր:



ԶԼՆՔՆԵՐՈՒ ՅԱՄԱՐԱՀԱՆՈՒՄԻ ՆԻ ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՀԱՐՑՆԵՐԸ

Կեդրոնի եւ Մարդուանի վարչութիւններուն միջեւ նախապէս տրուած որոշումի մը համաձայն, Աւստրիայէն դնուած երեք հազար հրացանները Թրիէսթէն պիտի փոխադրուէին առաջատանաւով Սամօռնի ու Պաֆրայի միջեւ անտառներով ծածկուած որոշեալ վայրը եւ պարպումը պիտի կատարուէր Աւստրիոյ զեկաւարտութեամբ: Փոքր Հայքին յատկացուած երեք հազար մօտիկներէն զատ՝ նոյն նաւով պիտի փոխադրուէին երեք հազար մօտիկներ եւս, Բարձր Հայքի շրջանակներուն եւ կովկասի Թուրքիոյ սահմանամերձ վայրերուն համար: Զինամթերքը տեղաւորուած պիտի ըլլար նաեւ յատակամասը, իսկ վրան բեւցուած ածուխ՝ Տրապիզոն հասցէագրուած:

Աւստրիոյ մեկնումէն առաջ Մարդուանի մէջ տեղի ունեցած էր բաշխումի խորհրդակցական ժողով մը, ուր հրաւիրուած էին կարեւոր շրջանակներու զեկաւարտները: Ժիրաջըր յանձն առած էր իր շրջանակին յատկացուած զէնքերը իր մարդոց միջոցով փոխադրել: Միւս շրջանակներն ալ իրենց միջոցներով պիտի փոխադրէին իրենց բաժին ինկած զէնքերը:

Քանի որ Սամսոնի մէջ ո՛չ ոք կը ճանչնար զինք՝ բացի տեղւոյն վարչական անդամներէն, ուստի Աւստրիոյ Յովհաննէս Յարութիւնեանին անցագիրն ու անձնագիրը կառապանին հետ կը վերադարձնէ իրենց տիրոջ եւ ինք սերասաացի վարդան Ալթունեան անցագրով ու անձնագրով կ'ապրի: Խանութ մը կը վարձէ ու տաս պարկ ալ ալիւր կը գնէ՝ անոր մեծաքանակ առեւտուրով զրադելով իրրեւ խանութպան: Իր կողքին կար քեպապնիի խանութ մը, ուրկէ կը ստանար իր ճաշերը: Քեպապնիի խորքը բարի մէկը ըլլալով, վարդան Ալթունեանը կը բարեկամանայ անոր հետ, ինչ որ յետոյ շատ օգտակար պիտի ըլլար իրեն:

Փոլիս Քոմիսէր Մուրադը Ատոմին անցադիրն ու անձնագիրը քննելով՝ տմէն բան կը գտնէ՝ օրինաւոր: Ատոմը աղաւթօրէն կ'ապրի իրբեւ Վարդան Ալթունեան: Իր պաշտնջին վրայ՝ Սամսոնի մասնաճիւղի վարչութիւնը իրեն կը տրամադրէ վստահելի բնակիչ Անդրակ Սրապեանը, որ քաղաքին ու շրջանակին յայտնութէն: Մասնաճիւղը կը տրամադրէ նաեւ երկու ձիեր: Ատոմը գէնքերը ստանալու եւ գանոնք տնտառային շրջանի թաղըստոց փոսերուն մէջ պաշելու յարմարագոյն վայրը կը գտնէ Պաֆրայի շրջականերուն մէջ:



ԿՐԱՄԱՀԱԻԱՐ

Եւ քանի որ գէնքերու յամաքահանումին ու առաքման համար կարեւոր գումարի պէտք կար, կ'որոշուի մասնաւոր հարուստներու գիմել եւ անհրաժեշտ դումարը ձեռք բերել: Դիմումները պէտք է կատարուէին մեծ զոռչաւորութեամբ եւ միտքն այն հարուստներուն մօտ, որոնք յարաբերաբար քիչ ժլատ ճանչցուած էին: Ատոմին բացակայութեան՝ տեղւոյն վարչութիւնը գիմում կատարած եւ Սամսոնի մեծահարուստներէն հաճի Յակոբ աղա Կիւտիկեանէն պաշանջած էր հարկիւր ոսկի: Կիւտիկեանը նամակը յանձնող երիտասարդին հաղցոյցած էր. «Դուսն ո՞վ ես, անունդ ի՞նչ է, ո՞վ գրկից նամակը»: Երիտասարդը պատասխանած էր թէ հնչակեան մասնաճիւղին է զորոյր՝ առանց իր անունը տալու: Հաճի աղան սպասնական խօսքեր բրած ու պաշանջած էր անունը երիտասարդին, որ բառը էր. «Դուսն բան մըն ալ չես կրնար բնել», եւ մեկնած:

Ատոմը Սամսոն վերապարձին կը յսէ այս գէպքին մանրամասնութիւնները, կ'որոշէ առանց աղմուկի հարցը կարգադրել լաւագոյն ձեւով:

Նախ կ'որոշէ Կիւտիկեանին վեհան՝ Տիգրան Չամբերթէնեանը տեսնել: Անկէ կը խնդրէ որ Կիւտիկեանին հետ տեսնուելու համար ժամադրութիւն մը առնէ իրիկուան յարմարագոյն ժամին: Որոշուած ժամուն Չամբերթէնեանին հետ կ'երթայ աղային տունը:

Հաճի աղան գանոնք կ'ընդունի իր տանձնատենեակին մէջ, որ ներկայ էր միայն իր անձնական քարտուղարը, որ հնչակեան մըն էր:

Հաճի աղան կ'ուզէ տեսակցութիւնը առանձին կատարել՝ սուրճ ապուրելու պարտականով: Ատոմը կ'ընդգիմանայ լսելով թէ խորհրդակից քարտուղարէն ո՛չ մէկ բան պէտք է ծածկել:

Ատոմը յեղափոխութեան կարիքներուն վրայ կը խօսի ու կը հրաւիրէ հաճի աղան իր ալ զոհողութեան լաժիքը բերելու: Ատոմը կ'ըսէ. «Դուք կը տեսնէք որ հարիւրաւոր երիտասարդներ զոհած են իրենց հանդիստը, ձգած՝ տուն ու տեղ, բարձրացած՝ լեռները, իրենց ժողովուրդին փրկութեան եւ երջանկութեան համար: Անոնք ամէն ժամ իրենց կեանքը կը վտանգեն, որպէսզի դուք եւ ձեր նմանները հանգիստ ու պառտաւոր կեանք մը վայելէք: Անոնք նոյնիսկ ձեր մօտերը յաճախողէ՞լ ըստումներ կ'ունենան սատրկաններու եւ զինուորներու հետ: Դուք այս բոլորը կը տեսնէք եւ կը լսէք ամէն օր անտարբերութեամբ: Կիտ^ոնքը սուղ է թէ դրամը: Ինչո՞ւ չէք մտածեր օգնել մեզի, մենք որ օր մը կա՛մ զնգալի զոհ կ'ընանք երթալ եւ կամ կախաղանի վըրայ փէշէ մեր շունչը: Իսկ ձեզի պէս անտարբերները պիտի վաշկեն՝ եթէ օր մը յաջողութեամբ պսակուին մեր զոհողութեանները»:

Հաճի աղան կը սրտասխանէ. «Դուք, էֆենտի, մի՛ կարծէք թէ ես ազգասէր չեմ: Դեռ չարաթ մը առաջ 8 պարկ փառուլիս զրկեցի Ս. Փրկիչ հիւանդանոցին: Ասկէ աւելին ալ կ'ընեմ եթէ պէտք ըլլայ»:

— Շատ լաւ, քանի որ կ'ըսէք թէ ազգասէր էք եւ իհարկին տւելին ալ կ'ընէք, օգնեցէք մեզի ուրեմն: Մենք բազմաթիւ կարիքներ ունինք. այն երիտասարդները, որոնք լեռները բարձրացած են, պէտքը ունին զէնքի, զնոսրի, սուրբի, հագուստի եւ անհրաժեշտ ուրիշ բաներու: Անոնք դրամով միայն կարելի է ձեռք բերել: Բացէք, ուրեմն, ձեր քսակը, կատարեցէք ձեր պարտականութիւնը ձեր կարողութեան չափով, եւ այն ասան եւս ալ պիտի հաւատամ ձեր ազգասիրութեան:

— Ատոմ էֆենտի, ի՞նչ կ'ուզէք որ տամ:

— Հինգ հարիւր ոսկի:

Հաճի աղան կ'ահաբեկի պահանջուած գումարը լսելով եւ կ'առարկէ որ իրմէ միայն հարիւր ոսկի պահանջուած էր: Ատոմը կը պատասխանէ թէ ճիշդ էր՝ եթէ այն ասան սիրայօժար ապուլ ըլլար եւ անարդարեան փերաբերում չունենար Սր. Գործին հետ: Հաճի աղան սակարկութեան կը սկսի, իրեն կողմէ կ'ըլլայ որ յեղափոխականներու հետ պէտք է իր բարեկամութիւնը պահէ: Ատոմը մտածելու ժամանակ կու տայ ու կը մեկնի: Իրմէ առաջ զգուշութեան համար նախ Զամբերթէնեանը կը մեկնի իր խնդրանքին վրայ եւ յետոյ ինք:

Ատոմը փողոց ելլելով կը տեսնէ թէ փալիս մը հինգ զինւած ոստիկաններով զէպի իրեն կը յառաջանայ, կը սկսի ուրիշ կողմ քալել: Նախապէս իր դրամ չորս զինուած պահակները երբ կը տեսնեն վտանգը՝ կը սկսին զանազան ուղղութիւններէ

ոստիկաններուն վրայ կրակել: Ոստիկանները կը զբաղին իրենց վրայ կրակ բացողներով: Ատոմը խոյս կու տայ եւ կը մտնէ հայոց եկեղեցիին բակին ու ծառերուն եւ զերեզմանաքարերուն մէջտեղուանքը կը պահուըտի: Ժամ մը յետոյ հանդարտութիւն կը տրի՛ն եւ զուրս կու գայ եկեղեցիին բակէն ու կ'ապաստանի Ստեփանէֆէնտի Կիւլպենկեանին ապարանքը: Խոհարարը ներս կ'առնէ զինք ու կը պահէ:

Կիւտիւկեանը Չամբերթէնեանին միջոցաւ լուր կը զրկէ թէ պիտի տայ հինգ հարիւր ոսկին, յայց՝ մասնավճարներով: Ատոմը կը հաւանի եւ հարցը կը փակուի:

Սամսոն ալ իրեն բաժին հանուած տուրքը կը վճարէ, ինչ որ նախապէս ըրած էին մարդուանցի եւ ամասխացի հարուստները: Կը մնար հայ հարուստներուն ջոջը՝ Մարութէ Երբանոսեանը, որ հռչակուած էր իրբիւ ամէնէն կծծին եւ ժլատը: Մարութէն Մարդուանի շրջանակին առեւտրական ընկերոջ՝ Քիրեմիթճեանին կ'այակէ զործով: Ատոմին թեւադրութեամբ Մարդուանի մասնաճիւղը կ'օգտուի անոր ներկայութենէն եւ 250 ոսկի կը պահանջէ: Քիրեմիթճեանը անձնապէս 150 ոսկի տրամադրած էր յեղափոխական զործի պէտքերուն: Երբանոսեանը չի մերժեր, այլ՝ իր հաշիւներով զրազած ըլլալը պատրուակելով՝ կը խնդրէ մէկ քանի օր յետոյ կարգադրել այդ հարցը: Մէկ քանի օր յետոյ, սակայն, խոյս կու տայ եւ Ամասխա իր ծննդավայրը կ'երթայ: Ատոմը հրահանդ կու տայ Ամասխոյ մասնաճիւղին որ Երբանոսեանէն պահանջուի 500 ոսկի: Բայց հոն ալ նման խաղ մը խաղալով կը փախչի Սամսոն: Սամսոնի մասնաճիւղին կը հրահանգուի 750 ոսկի պահանջել: Նամակը ստացած օրը Երբանոսեանը կը մեկնի Պոլիս: Պոլսոյ մասնաճիւղը տեղեակ կը պահուի եղածէն: Անկէ ալ խոյս կու տայ եւ նորէն Սամսոն կը վերադառնայ: Վերջապէս հապարդածութիւններով իրմէ կը դանձուի 1250 ոսկի:



ՄԱՐԶՈՒԱՆԻ ՄԵԾ ԿՌԻԻԸ

Ատոմը 1893 Սեպտեմբերին երբ Սամսոն կը գտնուէր, Կուսակցութեան կառուպան սուրհանդակով նամակ մը կը ստանայ Մարդուանէն: Այնտեղի մասնաճիւղը իրեն կը հաղորդէր թէ Սեպտ. 8-ին Մարդուանի ասպատակախումբը մեծ բախում մը ունեցած է 500 թուրքերու հետ: Պաշարողներէն 150-ը՝ բանակի զինուոր, մնացածը՝ ոստիկաններ եւ արիւնարբու կիւրճիներ, չերբէզներով ու թուրք խուժանով: Բուռն կռիւր տեւած է

հինգ ժամ: Հայ ասպատակախումբը ո՛չ միայն պաշարում կրում է, այլև մոտակայ մզկիթի տանիքէն ու մինարէէն կարկուտի պէս զնդակներ տեղացած են, որպէսզի տանիքներէն չբախչին հրոսակախումբին անգամները:

Հայ հրոսակախումբին անմիջապէս զնդակներն ու սուրբերը հնձած են զինուորներ, սասիկաններ, աւազակաբարոյ կիւրճիներ, չերքէզներ եւ ուրիշ թուրք պաշկապուհներ: Յարձակող թուրքերու կողմէ սպաննուած է 72 հոգի եւ վիրատուրում՝ 130: Վիբաւորները փոխադրուած են շրջակայ թուրք գիւղերը:

Այս ահաւոր կռուին մէջ Հայերէն Մխիթար Տէր Նշանեաւոր եւ Միհրան Զենկիճեանը՝ իրենց զնդակներն ու սուրբերը սպառած՝ ատրճոնակի վերջին զնդակներով անձնասպան եղած են: Ծնորճ Շատարեւեանը եւ Յակոբ Զելեանը մահացուօրէն վիրատուրում ու ձերբակալում են. իսկ մնացեալ ասպատակները, տանելով որ իրենց զնդակներն ու սուրբերը սպառած են, իրենց վերջին ուսմանքով ճեղքած են զօրքերու, սասիկաներու եւ կառողած ժողովուրդի շղթան ու անհետացած: Այս կռուին մէջ նահատակուած է նաեւ Համալսարանաւարտ Բարսեղ Զաքարեանը՝ առնէլ առն տանիքներուն վրայէն կռուելով անցած առնէ, ճիշդ Սահփան Տինկիլեանին տան վրայ:

Անշուշտ սքանչելի հերոսներուն մահը ցնցող տպաւորութիւն կը գործէ Աստմին վրայ, իսկ դարգացած, բազմահմուտ, քաջ եւ միեւնոյն տանէ շատ պարզ ու համեստ Զաքարեանին թողած բացը կարելի չ'ըլլար գոցել: Այդ մեծ կորուստին հետ Աստմը երկար առնէ չի կրնար հաշտուիլ:

Երեք նահատակներուն զիակները կը յանձնուին հայոց եկեղեցին, ուր հանդիսաւոր պաշտամունք կը կատարուի եւ մեծաթափօր յուղարկաւորութեամբ երեք զապաղները կ'առաջնորդուին հայոց գերեզմանատուներ: Թափօրի անցին, հայ տուներու պատու հաններէն զապաղներուն վրայ կը հոռէին առաւ ծաղիկներ:

Շմաւոնը երբ լուրը կ'իմանայ, Ամասիայէն անմիջապէս կ'անցնի Մարցուան: Դժբախտաբար Մարցուան հասնելէ մէկ օր յետոյ կը ձերբակալուի:

Շմաւոնը ստուսպատակ ըլլալով՝ Պոլիս Երեսնի փոխադրուէր՝ յանձնուելու սուս գեապանատան: Այս լուրը ստանալու պէս, Աստմը Միհրան Օղլին հրոսակախումբին հրահանգի տակ որ Սամոնի ճամբով Պոլիս գրկուելու պարագային՝ ճամբուն վրայ զարանի մանէ եւ Շմաւոնը ազատելու համար յարձակի սասիկաններուն վրայ:

Ժիրալըին խումբը, որ եռօրեայ կողմը կը գործէր, կը

պտարտատուի Եղեկատի ճամբով փոխադրուելու պարտադրին՝ յարձակիլ և Աղատեի Շմառնը:

Այդ օրերուն էր որ թուրք կառավարութիւնը մոռնաւ ինչ-նշուէ միջոցով կը յայտարարէր սմէն կողմ՝ թէ Ատոմ Ասլան-եանը ողջ կամ մեռած ձերբակալուղին պիտի վճարուի չինոյ Հարիւր տակիի պուճար մը: Սերասաացի Վարդան Այթուհեան անձնադրով ազատ ապրող Ատոմ Ասլանեանը իր տիւնը չով կը լսէր հրապարակաւ յայտարարուած իր մահապաշտօնը:

Կառավարութիւնը կասկածելով յեղափոխական շրջանակներու՝ Շմառնը ազատելու մտադրութեան վրայ, առնալ մը զայն կը պահէ Մարգարանի բանար: Ատոմը նոյն նպատակով կ'երթայ Քուրդստան և կը ստանձնէ 40 հոգինոց ասպատակախումբին հրամանատարութիւնը: Անառուտ լեռներուն վրայ երկար առնալ ի դուր ապաստել յետոյ, ասպակացող ցուրտին կը հիւանդանան շատեր: Ատոմը ստիպուած կ'ըլլայ ցրուել ասպատակները՝ որոյց ողի իրենց զիւզերը մեկնին, իսկ ինք ալ կու գայ Սամսուն՝ իր ալիւրի գործը շարունակելու և միեւնոյն առնալ ասպատելու պէնքերու հասնելուն:



ԱՏՈՄԸ ԿԸ ԶԵՐԲԱԿԱԼՈՒԻ

Արմենակ Գալուստեանը կուսակցական գործով Զար-շամպու կը գրկուի: Վերադարձին՝ տեղեկութիւն տալու համար՝ կը հանդիպի Ատոմին, որ ցրտառութեան հետեւանքով անհանգիստ ըլլալով՝ զինք կ'ընդունի պառկած վիճակի մէջ: Հակառակ իր պնդումին՝ որ Արմենակը առնալ վերադառնայ, ան կը մնայ իր մօտ՝ իրեն օգնելու: Իրիկուան մօտ տունը կը պաշարուի ոստիկանական ջոկատով մը: Երկուքն ալ առնալ դետնայարկը կ'իջնեն պահուրտելու համար: Երբ մօտ թը կը կտրէ, ոստիկաններէն մէկ մասը առնալ գուռը կը կտրուի և ներս կը խուժէ: Այդ առնալ Արմենակը պահուրտած էր ամխանոցին մէջ, իսկ Ատոմը՝ լուխերիկին: Ատոմը կ'աշխատի վաշտով բուխերիկին երկաթէ ձողերը կտրելով պարտէզ ելլել, բայց չի յաջողիր և միեւնոյն առնալ կը նշմարուի ոստիկաններէն: Ներս մտնողները նախ չեն յաջողիր գտնել պահուրտածներուն հետքը, բայց պուրսը կեցող ոստիկաններուն պնդումին վրայ՝ նորէն կը խուզարկեն տունը և Ատոմն ու Արմենակը գտնելով կը ձերբակալեն: Նաեւ կը ձերբակալեն տանալը՝ Գէորգ Վարդանեան:

Ռսակիւն մը կը փորձէ տոնել Ատոմին տարձանակը, բայց ան չ'ուզիր տալ և կ'ըսէ թէ «Սէր քոմիսէր»ին միայն կը

յանձնէ : Ոստիկանը, բարկացած, հրացանին կոթով Ատոմին աւանջին կը դարնէ : Այդուհէն կիրճի «Սէր քոմիսէր»ը կու գայ եւ խնդիրը հասկնալով կ'ապառակէ ոստիկանը : Ան կը ստանայ Ատոմին ասորձանակը եւ զինուորներով ու ոստիկաններով միասին ձերբակալութեան ենթարկելու համար կ'առաջնորդէ կառավարչատուն : Քոմիսէրին սենեակին մէջ կը խուզարկեն երկու ձերբակալուածներն ալ եւ կ'առնեն Ատոմին թէ՛ Վարդան Ալթունեան անունով անձնագիրն ու թէ՛ Եգիպտոսէն արուած անցագիրը : Քոմիսէրը բոլոր թուղթերը զգրոցին մէջ կը սլահէ եւ յետոյ բանա կը զրկէ ձերբակալուածները (21 Դեկտ. 1893) :

Կէս գիշերին Ատոմը կ'առաջնորդեն կառավարչատան միւթասարիֆ Նուրի փաշային պաշտօնատնեակը, ուր ներկայ էին փաշան, ընդհանուր դատախազը եւ հարցաքննիչ դատաւորը : Տեղի կ'ունենայ հետեւեայ հարցաքննութիւնը .-

- Դուք Ատոմ Աւանեսեանն ես :

- Ո՛չ, այդ անունը նոր կը լսեմ : Իմ անունս Վարդան Ալթունեան է : Ես կանոնաւոր անձնագիր եւ անցագիր ունիմ :

- Ո՞ր են այդ թուղթերը :

- Քոմիսէրին յանձնեցի զիս խուզարկած միջոցին. իրեն տուի նաեւ քովս դնուած ասորձանակը :

Իսկոյն կանչել կու տան քոմիսէրը եւ կը ստուգեն թէ Ատոմին յայտարարութիւնները ճիշդ են : Այս երեքին պահանջին վրայ՝ Ատոմին թուղթերը կը բերտին եւ կը յանձնուին իրենց :

Երբ կը քննեն անձնագիրն ու անցագիրը, կ'ըսեն թէ անցագիրը Եգիպտոս տնտուած է եւ կը հարցնեն թէ ինք Եգիպտոս դնուած է :

Ատոմը կը բացատրէ անոնց թէ ինք փոքր տարիքէն մօրմէն որք մնալով՝ Պոլիս գացած է եւ այնտեղէն ալ Եգիպտոս անցած ու տարիներով Աղեքսանդրիոյ մէջ գործած է հաճի Նեսիմին ծխախոտի գործարանը : Մերացած մօրը այցելած է անոր բաղձանքին վրայ : Մայրը մեռած ըլլալով՝ ինք մտադրած է վերադառնալ Եգիպտոս :

- Շատ լաւ, Սերաստիայէն մեկնելու ատենդ ինչո՞ւ անցագիրդ վիզէ բնիկ տուած չես :

- Անշուշտ գիտէք թէ կտաքերը քանի մը ճամբորդներ մէկէն կ'առնեն եւ կը սպասեն որ մէկ քանի կապ միտսին ճամբայ ելլեն՝ անապահովութեան պատճառով : Երբ իմացայ որ կառքի մը մէջ տեղ կայ, իսկոյն վարձեցի : Այդ օրը հինգշաբթի էր եւ կառքերը յաջորդ օր ճամբայ պիտի ելլէին : Գալիս մուսթաքը գտայ եւ խնդրեցի որ անցագիրս վիզէ բնիկ տայ : Երեկոյ ըլլալուն՝ կառավարչատունը դոց էր եւ հետեւեայ օրն ալ՝ Ուր-

րաթ, ուստի մուխքարը ի՞նք թուղթ մը տուաւ ինծի, բսկտով
թէ ի հարկին այդ թուղթը կարող եմ ցոյց տալ:

– Ո՛ւր է այդ թուղթը:

– Իմ բոլոր թուղթերս, ինչպէս ըսի, քոմխէրին մօտն են:

Քոմխէրը Ատոմին ըսածները կը հաստատէ եւ կ'երթայ
յիշուած թուղթը փնտռելու: Բիչ ետք կը վերադառնայ եւ կը
յայտարարէ թէ զժախտաբար այդ թուղթը կորսուած է:

– Դուռն ֆրանսերէն կամ ուրիշ լեզուներ գիտե՞ս:

– Ես աղքատ ընտանիքի զաւակ եղած եմ եւ շատ քիչ
ղալրոց տեսած. ուրկէ՞ պիտի կրնայի օտար լեզուներ սորվիլ:

– Դուռն Ատոմ Ասլանեան անուանով մէկը ճանչցած չե՞ս ու
րեւէ տեղ կամ ճամբորդութեան ընթացքին:

– Ատոմ անունը առաջին անգամն է որ կը լսեմ, այդ ան
ունով մարդ տեսած չեմ:

– Է՛, շատ լաւ, դուռն ինչո՞ւ պահոււրած էիր՝ եթէ ան
մեղ մարդ ես, եւ ինչո՞ւ ղէնք կը կրես վրայ:

– Ճամբորդ էի, այդ պատճառով փոքր ղէնք մը ունէի
քովս ապահովութեան համար: Պահոււրած էի ես, այլ՝ ան
հանգիստ ըլլալուս համար մէկ երկու օրեր տունը մնացի:

– Ինչո՞ւ պահոււրակցար՝ երբ ստիկանութիւնը տունդ
եկաւ:

– Վախցայ, որովհետեւ կեանքիս մէջ տասնիկ բան մը
տեսած չէի: Հարիւրաւոր ոստիկաններ եկած էին, կարծես
րերդ մը պիտի գրաւէին:

– Սերաստիայէն զառնալէզ յետոյ ինչո՞ւ հոս մնացիր եւ
չմեկնեցար:

– Որովհետեւ քարանքիմա կար եւ ուստի նաւ չէր դար,
պարտաւորուեցայ մաքսին մօտերը ալիւրի խանութ մը բանալ
եւ ալիւր ծախել՝ ծախսերը հանելու համար:

Ատոմին խանութին զրացի թուրք քեպապիին կը կան
չեն վկայելու Ատոմին յայտարարութիւններուն ճշդութիւնը:
Թուրքին պատասխանը կ'ըլլայ հաստատական եւ նպաստաւոր
Ատոմին համար՝ իրր լաւ մարդ:

Կը կանչեն փոխ քոմխէր Մուրատ պէյը եւ կը հարցնեն
թէ Ատոմը տեսա՞ծ է: Ան կը յայտարարէ թէ յաճախ տեսած է
եւ անոր անցադիրն ալ արձանագրած:

Կառավարին ու զատարխաղը կը սկսին իրարու հետ ֆըր
րանսերէն խօսիլ եւ իրարու կ'ըսեն. «Մեծ աղմուկ հանեցինք,
կարծելով թէ Ատոմը ձերբակալած ենք, մինչդեռ իրողճ ու կը
րակ մէկը ունինք մեր առջեւ. հիմա ի՞նչ պէտք է ընել»:

Դատախաղը Ատոմին կ'ըսէ թէ իր մասին հեռագրած են
Սերաստիա՝ իր յայտարարութիւններուն ճշգրտութիւնն ստու-

դելու համար: Եթէ նպաստուոր տեղեկութիւններ զան, զինք ազատ պիտի արձակեն 15—20 օրէն: Հակառակ պարագային՝ խտապօյն պատիժներու պիտի ենթարկուի:

Երկու օր հանգիստ ձգելէ ետք, երրորդ օրը, զիշերանց, Ատոմը կը տանին հարցաքննիչ դատաւորին սենեակը, ուր ներկայ էին կառավարիչը եւ ընդհ. դատախազը եւս:

— Քանի մը օր առաջ կը պնդէիր թէ Վարդան Ալթունեանն էս. նայինք այսօր ի՞նչ անուն պիտի առնես:

— Ես ինչ որ էի՝ նոյնն եմ դարձեալ:

— Ա՛յ երկար կ'ընես, առա՛ջ եկուր նայինք: Դուսն միթէ Ատոմ Ասլանեանը չե՞ս, — կ'ըսէ դատախազն ու խօսքը ուղղելով հարցաքննիչին, — հանեցէ՛ք սա թուղթը նայինք:

Հարցաքննիչը իր գրասեղանին դարակէն կը հանէ փոքրածաւալ թուղթ մը եւ կու տայ դատախազին, թուղթին վրայ ստուգելով որ Ատոմին աջ աչքին վրայ փոքր սպի մը, իսկ ձախ ափին մէջ դանակի սպիւնէ: Կան: Այս ստուգումէն յետոյ կը հարցնեն թէ տակաւին կ'ուրանա՞յ Ատոմ Ասլանեանն ըլլալը:

— Այո՛, Ատոմ Ասլանեանը ես եմ, ի՞նչ պիտի ընէք:

— Հիմա՛ նստէ եւ հանդարտօրէն պատասխանէ տրուած հարցումներուն:

Նախ կը պահանջեն որ Ատոմը իր ընկերներուն անունները տայ: Կ'ըսէ թէ անունները չի գիտեր, քանի որ զանոնք կեղծ անուններով միայն կը ճանչնայ:

Հակառակ անոնց պնդումներուն, Ատոմը կը յամառի եւ ո՛չ մէկ անուն կու տայ: Երկու ոտականներ կը կանչուին եւ Ատոմը անոնց կը յանձնուի՝ խոստովանեցնելու համար: Կ'իյնցրնեն զեանայարկը, կը սպառնան, կը ծեծեն ու կը խռտանդեն: Երբ այդ միջոցներով անկարելի կ'ըլլայ խոստովանութիւն կորզել, ոտականներէն մէկը հրացանը Ատոմին կ'ուղղէ ու կը պարպէ: Գնդակը կը վրիպի, — թերեւս զխուժով, — եւ Ատոմը կ'ըսէ. «Մնծի տուր այդ հրացանը եւ տես թէ ի՛նչպէս կը կրակեն, դուն հրացան գործածել չես գիտեր»:

Հրացանի պայթիւնին վրայ՝ վերէն վար կը վազեն ու զինք վեր կը տանին: Ատոմին յուզուած վիճակը տեսնելով՝ ծխախոտ եւ սուրճ կը հրամցնեն, սակայն Ատոմը կը մերժէ երկուքն ալ: Ծեծի, խռտանդումի եւ սպառնալիքի յաւելեալ շարունակութեան ընթացքին, Ատոմը կ'ըսէ թէ այդ բոլորը ո՛չ մէկ նպատակի պիտի ծառային, քանի որ ինք իր ընկերները կը ճանչնայ միայն ծածկանուններով, ինչպէս՝ Փայլակ, Կայծակ, Յոլակ եւլն.: Ան կ'աւելցնէ նաեւ թէ զինք չեն կարող սպաննել առանց հրապարակային դատաւճառի, քանի որ ժողովուրդէն ունի բազմաթիւ վկաններ, որոնք տեսնի թէ ինք ողջ առողջ ձեւ-

բակալուած եւ քանս առաջնորդուած է: Զինք չարչարողները կ'ըսեն.

— Մեզի սպառնալի՞ք կ'ընեն:

— Բնաւ երբեք, ըլլալիքը միայն կ'ըսեմ ձեզի:



Ատոմին ձերբակալութենէն շուրջ մէկ ամիս առաջ Չարչամպայի խուրճանէն դիւղախումբէն յեղափոխականներ՝ Երկու ջորի բեռցուցած՝ զէնք կը փոխադրեն մէկ գիւղէն միւսը: Գիւղախումբին մուխքարը՝ Սողոմոն, կը լսէ այս պարապան եւ ոստիկանութեան լուր կու տայ: Շուրջ տասը ոստիկաններ կը զրկուին զանոնք ձերբակալելու եւ զէնքերը գրաւելու: Ոստիկաններ զէնք փոխադրողներուն հետ անյաջող կռուի կը բռնուին եւ ոստիկանած ձեռնունայն կը վերադառնան: Սողոմոնը Չարչամպայի քայմաքամին կը դիմէ՝ իր հետ առնելով մէկ հայ եւ երկու թուրք վիւհներ: Ան ո՛չ միայն զէնք փոխադրողներուն տնունները կու տայ կազմուած հարցաքննութեան արձանագրութեան մէջ, այլեւ կ'աւելցնէ իր մէկ քանի հակառակորդներուն տնունները: Երբ Ատոմը կը լսէ, անմիջապէս վարչութիւնը ժողովի կը հրաւիրէ եւ որոշում անցընել կու տայ հրահանգելու Մինաս Օղլիին անպատակախումբին՝ որ սպաննալիքով վրկաներուն պարտադրեն դատաւարութեան ատեն ընել հետեւեալ յայտարարութիւնը.

«Մուխքար Սողոմոնը, «քայմաքամը ձեզ կ'ուղէ» լսելով, մեզ առաւ ու տարաւ անոր մօտ: Մեզի հարցումներ ըրին զէնքի փոխադրութեան մասին: Մեր պատասխանը եղաւ՝ լուր չունինք այդ տեսակ բանէ մը: Բաներ մը զրեցին եւ ստաջարկեցին ստորագրել: Մենք ըսինք թէ կարդալ գրել չենք գիտեր, ինչպէս ստորագրենք: Այն ատեն մուխքարը մեր գրպաններէն բռնի քաշեց հանից մեր կնիքները եւ կնքեց գրուած թուղթին վրայ»:

Մինաս Օղլիին հրոսախումբը կէս առ կէս կը զօրծաղրէ վարչութեան հրահանգը եւ մուխքարին ճիգերը կը վրիպին իրենց նպատակէն:



Ատոմին մասին շրջակայ քաղաքներուն եւ մասնաւորապէս Մարգուանի մէջ ընդարձակ արձանագրութիւններ կը կոչուին եւ Սամսոն կը զրկուին: Այս արձանագրութիւնները հիմբռնելով, Ատոմը Երկու ամիս շարունակ կ'ենթարկուի հարցաքննութեան: Անշուշտ թրքական բոլոր մեթոսները կը գործածուին Ատոմը խոստովանեցնելու համար, բայց երբ այդ բո-

լորը աղարդելուն կ'անցնին, Ատոմին կը հարցնեն թէ ի՞նչ է իրենց կաղմակերպութեան նպատակը, ինչո՞ւ կաղմուած են կոմիտէներ:

— Մեր նպատակը ժողովուրդը բռնութիւններէ ազատել է եւ ատոր համար կաղմուած է մեր կոմիտէն: Ժողովուրդին արդար բողոքները շարունակ անլսելի կը մնան եւ ան շարունակ կը կեղեքուի ու կը հարստահարուի: Մեր ժողովուրդին արդար դատը պաշտպանելու եւ զայն կեղեքումներէ ազատելու համար կը կոռւինք եւ պիտի շարունակենք կոռուիլ, մինչեւ որ այս զեղծարար կառավարութիւնը տապալուի եւ արդարօրէն իշխանութիւն մը ստեղծուի ժողովուրդին քարոքութեան համար:

— Դուք սուտ կը խօսիք, ձեր նպատակն է մեր վեհափառ սուլթանին դէմ ապստամբելով տապալել զայն եւ իսլամ թագաւորութեան տեղ կեաւոր (անհատաւոր) թաղաւորութիւն մը հաստատել:

— Ասիկա ձեր կառավարութեան ստեղծած զրպարտութիւնն է մեր դէմ, ինչ որ բացայայտ սուտ է: Մեզի համար իսլամի եւ քրիստոնեայի խնդիր չկայ: Մենք կ'ուզենք որ արդար կառավարութիւն մը հաստատուի եւ ամբողջ ժողովուրդը, առանց ցեղի ու կրօնի խարութեան, արդարօրէն կառավարուի եւ զերծ ըլլայ հալածանքներէ ու խռատանքներէ: Ձէք կրնար դանել իսլամ մը, որուն քիթը արիւնած ըլլանք մենք անիրաւ տեղը: Ընդհակառակը, մենք իսլամ զիւղացիները պաշտպանած ենք անիրաւ ստիկաններու դէմ: Մենք բոլորս ալ այս երկրին զաւակներն ենք եւ անոր բարօրութեան համար կ'աշխատինք:

— Ձեր կոմիտէին մէջ իսլամ անդամներ ալ ունի՞ք:

— Շատ կան:

— Հոս, Սամսոնի մէջ ալ կա՞ն:

— Կան կարծեմ:

— Անունները զիտէ՞ք, կրնա՞ք ըսել մեզի:

— Անունները չեմ գիտեր, բայց զիտեմ որ իսլամներէն չտան մեզի պէս դժգոհ են կառավարութեան զեղծումներէն ու անիրաւութիւններէն, կազմակերպուած են լսեալէս ու կը բողոքեն եղած անարդարութեան դէմ:

Ատոմը դիմամբ այսպէս կը խօսի, որովհետեւ իր նըպատակը կառավարութեան հանդէպ ժողովուրդին դժգոհութիւնը երեւան հանել եղած էր: Ան մասամբ իր նպատակին կը հասնի, քանի որ զգալի կը դառնայ կառավարութեան հետապնդող ու շարժողութիւնը հանդէպ թուրք զարգացած երիտասարդութեան:

Կ'արժէ փաստելն մէկն արձանագրել այստեղ:

Թուրք կառավարութիւնը Սեբաստիոյ մէջ բարձր մահաբաւոյնի հասնող վարժարան մը բացած էր։ Անոր տնօրէնը և ուսուցիչներէն շատերը Պոլսէն զրկուած էին։ Տնօրէնը կը մըտածէ նորութիւն մը մուծել՝ զպրոցի աշակերտներէն կազմելով նուագախումբ մը։ Պոլսէն կ'ապսպրէ զործիքները։ Ժամանակ մը ևս ետք տնոնք կը հասնին Սամսոն՝ Սեբաստիոյ փոխադրուելու համար։ Երբ մաքսային գործողութեան համար սընտուկները կը բացուին, կը տեսնեն որ տնոնք զինուորական նուագախումբերու կը նմանին, ամէնը մէկ վար կը գնեն և մաքսային գործողութիւններով զրազող թուրքը կը բանտարկեն։ Բանտարկեալին ազգականներէն մէկը այս պարագան կը հեռագրէ տնօրէնին, ահա ալ իր կարգին կը զիմէ կուսակալին ու կը բացատրէ խնդիրը։ Կուսակալը կը զիմէ Սամսոնի կառավարութեան որ սնտուկները Սեբաստիոյ փոխադրուին, միեւնոյն տուն, սակայն, տնօրէնը և Պոլսէն զրկուած ուսուցիչները ծանր հարցաքննութեան կ'ենթարկուին։ Երկար բանակցութիւններէ ետք Երաժշտական գործիքները կը զրկուին Սեբաստիոյ։



Ատոմը կը բանտարկուի բանտի տնօրէնին սենեակին մէջ, երկու օտարկաններու հակադրութեան տակ։ Անոնցմէ մին չերթէջ էր, որ յետոյ նպատաւոր վկայութիւն տալով օգտակար պիտի ըլլար Ատոմին։

Օրին մէկը Տրապիզոնի բնդհանուր դատախազը Սամսոն կու գայ մասնաւոր հարցաքննութեան ենթարկելու Ատոմը։ Կէս զիշերին Ատոմը կը տարուի անոր մօտ։ Եւրկայ կ'ըլլան նաև Սամսոնի բնդհ. դատախազն ու հարցաքննիչ դատաւորը։ Հարցաքննութիւնը կը կատարուի առանց արձանագրութեան։ Վերջին երկուքը կը մեկնին և Ատոմին հետ առանձին մնացած Տրապիզոնի դատաւորը կ'ըսէ։

— Ինձի՛ նայ, վերջապէս երկար փնտռուածներէ ետք մեր ձեռքը անցուցինք քեզ։ Ասկէ ետք քեզի ազատում չկայ։ Եթէ իրօտանաւ 500 ոսկի առլ ինձի, պատուոյ խօսք կու տամ որ քեզ կը փախցնեմ ասկէ։

— Անկարելին կը պահանջէ ինձմէ, և ուրկէ՞ պիտի կրընամ՝ այդքան մեծ դուրսար գտնել ձեզի վճարելու։

— Զեր կոմիտէն շատ ջըրամ ունի, թող վճարէ՛ ևս քեզ կ'աղաատմ։

— Մեր կոմիտէն զբամ չունի, հետեւաբար անկարելին կ'առաջարկէ ինձի։ Քանի որ զիս պետութեան թշնամի կը նը-

կատէք, ի՞նչպէս կ'ըլլայ որ զիս ազատ արձակել կ'ուզէք 500 սակիով:

— Դուն խնայեմ եւ. ես քեզի առաջարկ մը կ'ընեմ, լաւ մը տածէ եւ մէկ երկու օրէն պատասխան տուր:

— Մտածելու ի՞նչ հարկ կայ, քանի որ ես դրամ չունիմ եւ չեմ ալ կրնար ունենալ. միայն կը վարձանամ թէ Դուք այսպէ՞ս կը պաշտպանէք ձեր պետութեան շահերը:

— Աւելորդ խօսքերու պէտք չկայ, առաջարկ մը ըրի քեզի, խորհէ լաւ մը եւ երկու օրէն պատասխան տուր ինծի:

Այս առանձնակի խօսակցութենէն ետք միասնորէն նորէն հարցաքննութեան սենեակը կը մտնեն եւ նորէն տնօրէնին սենեակը փոխադրել կու տան Ատոմը:

Երկու օր ետք, զիշեր ատեն, Տրապիզոնի ընդհանուր դատախազը կրկին իր մօտ կանչել կու տայ Ատոմը եւ կ'ուզէ հասկընալ թէ ինչ եղած է որոշումը: Ատոմը կը կրկնէ նախապէս տուած պատասխանը: Դատախազը կ'ըսէ թէ ինք ուզած էր Ատոմը ազատել, բայց քանի որ կը յամառի՝ իր զիտնալիք բանն է, իր արինք՝ իր զլիտն: Այս խօսակցութենէն ետք Ատոմը նորէն կը տարուի իր խցիկը:

Ատոմը հինգ ամիս կը մնայ Սամոնի բանտը: Հինգ ամիս յետոյ Բարձրագոյն Դուռէն հրաման կու դայ Տրապիզոն փոխադրելու Ատոմը եւ հոն կատարելու զտառաւորութիւնը: Թէեւ Պոլսէն հրահանդուած էր ցամաքով փոխադրել, բայց Միւնա Օզլիին հրոսախումբին հատնական յարձակումէն ազատ մնալու համար՝ Լեկրապոս «Իննկոյու» ռազմանաւով 1894 թ. ապրիլ 31-ին Ատոմը իր 17 ընկերներով ճամբայ կը հանեն դէպի Տրապիզոն: Բանտարկեալները երկու աւելորդ իրաւունք չըզլաւորուած ճամբայ կը հանուին: Թէեւ Սամոն Ժանախտի պատճառով նաւերուն արգելուած էր նաւահանգիստ մօտենալ, այսուհանդերձ Միւնա Օզլիին տապաւնաւորութիւնն ներկայութեան սարսափը կառավարութեան նախընտրել կու տայ հետեւի վերջին միջոցին: Թէեւ այդ օրերուն Միւնա Օզլին երկու ընկերներով վաւաղարար ձերբակալուած էր, սակայն խումբը կը զօրծէր եւ սարսափ կը տարածէր ճամբաներուն վրայ: Միւնա Օզլին սգոցներով, խորոցներով, ասիւտ սիւլֆրիքով կոյուղիին երկաթները կտորելով դէպի ծով կը փախչի եւ հոն սպասող մէկ քանի ընկերներուն կը միանայ իր բանտարկուած ընկերներով:

Տրապիզոնի ճամբուն վրայ, զիւղի մը մօտ, սակայն, Ժանախտի պատճառով 15 օր քարանձիւայի կ'ենթարկուին: Ատոմը, համաձայն իր ընդհանուր ռազմավարութեան, կ'ուզէ սիրաշահիլ նաւին հրամանատարութիւնն ու պաշտօնէութիւնը,

ինչպէս նաեւ բանտարկեալներուն ընկերացող սպաներն ու զինուորները: Ուստի պառնուկ մը կ'ապստղլէ խորովելու համար: Աւտոմին հրաւէրը կ'ընդունին բոլորն ալ: Այս եւ նման արտայայտութիւններով բանտարկեալներուն եւ մնացածներուն միջեւ կը հաստատուի բարեկամութիւն: Այդ բարեկամութեամբ Աւտոմ եւ սպաները իրարու կը մօտենան, մինչեւ իսկ վտանգաւոր նիւթերու մասին կ'արտայայտուին: Աւտոմը, սակայն, միշտ սուլթանին անձը պաշտպանելով կը յարձակի կաշառակեր եւ անիրաւ կոտորակարական պաշտօնէութեան վրայ: Հրամանատարին հարցումին՝ թէ ինչո՞ւ օրինական միջոցներով ինքզինքնին չեն պաշտպաներ եւ ստոյգ վտանգին կը գիմեն, Աւտոմը կը պատասխանէ թէ զԺրախտաբար Ժողովուրդը միայն կը հարստահարուի եւ միջոց չունի պաշտպանուելու, քանի որ երկրի վեհապետին եւ Ժողովուրդին միջեւ կայ ու կը մնայ անխրկճ պաշտօնէութիւնը, որ թող չի ստար լսելի զարձնել Ժողովուրդին ձայնը:

Վերջապէս, Տրապիզոն կը հասնին բանտարկեալները եւ կը տարուին կոտորակարական շրջափակին մէջ գտնուող բանար, որ բարձր պարիսպներով պատուած էր մօտակայ չէնքերէն: Հոն՝ չլիթաներէն ազատուած՝ պանդան խուցերու մէջ կը տեղադրուին ու կը սպասեն դատաւարութեան, որ կը սկսի մի քանի ամիսներ ետք, 1894 Հոկտ. 6-ին:

Այդ առեւ բանտին վերի մասին մէջ բանտարկուած էին Տրապիզոնի յայտնի տաւաղաւորներէն Այնաուորեան երկու եղբայրները՝ Խաչատուր եւ Մկրտիչ: Անոնք զոհերն էին քաղաքին մէջ մեծ հեղինակութիւն ունեցող նեմլի — դառններուն տաւելութեանը: Այնաուորեանները մեծ համակերանք կը վայելէին բոլորէն ալ եւ հնարաւոր չափով օգտակար կը դառնային բանտարկեալ հայերուն, նոյնպէս եւ Աւտոմին:

Մեծ դատաւարութիւն մըն էր որ տեղի կ'ունենար հրապարակաւ եւ մեծ հետաքրքրութիւն ստեղծուած էր Ժողովուրդի բոլոր խաւերուն մէջ: Դատաւարութեան ներկայ էին նաեւ ռուսական, անգլիական ու ամերիկական հիւպատոսները իրենց թարգմաններով, որոնք հայեր էին: Դատաւարութեան որպէս դերակող ներկայ էր նաեւ սուլթանին պալատէն զրկուած բարձրաստիճան պաշտօնատար մը, որ մեծ ու չաղբութեամբ կը հետեւէր հարցաքննութիւններուն:

Դատարանի նախագահը, ըստ սովորութեան, առեւտրական գործողութիւններ կատարելէ ետք, ամբաստանեալներուն կը հարցնէ թէ փաստաբան ունի՞ն: Ժխտական պատասխան ստանալով, անոնց համար կը նշանակէ փաստաբաններ: Աւտոմին

իրբեւ. դատաւարչատեան կը ներկայանայ Լազարաքի էֆենտի ա-
նուն յոյն մը, որ բաւականաչափ հայերէն ալ գիտէր:

Նախապահ՝ կը հրամայէ դատարանի քարտուղարին՝ Ա-
տոմին մօտին եղած ամբաստանադիրը կարգալ: Ընթերցումէն
յետոյ կը հարցնէ թէ որեւէ առարկութիւն ունի՞ր Ատոմը:

Ատոմը կը պատասխանէ թէ ամբաստանադիրին դէմ շտա-
բան ունի բակիք, բայց ներկայ ընդհանուր դատախազին ներ-
կայութեան բացարձակապէս պիտի լռէ: Նախադահ՝ բարկա-
ցած՝ կ'ուզէ պատճառը հասկնալ: Ատոմը կը պատասխանէ. —
Սամսոնի մէջ հարցաքննութիւնը լրտնալէ մէկ շարաթ յետոյ
զիս բանաէն դուրս հանել տուաւ եւ առանձին հարցաքննութիւն
կատարեց ու ամէնէն վերջ ալ ինծի առաջարկեց 500 տոկի վճա-
րել իրեն՝ որ զիս բանաէն փախցնէ: Ըստ օրինի չեմ կարող ընդ-
հանուր դատախազ ընդունիլ տաանկ մարդ մը իմ գատիս հա-
մար:

Ատոմին այս ամբաստանութեան վրայ, դատարանին մէջ
ադմիսի խօսակցութիւն մը կը սկսի եւ մեծ իրարանցում մը
սեղի կ'ունենայ: Նախապահը բարկացած կ'ըսէ. — Գիտէ՞ք թէ
դեռ թիւան բարձրատարիճան մէկ պաշտօնեան կ'ամբաստանէք.
պէտք է զիտնաք թէ ձեր խոչոր յանցանքին վրայ ուրիշ մեծ
յանցանք մըն ալ կ'ուելցնէք:

Ատոմը կը պատասխանէ թէ իր բաժնեկր ապացուցանե-
լու պատրաստ է:

Ատոմին այս յայտարարութեան վրայ, դատական մար-
մինը առանձին սենեակ մը կը քաշուի խորհրդակցելու: Յետոյ
դուրս կու գայ եւ կ'աշխատի համոզել որ խօսի: Բայց Ատոմը կը
սնդէ իր օրինական պահանջին վրայ: Մարմինը նորէն կ'ա-
ռանձնանայ: Հիւսիսատոսներն իրենց թարգմաններով կը հետե-
ին անոնց: Ժամանակ մը ետք երբ դուրս կու գան, կը յայտա-
բարեն թէ այդ օրուան դատավարութիւնը յետաձգուած է ու-
րիշ օրուան մը:

Մէկ շարաթ յետոյ սկսուած դատավարութեան՝ ընդհա-
նուր դատախազին կը փոխարինէ ուրիշ մը: Ամբաստանագրի
նոր ընթերցումէն յետոյ, նախապահը Ատոմին ուղղելով իր
խօսքերը, կ'ըսէ. «Այս ամբաստանադիրէն յայտնի կը դառնայ
որ դուք Էշֆիա (չարտպործ) մըն էք եւ հետեւաբար պետու-
թեան թշնամի: Այդ յանցանքին վրայ ուրիշ մըն ալ դորձած
էք՝ բաղժաթի մարդիկ զինելով եւ զանոնք բմբուսութեան
մղելով:

Ատոմը կը պատասխանէ թէ «Էշֆիա» բառին նշանակու-
թիւնը չի հասկնար եւ իր փաստարանին բացատրութեան վրայ՝
կը յայտարարէ թէ իրենց սեփական շահուն համար յեռնեկը չեն

խորհրդացած մարդիկ կողոպտելու: Ընդհակառակը, իրենք պաշտպանած են ժողովուրդը: Հարստահարութիւններու եւ կողոպտանքներու դէմ: Ժողովուրդներու իրաւանց պաշտպանութիւնը պէտք է չփոթել առաքակտթեան հետ, եւ կառավարութիւնը շատ լաւ կը հասկնայ այս տարբերութիւնը: Աստմը կ'ուսեցնէ. «Ապացոյց կ'ուզէք թէ ինչպէս պաշտպանած ենք ժողովուրդը. տամ օրինակ մը: Մարդուանէն քիչ հեռու կայ թրքական գիւղ մը: Օր մը խումբով անկէ անցած միջոցին, տեսանք թէ ինչպէս Ծ-Յ ոստիկաններ կը ծեծեն եւ կը խոշտանակեն գիւղացիները՝ տուրք գանձելու համար: Միջամտեցինք եւ՝ ոստիկաններու յամառութեան վրայ՝ զանոնք զինաթափեցինք: Հնարաւոր գանձումները կատարելէ ետք, ոստիկաններուն զէնքերը յանձնեցինք եւ զանոնք հետաքուցեցինք: Կանչեցէք եւ ստուգեցէք»: Ապա Աստմը կը յայտարարէ թէ առաքակները իրենք չեն, այլ՝ կառավարական պաշտօնեաները, որոնք ուրիշին կը նիքը քաշելով՝ իրր վկայ իրենց ուղած թուղթը կը կնքեն. ինչպէս՝ Չարշամպայի շրջանին մոլիսքար Սողոմոնը, ձեզի ծանօթ ընդհանուր գառախաղը եւ ուրիշներ: Ուրեմն առանկներու հապկին նեղեցէք ձեր զորքածած «էջքթա» եւ նման ուրիշ բաներ:

Նախագահը զայրացած կ'ըսէ թէ պէտք է փաստերով ապացուցել բռնածները: Աստմ վրայ՝ Աստմը աւելի համարձակ կը յայտարարէ վկաներուն անունները՝ Սամոնի բանտապետը, Օսման չաուշը, չերքէզ ոստիկան Ալին եւ ուրիշներ: Գիշեր տունն օրինական չէ բանտարկեալ զուրս բերել բանալն, գանալ կոծել եւ հրացան պարպել անոր վրայ: Եւ սակայն տեղի ունեցան այդ ամէնն ալ. աւելին՝ մինչեւ իսկ օրէնքի մարդը կաշտք ուղեց:

Ետքին գառախանին մէջ կը յառաջանայ խառնաշփոթութիւն: Դատաւորն մարմինը զարձակ կ'առանձնանայ եւ զուրս գալուն՝ կը յայտարարէ թէ ցոյց արուած վկաները լսելու համար զատար մէկ կ'ամխտով յետաձգուած է:

Այդ ատեն Տրապիզոնի կուսակալը Քատրի պէյ անունով մէկն էր՝ Եւրոպա ուսում առած եւ ազաւամիտ ու բարի մարդու մը համբաւին տիրացած: Ան կ'ուզէ օրին մէկ կը Աստմը ահանել: Քաղաքապետական րնդունելութիւն մը կ'ընէ եւ կը խրատէ որ Աստմը կառավարական պաշտօնեաներուն մասին այդքան յարձակողական չըլլայ: Եթէ աւելի մեղմ խօսի՝ կարող է ազատ ձգուիլ:

Սուրճ խմելու ատեն, Աստմը կ'ըսէ թէ իր յայտարարութիւնները ճշմարտութիւններ են եւ զանոնք պիտի ապացուցանէ

ժողովուրդ: Կէս ժամ զրոյցէ ետք, նորէն բանա կ'առաջնորդեն Ռատմը:

Մէկ ամիս յետոյ Ատոմին ցոյց տուած վկանները կը բեր-
ին: Դատաւարութեան ընթացքին իրենց վկայութիւնը կը բե-
րեն Մարգարանի թուրք զիւղին իմամն ու մուխթարը, Սամսոնի
բանտին մէջ Ատոմին վրայ հսկող շէքքէզ ուսուիկան Ալին, Չար-
չամպայի բանտարկեալներու վկանները: Այդ բոլոր վկանները,
հակառակ դատարանի նախագահին բաղձանքներուն, կը վկա-
յեն ի նպաստ բանտարկեալներուն: Անոնց վկայութիւնները դը-
րեթէ բառ առ բառ այն էին, ինչ որ բանտարկեալները յայտա-
բարած էին նախապէս:

Թուրք զիւղին իմամն ու մուխթարը ոչ միայն ճիշդ վկա-
յութիւններ կու տան, այլ նաեւ կը յիշեցնեն դատարանին զի-
ւացիներու հանդէպ այն ուղղամիտ վերաբերումին մասին, որ
ցոյց տուած էր Ատոմին ընկերացոյց հրոսակումբը, որ ճամբու
դրած էր հարստահարող ստեղծանքները եւ վճարած իր կերած
ուտելիքին համար:

Դատարանին նախագահը, իմամին եւ մուխթարին տը-
ւած վկայութիւններուն համար խիստ զայրացած, կ'ուզէ բան-
տարկութեամբ պատժել զանոնք, որ պետութեան դէմ դաւաճ-
ները հիւրասիրեր ու հաց կերցուցեր են: Բայց անոնք հիւպա-
տաներու միջամտութեան շնորհիւ կ'ազատին բանտարկու-
թենէ: Սակայն Օսման չառաջն ու Ալի ոստիկանը իրենց պաշ-
տօնէն կ'արձակուին՝ հայու մը ի նպաստ վկայած բլրաւուն
համար:

Չարչամպայիներու դատաւարութեան առեւ ալ, երբ
հարցաքննութիւններու արձանագրութիւնները կը կարգադ-
րին, վկայ ցոյց տուած զիւղացիները կը մերժեն իրենց վերադ-
րուած վկայութիւնները: Անոնք կը յայտարարեն թէ իրենք հոն
արձանագրուած խօսքերը չեն ըսած: Սոցոմոնը՝ առանց իրենց
հաւանութեան՝ ըսնի իրենց կնիքները տուած եւ թուղթը կնքած
է: Սոցոմոնին ինքնարդարացման վերձին առեւ անոնք բարձրա-
ձայն կը պոսան երեսին՝ թէ բռնութեամբ իրենց կնիքները տ-
ւած է քայմաքամին իսկ ներկայութեան եւ կնքած է թուղթը:

Մուխթար Սոցոմոնը իրր զեղծարար պաշտօնեայ կ'են-
թարկուի հսկողութեան:

Այս ազմկայարոյց դատաւարութիւնը կը տեւէ երեք ա-
միս եւ տեղի կ'ունենան ինը նիստեր:

Դատաւարութիւնը կը վերջանայ 29 Դեկտեմբեր 1894-
ին: Բանտարկեալներէն 12 հոգի անպարտ կ'արձակուին, իսկ 3
հոգիներ կը դատապարտուին բերդարկայութեան հետեւեայ ձե-
ւով:—

Ատոմ Ալսանեան՝ 15 տարի
Արմենակ Գալուստեան՝ 10 տարի
Գէորգ Վարդուկեան՝ 10 տարի
Կարապետ Պաքըրճեան (չարչամպալցի) 5 տարի
Աւետիս Թերզիպաշեան (չարչամպալցի) 5 տարի:



ՀԵՏԱՔՐԲՐԱԿԱՆ ԱՆՅՔԵՐ ՏՐԱՊԻԶՈՆԻ ԲԱՆՏԻՆ ՄԷՁ

Ատոմը Տրապիզոնի բանախն մէջ կարճ ժամանակի ընթացքին կը բարեկամանայ բանտարկեալ թուրքերու եւ լազլու հետ: Այդ առեւն ան չարունակարար դրամ կը ստանար զուրսէն՝ Ազնաուրեաններու միջոցով ընդհանրապէս: Քաղաքաւան բանտարկեալ 17 հայերն ալ կ'օգտուէին Ատոմին յանձնուած գրամներէն: Սամսոնի մասնաճիւղը, իր կարգին, կարելի էր դամար մը գրկած էր Ատոմին կահապօրձ Մանուկին (խանդավառ գաշնակցական երիտասարդ մը) միջոցով, զարձեալ յանձնուած Ազնաուրեան եղբայրներու:

Ատոմը իրեն զրկուած գրամէն մաս մըն ալ կը յատկացրնէր բանախն մէջ գիւրտթիւններ տնկաւորու եւ մտերմական չըջնակ ստեղծելու, ինչ որ իրեն եւ միւս հայ բանտարկեալներուն համար անհրաժեշտ էր: Բանտապահին մէկ քանի զահեկան նուէր տալով՝ ազատութիւն ստացած էր ամէն օր բանախն բաղը ելլելու եւ օդ առնելու: Այդ պատահութեամբ ամէն օր զուրսի անցուցարձերուն աւելեակ կը պահուէր Ազնաուրեան եղբայրներուն հետ տեսնուելով: Անոնք բազմաթիւ ալցելութիւններ կը ստանային: Ատոմը անոնցմէ կը լսէ Սամսոնի բանտէն Մինաս Օղլիներուն փախուստը: Դարձեալ անոնք լուր կու տան թէ հնչակեան ահաբեկիչները սպաննած են մտապօրձ Սեդրակ Արապեանը իր տան առջեւ: Արապեանը, սակայն, իր մատնութեան վարձին կէսը միայն՝ 250 սօկի ստացած էր կառավարութենէն:

Ատոմը կը զատեն իր հայ բանտակիցներէն եւ կը փոխադրեն մահուան գաղապարտուած ոճրագործներու խուցը, ուր կային երկու նշանաւոր լազ աւագակներ՝ Հասանը եւ Օսմանը, որոնցմէ կը դողային բոլոր բանտարկեալները:

Այդ լազերը տարօրինակ համակրանքով մը իրենց քով կը հրաւիրեն Ատոմը եւ անոր անկողինը իրենց անկողիններուն մօտ բերել կու տան:

Ատոմը հանգամանքներու պարտադրութեամբ կը բարեկամանայ անոնց հետ եւ այդ բարեկամութիւնը իրեն համար

պաշտպանութեան շրջանակ մը կը ստեղծէ, ինչ որ պիտի երաշխաւորէր իր անձին ապահովութիւնը դուրսէն կատարուած դատաւարութիւններու դէմ:

Թրքական բանաւ ծանօթ է թէ թշուառութեան որջ մըն էր, ուր բանտարկեալին յատկացուածը մի միայն 300 տրամ անցնէր օրական: Այս պայմաններուն տակ, Ատոմը դուրսէն անհրաժեշտ ուտելիքները բերել կու տար իր զբաւով եւ այդ երկու լազերը յանձն առած էին կերակուրները պատրաստել ու երեքով ուտել:

Մենեկակից ուրիշ երկու լազեր ալ երբեմն կ'օգտուէին Ատոմին գթասրտութենէն: Օսմանը եւ Հասանը օրին մէկը մը տերմարտը Ատոմին կը թէլազերէն որ երես չտայ միւս լազերուն: Ատոմը կը նշմարէ նաեւ թէ Օսմանը եւ Հասանը իր շուրջը կը դառնան, ուր որ չարժի, մասնաւորաբար երբ միւս լազերը կը մօտենան իրեն:

Ատոմը Օսմանին եւ Հասանին այս վերաբերումէն կասկածած՝ կը պնդէ որ յայտնէն իրենց այդ շարժումներուն պատճառը: Անոնք վերջապէս կը յայտնեն թէ իր կեանքին դէմ գուրսէն դաւադրութիւն մը սարքած են եւ սպանութեան գործը վրաստած են միւս երկու լազերուն: Իրենք իրենց ականջներով լսած են թէ բանտապետին սենեակին մէջ այդ երկու լազերը կանչուած ու որոշ վճարումով սպանութեան գործը յանձնուած է իրենց: Իրենց ծանօթ ըլլալով այս պարագան՝ Ատոմին պաշտպանութեան համար ուշադրութեամբ կը հետեւին այդ լազերու շարժումներուն:

Օր մը երբ Ատոմը բանաի սրահին մէջ վեր վար կ'երթար, երկու խեղճ լազերը դինք կը հրաւիրեն իրենց մօտ: Օսմանը եւ Հասանը անմիջապէս կը փութան անոնց մօտերը դառնալ: Խեղճ լազերը բարեկամաբար դաւադրութեան գաղտնիքը կը յայտնեն Ատոմին եւ կ'ըսեն. «Մենք չենք կրնար Ձեզի շարժք ընել, որովհետեւ Ձեր հացը կերած ենք: Մեզ կանչեցին, մեր գատաւճիճիին բեկանումը յայտնելէ ետք ըսին. «եթէ Ատոմ Ասլանեանը սպաննէք, երկրորդ դատաւարութեան տունն ձեզ ազատ կ'արձակենք». մենք հարկաւ այդ սճիւրը չենք կրնար գործել, բայց կ'ըսենք Ձեզի որ զգոյշ ըլլաք, որովհետեւ անոնք կրնան ուրիշի ձեռքով Ձեզ սպաննել ապր»: Ատոմը շնորհակալ կ'ըլլայ եւ իր տեղը կը վերադառնայ: Հասանը եւ Օսմանը Ատոմին կը դիմեն՝ երկու խեղճ լազերուն հետ ունեցած խօսակցութեան ծանօթանալու համար: Ատոմը կը պատմէ միտներուն խոստովանութիւնը:

Այս փասնագաւոր կացութեան ծանօթանալէ ետք, Ատոմը կը մտադրէ կուսակալին նամակ մը գրել եւ ասոր համար կը

զիմէ՝ բանտակից լազ խոճայի մը: Խոճան, հակառակ որ կա-
ռավարական պաշտօնականներուն վրայ հաւատք չունէր եւ յիշոց-
ներով անոնց մասին կը խօսէր, լաւ խմբադրուած նամակ մը կը
գրէ: Ատոմը դայն կը յանձնէ բանտապետին՝ կուսակալին զըր-
կուելու համար: Մէկ քանի օր անցնելէ յետոյ նոր նամակ մը կը
գրէ՝ կուսակալէն ժամադրութիւն մը խնդրու: Երկրորդին կը
յաջորդեն երրորդն ու չորրորդը, եւ սակայն ոչ մէկ լուր: Բայց
չորրորդին՝ նամակը բանտապետին յանձնելէ ետք՝ պահակնե-
րէն մէկուն հինգ զահեկան կու տայ, որ ան հետեւի բանտապե-
տին եւ հասկնայ թէ նամակը որո՞ւ կը յանձնուի: Պահակը Ա-
տոմին լուր կը բերէ թէ իր նամակը յանձնուած է ընդհանուր
դատարանին: Այլեւս Ատոմէն յայտնի կը դառնայ թէ իր գէժ
զաւարդութիւն լարողը ընդհանուր դատարանին է: Ուստի Ատո-
մը կը մտածէ նամակ գրել ուսուսկան եւ անդլիակահն հիւպո-
ստաններուն: Նամակները կը գրէ հայերէնով, այն որոշ նկատու-
մով որ երկու հիւպատոսարաններուն թարգմանները լաւ հայեր
էին: Աղտաւորաններէն կը խնդրէ որ իրենց ճաշ բերողներուն
միջոցով երկու նամակները իրենց հասցէներուն գրիեն:

Իր նամակներուն տեղ շահանկուն պատճառով, Ատոմը
խիստ կը խօսի բանտապետին, որ կ'ուզէ սպառնել Ատոմը,
բայց Ատոմը երեսը մէկ կողմ կը քաշէ եւ ինք կը սկսի սպառ-
նել դայն: Պահակները վրայ կը հասնին եւ կ'աշխատին Ատոմը
դուրս հանել: սակայն բոլոր բանտարկեալները կը պաշտպանեն
Ատոմը:

Անդլիակահն հիւպատոսը անմիջապէս պարագան կը
յանձնէ կուսակալին ու չարութեան: Կուսակալը իր երկու թիկ-
նապահները կը գրիէ եւ Ատոմը կ'ուզէ: Բանտարկեալները
կ'ընդդիմանան եւ եկողներուն չեն յանձներ Ատոմը, մինչեւ որ
թիկնապահներէն մէկը՝ յաղթանդամ եւ քաջ լազ մը, երզում
կ'ընէ «Քուրան»ին վրայ՝ թէ ողջ եւ առողջ բանտ պիտի վերա-
դարձնէ Ատոմը: Այդ պայմանաւ միայն թոյլ կու տան որ Ատո-
մը դուրս գայ բանտէն:

Ատոմը կ'առաջնորդուի կուսակալին պաշտօնասենեակը,
ուր կը գտնէ կուսակալին հետ նաեւ անդլիակահն հիւպատոսն ու
իր հայ թարգման պաշտօնեան:

Կուսակալը Ատոմին ինքնութիւնն ստուգելէ յետոյ կը
հարցնէ թէ Ատոմը անդլիակահն հպատակ է: Երբ կը պատաս-
խանէ թէ ինք օսմանեան հպատակ է, կուսակալը կ'ըսէ Ատո-
մին. «Լաւ, ինչո՞ւ անդլիակահն հիւպատոսին նամակ կը գրես եւ
ինձի չես ուզղեր դիմումդ»:

Ատոմը կ'ըսէ թէ ինք չորս նամակներով դիմում կ'առա-
քած է կուսակալին եւ ստուգած է թէ իր նամակները փոխանակ

կուսակալին զրկուելու՝ հը յանձնուէին բանտապետին ձեռքով ընդհանուր դատախազին, որ իր սխերիմ թշնամին դարձած էր եւ լազերու միջոցով կ'ուզէր զինք բանտին մէջ խոկ սպաննել տալ: Փաստելու համար իր յայտարարութիւնները՝ անունները կու տայ անոնց, որոնք իրր գերակատար կամ վկայ ծանօթ էին այս հարցին: Կը կանչուին ցոյց տրուած անձերը: Իրենց ուղղութեամբ հարցումներուն պատասխանելով՝ անոնք հը հաստատեն Ատոմին ըսածները: Լազերը հը յայտարարեն թէ Ատոմը սպաննելու համար իրենց խոստացուած է տասական ոսկի: Հինգական ոսկի արգէն ստացած են կանխավճար: Դրամները ցոյց կու տան: Իր նամակները ընդհանուր դատախազին յանձնուելու պարագան ալ հը տուելու պաշակին եւ բանտապետին խոստովանութիւններով: Բանտապետ անմիջապէս պաշտօնանկ կ'ըլլայ, բայց դատախազին զէմ առնուած միջոցները անձանօթ կը մնան:

Երկու օրեր յետոյ, 1895 Յունուար 24-ին, Ատոմը բանտէն հաննէ եւ կուսակալին մօտ հը տանին: Կուսակալը հը յայտարարէ Ատոմին թէ այլ օրուան չուկնաւով պիտի մեկնի Պոլիս: Կուսակալին հրամանով Ատոմը կ'ազատի ոսգերուն եւ ձեռքերուն երկաթ կապանքներէն ու քոմիսէրի մը եւ չորս ստաիկաններու ընկերակցութեամբ հը տարուի թրքական նաւ մը: Նաւը Պոլիս հը հասնի 31 Յունուարին: Ատոմը հը զրկուի Պապը Զապթիէի բանտը, ուր հը դանէ Մարգուանի հրոսախումբէն Վարդգէսն ու Աբխանեանին ընկերներէն մէկը:

Ատոմը ալցելութիւններ կ'ընդունէր բանտին մէջ: Ապրիլ 12-ին երկու իւլմըրի բաժնուած եւ իրարու չղթալուած 80 հոգիներ ճարայ հը հանուն զէպի Պոտրումի բերդը: Ճամբան ինդ օր Զմիւռնիոյ բանտը մնալէ ետք, չուկնաւով հը զրկուին Պոտրումի բերդը: Բերդը հաստահեղոյս եօթ պարխապներով ընդարձակ տարածութիւն մը հը բռնէ, շինուած միջին դարերու ընթացքին, հաւանաբար ճենովացիներէ: Ան կառուցուած է ծովախորշին մէջ երկարող հրտանդանի մը վրայ, որուն կեդրոնական մասին վրայ ընդարձակ վեց շէնքերը յատկացուած էին 5-600 բանտարկեալներու: Ամենազդի եւ զարգացական գանապան աստիճանի դատապարտեալներ ալլապան յանցապարտութեամբ հը քաւէին սահմանուած ժամանակով իրենց դործած կամ չդործած մեղքերը: Անոնք՝ մեկուսացուածներ աշխարհի մնացած մասէն՝ կալմած էին սուրմէր համալիք մը, ընկերութիւն մը, ուր համակեցութեամբ կ'ապրէին ամենագազրէի ոճրագործը, բացարձակ անմեղը, քաղաքական յանցաւորը եւ վերջապէս մարդը, զոր ընկերութիւնը գտնուեալ էր եւ զրկած իր օրինական իրաւունքներէն:

Ընդարձակ ծովախորշը շուրջ 60 մեթր լայնքի բացուածքով կամ նեղուցով կը միանար Միջերկրականին: Բերդին ետեւը, ցամաքամասին վրայ, կը տարածուէր Պոտրում դասուական քաղաքը իր յոյն եւ թուրք բնակչութեամբ: Յոյները կը դրաղէին ձկնորսութեամբ, իսկ թուրքերը՝ երկրագործութեամբ:

Ատոմը, երբ բերդ կ'առաջնորդուէի, բազին մէջ կը դրնէ Տրապիզոնի բանտակից բարեկամ լազերը՝ Օսմանը եւ Հասանը, որոնք ուրախութեամբ կը զիմաւորեն զինք եւ, հակառակ բանտակերէն կարգադրութեանը՝ որ հայերուն հետ բնակի, իրենց մօտ կը տանին զայն:

Հայերը բազմանք կը յայտնեն որ Ատոմը փոխադրուի իրենց մօտ, բայց ան պարագան կը բացատրէ անոնց եւ չ'ուզեր բաժնուիլ իր լազ բարեկամներէն:

Բերդին օդը, մաքրութիւնը, բազնիքը եւ ներքին աղասկանքը բանտարկեալներուն համար մխիթարական առաւելութիւններ էին: Բանտարկեալները կարող էին ստանալ արօժնւած խերթեր եւ իրենց անմիջական պարագաներուն հետ թրդթակցիլ: Անչուտ թղթակցութիւններն անհրաժեշտաբար կ'ենթարկուէին խիստ պրաքննութեան: Ուրբաթ օրերը տեղւոյն քայմաքամը եւ կառավարական պաշտօնեաները իրենց ժամանակը կ'անցընէին բերդին մէջ տեսակցութիւններ ունենալով զարդացած բանտարկեալներու հետ: Ատոմը Պոլսոյ «Հայրենիք»ին հեատելով, օրուան անցքերուն եւ շարժումներուն կը ծանօթանար:

Զմիւռնիոյ կուսակալը՝ Հասան Ֆեհմի փաշան, որ 1878-ի Պերլինի վեհաժողովին թուրք պատգամաւորներէն մին եղած էր, օրին մէկը քննական ալցելութիւն մը կու տայ Պոտրումի բերդը: Ատոմը բանտակից ալպանացի պէյերէն մէկուն դրել կու տայ կուսակալին ուղղուած խնդրագիր մը, որ զինք իբր քաղաքական յանցապարտ պատեն քրէական յանցանքով դատաւարտուածներէն: Երբ կուսակալը կը մտնէ Ատոմին բնակած բանտը, Ատոմը անձամբ իր խնդրագիրը կու տայ կուսակալին: Փաշան կը կարդայ ու կ'ըսէ. «Դուք թաղաւորին համար շարունակ ապօթելու էք, ան շատ բարեախրտ է, ալլաղէս հոս անգամ շատ է ձեզի ուղեւերուն համար»: Ատոմը կը պատասխանէ. «Փաշա, ես բերդարդելութեան դատաւարտուած եմ, մինչդեռ զիս թրապարաներուն մէջ դրած են: Կը խնդրեմ որ տրուած վրձիտին համաձայն կարգադրութիւն մը բնէք»:

- Տղաս, դուն ո՞ր զպրոցը կարգացած ես:
- Ղալաթիոյ վարժարանը:

— Օ՛, մալըուհ (տաղայէլ) Ներսէս պատրիարքին չինած յարժարանք:

Փաշային այդ արտայայտութեան վրայ՝ Ատոմը զայրացած կ'ըսէ.

— Փաշա էֆենտի, Ներսէս պատրիարքը սասնեակ տարիներէ ի վեր է որ մեռած է: Մեզք չէ՞ մեռած մարդու մը հասցէին այս խօսքերը ըսել: Կարծեմ չի վայելի ձեզի պէս մէկուն այս խօսքերը ըսել:

— Ես բարի մարդ եմ, մըջիւններու վրայ իսկ կոխելէ կը դուշանամ, բայց...

Կուսակալին այս արտայայտութեան ի պատասխան եօթանասուն բանտարկեալները միարեան կը պոռան. «Մըջիւններու վրայ չէք կոխեր, բայց ուղտերը կը կլլէք, փաշա էֆենտի»:

Փաշան՝ այս ըմբոստ պատասխանին վրայ՝ կը ձգէ ու կը հեռանայ բանտէն:

Օգոստոս 24-ին, սուլթանին զահակալութեան տարեկարծին առիթով, քաղաքական յանցանքով զատապարտուածներուն համար ընդհանուր ներումի հեռագիրը կը հասնի Պոտրում ալ: Բոլոր քաղաքական յանցապարտները ազատ կ'արձակւին՝ բացի Ատոմէն: Բանտին տնօրէնը, որ ծեր եւ շատ բարի մարդ մըն էր, Ատոմին կ'ըսէ թէ դինք չի կրնար ազատ արձակել, որովհետեւ իր յանցապարտութիւնը միւսներէն տարբեր է:

Յետոյ ծերուկ բանտապետը Ատոմին կը թելադրէ որ հեռագրէ իր հօրը կամ եղբորը հետեւեալ ձևով. «Վեհափառ Սուլթանին կողմէ հոս քաղաքական յանցաւորներուն ներում չնորհուեցաւ, բայց զիս ապառ չթողուցին, որովհետեւ թուղթերուս վերջին մասերը զեռ հոս չհասան, հետեւաբար խնդրեմ որ պէտք եղած տեղը զիմում ընէք»: Ատոմին առարկութեան վրայ՝ թէ իր բոլոր խողթները հասած են, ծերուկ բանտապետը իրեն կ'ըսէ թէ Ատոմը պէտք է ընէ ինչ որ ինք կ'ըսէր, եւ իր աղուն գրել կու տայ իր թելադրութիւնն ու իր ձեռքով կը հեռագրէ:

Ազատ արձակուած երեք հայերը որոշած էին Պոտրում քաղաքը մնալ, մինչեւ որ Ատոմը ազատ արձակուէր, եւ այս՝ հակառակ Ատոմին պնդումներուն: Սեպտեմբերի սկիզբները Պոտրումի ծովախորշը կ'այցելէ Միջերկրականի անգլիական տորմիդին մէկ մասը՝ ծովակալ Սէյմուրին հրամանատարութեան տակ: Ծովակալը երկար ստեն չ'այցելի քայմաքամին, ինչպէս սովորութիւն էր առ ի քաղաքապետութիւն: Այս պարագան շատ մը մեկնութիւններու տեղի կու տայ Պոտրումի մէջ:

Օր մը, սակայն, Ծովակալին գրահատորին շուրջ մակույկ-

ներու շարժում կը նշմարուի եւ Ծովակալը իր սպայակոյտով նաւամատոյց կ'ուղղուի ու քայմաքամին կ'երթայ: Կէս ժամ յետոյ Ատոմը կը կանչուի բանտապետէն: Երբ կը ներկայանայ անոր, իրեն կ'ըսուի որ անմիջապէս հագուի եւ քայմաքամին երթայ: Ատոմը երկու պահակներու հետ բերդին եօթ դռներէն անցնելով դուրս կու գայ առանց սուրինաւոր զինուորներու ընկերակցութեան:

Կառավարչատան սպասման սրահին մէջ քառորդ ժամ սպասելէ ետք, ոստիկանապետը կու գայ, կը շնորհաւորէ Ատոմը իր աղատ արձակման համար, իր խնդակցութիւնը կը յայտնէ եւ քանի մը վայրկեան յետոյ կ'առաջնորդէ քայմաքամին սենեակը: Ծովակալը եւ երկու բարձրաստիճանի սպաներ քայմաքամին մօտ կը սպասէին իրեն: Քայմաքամին հրաւերով Ատոմը կը նստի: Ծովակալը հասկնալով որ Ատոմը անդլերէնին ծանօթ չէ, թարգմանին միջոցով կը հարցնէ Ատոմին. «Սամսոնի մէջ ձերբակալուած եւ Տրապիզոնի մէջ դատուած ու դատաւարտուած Ատոմ Ասլանեանը դո՞ւք էք»:

Հաստատական պատասխան ստանալով, կը շարունակէ.

– Ո՞րքան ատեն է որ բանտը կը մնաք:

– Մօտ երկու տարի:

– Քանի՞ տարուան դատապարտուած էք:

– Տասնեւհինգ տարուան:

– Բանտին մէջ քաղաքական յանցանքով դատապարտուած ուրիշ հայեր կ'ան:

– Երեք հայեր կային, բայց սուլթանին պահակալութեան տարեդարձին առիթով, Օգոստոս 24-ին ազատ արձակուեցան:

– Ո՞ւր են անոնք:

– Քաղաքն են, դեռ չեն մեկնած:

– Լաւ, կրնա՞մ զանոնք տեսնել,– կը հարցնէ քայմաքամին:

Անմիջապէս ոստիկան մը կ'ուղարկուի զանոնք բերելու: Երեք հայերը կու գան, Ծովակալը անոնց անուններուն եւ քանի տարուան համար դատապարտուած ըլլալուն կը ծանօթանայ:

Ասլա Ծովակալը քայմաքամէն կ'ուզէ տեղեկանալ հայերու բանտարկութեան պատճառին: Քայմաքամը կը պատասխանէ թէ քաղաքական յանցապարտութեամբ: Ծովակալը քրմածիծաղով կը կրկնէ. «Քաղաքակա՞ն, հր՛մ...»:

Ան կը հարցնէ քայմաքամին թէ բանտէն արձակուածներուն տուն վերադարձի ծախսերը կառավարութիւնը կը հոգայ: Քայմաքամը ժխտական պատասխան տալով, կ'ըսէ թէ անոնք ընդհանրապէս դրամական միջոցներ ունին: Ծովակալը կը հետաքրքրուի նաեւ թէ ազատուածները ո՞ւր պիտի երթան:

Հարցումին պատասխանը կը ստանայ ու կ'աւելցնէ. «Կը յուսամ որ առիկ էաք հանգիստ կ'ըլլաք»։ Ապա կը մեկնի ձեռքի սեղմումներով։

Ատոմը պաշտօնական պորձով թիւնները կատարած ըլլալով, դուրս կու գայ իր ազատութիւնը վերստանալու։ Բանտարկուած ըլլալու ճնշումէն ազատած Ատոմը իրմէ առաջ արձակուած երեք հայերուն հետ յոյն սրճարան մը կ'երթայ ազատ մարդու հոգեկան թեթեւացում մը վայելելու եւ մեկնումի կարգադրութեան մասին մտածելու։ Կարեւոր դիրքի տէր յոյներ եւ յոյն քահանան սրճարան կու գան իրենց խնդակցութիւնը յայտնելու։ Ատոմին։ Քահանան Ատոմին առանձին կ'ըսէ թէ Ծովա-կալին թարգմանը դինք տեսնել կ'ուզէ եւ ինք կարգադրած է որ իրիկուան ճաշը միասին տոնեն իր տան մէջ։

Ճաշի ժամանակ հայ թարգմանը՝ Պոյաճեան, իր խնդակցութիւնը յայտնելէ յետոյ, Ատոմին կը թելադրէ որ ռազմանաւ երթայ՝ շնորհակալութիւն յայտնելու Ծովակալին։ Այդ ատենն է որ կ'ըսէ թէ շարք մը հետազոտիչներու փորանակութիւն եղած է Պոլսոյ անդլիական գեոլոգի Սըր Ֆիլիփ Կրինին եւ ծովակալ Սէյմուրին միջեւ։ Ատոմին ազատ արձակուելու խնդրոյն համար։ Ատոմը քահանային տան մէջ եղած ատեն, իր երեք ընկերները հակողովութիւն կը կատարեն դուրսը։

Յաջորդ օր Ատոմը բաւական զԺուարութիւններէ յետոյ նաւ կ'այցելէ իր երախտագիտութիւնը յայտնելու Ծովակալին։ Ան պատուով կ'ընդունի Ատոմը, զարեջուր կը հրամցնէ եւ համակրական խօսակցութիւն կ'ունենայ։ Ապա Ատոմը թարգմանին հետ կը վերադառնայ քաղաք։

Հակառակ մէկ շարթուան ընթացքին մէկ քանի անգամ դիմում կատարած ըլլալուն քայմաքամին՝ որ իրենց անցագիրները տայ, քայմաքամի աշօր — վաղը բռնով կը զլանայ։ Օր մը Պոյաճեանը տեսնելով Ատոմը, կը հետաքրքրուի թէ ինչո՞ւ մեկնած չեն։ Երբ պարտադան կը հասկնայ, իրենց կը թելադրէ մեկնիլ՝ առանց սպասելու։ Ատոմը եւ իր բնկերները յունական չոգեանաւով մը կը մեկնին Չմիւռնիա։ Նաւը երբ Սաքքը կղզին կը հասնի ապրանք բեռնակուէ՝ տեղւոյն հայերը իմանալով որ նաւին մէջ Պոսրումէն ազատուած հայեր կան, մեծ խանդավառութեամբ կու գան եւ հրաւէր կու տան Ատոմին ու իր բնկերներուն։ Ճաշկերոյթը, ուրախութեան ցոյցերով, կը աւելի երկու ժամ։ Նաւի մեկնումին ատեն, անոնք մեծ խումբով նաւ կ'առաջնորդեն ազատութեան համար կոռուզ հայերը եւ անոնց համար կը բերեն մեծ ծրարներով ուտելիք ու պոռուզներ։

Ատոմը եւ իր բնկերները կը հասնին Չմիւռնիա։ Ճամբորդները քարափին վրայ ոստիկանական քովսէրին ցոյց տա-

լով իրենց անցադրերը՝ կը մեկնին: Երբ կարգը կու գայ իրենց, կը յայտնեն թէ անցադիր չունին եւ ցոյց կուտան իրենց ինքնու-
թիւնը ճշդօղ մեզա քեփերէսին: Քամիսէրը կը թխաղդէ որ ան-
պայմանօրէն կուսակալէն անցադիր առնեն:

Ատոմը կը տեսնէ թէ մեծ թիւով հայեր քարափ եկած են
զիրենք դիմաւորելու եւ տանելու ուղղակի առաջնորդարան: Կը
հասկցուի որ Պոյաճեանը լուր տուած է իզմիրցի պաշտօնակից-
ներուն, եւ անոնք ալ ուրիշներուն լուր տալով՝ մեծ թիւով հա-
յեր հաւաքած են: Պէտք է այստեղ յիշել թէ բոլոր օտար տոր-
միղներուն, — որոնք կ'այցելէին թրքական նաւահանգիստերը, —
թարգմանները կը զրկուէին Զմիւռնիայէն:

Օրուան առաջնորդ Ներսէս եպօկ. Արաշնեանը սիրալիւր
վերաբերում ցոյց կու տայ Ատոմին եւ իր խնդակցութիւնը կը
յայտնէ: Ատոմին հանդէպ համակրական արտայայտութիւննե-
րը մեծ համեմատութեան կը հասնին: Հրաւէրները կը յաջոր-
դեն իրարու: Մինչեւ իսկ յայտնի առեւտրական մը ինքնատեւա-
բար կարեւոր գումար մը կը նուիրէ Ատոմին: Ատոմը շնորհա-
կալութեամբ կը վերադարձնէ զայն նուիրատուն, անկէ խնդ-
րելով այդ գումարը զրկել Կուսակցութեան Կեդրոնին, որ շատ
պէտքը ունէր անոր:

Առաջնորդը Ատոմին խորհուրդ կու տայ անպայման ե-
րախտադիտութիւն արտայայտել Կուսակալին, որպէսզի ինք
ալ առիթը ունենայ միջնորդելու քաղաքական յանցանքով ամ-
րաստանուած մէկ քանի հայերու համար:

Տեսակցութեան պահուն, Կուսակալը կ'ըսէ թէ զթառառ
թաղաւորը միշտ կը սիրէ իր հպատակները, որով Ատոմը եւ իր
ընկերները պէտք է երգում ընեն հաւատարիմ մնալու թաղա-
ւորին: Ատոմը կը պատասխանէ թէ իրենք արդէն երգում ըրած
են եւ եկած են շնորհակալութիւն յայտնելու իր ազնուութեան,
միեւնոյն ատեն խնդրելով որ իրենց օրինական անցադիրքը տըր-
ւին, ինչ որ զլացուեցաւ Պատրումի քայմաքամէն: Կուսակալը
բերել կու տայ մեզա քեփերէսիները եւ ոտախկանութեան նա-
խարարին ուղղուած նամակ մը կու տայ անոնց:

Յաջորդ օրը Մեսաճերի Ընկերութեան մէկ նաւով կը
մեկնին Պոլիս: Նաւը Տարտանէլին մօտենալու ատեն կը տեսնեն
թէ Մէյմուրին նաւախումբը նեղուցէն դուրս խարխալ նետած է:
Երբ սովորական քննութիւնը կատարելու համար նաւը կանդ
կ'առնէ նեղուցին առջեւ, վեց հայեր նաւ կու գան, վնասելով
կը գտնեն Ատոմն ու իր ընկերները եւ իրենց ուրախութիւնը
յայտնելու ատեն անոնց կը յանձնեն առատ ուտելիք եւ պտուղ:
Կը հասկցուի թէ Զմիւռնիոյ Հեռագրատան պաշտօնեան Չառաք-
Քալէի իր մէկ ընկերոջ հետաքրքած է Ատոմին եւ ընկերներուն

սղատ արձակումն ու Մեհաճերի նաւով Պոլիս վերադառնալը։ Այդ տաքսիրտ համակրութեան համար Ատոմը եւ իր ընկերները շնորհակալ կ'ըլլան։

Պոլիս, Ղարաթիոյ քարաւիր հասնելու տուն, երբ ոստիկանութիւնը տնցադիրքը կ'ուզէ, իրենք ցոյց կու տան Զմիւռնիոյ կուսակալին մասնաւոր նամակը՝ ուղղուած ոստիկանական նախարարին։ Ոստիկանութեան քննիչները գտնոյք կառքով Պապը Զապթիէ կը փոխադրեն։ Ոստիկանական նախարար Նազըմ փաշան կ'ընդունի Ատոմը, որուն լուսանկարը դեռ կախուած կը մնար քաղաքականապէս վտանգութեամբ տնձերու շարքին մէջ։ Փաշան ուրախութիւն կը յայտնէ իրենց սղատ արձակման համար եւ կը յորդորէ հանդարտ մնալ, մասնաւոր երբ բարենորոգումներու համար ալ բանակցութիւններ կը կատարուին, եւ կը յիշեցնէ թէ այլեւս հին տնհասկացողութիւնները վերջացած են ու կողմերը իրարու բարեկամ դարձած։

Ատոմին վերադարձի լուրը շուտով կը տարածուի Պոլսոյ մէջ եւ ամէն կողմէ մարդիկ համակրական արտայայտութիւններով իրենց կողակցութիւնները կը յայտնեն։ Բնականաբար յեղափոխական ջրջանակները, — հնչակեան եւ գաշակցական, — շատ աւելի մեծ խանդավառութեամբ աշխուժացած, տենդոտ աշխատանքի լծուած էին այդ յոյսի եւ մտաւախութեան օրերուն։

Գաղանադուստ վեց մեծ պետութիւնները, թէեւ միշտ ալ դաւադիր իրարու հանդէպ, բարենորոգումներու Մայիսեան ծրագիրը կ'ուզէին պարտադրել սուլթան Համիտին։ Այդ բանակցութեան օրերուն հայերու հանդէպ թուրք կառավարութեան վերաբերումին մէջ որոշ մեղմացում մը բացայայտ էր։ Եթէ հայ ժողովուրդին քաղաքական խանդավառութիւնը մալիւնթացութեան մէջ կը բարձրանար, յեղափոխական առաջնորդող միտքերը, սակայն, քիչ ազդուած էին եւ միշտ ալ անվստահութեամբ կը նայէին սուլթան Համիտի եւ թուրք կառավարութեան բռնակալ աշխարհավարութեան վրայ։ Մասնաւորաբար հայերու առնչութեամբ անոնք զիտէին թէ բանակցութիւններու կատարելագոյն կարող էին յաջորդել ողբերգական իրադարձութիւններ։ Ճիշդ այդ հայեցակէտէն մօտենալով, անոնք իրենց հնարասրտութիւններուն տարողութեամբ գինուելու աշխատանքին լծուած էին։ Այդ հեռուեւ մտածումը քիչ տունէն իր արդարացումը ունեցաւ փաստականօրէն՝ 1895-ի համառարած ջարդերով։

Ատոմին համար բարոյական աւագ պարտականութիւն էր երախտադիտական այցելութիւն տալ օրտան պատրիարք Իգմիրեան սրբազանին, որ իր սղատ արձակուելուն համար ար-

դիւնաւոր աշխատանք կատարած էր անդլիական դեսպանին միջամտութիւնը ապահովելով: Ատոմին հայրը իր դաւելին հեռագիրը առնելով՝ դիմած էր Պատրիարքին: Ան ալ հեռագիրը Յարութիւն Մոսաիչեանին հետ զրկած էր անգլիական դեսպան սըր Ֆրիլիփս Կրինին, խնդրելու համար անոր միջամտութիւնը: Դեսպանը խոստացած եւ Համիտին այցելութեան ատեն յիշեցուցած էր թէ կայսերական ընդհանուր ներումէն չէ օգտուած Պոտրումի մէջ ըրդադրութեան դատապարտուած Ատոմ Ասլանեանը: Սուլթանը խոստացած էր եւ անմիջապէս հեռագրած էր Ձմիւռնիոյ մօտերը անգլիական տորմիդի հրամանատար ծովակալ Սէյմուրին: Ահա՛ Ծովակալին Պոտրում այցելութեան եւ անձամբ Ատոմին բանալն արձակուելուն համար քայմաքամին հետ ունեցած տեսակցութեան պատճառը: Ատոմը, որ անցեալէն Իզմիրլեանին հետ մօտէն ծանօթ էր, իր երախտագիտական արտայայտութիւնները կ'ընէ Պատրիարքին ու կը մեկնի:

Ատոմը մինչեւ Սեպտեմբեր, հակառակ իր յոյնածուծ թեան, կը պարտաւորուի կուսակցական աշխատանքներ կատարել ընկերներու ստիպումին տակ: Հոս պէտք է յիշել անոնցմէ մէկ երկու պարագաներ՝ իր կատարած աշխատանքին տեսակը յոյս տալու համար:

**

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ՝ ԶԷՆՔԵՐ ԳՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Օգտուելով թուրք կառավարութեան այդ օրերուն շնորհած խորհրդական ազատութենէն, յեղափոխական կուսակցութիւնները կը սկսին ազատօրէն զրել եւ դործել ու իրենց յայտնի կեդրոնատեղիները ունենալ: Բանտերէն արձակուած զեկավարներէն կարեւոր մաս մը հաւաքուած էր Պոլիս եւ նոր խանդավառութիւն ստեղծած կուսակցական շրջանակներու մէջ, երբ միւս կողմէ եւրոպական վեց մեծ պետութիւններու դեսպաններ կամ ներկայացուցիչներ կը հետապնդէին Մալխեան բարեկարգութիւններու ծրագիրը սուլթան Համիտին ընդունիլ տալու հարցը: Այդ ատեն Հնչակեան կուսակցութեան Կեդրոնի ներկայացուցիչն էր Արտաւազդ Օհանջանեանը, որ Պոլսոյ Վարիչ Մարմինն հետ համախոհաբար կը գործէր:

Եւ որովհետեւ կարելի չէր վստահիլ թուրք կառավարութեան խոստումներուն եւ թոյլատրած խարուսիկ ազատութեան փրայ, Պոլսոյ վարչութիւնը կը մտածէ եւ կ'որոշէ զբաժական

մեծ հանդանակութիւն մը կատարել եւ զինել գոնէ իր ընկերները՝ հայ ժողովուրդի ինքնապաշտպանութեան առ ի նախա-տեսութիւն: Վարչութիւնը նամակներ կը գրէ Պոլսոյ կարգ մը հայ հարուստներու՝ նախատեսուած վտանգը յիշեցնելով ա-նոնց օժանդակութիւնը խնդրելու:

Վարչութիւնը Ատոմէն կը խնդրէ ստանձնել մէկ քանի հարուստներու ղեմելու աշխատանքը: Հատուակ ուր Ատոմը հո-վեպէս եւ Փիլիքապէս չարչարուած ու հետեւորար պարտա-սած ըլլալով պէտքը ունէր գէթ ժամանակաւոր կաղդուրման հանգիստի, օրուան աղգային-քաղաքական կեանքի եռուզեռը, ինչպէս նաեւ իր հին դործերու յարակցութեամբ ունեցած պա-տասխանատուութիւնները իրաւունք չեն տար իրեն կաղդուր-ման դադարի մը: Ուստի կ'ընդունի զիմէլ Մաքսուտ պէյին (Սիմոն Մաքսուտ պէյին Լղրայրը) եւ Տիգրան Գարակէօղեա-նին:

Մաքսուտ պէյը քաղաքավարութեամբ մտիկ կ'ընէ Ա-տոմը եւ կ'ըսէ թէ հաճոյքով պիտի տրամադրէր իր կտրելին՝ եթէ իր Եղբոր մահուան պարագաներու յիշատակը իրեն դէմ ցցուած չտեսնէր, եւ կ'ըսէ նաեւ. «Եթէ վճարեմ, Եղբորս յիշա-տակը անարգած կ'ըլլամ, քանի որ ձեր կուսակցութիւնը իմ եղ-բայրս սպաննեց»: Ատոմը կը պատասխանէ թէ Մաքսուտ պէյը մասամբ իրաւունք ունի, բայց իրմէ ուղուած դրամը յեղափո-խութեան օգտին պիտի դործածուի, եւ թէ որեւէ մարմին կա-րող է սխալներ դործել, բայց լաւ է որ այդ գէպքը չկապուի իր օժանդակութեան հետ, երբ իր Եղբայրն է եղած յանցաւորը: Մաքսուտ պէյը կը խնդրէ որ իրեն մտածեալու ժամանակ տրուի: Ատոմը քաղաքավարութեամբ կը բաժնուի:

Երկու օր ետք, ի նախազգուշութիւն իրեն հետ մէկ քանի զինուած ընկերներ առած, Ատոմը Մաքսուտ պէյին զբասե-նակը կ'այցելէ: Ընկերները իբր պահակ դուրսը կը սպասեն: Մաքսուտ պէյը Ատոմին անձին հանդէպ կարգ մը փաղաքա-կան արտայայտութիւններէ յետոյ, 200 ոսկիի գումար մը կը յանձնէ Ատոմին, ըսելով. «Դուք ձեր հանգիստն ու կեանքը կը տրամադրէք. մենք ալ՝ մեր դրամը»:

Ապա Ատոմը Տիգրան Գարակէօղեանին կը ներկայանայ իր այցեքարտով եւ կը սպասէ նախասենակին մէջ: Գարակէօղ-եանը կու գայ եւ ներս կը հրաւիրէ Ատոմը: Կ'ուզէ նախ ծանո-թանալ եւ հասկնալ այցելութեան նպատակը: Երբ Ատոմը կը ներկայացնէ իր ինքնութիւնը հանգամանօրէն եւ բացատրու-թիւն կու տայ ուղուած դրամին դործածութեան շուրջ, Գարա-կէօղեանը 4-5 օրուան պայմանաժամ մը կը խնդրէ Ատոմէն: Որոշուած օրը Ատոմը կ'այցելէ Գարակէօղեանին բնակարանը

բայց հոն չի գտներ զայն, ուստի Կիրակի օր մը կը գլխի մէջ Պէօ-
յիւք Տերէ, սո՛ր Բնակարանը: Գարակէօզեանը Աստմին կը
յայտնէ թէ դեռ եղբարկացութեան մը չէ հասած: Կ'ըսէ թէ Ա-
ստմին մասին թէեւ լաւ վկայութիւններ ստացած է, բայց
դրամը ինչ ձեռքերու մէջ գործածուելու մասին դեռ վստահ
ծանօթութիւն մը չունի: Ապա հարց կու տայ թէ Աստմը այդ-
քան չարչարանքներէ եւ Պատրումէն ազատուելէ ետք այդ տե-
սակ վտանգաւոր գործերու մէջ ինչո՞ւ կը նետուի, մանաւանդ
որ բարենորոգումները պիտի կատարուին եւ պէտք պիտի չու-
նենան վտանգաւոր շարժումներու: Աստմը կ'ըսէ թէ հաւաք-
ւած դրամը ինքնապաշտպանութեան նպատակով գէնքերու
պիտի յատկացուի, քանի որ յեղափոխականները բացարձակա-
պէս վստահութիւն չունին թուրքին վրայ: Այս լուսաբանու-
թեան վրայ՝ Գարակէօզեանը կ'ըսէ թէ Իզմիրեան պատրիար-
քին խորհուրդին պիտի դիմէ եւ անոր թեւադրութեան հետեւի:
Այդպէս ալ կ'ընէ ու պատասխանը կ'ըլլայ դրական:

Այդ օրերուն մասնիչ Թիւթիւնճիկէֆը մաքրուած էր
Սկիւտարի մէջ: Այս մասին վէճ մը բացուած էր զաշնակցա-
կաններու եւ հնչակեաններու միջեւ: Իւրաքանչիւր կողմ ահա-
բեկչութեան գործը ինքզինքին կը վերագրէր:

Աստմին ստուգող քննութեան կ'ենթարկուի հարցը: Ան
կը ստուգէ թէ կողմերէն երկուքն ալ ահաբեկչութեան վճիռ
ստուած եւ զայն ահաբեկիչներու գործադրութեան յանձնած են:
Աստմը երկու կողմերը կը կանչէ եւ ահաբեկիչներուն կ'ըսէ.
«Աւելորդ վէճի պէտք չկայ: Ո՛ր մէկուդ պատուանշան պիտի
չնորսուի: Բոլորիս համար ուրախալին այն է, որ մատնիչը
սաքրուած է: Ո՛ր կողմէն ալ կատարուած ըլլայ այս սրբազան
պարտականութիւնը, համբուրելի կը մնան կողմերուն ճակատ-
ները, քանի որ ուխտուած են հայրենավրէժ աշխատանքի»:



Ա. ԱՐՓԻԱՐԵԱՆԻՆ ՄԱՏՆԶՈՒԹԵԱՆ ԱՌԱՍՊԵՂԸ

Արփիարեանը եւ Աստմը զիրար փնտռելէ յետոյ, ժա-
մադրութեամբ կը հանդիպին իրարու: Կ'ողջագոյրուին եւ Ար-
փիարեանը իր ջերմ խնդակցութիւնը կը յայտնէ Աստմին, որ
վերջապէս ապաստած է Բանտէն: Ոստակցութիւնը կը տա-
րածուի իրենց բաժանումէն ետք կատարուած անցքերուն վրայ:
Արփիարը կը յայտնէ թէ «Հայրենիք»ի աշխատակից Հրանդին
(Մելքոն Կիրճեան) հետ բախում ունեցած են:

Յայտնի մասնիչ Թիւթիւնճիկէֆը, որ Նազըմ փաշային

ձեռքին մէջ ամենաճկուն դորժիքը եղած էր մատնութեան դոր-
ձերուն մէջ, օգտուելով Արփիար-Հրանդ բախումէն, կը մօտե-
նայ այս վերջինին՝ անոր միամտութիւնը շահագործելու ընդ-
դէմ Արփիարեանին: Թիւթիւնճիէֆը հեղինակաւոր շէշտով մը
Հրանդին կ'ըսէ թէ Վահրամ պէյ Տատեանը մատնողը Արփիարը
եղած է եւ թէ ինք իր ծառայութեան հանդամանքով կարողա-
ցած է այս մասին թոյլը զաղանի թուղթերը: Մեղքնը կը հա-
ւատայ թիւթիւնճիէֆին նենդագործութեան եւ, իր կարգին,
այդ պարագան իրը զղետնող փաստ կը դործածէ իր երբեմնի
բաւկեամբ Արփիարին դէմ: Այս պարագայէն վշտացած՝ Ար-
փիարեանը կը գիմէ Իզմիրեան պատրիարքին, որ քննութիւն
մը բանայ եւ ստուգէ իր անմեղութիւնը: Իզմիրեան պատ-
րիարքը երկու անգամ հրաւէր կը զրկէ Կիւքեանին, բայց ան
չի պատասխաներ հրաւերներուն: Արփիարը կը գիմէ Վարիչ
Մարմնի քննիչներուն, որ իրենք ստանձնեն առաջարկուած
քննութիւնը. անոնք ալ չեն ուզեր այդ տաղտուկն ստանձնել, եւ
սակայն Արփիարին մասին աննպատակ տարածաշնորհներ ժողո-
վուրդին մէջ կը հիմնադրուի ու լայն համեմատութիւններ կը
ստանայ: Թիւթիւնճիէֆը նպատակին հասած էր Արփիարեանը
վարկարկելով: Արփիարը կը գիմէ Ատոմին, որ իրը Վահրամ
պէյին բանաւարկութեան պարագաներուն մօտէն ծանօթ մարդ՝
միջամտէ Հրանդը տեսնելով ու զայն տարհամոզելով: Արփիարը
կը յայտնէ թէ ինք հարցը քննիչներու քննութեան ենթարկելու
տակն ըսած է որ ամբաստանութիւնը հաստատուելու պարա-
պային՝ սիրալոյսը կ'ենթարկուի քննիչներու ամենախիստ ու-
րուշումին, ինչ աստիճանի պատիժ ալ բլլայ ան:

Ատոմը, որ Հրանդին հետ հին ծանօթ էր եւ տեղեակ էր
նաեւ Վահրամ պէյին ձերբակալութեան ու բանտարկութեան
հարցերուն, արդարութիւնը դործողներու համար կ'ուզէ տե-
սակցութիւն մը ունենալ Հրանդին հետ: Ուստի կ'որոշէ գիմել
Կեղորոնական (վարժարան), ուր այցելու ասուցիչ էր Հրանդը
այդ տակն:

Ատոմը երկու անգամ կը գիմէ Կեղորոնական՝ Հրանդը
տեսնելու, բայց չի յաջողիր: Երկրորդ անգամին տնտեսէն կ'ի-
մանայ թէ Հրանդը վերն է, բայց այցելարարը իրեն կը վերա-
դարձուի՝ ըսելով թէ մեկնած է արդէն: Ժամադրութիւն մը
կ'արձանագրէ այցեատման վրայ եւ Հրանդին յանձնուելու հա-
մար կը զրկէ տնօրէնութեան: Հրանդը կը խուսափի տեսնուելէ:
Ատոմը երբ այս բացասական տրամադրութիւնը կը տեսնէ
Հրանդին մօտ, ինք ալ, իր կարգին, կ'ուզէ մոռնալ այդ հարցը:

Ընթերցողը կը յիշէ թէ Վահրամ պէյին ձերբակալու-
թեան եւ բանտարկութեան պարագաներուն մէջ Արփիարեանը

Լերբեք մասնակցութիւն չէր ունեցած : Վերլիշումի համար թէ փաստարան ինչիկ էֆենտիւին ահարեկչութեան դործը ինչպէս տեղի ունեցաւ եւ որո՞նց մասնակցութեամբ ու ինչ պայմաններու տակ Տատեանը ձերբակալուեցաւ, տանք այստեղ անցքերը հակիրճ տողերով :

Կ'որոշուի ահարեկչութեան ենթարկել ինչիկ էֆենտին : Այդ դործը կը յանձնուի Պեշիկթաշի մէջ խառնութեան բարեկեցի Մեւքոնին : Խառնութիւնը նման դործեր կազմակերպելու փայլն էր, ուր յաճախ ահարեկիչները կ'այցելէին եւ նման հարցերու մասին կը խօսէին : Հոն կ'այցելէր նաեւ տասնվեցամեայ պատանի մը, որուն մայրը Տատեան Վահրամ պէյին տունը կը ծառայէր : Պատանի Արմենակը յաճախ Վահրամ պէյին տունը կը ծառայէր եւ Լերբեմն ալ գիշերները իր մօրը մօտ կը մնար : Մեւքոնին խառնութիւն մէջ հայրենասիրական խօսակցութիւններ ըլլալով, պատանին կը խոսեցաւ ուրիշ եւ միեւնոյն ատեն Մեւքոնին խորըրդապահական յաճախակի բացակայութիւններուն կը հետեւի՝ հակառակ Մեւքոնին յանդիմանութիւններուն եւ պարբերական ապստակներուն : Արմենակին մէջ կ'արմատանայ ինչիկ էֆենտիւին մատնութիւններուն յանցապարտութեան համոզումը եւ կ'որոշէ ինչք կատարել այդ հայրենասիրական պարտականութիւնը : Երբ Մեւքոնին յանձնուած պարտականութեան դործադրութիւնը կ'ուշանայ, ընկերները կը հարցնեն պատճառը : Մեւքոնը կտրուկ կերպով կը յայտնէ թէ յաջորդօրէն իսկ ընկերները ներկայ պէտք է ըլլան ինչիկ էֆենտիւին յուղարկուողութեան :

Ինչիկ էֆ. Գում-Գափուի կողմը իր սիրուհին հետ պտոյտի երած միջոցին, Մեւքոնը նամակով մը կը ներկայանայ անոր : Ինչիկ էֆ. նամակը բանալու պրպում ատեն, Մեւքոնը անոր կանակին կ'ուղղէ ատրճանակի հարուածները : Արմենակը, որ կը սքաւար անոր շուրջ, նոյն նպատակով իր քով պահած Երկաթի դաշոյնը անմիջապէս կը կոխէ ինչիկ էֆ. ին փորը եւ կը թողու կը փախչի : Մեւքոնն ալ գնդակները պարպելէ յետոյ փախչած էր : Արմենակը եւ Մեւքոնը խոյս կու տան առանց ձերբակալուելու : Սամաթիա թաքստոցի մէջ կը պահեն Մեւքոնը եւ յետոյ Պուլկարիա կը փախցնեն : Ժամանակ մը յետոյ անծանօթ պայմաններու տակ կը ձերբակալուի Արմենակը : Պատանին անմարդկային տանջանքներու կ'ենթարկուի, բայց ոչ մէկ դադարիք կը յայտնէ :

Արմենակը երկայնի դաշոյնը դողցած էր Վահրամ պէյին սենեակէն : Դաշոյնին վրայ գտնուած Վ. Տ. սկզբնատառերէն եւ Արմենակին՝ Տատեանին տունը յաճախողէպ այցելութենէն առաջնորդուած, ոստիկանութիւնը կը ձերբակալէ Վահ-

րամ պէյ Տատեանը: Ան բանաւ կը մնայ մինչեւ Արմենակին դատաւճիռը: Դատաւճիռէն յետոյ միայն Արմենակը կը խոստովանի թէ դաշոյնն ինք զողջած է Վահրամ պէյին տունէն, թէ ան անդեկութիւն չունի կատարուած զոգութենէն: Այդ յայտնութենէն յետոյ Տատեանը ազատ կ'արձակուի: Արմենակը բանաւն զուրա կու գայ ծանօթ ընդհանուր ներումէն օգտուելով:

Ահա՛ Արփիարեանին վերագրուած մասնութեան իսկութիւնը:

Արփիարեանին ծանօթ մեղայականի պարագան պէտք է վերագրել իր մտքի պարագայական անիմաստ տկարութեան(*):

Այստեղ ծանօթութեան համար պէտք է յիշել թէ այդ սպանութեան օրերուն Պոլսոյ «Արեւելք»ը, — որուն շուրջը հաւաքուած էին Պոլսոյ մեր ազատախոս՝ զրական դէմքերէն ու մանք, ինչպէս՝ Ա. Արփիարեան, Լևոն Բաշալեան, Մեղքոն Կիւրճեան (Հրանդ), Յ. Շնորհքեան եւ ուրիշներ, որոնք մեծապէս շահադրդուած էին Հնչակեան Կուսակցութիւնով, — իր շրջանակին միջոցով Սուրբ Գործին նուիրուած զոմարներ կը հասցնէր Կուսակցութեան, հակառակ այս վերջինին բացարձակ վերապահութեան:



ՊԱՊԸ ԱԼԻԻ ՅՈՅՅԸ

Հնչակեան ղեկավար զործիշներէն կարեւոր մաս մը արդէն անցած էր արտասահման, մաս մըն ալ կը մնար բերդարդելութեան կամ աքսորի մէջ: Անոնք բանտարկութեան կամ աքսորի մէջ մնացին մինչեւ 1908-ի Սահմանադրութեան յայտարարութիւնը: Միայն Համբարձում Պոյաճեանը (Մուրատ) եւ մէկ երկու ուրիշներ իրենց աքսորավայրէն խոյս տալով ապաստանած էին արտասահման: Պոլսոյ մէջ իրենց բանտարկութենէն ազատ արձակուած հին ղեկավարներէն կային միայն Միհրան Տամատեանը, Ասոմ Ասլանեանը, Անտոն Ռչտունին եւ մէկ երկու ուրիշներ:

Պոլսոյ Վարիչ Մարմինը տեսնելով որ սուլթան Համիտին եւ իր կառավարութեան վարած մասնաւոր քաղաքականութեամբ բարենորոգումներու ծրագրին զործադրութիւնը ան-

(*) Արփիարին մասին կատարուած վերագրումները եւ անոնց հերքումները տեսնել Ստեփան Շահապաղին «Արփիար Արփիարեան» պատկարելի ուսումնասիրութեան (Պէյրուք, 1988) մէջ - Վ. Ղ.

վերջ ձգձգումի կ'ենթարկուի եւ մասնաւորաբար ներքին դաւառնելու մէջ հարստահարութիւնները կը յատկութեամբ՝ եւրոպական ազդու միջամտութիւն մը հրաւիրելու դիտումով կ'որոշէ հանդամանօրէն պատճառարաննոսմ յիշատակազրկ ուղղել վեց մեծ պետութիւններու ղեկավարներուն։ Այս յուշադրին մէջ՝ կատարուելիք խաղաղ ցոյցին նպատակն ալ պիտի բացատրուէր։ Յիշատակազրկերը յանձնուեցան պատկան ղեկավարներուն եւ ցոյց կատարուեցաւ։ Բայց ոչ մէկ միջամտութիւն տեղի ունեցաւ։ Ընդհակառակը, Համիտին կառավարութիւնը հայերու հանդէպ աւելի խստացուց իր վերաբերումը, որ յետոյ պիտի հասնէր 95-96-ի ընդհանուր կոտորածներուն։

Բայց որպէսզի Պոլիս դառնուող հին հեղինակաւոր ղեկավարները, որոնք դատաւարաւած էին ծանր պատիժներու եւ ազատուած էին ընդհանուր ներումով, կրկին թիրախ չդառնան թուրք կառավարութեան վրէժխնդրութեան, Վարիշ Մարմինը ցոյցի որոշումին առէն վճռականապէս կը հրահանդէ մասնաւորաբար Տամատեանին, Ասլանեանին եւ Ռշտունիին, որ անմիջապէս հեռանան Պոլսէն։ Երեք ընկերները 1895 Սեպտեմբերէն առաջ(*) կը հեռանան Պոլսէն եւ կ'անցնին Աթէնք, ուր կը դառնուէր Կեղերոնը։

Թուրքիոյ մէջ կատարուած շուրջ տասը տարիներու ցուցական շարժումները հայ ժողովուրդի շահերուն համար բացասական արդիւնքի հասած էին։ Այս ծանր փորձառութիւնը մասնաւորաբար Երկրին մէջ գործող ղեկավարները, ինչպէս նաեւ արտասահման գտնուող առաջնորդող ղեմքերը առաջնորդած էր ընդհանուր պատգամաւորական ժողովի մը դումարման անհրաժեշտութեան դադարարին, ուր չարք մը կենտրոնական հարցեր իրենց լուծումը պէտք էր ստանային։ Առաջին ստանում-հակի գործունէութիւնը վերադնահատման ենթարկելու պէտքը անհրաժեշտ դարձած էր։

Պիտրախտաբար կուսակցական ղեկավարութեան մէջ գտնուող արեւելահայ տարրերը, առաջնորդուելով իրենց մենատիրական ձգտումներով, մերժեցին լսել իմաստութեան ձայնը եւ ընթացք տուին իրենց սովորամոլութեան։ Փորձառութեան թելադրած դասին չանապցինանք եւ ուղեցին միայն երևոյթները փրկել՝ զաւարդական ժողով մը դումարելով, ու պատճառ դարձան մեծ եւ կենսունակ կուսակցութեան բաժանման աղէտին։

(*) Տաւաթեանին յուշերուն մէջ (Պէյրուս, 1985) կը նշուի թէ Տաւաթեանին, Ասլանեանին ու Ռշտունիին Պոլսէն հեռացումը կատարուած է ցոյցէն մէկ օր առաջ - Վ. Ղ.։

Բացի փոքրամասնութենէ մը, որ Կուսակցութեան դրլ-խառըր զեկին տիրացած՝ դայն կ'օգտաւործէր ի նպաստ իր մտածումներուն, որոնք առաւելապէս համամարդկային ենթա-հող ունէին եւ որոնց մղումով մեծ համեմատութեամբ պէտք էր որ Կուսակցութիւնը անուսէր իր ազգային սեփական առաքե-լութիւնը, քաղաքական ազատադրութեան գործը, Կուսակցու-թեան զեկալարութեան մեծամասնութիւնը կը կազմէր կազմա-կերպութեան գործօն կենսունակութիւնը: Այս վերջին տարրը փորձառութեան լոյսին տակ իրբու գնահատումով՝ մտա-հոգում էր խորապէս Կուսակցութիւնը կենսականօրէն չա-հազրդող չառ հարցերով: Ասոնցմէ առաջինն էր՝ ազգայնա-կան հողի վրայ Կուսակցութեան տալ ռամկալարական սկզբ-բունքներով վերակազմութիւն մը՝ մերժելով ընկերվարու-թիւնն իրբեւ գաղափարաբանական դուռնանք. նաեւ՝ տալ ա-նոր ազգային-քաղաքական ազատադրութեան առաքելութիւնը միայն, առանց ուժասպառ կողմնակի հարցերով զրազելու: Երկրորդն էր՝ վերջ տալ մենտալիական դրութեան եւ Կուսակ-ցութեան բարոյական ու նիւթական միջոցներուն եւ շարժում-ներուն հակաշէնք յանձնել պատգամաւորական ժողովէն ընտրուած մարմնին, ստանձնելու ամբողջական պատասխա-նատուութիւնը այդ համարառու մարմինին առջև: Երրորդն էր՝ վերաւնահատման ենթարկել ու զազրեցնել ցուցական գործունէու-յեան շարժումները, եւ առանց ազմուկի պատրաս-տելի մեծ յեղափոխութեան մը կարելիութիւնը՝ ստեղծելով՝ օգտուելու միջազգային քաղաքական յարմարագոյն պատուո-րումներէ:

Երկրի եւ արտասահմանի շրջանակներուն առաջնորդող միաքը վերեւ յիշուած եղբակացութեան հասած՝ Կեդրոնին կը թելադրէր գումարել Կուսակցութեան առաջին պատգամաւո-րական ժողովը եւ Կուսակցութեան մեքենան լարել ստոյգ ու լուրջ սկզբունքներու եւ բմբռնումներու թելադրած ուղղու-թեամբ: Դժբախտաբար, ինչպէս նախապէս ակնարկուեցաւ, Նաղարէկեան ամուր բնթացք չառաւ եղած գանդատախառն պահանջներուն եւ ուղեց աճալարարական դարձում քներով գոր-ծել հինին պէս ու իրը ծրագրային նպատակ մեր ազատագրա-կան պային համար պահել բացայայտօրէն անխմաստ ընկերվա-րական վարդապետութիւնը: Ասոր համար գումարեց իր հրա-ւիրած երկրորդական ղէմքերու աշակէս կոչուած պատգամա-ւորական ժողովը՝ իրը արտայայտութիւն Կուսակցութեան կամքին: Եւ պայթեցաւ անխուսափելի փոթորիկը: Արդիւնքը եղաւ կենսունակ ու գործօն յայտնի ղէմքերու անջատումը՝ ի-րենց հետ ունենալով Կուսակցական շրջանակներու չառ գորա-

ւոր մեծամասնութիւնը արտասահմանի թէ Երկրի մասնահիւղերուն հաւասարապէս: Եւ հայ ազատագրական կենսառոյգ շարժումը՝ համիտեան ջարդերու մահացու հարուածէն արդէն իսկ ծանրօրէն ցնցուած՝ ներքին այս անհասկացողութենէն կորսնցուց ներոյժ մակընթացութեան թափը:

Այս տեղատուութեան ընթացքին, արիւնոտ միջադէպեր պահ մը սպառնցին կարեւոր ճիգեր՝ ի վնաս ազատագրական ճիգին: Ճիշդ է թէ յաջորդող տարիներուն, բաժնուած մեծամասնութիւնը փարթամ ուռճացում արձանագրեց. բայց կարճ տեւեց այդ խանդավառութեան շրջանը, որովհետեւ անհատական անհասկացողութիւններու պատճառներով յառաջ եկաւ նոր բաժանում մը, մինչ արեւելահայ նոր խմբաւորում մը նոր արկածախնդրական շարժումներով եւ աղանդաւորական մոլեռանդութեամբ հրապարակ կու դար գործելու նոր աղիտարեր սխալները, որոնց դէմ Հնչակեան Կուսակցութեան խիղճն ու զիտակցութիւնը բմբոսաացած էին:

Ատոմը վերաքննութիւն պահանջող գործիչներէն մէկն էր եւ ուսանի Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութեան հիմնադիրներէն: Բայց ան նոր կուսակցութեան մէջ յատկանշական դեր մը չստանձնեց: Միայն Ալեքսանդրիա վերադարձին, երբ Զէյթունի ապստամբութեան ազդանշանը արուեցաւ, Ատոմը բարեկամներու շրջանակին մէջ կազմեց հանդանակիչ յանձնախումբ մը եւ ի նպաստ Զէյթունի կռուողներուն բուսական մեծ գումար մը հանդանակուեցաւ ու զրկուեցաւ Կեդրոն՝ իր նպատակին յատկացնելու համար:

Պարճեալ, երբ հայկական ջարդերը սեղի ունեցան, իր եւ ուրիշներու թեւադրութեամբ կազմուեցաւ նոր հանդանակիչ յանձնախումբ մը՝ ի նպաստ ջարդերէն ազատուած թշուառներուն: Յանձնախումբին մէջ մտած էին նաեւ եզիպտարեակ եւրոպացիներէ կարեւոր դէմքեր: Անոր նախապահն էր Անդլո-եզիպտական դրամատան տնօրէն Կուսիօ կրետացի յոյնը, որ մեծ հայրենասէր Վենիզելոսին ընկերներէն եղած էր Կրետէի ապստամբութեան շրջանին: Հանդանակութիւնը հասաւ 4000 եզիպտական ոսկիի: Յանձնախումբը աւելի խոշոր գումար մը հանդանակելու առաջադրութեամբ ծամբայ ելած էր. սակայն Նուպար փաշային միայն 200 ոսկիի մասնակցութիւնը եւ հայ նահապաղներու հոգեհանգստեան պաշտօնի արարողութեան ատեն միայն կրօնական մասը կատարելու (առանց աշխարհական երկու ճառարիօսներու) հրահանգը աննպաստ ազդեցութիւն ունեցան հանդանակութեան արդիւնքին վրայ: Հանդանակուած գումարը զրկուեցաւ Պոլսոյ ազգային պատրիարքարանին:

Պէտք է յիշել թէ Հնչակեան Կուսակցութեան վերջին մե-

ծագործութիւնը եղաւ Զէյթունի ապստամբութիւնը։ Անոր յաջորդեց Կուսակցութեան փլուզումը՝ վերոյիշեալ պատճառաւան տուեալներու հետեւանքով։

Ատոմը Պոլսէն մեկնած ու անցած էր Աթէնք եւ անկէ ալ Ադեքսանդրիա, ուր հաստատուած էր 1895 Սեպտեմբեր 13-ին։ Արդէն Կովանեստն ընտանիքն ալ Պոլսէն խոյս տալով անցած էր Ադեքսանդրիա։ Ատոմը դտած ըլլալով իր նշանածը՝ օր. էլմոնիա Կովանեսանը, կ'ամուսնանայ 13 Սեպտ. 1896-ին։ Ամուսնութենէն յետոյ բնականաբար կը քաշուի ալլեւս յեղափոխական սպառիչ կեանքին արկածախնդրութենէն եւ կը պահէ իր կուսակցութեան (Վերակազմեալ Հնչակեան) հետ խաղաղ աշխատանքի կապերը մինչեւ 1910։ Այդ թուականէն ետք կը նուիրուի ընտանեկան պարտաւորութիւններուն։

Վերեւ յիշուած խաղաղ աշխատանքներէն անջատաբար ալ կը մասնակցի համայնքային գործերու եւ իր աշխատանքի բաժինը կը բերէ Առաջին աշխարհամարտի շրջանին համադրային շարժումներու։

Համայնքային գործերու մէջ Մ. Տաճատեանին, Յ. Շնորհքին եւ ուրիշներու հետ կը մասնակցի սահմանադրական պայքարներու։ Ումը մը երիտասարդներու այդ սուր պայքարները վերջ կը դնեն սահմանադրաւէրներու յաղթանակով։

Առաջին աշխարհամարտի օրերուն կ'անդամակցի Եզիպտոսահայ Ազգային Միութեան եւ կ'աշխատի մասնաւորապէս լեզունական շարժման համար։

Վերջին տարիներուն քաշուած էր գործէ եւ իր աղջկան՝ տկն. մեթր Գէորգ Գալարեանի գուրգուրանքին առարկայ, կ'ապրէր անդորրաւէտ կեանք մը։ Մեռաւ տն 26 Նոյեմբեր 1954-ին, իր հոգեկան աշխարհին մէջ պահելով հայրենասիրութեան հրաւառ ջահը, որ տեսն մը իր կեանքին մէջ բոցավառած էր՝ հակառակ ամենի փոթորիկներուն։

Յ Ա Յ Տ Ա Գ Ի Ր (*)

Օսմանեան Սահմանադրութեան հռչակումին յաջորդող չորս տարուան ընթացքին Հայ Ազգին կրած խոշոր յուսախաբութիւնը ամբողջ երկրին մէջ եւ մանաւանդ կիլիկիեան ջարդերով, միացած Պալմանեան պատերազմով ստեղծուած նոր կացութեան հետ, Հայ ժողովուրդը անգամ մըն ալ կը դնեն բացառիկ կացութեան մը մէջ, ուրիշ խօսքով՝ անգամ մըն ալ երեւան կը բերեն Հայկական Հարցը իր ամբողջութեամբ եւ իր բոլոր ստիպողականութեամբ:

Այս հարցը երկու հանգամանքով կը ներկայանայ, որոնց առաջինը կը կազմեն Կիւսադաշտական նամբով բարեկարգութեանց գործադրութեան հասնելու ձեռնարկները եւ երկրորդը՝ ու աւելի կենսականը՝ անձնապաշտպանութեան միջոցներու հայքայթումը երկրին մէջ, որպէսզի Հայը ի վիճակի ըլլայ իր կենաց, բնչից եւ պատուոյն պաշտպանութիւնը ապահովել իր իսկ ձեռքով:

Ուրախ ենք որ դիւանագիտական աշխատութեանց խընդիրը ընդհանուր Ազգին կողմէ համերաշխաբար յառաջ կը տարալի:

Նկատելով սակայն որ անձնապաշտպանութեան գործը, հակառակ մարդկայնապէս ամենատրինական գործը ըլլալուն, կարելի չէ զայն ստանձնուած տեսնել պաշտօնական մարմիններու կողմէ. այդ պաշտօնական շրջանակէ դուրս ձգուած քերին լրացնելու համար է որ կազմուած «Ազգային ինքնապաշտպանութեան Գումիքէն» որ նկատուի ունի այս միեւնոյն նամբուն մէջ անցեալին գործուած սխալները աչքի առջեւ ունենալով իր Լաւագոյնը ընել՝ կուսակցական նեղմիտ մտածումներէն բարձր գետնի մը վրայ ամէն խառնելու համերաշխութեան ստեղծումով մը՝ իրականացնելու ազգային ինքնապաշտպանութեան գործը եւ կարելի միջոցներով ո՛չ միայն դիմագրաւելու ո՛րեւէ դժնդակ պատահականութիւններու, այլ եւ նոյնիսկ աշխատիլ ձեռք բերելու ինքնավարութիւն մը — եթէ կարելի ըլլայ — իսկ առնուազն՝ Հայաստանի եւ Կիլիկիոյ մէջ իրական ու տեւական բարենորոգումներ գործադրել տալու Եւրոպական Մեծ Պետութեանց կամ ամռնցմէ մէկուն հակաէկզոն տակ:

(*) Կը տրուի առանց խմբագրումի, չարագրաբերէն — Վ. Ղ.:

Այս պայմաններով ըմբռնուած անձնապաշտպանութեան գործը այս պահուստ ամենամահաժեշտն է Թուրքիոյ պէս վարչական եւ զինուորական փտութիւններով շաղախուած եւ քաւանի ու ջարդի մոլեռանդ բնագոյներով տոգորուած գերութեան մը մէջ:

Երկրի Հայութեան կացութիւնը այսօր աւելի քան երբեք տագնապալի է: Կոտորածի մշտական երկիւղը, պատերազմի գացող զինուորներու անընդհատ անցքը, վաղը՝ պարտեալ, սովալլուկ եւ վրէժխնդրութեամբ ուռած զինուորներու վերադարձին անբաժան՝ անխուսափելի աւարատութիւնները եւ վայրագութիւնները, Ռումէլիի իսլամ գաղթականներուն Հայաբնակ Նահանգները գետնողւելուն ամենավտանգաւոր պարագան, միացած՝ արդէն իսկ գոյութիւն ունեցող օրստօրէական քուրճական եւ քուրտական խժոժութիւններուն եւ ասպատակութիւններուն եւ այն քիմախնդիր ոգիին, որ այս պահուստ աւելի կը շեշտուի Բարեկրօնական խնդրոյն մէջ Հայերուն կողմէն ներպական քննարկի պահանջելու պարագային, երկրին Հայ բնակչութիւնը ծայրայեղ մտահոգութեան եւ մղձաւանջի մատնած են:

Մասնաւորեալով մեր խօսքը Կիլիկիոյ վրայ, ուր արդէն իսկ Զէյթունի, Հանքնի եւ Զօֆ-Մարգուանի կողմերը վտանգաւոր վիճակ մը կը տիրէ եւ ուր կարգ մը բացառիկ պարագաները մասնաւորապէս մտահոգիչ մթնոլորտ մը ստեղծած են, ժողովրդական անձկութեան եւ ապագայ արիւնոտ պատահականութեանց գոյութիւնը շեշտուած պիտի մնայ այն տեղ քէ՛ իսկ դիւանագիտական դիմումները յաջողապէս պսակուին Հայաստանի բարեկրօնական մասին իրենց հետապնդած յոյսերուն մէջ, քանի որ Կիլիկիան բարեկրօնութեանց շրջագծէն բացարձակապէս դուրս պիտի մնայ եւ ատով իսկ նշաւակը պիտի ըլլայ կուտակուած եւ զսպուած վրէժխնդրութիւններ[ու]: Զենք կրնար նաեւ լռելեայն անցնել սա պարագան որ, տրուած ըլլալով բուն Հայաստանի Նահանգներուն այսօրուան անապահով եւ խռովեալ վիճակը. այդ նահանգներուն մէջ պատահող ո՛րեւէ խառնաշփոթութիւն չի կրնար իր հակահարուածը չունենալ Կիլիկիոյ Նահանգին մէջ: Այս ամէն բացառիկ հանգամանքները միանգամ ընդ միշտ կը շեշտեն գլխաւորապէս Կիլիկիոյ մէջ իրագործելու Ազգային ինքնապաշտպանութեան բացառիկ միջոցներ՝ կարենալ վստահօրէն դիմագրաւելու փորձանքը որ կրնայ առաջ գալ նոյն իսկ մօտաւոր ապագայի մէջ:



Այսօր Կիլիկիոյ այն զանազան կէտերուն վրայ, ուր Հայ

ընակչութիւնը ջարդի տագնապալից օրերուն կրցած է քիչ շատ անձնապաշտպանութեան գործը յաջողութեամբ արդիւնաւորել, քուրք կառավարութիւնը. առանց երբեք նկատի առնելու երկրին գոյութեան սպառնացող վտանգները, ամենախիստ միջոցներով կարծես խաղալ կ'ուզէ ժողովուրդին համբերատարութեանը հետ եւ երբ երբեք կառավարական այս միջոցները շարունակեն իրենց սաստկութիւնը կամ աւելի խստաման, թեւեւ ժողովուրդը իր կեանքի ու գոյութեան բաղդը պիտի ուզէ փորձել իր գէնքին ոյժովը եւ այդ պարագային՝ մեր «Ազգային Պաշտպանութեան Քումիքէն» իր նուիրական պարտքը պիտի սեպէ ո՛չ միայն օժանդակել հարկադրուած շարժումի մը մէջ մղուած կռիւի մը ալ եւ առաջնորդել զիրենք իրենց ձեռքագատումին գործին յաջողութեանը համար: Այդ տեսակ շարժում մը մենք կը հաւատանք թէ արուեստական միջոցներով կարելի չէ ստեղծել. անիկա կրնայ ծագում առնել եւ քաջալերուիլ մեր Քումիքէին կողմէ երբ

1.— Երկրին կացութիւնը ստիպողական եւ անհրաժեշտ դարձնէ գայն.

2.— Ժողովուրդին հաւաքական ու ամբողջ տրամադրութիւնը պատրաստուած ըլլայ.

3.— Քաղաքական հանգամանքները նպաստաւոր ըլլան.

4.— Դիւանագիտութիւնը յոյսեր ներշնչէ գայն արդիւնաւորելու.

5.— Ժողովրդեան պաշտպանութեան միջոցները լիապէս գոհացում ըլլան:

Ա. Երկրին կացութիւնը.— Այս մասին արդէն վերել պարգեցինք մեր տեսութիւնը, եւ այս կացութիւնը դժբաղդաբար պիտի տեսէ այնչափ ատեն որ այդ երկրին մէջ իրական բարեկարգումներ տեղի չունենան: Թէպէտ այս պահուս իբր թէ Զէյթունի մէջ տիրող յուզումը հանդարտած կ'երեւի առերեւոյթ կերպով՝ կայսերական ներումին հետեւանքովը, բայց մենք ստոյգ տեղեկութիւններ ունինք թէ Թուրք կառավարութիւնը կ'ուզէ քայքայել այդ լեռնական ժողովուրդին բացառիկ դիրքը, մի անգամ ընդ միշտ ապահովուելու համար ապագայ խորտումներու վտանգէն:

Վիճակը միեւնոյնն է Հանընի եւ Զօֆ-Մարգուանի համար, որոնք ալ եւս կիլիկիոյ դաշտին մէջ Հայկական անձնապաշտպանութեան ոգին կը մարմնացնեն իրենց մէջ:

Բ.— Ժողովուրդին տրամադրութիւնը.— Վերոյիշեալ տեղերու բացառիկ կացութիւնը թէպէտ ժողովրդեան մէջ ստեղծած է նախաազդական ըռպէն վայրկեան մը առաջ փութացր-

նելու արամադրութիւնը, այսու հանդերձ իրենց նպատակին յաջողութիւնը կախում ունի նաեւ իրենց դրացի գիւղերու եւ քաղաքներու համագործակցութենէն: Այս համագործակցութիւնը այն ատեն միայն կրնայ արդիւնաւորութիւն խոստանալ երբ նմանօրինակ քաղաքական հանգամանքներ գիրենք ալ մղեն այն միեւնոյն դիրքին ուր կը գտնուին այս պահուս վերոյիշեալ կեդրոնները: Եւ կարգ մը իրողութիւններ, միացած այսօրուան երկրին կացութիւնը կազմող պայմաններուն հետ, մեզի այն մտածումը կու տան թէ այդ մտայնութեան ստեղծումը պարզապէս շարաքներու եւ ամիսներու խնդիր մըն է միայն:

Գ. — Քաղաքական հանգամանք. — Վերոյիշեալ երկու վիճակներուն գոյութիւնը անշուշտ բաւական պիտի չըլլար արդիւնաւորելու ռեւիցէ ժողովրդական հարկադրուած շարժում, եթէ քաղաքական որոշ հանգամանքներ յաջողութեան կարելիութիւն չստեղծէին:

Անուրանալի իրողութիւն մըն է թտալական եւ Պալ-ֆանեան պատերազմներու պահուն՝ Հայ ժողովուրդը ազգային դատին ի նպաստ ամենէն քանկագին պատեհութիւններ կորսնցուց շնորհիւ իր անտարբերութեան: Բայց Թուրքիա անակրկալներու եւ քաջառիկ պատեհութիւններու քատերաքեր պիտի մնայ դեռ երկար ստեն: Պալֆաններու պատերազմը Թուրքիոյ տուաւ ջախջախիչ հարուածը եւ անոր քաղաքական եւ զինուորական կազմը քայքայումի ենթարկեց: Այսօր երկրին մէկ ծայրէն միւսը կը տիրապետէ կատարեալ կազմալուծում եւ անիշխանութիւն եւ քացայայտ է որ այս փոսային դրութիւնը պիտի շարունակուի եւ թերեւս Թուրքիա դեռ ինքզինքը չի գտած՝ իր առջեւ պիտի ցցուին քաղաքական նոր բարդութիւններ եւ ազգայնականութեան, անջատողականութեան հարցեր եւ հողային գրաւումի նակատագրական պատահականութիւններ պիտի փոխադրուին Փոքր Ասիոյ եւ Արաբիոյ կողմերը: Սխալած չենք ըլլալ եթէ ըսենք որ այսօրինակ քաղաքական հանգամանքներու գուցադիպող հայկական լաւ կազմակերպուած եւ լաւ առաջնորդուած շարժում մը պիտի կրնայ օգտակարապէս ծառայել Հայկական Դատին նպաստաւոր վախճանին:

Դ. — Դիւանագիտական պայմաններ. — Եւրոպայի շահախնդրութիւնը օրէ օր կը յատաջանայ ընդլայնելով իր տնտեսական տիրապետութեան շրջանակները դէպի Թուրքիոյ խորերը: Դիւանագիտութեան երկու հակահոսանքները, որոնք աշխարհի բաղդը կը վարեն այսօր, դիւրաւ պիտի չի կրնան հաշտուիլ Միջերկրականի ափունքներուն վրայ երկարաճողոյ կիլիկեան աշխարհի մը այս կամ այն Պետութեան կողմէ գրաւումին հետ,

որչա՛ր Կի Կի մասնակի կառավարութեան մը տնտեսական շահերը գերազօր նկատուելու պարագան գոյութիւն ունենայ: Որովհետեւ այդօրինակ գրաւում մը պիտի նշանակէր ո՛չ միայն Արեւելեան Միջերկրականի տիրապետութիւնը, այլ եւ Ռուսիոյ հանդէպ ծովերու փակում մը՝ նեղուցներու խնդիրը կարգադրուելէ առաջ: Երբեք Լամաճայնութիւնը՝ առաջնորդուած Ռուսիա[յ]էն՝ պիտի կրնար կրաւորական համակերպումի դերին մէջ մնալ՝ խանգարելով Եւրոպական ոյժերու հաւասարակշռութիւնը ի նպաստ միակ Տէրութեան մը (Գերմանիոյ): Կարելի է նաեւ դիտել տալ թէ, երբ Արեւելեան խնդիրը ամբողջ դար մը զբաղեցուց Եւրոպան, առանց որ կարենայ Եւրոպական Թուրքիոյ քաժանութիւնը վնասել եւ նախկին հպատակ ցեղերն էին դարձնալ որ գէն ի ձեռքէն յաջողեցան ի վերջոյ իրենց մէջ բաժնել գայն, ի՛նչպէս կարելի է հաւատալ որ Ասիական Թուրքիոյ մեծ Պետութեանց միջեւ անմիջական քաժանութիւն մը կարելի է, երբ այնքան մրցակցութիւններ իրարու դէմ կը յարեն զանոնք: Եւ որովհետեւ Թուրքիոյ եւ Պալեաններու խնդիրներուն լուծումէն վերջ այլ եւս մեծ մասամբ փարատուած կրնան ըլլալ Եւրոպական Ընդհանուր Պատերազմի մը երկիւղները, այդ տեսակ համեմատաբար խաղաղ ժամանակամիջոցի մը զուգահիշող եւ վերոյիշեալ պայմաններով նպաստաւորուած Հայկական շարժում մը կիլիկիոյ մէջ կրնայ յաւագոյն պատհառ մը ըլլալ Հայկական Բարեկրթութեանց ծրագիրը իրագործելու Հայաստանի եւ կիլիկիոյ մէջ՝ եթէ դժբաղդաբար վիժումի դատապարտուին այսօրուան Հայկական դիմումները եւ կամ եթէ դիմումները արդիւնէ՛ր մը յանգե՛ն՝ կիլիկիան այ մասնակից ընելու միւս վեց Նահանգներու մէջ ի գործ դրուելիք քարեմորթումներու բարիքին:

Եւ՝ Երկրին կոչում թիւեր իր անողո՛ւ պայմաններով եւ Եւրոպական դիւանագիտութիւնը իր ցուցադրելիք հաւանականութիւններով մասամբ պարզելէ վերջ, պէտք է քսել թէ Ազգային Ընկնապաշտպանութեան ո՛չ մէկ շարժում կարելի է սպասել եւ արդիւնաւոր ընել առանց վտանգի երկիւղներով պաշարուած ժողովուրդին պաշտպանութեան միջոցներ ստեղծելու: Թէեւ Հայ ժողովուրդը այսօր քիչ մը աւելի գիտակից իր մարդկայնական կոչումին, տրամադիր չերեւար ոչխարի պէս մորթուելու, ինչպէս երբեմն Համիրի օրով՝ բայց այդ պատրաստութիւններն անգամ ինքնապաշտպանութեան տեսակէտով պիտի չկարենան իրական օգուտ մը յառաջ բերել, երբ նկատի առնենք Եւրոպական Թուրքիոյ կորուստով թուրք զինուորական ոյժերու մօտալուստ ամփոփումը եւ կեդրոնացումը Փոքր Ասիոյ մէջ

խլամ գաղթականներու փոխադրութիւնը դէպի Հայկական Գաւառները:

Մեր կատարած բնութիւնները մեզի այն եզրակացութեան կը բերեն թէ երկրին Հայ բնակչութիւնը իր նիւթական միջոցներուն ներածին չափ զոհողութիւններ ըլած է զինուելու համար հաւանական վտանգին առջեւ: Բայց տրուած ըլլալով երկրին տնտեսական կեանքին փնացումը ջարդերով, քալանով եւ անգործութեամբ, Արտասահմանի Հայութեան վրայ կը ծանրանայ պարտքը ազգային ինքնապաշտպանութեան տեսակետով տեսնուած թերին լրացնելու: Հո՛ւ է որ Ազգ. Պաշտպանութեան մեր Բռմիթէն ձեռնարկած է այդ կենսական պակասը լրացնելու հոգը ստանձնել, մէկ կողմէն համագործակցութեան եւ զաւթփարակցութեան կապեր շինելով զանազան կուսակցութիւններու միջեւ եւ միւս կողմէն կոչում ընելով Հայ ժողովուրդին ամէն դասակարգերուն ազգային զգացումներուն եւ զոհողութեան ոգիին, զանոնք նկատելով ամենէն կենսական ոյժը ինքնապաշտպանութեան համբուն մէջ: Մէկ կողմէն դիւանագիտական յարաբերութեանց ոյժ տալու ազգային համագործակցութեան շաղիկն մէջ ծառայութեան մեր բաժինը ի սպաս դրած ժամանակնիս, միւս կողմէն խաղաղ եւ լռին միջոցներով հանգանակութիւնները շարունակելու անհրաժեշտ պէտքը կը զգանք, մեր յոյսը դրած մի միայն Հայ ժողովուրդին վրայ:

Աւելորդ չենք համարեր անգամ մըն ալ շեշտել որ Հայ ժողովուրդը ինքնապաշտպանութեան վիճակի մէջ դնելու հարցը անյետաձգելի ստիպողականութիւն ունի այժմ եւ թէ այս ուղղութեամբ լուրջ եւ ընդարձակ գործունէութեան պէտք է ձեռնարկուի անմիջապէս, ո՛րեւէ պատահականութեան հանդէպ պատրաստ գտնուելու համար, մանաւանդ երբ բացայայտ կը տեսնենք թէ Թուրքիոյ միջավայրը աւելի քան երբեք պաշարւած է նորանոր ծանր բարդութիւններու ներքին եւ արտաքին վտանգներով եւ սպառնալիքներով որոնց ամենուն հակահարւածը կրելու դատապարտուած է անխուսափելիօրէն Հայաստանի եւ Կիլիկիոյ Հայ բնակչութիւնը:

Մեր հայեացքները եւ մեր նպատակը ըստ վերնոյն պարգելէ վերջ, կը մնայ մեզ ըսել թէ Ազգային Պաշտպանութեան Դռմիթէն պատասխանատուութիւն կ'ստանան իր քոյր գործառնութեանց հաշիւը ներկայացնելու Հայ ժողովուրդին պատեհ ժամանակի մը մէջ:

ԱՊԱՀ

ԱՏՈՄ ԱՐՍԼԱՆԵԱՆ

Մ. ՏԱՄԱՏԵԱՆ

Աղեքս[անդրիա] 1/14 Յունիս 1913



Տպարան Ալքափրես , Պէյրուք – Լիբանան

